

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՆԱՅԻՏ ՄԵՆԵՄՇՅԱՆ

«LE MONDE»-Ը ԵՎ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2009

Անահիտ Մենենձյան

«Le Monde»-ը և հայ իրականությունը. – Եր.: ԵՊՀ հրատ., 2009 թ., էջ:

Մենագրությունը ֆրանսիական ամենահեղինակավոր թերթի՝ «Le Monde»-ի համակողմանի ուսումնասիրությունն է: Փաստական հարուստ նյութի հենքի վրա ներկայացվում է օրաթերթի անցած ուղին, քննվում են նրա տեղեկատվության յուրահատկությունները, բացահայտվում ժանրային նկարագիրը: Հեղինակի տեսադաշտում նաև «Le Monde» - հայ իրականություն փոխառնչությունների համապատկերն է՝ ուշագրավ և ինքնատիպ մեկնաբանություններով:

Նախատեսված է մամուլի պատմությամբ ու տեսությամբ զբաղվողների, ուսանողության և ընթերցող լայն շրջանների համար:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Le Monde»-ը¹ ֆրանսիական ամենախնամադրելի և հեղինակավոր օրաթերթն է: Ավելի քան մեկ միլիոն ֆրանսիացիների համար այս թերթի ամենօրյա ընթերցումն առօրյայի կարևոր, պարտադիր մասն է կազմում, իսկ ողջ աշխարհում այն ունի երկու միլիոնից ավելի ընթերցող²: «Le Monde»-ը դիտարկվում է իբրև ֆրանսիական դիվանագիտության պաշտոնական ձայն: Այն հայտնի է իր լրջությամբ, գերադասում է հետաքրքրել, քան դուր գալ:

Օրաթերթն իր գործունեության ընթացքում ունեցել է վերելքներ ու վայրէջքներ, հաղթահարել բազում դժվարություններ՝ օգտագործելով բավական հետաքրքիր հնարանքներ: Ունեցել է սխալներ, բայց և միշտ ընդունել է ու պայքարել դրանց դեմ: Իր հեղինակությունը վաստակել է հիմնադիրների որդեգրած սկզբունքների պահպանությամբ, այն է՝ հնարավորինս անկախ լինել քաղաքական, տնտեսական, կրոնական ուժերից:

Թերթին հաջողվել է պահպանել ֆինանսական անկախություն, ինչը լրատվամիջոցի գաղափարական ազատությունն ապահովող կարևոր գործոն է: Մերժելով թե՛ իշխանամետ և թե՛ ընդդիմադիր ուժերի մասնակցությունը թերթի կառավարմանը՝ «Le Monde»-ը տուժում էր ֆինանսապես՝ չընդունելով հաճախ բավական ձեռնտու ներդրումային առաջարկներ: Անկախ կարգավիճակն ու օբյեկտիվությունը իր դեմ էր հանում թե՛ աջ, թե՛ ձախ քաղաքական ուժերին:

Դիվանագիտական աշխարհը տեղի ունեցող իրադարձությունների մասին օբյեկտիվ լրատվություն ստանալու համար կարդում է «Le Monde»-ի միջազգային բաժինը: Թերթը միաժամանակ ֆրանսիական մշակութային արժեքների ներկայացնողն ու պահպանողն է, ֆրանսիական հասարակության ընտրախավի գրագիտության չափանիշը:

¹ Թարգմանաբար՝ «Աշխարհ»:

² Ըստ EuroPQN-ի (Եվրոպական ազգային օրաթերթային մամուլ) հրապարակած տվյալների, <http://www.mondepub.fr/Decou/lecto/Europ/index.htm>, 2003 թ., նաև՝ http://www.mondepub.fr/documentspdfchiffres_cles_nov08.pdf, 2008 թ.:

Եվրոպական երկրների շարքում ֆրանսիական մամուլը թերևս առաջին հակառակորդն է լրատվական շուկայի միջազգայնացման հարցում: Նրա ներկայացուցիչները գտնում են՝ եթե անգամ ինֆորմացիայի մշակման նոր տեխնիկայի համընդհանուր օգտագործումը հանգեցնում է արտադրության մեթոդների և խմբագրական աշխատանքների կազմակերպման միևնույն ձևին, դա չի նշանակում, թե լրագրողական գործունեությունը կամ գովազդային գործընթացը ևս պետք է հարմարեցվեն ամերիկյան, գերմանական կամ անգլիական հարացույցներին (մոդելներին): Ֆրանսիական մամուլը ժուռնալիստիկայի մի առանձին ձև է, որի յուրաքանչյուր բաղադրամասը պայմանավորված է վերջինիս պատմությամբ, ավանդույթով, անհատականությամբ: Այս մտածողության ծնունդն է նաև «Le Monde»-ը: Այն ֆրանսիական մամուլի մեկ տասնյակից ավելի համազգային օրաթերթերից մեկն է:

Առավոտյան առավել հեղինակավոր օրաթերթերն են «Le Parisien»-ը, «Le Figaro»-ն, «Libération»-ը, «L'humanité»-ն, «France soir»-ը, «20 Minutes»-ը, «Metro»-ն և այլն:

Երեկոյան օրաթերթերը երկուսն են՝ «Le Monde»-ը և «La Croix»-ն: Ի դեպ՝ Ֆրանսիայում երեկոյան օրաթերթերը լույս են տեսնում ոչ թե երեկոյան, ինչպես, օրինակ, անգլիականները, այլ մոտավորապես կեսօրին:

Մասնագիտացված օրաթերթերն են սպորտային «L'Équipe»-ը, տնտեսական «Les Échos»-ն և «La Tribune»-ը³:

«Le Monde»-ի հիմնական մրցակիցները մատուցած տեղեկատվության որակով, ընթերցողների թվով և հեղինակությամբ թերևս երկուսն են՝ «Libération»-ը՝ ձախ թևում և շատերի կողմից սիրված «Le Figaro»-ն՝ աջ թևում, բայց նույնիսկ նրանք դժվարանում են մրցակցել «Le Monde»-ի հետ⁴: Այս երեք օրաթերթերը ժամանակ առ ժամանակ օգտագործում են հնուտ մշակված հնարքներ՝ իրենց սպառումը խթանելու համար: Երբեմն դա նրանց հաջողվում է, երբեմն էլ սխալվում են իրենց հաշվարկներում: Դրա հետ մեկտեղ, չնայած մրցակցությանը,

³ Տե՛ս՝ <http://www.educnet.education.fr/dossier/rechercher/ressources/medias>, Ministère de l'Éducation Nationale, Ministère de l'Enseignement Supérieur et de la Recherche, 2009.

⁴ Տե՛ս՝ http://www.mondepub.fr/documentspdfsynthese_epiq_aepm_0708.pdf, 2008, p. 4-9.

նրանք բավական հանդուրժող են իրար հանդեպ և ունակ համախմբվելու՝ ֆրանսիական մամուլի համար ճգնաժամային պահերին:

Իբրև երեկոյան օրաթերթ՝ «Le Monde»-ը հնարավորություն ունի տեղեկատվություն հաղորդել ավելի շուտ, քան իր մրցակիցները: Առավոտյան լրատվությունը, որը «Le Monde»-ը մատուցում է կեսօրին, «Le Figaro»-ն և «Libération»-ը մատուցում են հաջորդ առավոտյան: Սա միաժամանակ դժվարություն և առավելություն է թերթի համար: Դժվար է առաջինը լրատվություն հաղորդել. հարկավոր է լինել խիստ աչալուրջ, որ ոչ մի բաց չմնա, այլապես հաջորդ օրվա լրատվության հոսքում քո մատուցածը պարզապես չի երևա: Մյուս կողմից տեղեկատվությունն առաջինը մատուցելը մեծ առավելություն է այն առումով, որ առաջին լրատվությունը միշտ ամենատպավորիչն է, ամենամնայունը:

Այսօր «Le Monde»-ը օրաթերթից վերածվել է մամուլի խմբի՝ ներառելով բազում գործունեության ոլորտներ: «Le Monde»-ի տնօրենն է Էրիկ Ֆոտորինոն, թերթն ունի ավելի քան 400000 տպաքանակ, արժե 1,40 եվրո: Տպաքանակի մոտ 14%-ը արտահանվում է՝ տարածվելով ավելի քան 120 երկրում: «Le Monde»-ն ունի բազում լրացուցիչ հրատարակություններ ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ եվրոպական որոշ երկրներում: 1998-1999 թվականներից գործածության մեջ է նաև օրաթերթի էլեկտրոնային տարբերակը՝ www.lemonde.fr-ը: Ի դեպ՝ թերթում աշխատում են նաև հայեր. էլեկտրոնային հրատարակության ղեկավար Կայծ Մինասյանը նրանցից մեկն է: Նրա միջոցով էլ պարզեցինք թերթում աշխատող մեր մյուս հայրենակիցների անունները՝ Էրիկ Ինսիյան, Պատրիկ Քեշիշյան, Սիշել Շամպենուա (մայրը՝ հայ), Ռոբերտ Սոլե (մայրը՝ հայ), Ֆլորենս Ջիբեդյան, Սանդրին Իկնոյան, Անի Արսենյան և այլք⁵:

Իր ստեղծումից հետո «Le Monde»-ը բազում փոփոխություններ կրեց, և այն մարդիկ, ովքեր թերթի ստեղծման օրից եղել են նրա հետ, կիսել են նրա մտահոգություններն ու դժվարությունները, ապրել ու դաստիարակվել են թերթի

⁵ Նշենք, որ թերթի հետ պարբերական ցամաքագրական կապը որոշակիորեն օգնեց մեզ: Խմբագրության աշխատակիցները ոգևորված էին այն փաստով, որ իրենց թերթի մասին աշխատություն է գրվում հեռավոր Հայաստանում: Նրանք սիրով մեզ տրամադրեցին փաստագրական տվյալներ թերթի պատմության, բաժնետիրական կազմի, ձեռնարկության տնտեսվարման ձևերի վերաբերյալ:

ոգով, դժվարությամբ են ընդունում նորացված «Le Monde»-ը: Նրանք գտնում են, որ «Le Monde»-ն այսօր մեծ դաս ունի քաղելու իր պատմությունից և պետք է աշխատի վերագտնել իր երբեմնի միասնական ոգին, սուր հոտառությունն ու կանխատեսելու ունակությունը: Այս մոտեցումներն առկա են հատկապես «Le Monde»-ի տարեց լրագրողների աշխատություններում: Մասնավորապես ժան Պլանշեն, որը թերթում սկսել է աշխատել նրա գոյության տասնմեկերորդ ամսում և այստեղ անցկացրել ուղիղ 42 տարի՝ սովորական աշխատակցից հասնելով լրատվության պետի, հետո նաև գլխավոր խմբագրի խորհրդականի պաշտոնի, իր «Un Homme du Monde» («Մարդ «Le Monde»-ից») աշխատության մեջ ջերմությամբ և հպարտությամբ է ներկայացնում հին «Le Monde»-ը, այնտեղ տիրող մտերմիկ միջավայրը: Նա հավաստում է, որ «Le Monde»-ն այն ժամանակ հավասարազոր էր կրոնի, որ թերթը ոչ թե բիզնեսի միջոց էր կամ խոսափող, այլ հավատով ու առաջադեմ գաղափարներով օժտված մարդկանց խումբ, ովքեր աշխատում էին օրնիբուն, աշխատում էին անշահախնդիր՝ իրենց գործի հանդեպ մեծ հարգանքով ու նվիրումով:

Նույն կարծիքին է նաև Պատրիկ Շամպանը «Le Monde»-ին նվիրած ուսումնասիրության մեջ⁶: Բավական հետաքրքիր ու յուրօրինակ ձևով հեղինակը ներկայացնում է հին ու նոր «Le Monde»-ների տարբերությունը: Այսպես, էջը բաժանվում է երկու մասի, ձախ մասում պատկերվում է «Le Monde»-ի 1980 թ. հունվարի 18-ի համարի առաջին էջը և մի ֆոտոնկար, որտեղ ներկայացվում է նույն ժամանակահատվածի թերթի ամենօրյա առավոտյան խորհրդակցություններից մեկը՝ ժակ Ֆովեի ղեկավարությամբ և դեռևս Իտալացիների փողոցի գրասենյակում: Աջ մասը պատկերում է «Le Monde»-ի 1999 թ. օգոստոսի 10-ի, 11-ի և 12-ի համարների առաջին էջերը, ինչպես նաև Կլոդ Բերնար փողոցի գրասենյակում, ժան-Մարի Կոլոմբանիի գլխավորությամբ անցկացվող առավոտյան խորհրդակցությունը ներկայացնող ֆոտոնկարը:

Չեղինակի մտադրությունը հասկանալու համար մանրամասնեմք պատկերների բովանդակությունը: Հին «Le Monde»-ի առաջին էջը ներկայանում է

⁶ «Սոցիալական գիտությունների բնագավառի ուսումնասիրություններ», ամսագիր, մարտ, 2000 թ.:

վեց լուրջ, ծանրակշիռ հոդվածներով, որոնց մեծ մասը վերաբերում է միջազգային կապերին, կա մեկ նյութ՝ նվիրված կաթոլիկ եկեղեցուն, ևս մեկը՝ նվիրված գիտությանը:

Նոր «Le Monde»-ը խորհրդանշող առաջին երեք էջերը ներկայացնում են խոշոր վերնագրերով, ֆոտոնկարներով, յուրաքանչյուր էջում՝ ընդամենը երկու-երեք միջազգային լրատվություն և նույնքան էլ ֆինանսական, տնտեսական հարցեր քննող հոդվածներ:

Մեկնաբանությունը կարծես ավելորդ է. «Le Monde»-ը նախկինում ավելի լուրջ էր, բովանդակալից և քիչ տեղ էր հատկացնում ֆինանսական խնդիրներին: Նկատենք՝ սա սուբյեկտիվ մոտեցում է, քանի որ այս դեպքում հարկ կլիներ նշել նաև գրական, գիտական, քաղաքական այն նոր բաժիններն ու մասնագիտական լուրջ հրապարակումները, որ ավելացել են նոր «Le Monde»-ի էջերում: Միայն առաջին էջերը ներկայացնելով հնարավոր չէ պատկերացում տալ ամբողջ թերթի մասին, բացի այդ, բնական է, որ ավելի քիչ էջեր ունեցող հին «Le Monde»-ը պետք է ավելի խիտ տեղեկատվություն մատուցեր առաջին էջում:

Ինչ վերաբերում է առավոտյան խորհրդակցությունները ներկայացնող ֆոտոնկարներին, դրանք ևս հին «Le Monde»-ի օգտին են: Չախ մասում ներկայացված 80-ականների խորհրդակցությունը անցկացվում է դասական ոճով կահավորված սրահում, ներկաները 11-ն են՝ բոլորը կանգնած, մուգ կոստյումներով, սպիտակ վերնաշապիկներով, փողկապներով, մեկը նույնիսկ՝ թիթեռնիկով:

Աջ կողմում պատկերված սրահը կահավորված է ժամանակակից ավանգարդիստական ոճով՝ ապակե գրասեղան, համակարգիչներ: Այստեղ ևս ներկա են 11 խմբագիրներ՝ 10 տղամարդ, 1 կին, որոնք, սակայն, ի տարբերություն ձախակողմյանների, հագնված են ավելի շուտ մարզական ոճով՝ բաց գույնի տաբատներ, ձեռքները՝ գրպաններում, վերնաշապիկի վերևի կոճակը արձակած (միայն երեքն են փողկապով), մի մասը նստած է, մյուս մասը՝ հենված կահույքին:

Նկարները, հավանաբար, նպատակ ունեն հուշելու, թե նվազել է լրագրողների հարգանքը թերթի հանդեպ: Նախկիններն ավելի մեծ պատասխանատվությամբ էին մոտենում իրենց պարտականություններին, նրանք պետք է լինեին ներկայանալի, հարիր թերթի համբավին և ոճին: Մինչդեռ նորերը նախընտրում են հարմարավետությունը: Այս հարցում թերևս համաձայնենք հեղինակի հետ. եթե ճիշտ ենք զգացել և պատկերացրել «Le Monde»-ի խոհանոցը նախկինում և այսօր, ապա առանց կասկածի պիտի հավաստենք, որ սկզբում թերթի միջավայրն առավել անկեղծ և միասնական է եղել: Իհարկե, չի կարելի անտեսել նաև տնօրենների ջանքերը, ովքեր անվերջ ձգտում էին կարգավորել ներխմբագրական հարաբերությունները՝ գործի դնելով բազում ծրագրեր:

Ֆրանսիական մամուլի տեսաբան Պատրիկ Էվենոն, որը ևս զբաղվում է «Le Monde»-ի ուսումնասիրությամբ, իր «Le journal «Le Monde», une histoire d'indépendance» («Le Monde» թերթը, անկախության պատմություն») գրքում Պատրիկ Շամպանի այս հոդվածը վերլուծում է յուրովի: Նա չի արդարացնում Շամպանի մոտեցումները՝ լիովին կողմ կանգնելով նոր «Le Monde»-ականներին:

Մի բան հաստատ է. հին լրագրողները ողջ էությամբ նվիրված են եղել «Le Monde»-ին՝ իրենց համարելով թերթի մի մասնիկը: Այսօր արդեն, չնայած տնտեսական ու գաղափարական ձեռքբերումներին, «Le Monde»-ը կարծես կորցրել է այդ ջերմությունը և օտարացել հին «Le Monde»-ից: Գուցե սրանով էլ բացատրվում են հին «Le Monde»-ականների դժգոհությունները:

Թերթի մասին գրում են ոչ միայն իր աշխատակիցները: Ժեննեյ Ժան Նոյելը և Ժուլիարդ Ժանը, ովքեր բազում ուսումնասիրություններ ունեն ֆրանսիական մամուլի մասին, իրենց «Le Monde de Beuve-Méry» («Բյով-Մերիի «Le Monde»-ը») գրքում ներկայացնում են թերթի պատմությունը և նրա վարած լրատվական քաղաքականությունը Յյուլբերտ Բյով-Մերիի տնօրինած ժամանակահատվածում, մինչև այն պահը, երբ «Le Monde»-ն անցնում է Ժակ Ֆովեին: Այս աշխատանքը թերթի առաջին տարիների գործունեության շատ ավելի լուրջ վերլուծություն է, քան Ժան Պլանշեի «Մարդ «Le Monde»-ից»-ը: Վերջինս առավել հուզական և սուբյեկտիվ մոտեցում էր թերթին, որը բացահայտում էր

նրա ներքին խոհանոցը, այնտեղ աշխատող լրագրողներին, նրանց խառնվածքը, թերթի առօրյան: Մինչդեռ «Բյուվ-Մերիի «Le Monde»-ը» գրքում հեղինակներն աշխատել են տեսականորեն հիմնավորել թերթի ստեղծման և զարգացման ողջ ընթացքը: Գրքում մեծ տեղ է տրված Զյուլբերտ Բյուվ-Մերիի անձնական և մասնագիտական կենսագրությանը:

«Le Monde»-ի պատմությանն են անդրադառնում նաև Ժ. Տիբոյի «Le Monde, histoire d'un journal» («Մի թերթի պատմություն») գիրքը և 1977-ին լույս տեսած «Dossiers et documents du Monde» («Le Monde»-ի դոսյեներն ու փաստաթղթերը») ժողովածուն: Առաջինը թերթի պատմության կանոնիկ շարադրանքն է, երկրորդը՝ թերթին վերաբերող փաստաթղթերի բավական ուշագրավ ժողովածու, որն արժեքավոր է ոչ միայն «Le Monde»-ը ուսումնասիրողների, այլև ֆրանսիական մամուլի տեսաբանների համար ընդհանրապես:

Իր «Le Monde» 1944-1995, histoire d'une entreprise de presse» («Le Monde» 1944-1995, մամուլի ձեռնարկության պատմություն») գրքում Պատրիկ Էվենոն անդրադառնում է թերթի ձեռնարկության պատմությանը՝ կարևորելով խմբագրության և ձեռնարկության տարանջատումը: Այստեղ ի հայտ են գալիս օրաթերթի տնտեսվարման ձևերն ու ողջ պատմական ընթացքը:

«Le Monde»-ի հանդեպ հետաքրքրությունն աճեց հատկապես նրա հիսնամյա հորելյանին նվիրված տոնակատարությունների նախօրեին: Լույս տեսան «Le Monde»-ն անցյալում և այսօր», «Մի թերթի պատմություն» գրքերը, ինչպես նաև մոտ 200 էջանոց հորելյանական ալբոմ՝ «Le Monde»-ը 1944-1994 թվականներին», որոնք հետագայում միավորվեցին մեկ ժողովածուի մեջ: Թերթի անցած ուղուն էին նվիրված նաև «Le Monde»-ի 1994 թ. դեկտեմբերի 18-ի և 19-ի բացառիկ համարները, որոնց էջերի քանակը հասնում էր 90-ի:

«Le Monde»-ը միայն մամուլի ֆրանսիացի տեսաբաններին չէ, որ հետաքրքրում է: Նրա մասին ուսումնասիրություն է գրել նաև Անգլիայի Արևելյան համալսարանի դասախոս Ջոն Ֆլետչերը: Իր «Le Monde. Past, present and future» («Le Monde»: Անցյալ, ներկա և ապագա») աշխատության մեջ Ֆլետչերը

«Le Monde»-ը համարում է բացառապես էլիտար թերթ՝ նախատեսված միայն էլիտար ընթերցողի համար, որին, այնուհանդերձ, հաջողվում է հավասարապես սիրելի լինել թե՛ երիտասարդներին, թե՛ մեծահասակներին: Նա գտնում է, որ «Le Monde»-ի բրիտանական համարժեքը չկա. Անգլիայում լույս տեսնող հեղինակավոր թերթերն անգամ՝ «The Guardian»-ը, «The Independent»-ը կամ «The Times»-ը, չեն կարողանում վայելել հասարակության բոլոր տարիքային խմբերի համակրանքը: Չեղինակը անդրադառնում է նաև թերթի կառուցվածքին և մոտեցումներին: Սա յուրօրինակ և հետաքրքիր հայացք է «Le Monde»-ին, որը բավականին տարբերվում է մամուլի ֆրանսիացի տեսաբանների մոտեցումներից:

Արտասահմանյան լրատվամիջոցների մասին մեզանում քիչ է գրվում: Ահա թե ինչու «Le Monde»-ի մասին հայերեն աշխատությունն ինքնին նորություն է: Ֆրանսիական մամուլի փորձն ընդհանրապես և «Le Monde»-ի անցած ուղին մասնավորապես մեծ դպրոց են, որից սովորելու շատ բան ունենք: Ֆրանսիական մամուլը, մեր համոզմամբ, իր բնույթով, ազգային մտածողությամբ ու ավանդապահությամբ ավելի հոգեհարազատ ու մոտ է մեզ:

Թերթը դիտարկել ենք ֆրանսիական մամուլի համապատկերում, քանի որ գտնում ենք՝ մամուլի որևէ օրգանի մասին ամբողջական պատկերացում կարելի է կազմել՝ քննելով այն տվյալ երկրի լրատվական դաշտում, մրցակիցների ու համակիրների կողքին, տվյալ ժամանակահատվածի մեջ:

Թերթի մասին եղած ֆրանսալեզու գրականությունը հիմնականում «Le Monde»-ը դիտարկում է իր ամբողջության մեջ, ներկայացվում են նրա պատմությունը, մոտեցումներն ու գաղափարախոսությունը: Մինչդեռ մենք հատուկ ուշադրություն ենք դարձրել թերթի բաժիններին, քանի որ դրանք, ենթարկվելով ընդհանուր սկզբունքների, այնուհանդերձ, տարբերվում են իրենց հարցադրումներով, նյութի մատուցման ձևով, ունեն ժանրային և լեզվաոճական որոշակի առանձնահատկություններ:

Չարկ եղած դեպքում զուգահեռներ ենք անցկացրել «Le Monde»-ի և հայկական մամուլի միջև: «Le Monde»-ի լույսի ներքո, ցավոք, ավելի հստակ են ուրվագծվում մեր մամուլի թերություններն ու բացթողումները: Կարծում ենք՝ այս

գուգահեռները ինչ-որ չափով առաջադրում են նաև հայկական մամուլում ծառայած խնդիրների լուծման տարբերակներ:

Ուսումնասիրելով թերթի 1987–2009 թվականների համարները՝ ներկայացրել ենք նաև ֆրանսիական օրաթերթի անդրադարձը Հայաստանին ու հայերին, դրանով իսկ՝ պարզել այս տարիներին ֆրանսիական հասարակության վերաբերմունքը մեր երկրի, մշակույթի, քաղաքական գործընթացների հանդեպ: Անդրադարձել ենք Ֆրանսիայում 1915 թ. հայոց ցեղասպանության ընդունման ընթացքին ու դրան հաջորդող արձագանքներին:

«Le Monde»-ի վերաբերյալ եղած գրականությունն ուսումնասիրելիս չենք հանդիպել թերթի ժանրային, լեզվաոճական առանձնահատկություններին, գովազդին վերաբերող դատողությունների կամ հատուկ վերլուծությունների: Ուստի փորձել ենք ներկայացնել, թե ինչ լեզվով է խոսում «Le Monde»-ը, որ ժանրերին է տուրք տալիս կոնկրետ թեմաների անդրադառնալիս, ինչ գովազդներ է տպագրում և գովազդի ստեղծման որ հնարանքներից է օգտվում: Վերլուծել ենք նաև թերթի վարած գովազդային քաղաքականությունը: Չէ՞ որ միայն այս դեպքում կարելի է առավել ճիշտ պատկերացում կազմել թերթի մտածողության, ոճի և մոտեցումների մասին:

«Le Monde»-ի քաղաքական կողմնորոշումը ներկայացնելու համար ուսումնասիրել ենք տվյալ ժամանակահատվածում Ֆրանսիայի պատմությունը, փորձել ենք համադրել այդ շրջանում «Le Monde»-ի արած քայլերն ու քաղաքական իրավիճակը Ֆրանսիայում:

Մամուլի շատ տեսաբաններ «Le Monde»-ին մեղադրում են խիստ էլիտար լինելու մեջ: Մասամբ հակադրվել ենք այս կարծիքին՝ բերելով մեր դիտարկումների վրա հիմնված որոշակի փաստարկներ:

Մանրամասն ներկայացնելով «Le Monde»-ի անցած ուղին՝ աշխատել ենք կանգ առնել թերթի համար դժվարին ժամանակներում ձեռնարկված քայլերի վրա, փորձել ենք վերլուծել այդ քայլերը և տալ գնահատականներ:

Չուսով ենք՝ մեր համեստ աշխատանքը կօգնի ամբողջական պատկերացում կազմելու ֆրանսիական օրաթերթի մասին, իսկ հայկական լրատվական աշխարհին կհիշեցնի, որ կա հզոր դպրոց, որից կարելի է դասեր քաղել:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ավանդներին հավատարիմ

Խոսել «Le Monde»-ի մասին և չներկայացնել նրա անցած ուղին, նշանակում է չասել նրա մասին ոչինչ, քանի որ «Le Monde»-ն այսօրվա հեղինակության համար պարտական է իր հիմնադիրներին, իր պատմությանը, իր անցած ուղուն: Մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը Ֆրանսիայում լույս էր տեսնում մի թերթ, որն արտաքին տեսքով և կատարած դերով նույնն էր, ինչ այսօրվա «Le Monde»-ը, միայն անունն էր տարբեր՝ «Le Temps»:

Այդ տարիներին ժողովրդավարական երկրներում գործում էին բարձր վարկանիշ ունեցող մի քանի թերթեր, որոնք իրենց որակյալ լրատվության և մեկնաբանությունների շնորհիվ հայտնի էին ողջ աշխարհում՝ «The Washington Post»-ը, «The New York Times»-ը՝ Ամերիկայում, «The Times»-ը՝ Անգլիայում, «Die Frankfurter Allgemeine Zeitung»-ը՝ Գերմանիայում, «La Stampa»-ն՝ Իտալիայում, այս շարքում էր նաև «Le Temps»-ը: Այն հիմնվել էր 1861-ին Ավգուստ Նեֆտզերի կողմից: Թերթը Երրորդ հանրապետության ծնունդն էր և կայսրության ընդդիմությունը, որը պայքարում էր Նապոլեոն Երրորդի իշխանության բռնապետական ռեժիմի դեմ: Իր ազատական գաղափարների համար այն սիրվեց ժողովրդի կողմից՝ դառնալով քաղաքական ընտրախավի, մտավորականության, տնտեսագետների խոսափողը: 1914 թվականին թերթի տպաքանակը 30000 էր՝ 1880 թ. 20000-ի համեմատ: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ Ֆրանսիայի մի մասը գրավվեց, և փակվեցին շատ պարբերականներ, շարունակեցին լույս տեսնել միայն այսպես կոչված «դավաճան» թերթերը: Դրանց մեջ էր և «Le Temps»-ը, որը, թուլություն ցուցաբերելով, հեռացավ իր որդեգրած ազատական սկզբունքներից՝ վերածվելով ֆաշիստական լրատվամիջոցի: Այդ ժամանակ էր, որ նրա դեմ դուրս եկան բոլոր առաջադեմ ուժերը: Փարիզի ազատագրումից հետո բոլոր գերմանամետ թերթերի հետ միասին փակվեց նաև

այս մեկը: «Le Temps»-ի արգելման պաշտոնական պատճառը կառավարության ընդունած օրենքն էր, որն արգելում էր բոլոր այն թերթերի վերաբացումը, որոնք շարունակել էին հրատարակվել հյուսիսային շրջանում՝ 1940 թ. օգոստոսի 10-ից և հարավային շրջանում՝ 1942 թ. նոյեմբերի 29-ից հետո, այսինքն՝ տվյալ տարածքի գրավումից 15 օր հետո: «Le Temps»-ն անցել էր սահմանը ընդամենը երկու օրով: Այնուհանդերձ, ենթակա էր փակման: Բայց թերթը դարձել էր փարիզցիների կյանքի մի մասը, ուստի անհրաժեշտ էր վերաբացել այն: Նոր թերթը պետք է ունենար նույն տեսքը, կատարեր նույն դերը, բայց անպայման տարբերվեր անվանումով: Պետք է զբաղեցներ «Le Temps»-ի՝ Իտալացիների փողոցի վրա տեղակայված շենքը, օգտագործեր նրա գույքը, մեքենաները, ընդուներ նրա աշխատակիցներին: Արդյունքում ստեղծվեց մի թերթ, որի անվանման չափն ու արտասանությունն անգամ համապատասխանում էին նախորդին՝ «Le Monde»: Չետագայում օգտվելով այն հանգամանքից, որ մարդկանց մոտ շատ է տպավորված «Le Temps»-ը, նեոֆաշիստները որոշեցին հրատարակել հենց նույն անունով թերթ, որը փաստորեն դեմ էր «Le Monde»-ին: Դա կարելի էր ենթադրել անգամ անվանումից՝ «Temps anti Monde»: Սակայն այս փորձը հաջողություն չունեցավ⁷:

Դժվար էր նաև հիմնադիր-տնօրենի ընտրության հարցը. նա չպետք է երբևէ առնչված լիներ «դավաճան» մամուլի հետ: 1944 թ. աշնանը Ֆրանսիայի Չանրապետության տեղեկատվության նախարար Պիեր-Չենրի Տեյտժենը, գեներալ դը Գոլի անմիջական աջակցությամբ, փնտրում էր նման մի անձնավորության: Ի վերջո, «Le Monde»-ի հիմնադիրն ու առաջին տնօրենը դարձավ *Յյուլբերտ Բյով-Մերի* (1902-1989)՝ սակավախոս ու լուրջ մի մարդ: Նրա հանրահայտ Սիրիուս մականունը սրբագրիչի սխալի արդյունքն էր, որը, չհասկանալով անգլերեն *serious* (լուրջ) բառը, ակամա շնորհեց նրան այդ կեղծանունը: «Le Monde»-ի ծննդյան օրից *Յյուլբերտ Բյով-Մերի*ի անունը նշվում է թերթի յուրաքանչյուր համարի

⁷ Sté Jeanneney J.-N., Julliard J., *Le Monde de Beuve-Méry ou le métier d'Alceste*, Éditions du Seuil, Paris, 1979, p.47-83 կամ Planchais J., *Un homme du Monde*, Éditions Calmann-Lévy, Paris, 1989, p.13-17.

առաջին էջում: Դա լավագույն վկայությունն է այն բանի, որ «Le Monde»-ը միշտ հավատարիմ է իր ավանդույթներին և երբեք չի մոռանում հիմնադիրներին:

Բյով-Մերին ծնվել է աղքատ ժամագործի ընտանիքում: Ուսմանը զուգահեռ ստիպված է եղել աշխատել: Սկզբնական շրջանում ստացել է գյուղատնտեսական և կրոնական կրթություն: Ավելի ուշ՝ «Les Nouvelles religieuses»-ը խմբագրելու տարիներին, հեռակա ուսանել է համալսարանում՝ ուսումնասիրելով իրավունք և լեզուներ: Իրավունքի գծով դոկտորականը պաշտպանել է 1928 թվականին, երբ Պրահայի ֆրանսիական ինստիտուտում դասավանդում էր միջազգային իրավունք: 1944 թ. սեպտեմբերին վերադառնում է Փարիզ և անմիջապես գործի անցնում՝ նշանակվելով գլխավոր խմբագիր «Temps présent»-ում: Թերթ հիմնադրելու հրավերը հնարավորություն էր՝ առավելագույնս օգտագործելու կուտակած փորձը⁸:

«Le Monde»-ի առաջին համարը լույս տեսավ 1944 թ. դեկտեմբերի 19-ին: Զյուրեքտ Բյով-Մերին այդ ժամանակ 42 տարեկան էր: Թերթը դարձավ նրա կյանքի ուղենիշը 25 տարի շարունակ: Այս քաղաքավարի և բարեհամբույր մարդն ուներ քաղաքական հստակ կողմնորոշում և ազատական գաղափարներ: «Le Monde»-ի առաջին համարում Զյուրեքտ Բյով-Մերիի տպագրած «A' nos lecteurs» («Մեր ընթերցողներին») հոդվածը ներկայացնում է տնօրենի պատկերացումները թերթի ուղղության և ապագայի մասին: Ըստ այս հոդվածի՝ թերթի հիմնական նպատակն է «հասցնել ընթերցողին պարզ, իրականությանը համապատասխանող, ամբողջական լրատվություն՝ հնարավորինս արագ»⁹: Բյով-Մերին ցանկանում էր մատուցել օբյեկտիվ, անաչառ, բազմակարծիք լրատվություն, և դա նրան հաջողվեց. թերթը հեղինակություն ու համբավ ձեռք բերեց ֆինանսական դժվարությունների և տնտեսական ճգնաժամի ժամանակահատվածում, երբ իր միակ հարստությունը որդեգրած սկզբունքներն էին: Ծայրահեղ համեստ լինելով՝ նա չէր խոստովանում իր դերը «Le Monde»-ի

⁸ Բյով-Մերիի կենսագրությունը տես՝ Jeanneney J.-N., Julliard J., Le Monde de Beuve-Méry ou le métier d'Alceste, Editions du Seuil, Paris, 1979, p.13-47, կամ՝ Fletcher J., Le Monde, past, present and future: A vehicle for the transmission of the cultural values of the French elite, <http://www.intellectbooks.com/europa/number6/fletcher.htm>.

⁹ Beuve-Méry H., «A' nos lecteurs», LE MONDE, 19 decembre 1944.

բարգավաճման գործում: Փաստերն ավելի խոսուն են. իր խմբագրած 25 տարիների ընթացքում թերթի տպաքանակը 130000-ից հասավ 500000-ի:

Թերթը հաստատեց իր անկախությունը ստեղծման առաջին տարիներից, երբ ֆինանսական անկախության մասին խոսք լինել չէր կարող. ծախսերը գերակշռում էին շահույթը, եղած չնչին գումարը օգտագործվում էր կահույքի ու մեքենաների ձեռքբերման, թերթի տպագրության որակի և բանվորների աշխատանքային պայմանների բարելավման վրա: Արդեն 1950-ին «Le Monde»-ի կապիտալը բազմապատկվեց մոտ հինգ անգամ՝ հասնելով 1 մլն ֆրանկի: Բաժնետերերը սկսեցին հարստանալ, թերթը զարգացում ապրեց:

Բյով-Մերիի ձեռնարկած հաջորդ կարևոր քայլը խմբագրության աշխատակիցներին թերթի կառավարմանը մասնակցելու հնարավորություն տալն էր: 1951 թ. ստեղծվեց «Le Monde»-ի խմբագիրների միությունը, որը, ձեռք բերելով բաժնեմասերի մեծամասնությունը (71,43%), դարձավ թերթի հիմնական բաժնետերը: Հետագայում այս ցուցանիշը նվազեց՝ առաջ բերելով միության դժգոհությունը: Նրա ներկայացուցիչները պնդում էին, որ իրենք թերթի ակտիվ ուժն են, և այն պետք է առավելապես պատկանի իր լրագրողներին: Խմբագիրների միության անդամներն իրավացի էին: Նրանք մեծապես նպաստեցին թերթի գաղափարական և տնտեսական աճին: Ավելի ուշ ծնունդ առան Կադրերի և Աշխատակիցների միությունները, որոնք համալրեցին «ներսի» բաժնետերերի կազմը և ապահովեցին թերթի անկախ կարգավիճակը: Հետագայում այս փորձը կիրառեցին նաև ֆրանսիական այլ լրատվամիջոցներ՝ «Paris Normandie»-ն (1973 թ.), «Le Figaro»-ն (1975 թ.), «France soire»-ը (1976 թ.)¹⁰:

Թերթի հիմնադիրը դիպուկ աչք ուներ նաև լրագրողների ընտրության հարցում: Ցավոք, «Le Monde»-ի արխիվային էջն ինտերնետում (<http://archives.lemonde.fr>) մեզ թույլ չի տալիս կարդալ այդ տարիներին տպագրված հոդվածները, սակայն այս բացը լրացնում են ֆրանսիական մամուլի տեսաբանները, որոնց աշխատություններում հաճախ հանդիպում են հատվածներ հիշյալ շրջանում հրապարակված հոդվածներից, երբեմն էլ՝ ամբողջական

¹⁰ Տե՛ս նաև Մենենշյան Ա., «Ինֆորմացիոն դեռնթոլոգիա», Ժուռնալիստիկա (տեսության և պատմության հարցեր), Պրակ 2, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2003, էջ 71-74:

հողվածներ: Այդ տարիներին «Le Monde»-ի էջերում առավել հաճախ հանդիպող անուններն են ժակ Ֆոլեն, Անդրե Ֆոնտենը, Բերնարդ Լոզանը, ժան Պլանշեն, ժակ Գերիֆը և այլք¹¹: Նրանք էին, որ հաստատեցին թերթի՝ մարդասիրության և ժողովրդավարական արժեքների պաշտպանության սկզբունքները: Հյուբերտ Բյով-Մերին թերթը խմբագրեց մինչև 1969 թվականը: Այդ ժամանակ արդեն «Le Monde»-ը Ֆրանսիայի թիվ մեկ օրաթերթն էր՝ որակով և ազդեցությամբ, ուներ մոտ 150 լրագրող, և լրատվության ոլորտի շատ փայլուն մասնագետներ ձգտում էին թղթակցել թերթին:

1969-ից թերթը սկսեց խմբագրել *ժակ Ֆոլեն*: Նա այստեղ էր արդեն երկար տարիներ. 1958-ից զբաղեցնում էր գլխավոր խմբագրի տեղակալի պաշտոնը: Անցումը Բյով-Մերիից ժակ Ֆոլենին կարելի է բնորոշել իբրև անցում պատանեկությունից հասուն տարիքի:

«Le Monde»-ն արդեն տնտեսապես բավական կայուն էր. իրենն էր Իտալացիների փողոցի գույքը, տպաքանակը համեմատաբար բարձր էր, գովազդն արդեն թերթի անբաժան մասն էր և զգալի օգուտ էր բերում: Ժակ Ֆոլենի նախաձեռնությամբ ստեղծվեցին լրացուցիչ հավելվածներ՝ նվիրված տարբեր բնագավառների, ինչն ավելի բազմազան դարձրեց թերթի բովանդակությունը:

Այս ժամանակահատվածի առավել կարևոր իրողությունն այն էր, որ «Le Monde»-ը, դեմ գնալով իր սկզբունքներին, սկսեց սատարել քաղաքական ձախ ուժերին: Վտանգ կար, որ այն կարող է կորցնել իր անկախ նկարագիրը: Ֆրանսիական մամուլի տեսաբաններն այս երևույթին տալիս են տարբեր մեկնաբանություններ: Ոմանք գտնում են, որ պարզապես փոխվել էր «Le Monde»-ի քաղաքական դիրքորոշումը, մյուսները, որոնք, ի դեպ, առավել մեծ թիվ են կազմում, պնդում են, թե դա տնօրեն ժակ Ֆոլենի և վարչական տնօրեն ժակ Սովաժոյի անձնական նկրտումների արդյունքն էր: Ժակ Ֆոլեն ցանկանում էր նախարարի աթոռ ստանալ Ֆրանսուա Միտերանի կառավարությունում, իսկ ժակ Սովաժոն՝ դառնալ «Le Monde»-ի տնօրեն: Ահա ինչու թերթն այդ ընթացքում դարձավ Ֆրանսուա Միտերանի հիմնական հենարանը: Մենք հակված ենք

¹¹ Թերթի՝ այս տարիների աշխատակիցների մասնագիտական և մարդկային որակների մանրամասն նկարագրությունը տես Planchais J., Un homme du Monde, Éditions Calmann-Lévy, Paris, 1989.

ընդունելու երկրորդ տարբերակը, քանի որ ձախ կողմնորոշման այս ընթացքը շատ կարճ տևեց և դժվար թե թերթի համար լիներ որդեգրած քաղաքական ուղղություն: Միտերանի ընտրվելուց և ժակ Ֆոլեի՝ «Le Monde»-ը թողնելուց քիչ անց սկսվեց թերթի և նախագահի, ինչպես նաև նրա վարած քաղաքականության հակամարտության շրջանը, տպագրվեց հակամիտերանական հոդվածների մի ամբողջ շարք:

Ֆոլեի դավաճանությունը թանկ նստեց թերթի վրա: 1980-ական թվականներից հետո վերջինիս տնտեսական վիճակը կտրուկ վատացավ: Դա առավել լավ նկատելի է ֆրանսիական մամուլի համապատկերում: Եթե 1981-1988 թթ. «Le Figaro»-ի սպառումը 336000 օրինակից հասել էր 432000 օրինակի, «Libération»-ինը՝ 70000-ից 195000-ի, «Les Échos»-ինը՝ 67000-ից 96000-ի, ապա «Le Monde»-ի ցուցանիշներն, ընդհակառակը, նվազում էին. նրա սպառումը այս տարիների ընթացքում 439000-ից իջավ 387000-ի¹²:

Տնտեսական անկայուն վիճակը տարածայնություններ առաջ բերեց խմբագրության ներսում. տեխնիկական անձնակազմը և տպարանի բանվորները պահանջում էին իրենց աշխատանքային պայմանների բարելավում:

Ժակ Ֆոլեն, որը Ֆրանսուա Միտերանի՝ նախագահի պաշտոնում ընտրվելուց հետո նշանակվեց Ֆրանսիայի տեղեկատվական ազգային կոմիտեի նախագահ, 1982-ին լքեց թերթը: Հեռացավ նաև վարչական տնօրեն ժակ Սովաժոն, որը նշանակվեց Մամուլի ձեռնարկությունների ազգային միության նախագահ: Սոցիալական և տնտեսական այս դժվարին իրավիճակում խմբագրությունը հարկադրված էր ընտրել նոր կառավարիչ: Երկու ամիս տևած քննարկումներից հետո «Le Monde»-ի խմբագրակազմը, բաժնետերերի հետ համատեղ, գտավ ամենահարմար թեկնածուին՝ *Անդրե Լորենին*, որը մինչ այդ թերթի քաղաքական բաժնի պետն էր: 1982 թ. մայիսի 27-ին Լորենը նշանակվեց «Le Monde»-ի խմբագիրների միության նախագահ և թերթի տնօրեն: Նա անմիջապես ձեռնամուխ եղավ ձեռնարկության ֆինանսական վիճակի կարգավորմանը և թերթի վարկանիշի բարձրացմանը: Մասնավորապես, մշակեց

¹² Albert P., La presse française (notes et études documentaires), Maulde et Renou, Paris, 1998, p.121, tableau 33.

ծախսերի պակասեցման, վաճառքի խթանման, ձեռնարկությունը վերականգնելու ծրագիր: Քայլեր էին արվում նաև ներխմբագրական հարաբերությունները շտկելու ուղղությամբ:

Չնայած դժվարություններին՝ «Le Monde»-ը չէր կորցրել հեղինակությունը Ֆրանսիայի քաղաքական ու լրատվական դաշտում: Ահա թե ինչու Ֆրանսուա Միտերանը և նրա շրջապատը ձգտում էին վերահսկել թերթը: Ժակ Ֆոլեի հեռանալուց հետո Իտալացիների փողոցի օրաթերթը հակակրանք էր վայելում կառավարությունում: Եվ ահա այն ժամանակ, երբ նոր խմբագիրը ձգտում էր դուրս գալ ճգնաժամային իրավիճակից, հանրապետության կառավարությունը անվստահություն է հայտնում Անդրե Լորենին: Սա միանշանակորեն կարելի է որակել իբրև ճնշում «Le Monde»-ի խմբագիրների միության վրա, որն իրավունք ուներ ցանկացած պահի առաջարկել թերթի տնօրենի նոր թեկնածություն: Թերևս մտայնությունը հետևյալն էր. վերահսկել ազդեցիկ թերթը՝ նրա կառավարումը հանձնելով յուրայիններից մեկին: Ըստ էության, Անդրե Լորենին պարզապես հնարավորություն չտրվեց աշխատելու, 1985 թ. հունվարին պահանջվեց նրա հրաժարականը, և այս դեպքում երկար քննարկումներ պետք չեղան նոր թեկնածու ընտրելու համար. թափուր տեղը զբաղեցրեց *Անդրե Ֆոնտենը*: Բաժնետերերն անմիջապես պահանջեցին ձեռնարկության բարելավման ծրագիր: Այն մշակվեց ու գործի դրվեց: Ըստ Ֆոնտենի «փրկության» ծրագրի՝ նախատեսվում էր աշխատավարձերի վերածնափոխում, Իտալացիների փողոցի անշարժ գույքի վաճառք, կապիտալի աճ՝ դրսից բաժնետերեր ներգրավելու միջոցով¹³:

Այս տարիներին թերթն աշխատում էր վնասով. «Le Monde»-ի բյուջեի դեֆիցիտը, 1984 թ. դեկտեմբերի 31-ի տվյալներով, 90 մլն ֆրանկ էր, մինչդեռ նրա գույքը, որը Ֆոնտենի ծրագրի համաձայն հանվել էր վաճառքի, գնահատվեց 147 մլն: Սա, թերևս, թույլ կտար ծածկել գոյացած դեֆիցիտը:

¹³ Albert P., La presse française (notes et etudes documentaires), Maulde et Renou, Paris, 1998, p. 125.

Ծրագրի հաջորդ կետը բաժնետերերի ներգրավումն էր: Այդ ժամանակ էր, որ ստեղծվեցին երկու «արտաքին»¹⁴ բաժնետիրական ընկերությունները՝ «Le Monde»-ի ընթերցողների միությունը, որը կատարեց 15 մլն ֆրանկի ներդրում և «Le Monde»-ձեռնարկություն» ընկերությունը (11 մլն ֆրանկի ներդրում): Ավելի ուշ արձանագրվեց օտարերկրյա կապիտալի մուտք՝ ի դեմս «Le Monde»-Եվրոպա» ընկերության¹⁵: Արտաքին բաժնետերերը ձեռնամուխ եղան թերթի ֆինանսական մեխանիզմների կարգավորմանը: Սա մեծ օգնություն էր թերթին, միաժամանակ՝ երաշխիք, որ ներդրված գումարները հնարավորինս արդյունավետ կօգտագործվեն:

Պետք է խոստովանենք, որ Անդրե Ֆոնտենի ծրագիրը բավական արդյունավետ էր: Արդեն 1985 թ. դեկտեմբերի 31-ի տվյալներով, դեռևս «Le Monde» - ձեռնարկություն» ընկերության ստեղծումից առաջ, կար որոշակի առաջընթաց. թերթի կապիտալը արձանագրում էր 8.4 մլն ֆրանկ դրամագլուխ: Մեր կարծիքով՝ ընթերցողի մասնակցությունը թերթի կառավարմանը նաև հոգեբանական ճիշտ հաշվարկ էր, որն առավել սերտացրեց ընթերցող - «Le Monde» կապը:

1986-1988 թվականներին աճ ապրեց նաև թերթի սպառման ցուցանիշը, ինչը, թերևս, կապված էր Ֆրանսիայի քաղաքական իրականության ակտիվացման հետ: 1986 թ. օրենսդիր իշխանությունների և 1988 թ. նախագահական ընտրությունները սևեռեցին հանրության ուշադրությունը դեպի թերթը և նպաստեցին վաճառքի աճին:

Այնուհանդերձ, այս քիչ թե շատ կայուն ֆինանսական վիճակը շարունակական չեղավ: Ֆինանսական տնօրեն Բերնանդ Վուտսը որոշեց թերթի համար ներմուծել ժամանակակից տպագրական սարքավորումներ: Դրանք, ինչպես նաև դրանց համար հատկացված հումքը գնվեցին վարկով, և դա՝ այն ժամանակ, երբ նման գործարքները չտեսնված թանկ արժեին: Սա մեծ սխալ էր և հարված «Le Monde»-ի աճ ապրող տնտեսությանը: Բացի այդ, 1990-ին թերթը ստիպված էր լքել Իտալացիների փողոցի իր շենքը, որտեղ ծնունդ էր առել (ըստ Ֆոնտենի փրկության ծրագրի՝ այն վաճառվել էր դեռևս 1985 թվին): Ընդ որում, բաժինները

¹⁴ «Le Monde»-ի բաժնետերերը բաժանվում են «ներսի» և «արտաքին» (գործընկեր) բաժնետիրական ընկերությունների: Ներսի բաժնետերերը թերթի աշխատակիցներն են՝ խմբագիրներ, տեխնիկական և վարչական անձնակազմ, մինչդեռ արտաքին բաժնետերերը ներկայացնում են արտաքին ուժեր: Այսուհետ՝ առանց չափերտների:

¹⁵ «Le Monde»-ի այդ տարիների բաժնետերերի կազմը տես L'actionnariat du Monde, http://medias.lemonde.fr/medias/pdf_obj/sup_comptes-monde_040604.pdf, էջ14:

վարձակալեցին տարբեր շենքեր: Օրաթերթը բաժանվեց հինգ մասի. խմբագրությունը տեղակայվեց Ֆալգեր փողոցում, թերթի լրացուցիչ հրապարակումները՝ նույն փողոցի վրա գտնվող մեկ այլ շենքում, գովազդային բաժինը՝ «Publicis» ընկերության շենքում, որը գտնվում էր Ելիսեյան դաշտերի մոտ, տպարանը և վարչությունը՝ Իվրի փողոցում, երկու իրար մոտ գտնվող շենքերում:

Թերթի միասնականության կորուստը բերեց ուժերի կորստի: «Le Monde»-ի բաժնետերերը սկսեցին փնտրել նոր խմբագիր:

Չնայած նրան, որ այսօր «Le Monde»-ի էջերում, թերթի նախկին տնօրեններին թվարկելիս, նշվում է, որ Անդրե Ֆոնտենը կառավարել է «Le Monde»-ը մինչև 1991 թվականը, այնուհանդերձ, մեր ձեռքի տակ եղած փաստերը խոսում են այն մասին, որ 1989 թ. դեկտեմբերից նա այլևս չէր կատարում տնօրենի պարտականությունները և նույնիսկ արդեն առաջարկել էր իրեն հաջորդող թեկնածու՝ Դանիել Վերնեին:

1990-ական թվականները վճռորոշ էին թերթում աշխատող լրագրողների համար: Այս տարիներին էր, որ «Le Monde»-ի տնօրինությունը, խմբագիրների միության հետ համատեղ, մշակեց և ընդունեց «Le Monde»-ի խմբագիրների կանոնադրությունը, որը սահմանում է թերթի լրագրողների իրավունքներն ու պարտականությունները, կարգավորում աշխատակից - տնօրինություն հարաբերությունները: Մինչ այդ թերթի լրագրողների շահերը պաշտպանում և պարտավորությունները սահմանում էին ֆրանսիական տեղեկատվական դաշտը կարգավորող կանոնագրերը:

Ֆրանսիական մամուլում առհասարակ մեծ տեղ է տրվում լրագրողի իրավունքների և պարտականությունների հստակ ձևակերպմանն ու պաշտպանությանը: Դրանք ամրագրվում են էթիկական կանոնագրերում, ինչպիսիք են «Ժուռնալիստների մասնագիտական պարտավորությունների մասին» կանոնադրությունը (ընդունվել է 1918 թ.), «Ազատ մամուլի իրավունքների և պարտավորությունների հռչակագիրը» (1945 թ.), «Ժուռնալիստների իրավունքների և պարտավորությունների հռչակագիրը» (1971 թ.), «Քաղաքացու՝ իրազեկ լինելու

մասին» կանոնադրությունը (1973 թ.): Ֆրանսիայում գործող բոլոր լրատվական կանոնները հիմնավորվում են 1789 թ. Ազգային ասամբլեայի կողմից ընդունված «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի» 11-րդ հոդվածով. «Յուրաքանչյուր մարդ կարող է մտածել, գրել, արտահայտվել ազատորեն՝ օրենքը չչարաշահելու պայմանով»: Առաջին լրագրողական օրենքը «Ժուռնալիստների մասնագիտական պարտավորությունների մասին կանոնադրությունն» էր, որն ընդունվեց 1918 թվին Ժուռնալիստների ազգային միության կողմից, ապա վերանայվեց 1938-ին: Այստեղ մասնավորապես ասվում է, որ իր կոչմանն արժանի լրագրողը պատասխանատու է իր բոլոր գրածների համար, անգամ՝ անստորագիր. առանց փաստերի մեղադրանքները, փաստերի նենգափոխումը, դեպքերը ոչ ճիշտ ներկայացնելը մասնագիտական սխալներ են, չի կարելի նշել մոտավոր թիվ կամ անվանում, չի կարելի դրամ վերցնել որևէ հասարակական կազմակերպությունից կամ մասնավոր ձեռնարկությունից, եթե վտանգ կա, որ լրագրողի մասնագիտությունը, նրա կապերը կարող են օգտագործվել անձնական նկատառումներով: Կանոնադրությունն արգելում է նաև գրագողությունը, գովազդները, կոմերցիոն նյութերը լրագրողի անունով ստորագրելը, մասնագիտական գաղտնիք հրապարակելը:

1945-ին՝ «Le Monde»-ի ծնունդից մեկ տարի անց, հետպատերազմյան Ֆրանսիայում ընդունվեց «Ազատ մամուլի իրավունքների և պարտավորությունների հռչակագիրը», որը, սակայն, քաղաքական խառնաշփոթի մեջ օրենքի ուժ չստացավ: Ավելի ուշ դեոնթոլոգիական կանոնների հանդեպ հետաքրքրությունը թարմացավ, և ընդունվեց ֆրանսիական մամուլի թերևս ամենաներկայանալի փաստաթուղթը՝ «Ժուռնալիստների իրավունքների և պարտավորությունների հռչակագիրը»: Փաստաթուղթը, որ սիրով ընդունվեց ֆրանսիացի լրագրողների մեծամասնության կողմից և հավանության արժանացավ համաեվրոպական լրագրողական վեց միությունների կողմից, բաժանված է երկու մասի: Մեկում ներկայացվում են լրագրողի պարտականություններն ու անելիքները, մյուսում՝ իրավունքներն ու երաշխիքները:

1973 թվականին չորս լրատվական կազմակերպություններ՝ Լրագրողների ազգային միությունը, Ֆրանսիայի լրագրողների միությունը, Լրագրողների միությունը և Լրագրողական ընկերությունների ֆրանսիական ֆեդերացիան ընդունեցին նոր կանոնադրություն «Իրազեկ լինելու իրավունքի մասին»¹⁶: Այս կանոնադրության հիմքը ժամանակակից հասարակության մեջ լրատվության պակասն է: Մամուլի ազատությունը բավարար չէ, որպեսզի ապահովի քաղաքացու լիովին իրազեկված լինելը, մինչդեռ լրատվամիջոցները պարտավոր են կատարել տեղեկատվություն հաղորդելու իրենց գործառույթը՝ ընթերցողին տեղեկացնելով քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային նշանակալի իրադարձությունների մասին:

Մինչև 1990-ականները Ֆրանսիայում լրագրողների մասնագիտական գաղտնիքը բավարար չափով պաշտպանված չէր, և վերջիններս պահանջում էին, որ պաշտոնապես ճանաչվի լրատվության աղբյուրը գաղտնի պահելու իրենց իրավունքը: 1993 թ. հունվարի 4-ին ընդունվեց օրենք, որը ուստիկանություն կամ դատական այլ մարմինների մոտ տարված լրագրողներին թույլատրում էր վկայություն չտալ այն իրողությունների մասին, որոնց իրենք ծանոթ են մասնագիտության բերումով, ինչպես նաև գաղտնի պահել իրենց լրատվության աղբյուրները՝ իբրև մասնագիտական գաղտնիք¹⁷:

Մենք փորձեցինք ներկայացնել էթիկական այն դաշտը, որտեղ ձևավորվել է «Le Monde»-ի խմբագիրների մասնագիտական վարքը, այն կանոնները, որոնք պայմանավորել են թերթի լրագրողների գործելաոճը: «Le Monde»-ի խմբագիրների կանոնադրությունը կարծես միավորում է վերը նշված կանոնագրերը¹⁸:

1991 թվականին «Le Monde»-ի բաժնետերերի գլխավոր համաժողովը քննարկում էր թերթի տնօրենի ընտրության հարցը և կանգ առավ Ընթերցողների միության առաջարկած թեկնածուի՝ *ժակ Լեսուրնի* վրա, որը միության ստեղծման օրվանից վարչական խորհրդի անդամ էր: Նկատենք, որ այս թեկնածուն ներսից

¹⁶ Stéu Clement J., *Déontologie de l'information codes et conseils de presse (étude comparative des règles de la morale pratique dans les métiers d'information à travers le monde)*, par TTI Pontoise, Paris, 1981, p.23.

¹⁷ Մենենշյան Ա., «Ինֆորմացիոն դեոնոլոգիա», Ժողովրդավարական (տեսության և պատմության հարցեր), Պրակ 2, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2003, էջ 71-74:

¹⁸ Ferenczi T., «L'Esprit de dialogue», *De'ontologie des médias*, Bussière Camedon, Paris, 1998, p.106.

չէր, ներկայացնում էր թերթի ընթերցողներին: Կարծում ենք, որ այս հանգամանքը նրան օգնեց ընտրվելու հարցում. թերևս բաժնետերերը հույս ունեին, որ Լեսուրնը կտպագրի ընթերցողի նախասիրություններին ավելի մոտ թերթ: Ավելի ուշ կնկատենք, որ նրանք սխալվեցին: Մեր կարծիքով՝ ձեռնարկության համար դժվարին իրավիճակում պետք է դեկին կանգնած լիներ ներքին խոհանոցին լավատեղյակ մեկը:

Ժակ Լեսուրնը ստացել էր պոլիտեխնիկական կրթություն, բայց զբաղվում էր տնտեսության ուսումնասիրությամբ: Այս մասնագիտությունը պետք է որ օգներ խմբագրին ճգնաժամը հաղթահարելիս: Այնուհանդերձ, թերթի վիճակն ավելի վատացավ: Գովազդից ստացված եկամուտն անընդմեջ նվազում էր. եթե 1990 թվին այս ցուցանիշը 527 մլն ֆրանկ էր, 1991-ին՝ 388 մլն ֆրանկ, 1992-ին՝ 304 մլն ֆրանկ, ապա 1993-ին այն կազմում էր ընդամենը 238 մլն ֆրանկ¹⁹: Եկամտի նվազումը համակշռելու համար միակ լուծումը, որ գտան հրատարակիչները, վաճառքի գնի բարձրացումն էր: Այն 5-ից հասավ 7 ֆրանկի, ինչի հետևանքով գրանցվեց ընթերցողների կորուստ, նվազեց թերթի սպառման ցուցանիշը (1988-ին մեկ օրում սպառվում էր 387000, 1994-ին՝ 354000 օրինակ²⁰):

1993 թվականին «Le Monde»-ի խմբագիրների միությունը, առանց ժակ Լեսուրնի մասնակցության և անգամ առանց նրան տեղյակ պահելու, հարցում անցկացրեց խմբագրության պատասխանատուների և բաժնետերերի ներկայացուցիչների մեջ՝ պարզելու, թե ինչ ռազմավարություն կարելի է որդեգրել թերթի տնտեսական դժվարությունները հաղթահարելու ճանապարհին: Խմբագիրների միությունը բարձրացնում էր նաև խմբագրի օրինականության հարցը. Լեսուրնը ոչ թե խմբագրության թեկնածուն է եղել, ինչպես ընդունված է, այլ՝ արտաքին բաժնետերերի: Բացի այդ, նա թերացել է բաժնետերերի կողմից հանձնարարված՝ թերթի զարգացման ծրագիրն իրագործելու հարցում: Արդյունքում՝ խմբագրության վիճակը ոչ միայն չի լավացել, այլ հակառակը՝ վատացել է:

¹⁹ Տե՛ս՝ <http://www.mondepub.fr/Decou/Regie/index.htm>.

²⁰ Albert P., La presse française (notes et études documentaires), Maulde et Renou, Paris, 1998, p.121, tableau 33.

Փաստորեն, «Le Monde»-ի խմբագիրների միությունը ողջ մեղքը բարդում էր գործող տնօրենի վրա, սակայն հանուն արդարության նշենք, որ այդ տարիներին վատ էր ֆրանսիական մամուլի վիճակն ընդհանուր առմամբ: Մասնավորապես «Le Monde»-ի երկու հիմնական մրցակիցները՝ «Le Figaro»-ն և «Libération»-ը, նույնպես ունեին տնտեսական դժվարություններ, որոնց պատճառով նրանց գինը ևս բարձրացավ, իսկ լսարանը նվազեց: Այսպես՝ եթե 1988-ին «Le Figaro»-ն սպառում էր 432000 օրինակ մեկ օրում, ապա 1994-ին այս ցուցանիշը հասնում էր ընդամենը 383000-ի: «Libération»-ը ևս սպառման նվազում արձանագրեց՝ նույն տարիներին մեկ օրվա վաճառքը 195000-ից հասցնելով 174000 օրինակի²¹:

Ինչևէ, թերթի համար տվյալ պահի հիմնական խնդիրը ճգնաժամի պատճառի բացահայտումն էր, ինչից էլ կախված կլինեին այն հաղթահարելու քայլերի ընտրությունը: Եթե «Le Monde»-ը ֆրանսիական մամուլի մեծ ճգնաժամի զոհերից մեկն էր, ապա հարկավոր էր որդեգրել պաշտպանական ռազմավարություն՝ բարձրացնելով թերթի գինը և այն հարմարեցնելով ծախսերին: Իսկ եթե սխալը թերթինն էր, ապա ոչ մի դեպքում չէր կարելի թույլ տալ վաճառքի գնի բարձրացում. պարզապես հարկավոր էր գտնել սխալը և ուղղել այն:

Թերթի ներսում կային տարբեր կարծիքներ. եթե «Le Monde»-ի խմբագիրների միությունը գտնում էր, որ սխալը թերթինն է, ապա ժակ Լեսուրնը և նրա կողմնակիցները հիմնական պատճառը համարում էին արտաքին դժվարությունները: Լեսուրնը դուրս եկավ «Le Monde»-ի խմբագիրների միության դեմ՝ մեղադրանքով, որ առանց իրեն զգուշացնելու վերջինս նամակ է ուղարկել խմբագիրներին ու բաժնետերերին: Հարցի քննարկումը բավական բուռն հակամարտություն առաջացրեց բաժնետերերի միջև: «Le Monde»-ի խմբագիրների միությունը մեծ ազդեցություն ուներ թերթում և հասավ նրան, որ ժակ Լեսուրնը ազատվեց աշխատանքից:

Այս կապակցությամբ «Le Monde»-ի 1994 թ. փետրվարի 12-ի համարում տպագրվեց Լեսուրնի «Աշխատանքից ազատվելու պատճառները» հոդվածը, որտեղ արդեն իսկ ազատված խմբագիրը հրաժեշտ էր տալիս ընթերցողներին և

²¹ Նույն տեղում:

բացահայտում իր անկարողությունը՝ ստեղծված իրավիճակին դիմակայելու հարցում: «Այն դեպքում, երբ գովազդից ստացվող եկամուտն իջավ մոտ 50%-ով, թերթի գոյությունը պահպանելու համար մեզ մնում էր միայն բարձրացնել վաճառքի գինը, ինչն էլ բերեց ընթերցողների թվի նվազման»²²: Հոդվածում Լետուրնը խոսում է նաև ձեռնարկության տնօրինության և բաժնետերերի շրջանում առկա անհանդուրժողականության մթնոլորտի մասին, ինչը ևս խանգարել է իրեն. «Դեռևս 1993 թ. աշնան կեսից որոշ մարդիկ աշխատում էին ինձ թերթից հեռացնելու ուղղությամբ: Այս տրամադրվածությունը, բնական է, որ պետք է անվստահության մթնոլորտ ստեղծեր»²³:

Խմբագրությունը սկսեց նոր տնօրեն փնտրել: Նշենք, որ այս տարիներից սկսած (1994-1995 թթ.)՝ թերթը մշտապես եղել է մեր ուշադրության կենտրոնում, և պետք է արձանագրենք, որ անգամ այս դժվարին ժամանակահատվածում, երբ առկա էին տնտեսական դժվարություններ ու հակասություններ խմբագրության ներսում, «Le Monde»-ը կարողանում էր ըստ արժանվույն դիմակայել և ընթերցողին զերծ պահել այս ամենից՝ մշտապես մատուցելով որակյալ և արհեստավարժ լրատվություն:

1994 թ. փետրվարի 11-ին բաժնետերերի ներկայացուցիչները հավաքվեցին՝ տնօրենի նոր թեկնածու առաջադրելու համար: Երկու թեկնածուներից Բրունո Ֆրապան հրաժարվեց, մնաց *ժան-Մարի Կոլոմբանի* թեկնածությունը: Փետրվարի 18-ին նա միության վարչական խորհրդին ներկայացրեց իր հիմնական անելիքները՝ թերթին վերադարձնել նախկին բարձր կարգավիճակը, նպաստել սպառման աճին: Նորընտիր տնօրենը պարտավորվեց ավելի ուշ խմբագիրների ու բաժնետերերի դատին հանձնել խմբագրական և վարչական տնօրինության այն կազմը, որի հետ կցանկանար կառավարել «Le Monde»-ը և իրականացնել աշխատանքային ծրագիրը:

Տնօրինության կազմը ձևավորելու հարցում Կոլոմբանին հանդես բերեց շրջահայեցություն՝ ընտրելով փորձառու, բանիմաց, արհեստավարժ մասնագետների: Խմբագրության տնօրենի պաշտոնը զբաղեցնելու էր «Le Monde»-

²² Lesourne J., «Les raisons d'une démission», LE MONDE, 12 fevrier 1994.

²³ Նույն տեղում:

ի հին խմբագիրներից մեկը՝ Նոել-ժան Բերժերուն: Նա եղել էր նաև «L'Expresse»-ի տեխնիկական տնօրենը, իր ժամանակակից մոտեցումներով թարմացրել էր այն, ուստի կարող էր օգտակար լինել նաև «Le Monde»-ին: Հին խմբագիրներից ևս մեկը՝ Ֆիլիպ Լաբարդը, որը երկար տարիներ «Le Monde»-ի տնտեսական բաժնի պետն էր, պետք է դառնար լրատվական բաժնի պետ: Նա մասնագիտությամբ բանկիր էր, ուներ սուր աչք և կարող էր օգնել թերթին՝ վերականգնելու տնտեսական կայունությունը: Իսկ Դոմինիք Ալդվին՝ «Ժորժ Պոմպիդու» կենտրոնի գլխավոր տնօրենը և FR₃ հեռուստաընկերության նախկին տնօրենը, պետք է իր վրա վերցներ «Le Monde»-ի տնօրենի տեղակալի պարտականությունները՝ զբաղվելով կառավարման և վարչական հարցերով: Այս կինը ստացել էր պոլիտեխնիկական կրթություն, Փարիզի մի շարք ճարտարապետական կառույցների ինժեներն էր, ուներ կառավարման փորձ, բազում կապեր, որոնք կարող էին օգուտ բերել «Le Monde»-ին: Ի դեպ՝ Փարիզի քաղաքապետ Պերպինիանի կինն էր:

Կոլոմբանիի ներկայացրած աշխատանքային ծրագիրը լրջորեն մշակված փաստաթուղթ էր, որտեղ նա հիմնավորում էր իր անելիքները՝ մատնանշելով կոնկրետ քայլեր. «Մենք պետք է կարողանանք կառուցել միջազգային հնչեղության որակյալ թերթ, որը կհամապատասխանի այս երկրի ընտրախավի ճաշակին և կհասցեագրվի նրանց, ովքեր փնտրում են լավագույնը»²⁴:

Իր ծրագրում Կոլոմբանին առաջարկում էր նաև ֆրանսիական օրաթերթային մամուլը ճգնաժամից դուրս բերելու ուղիներ. դրա համար յուրաքանչյուր օրաթերթ իր խմբագրության ներսում պետք է իրագործեր նորացման ու բարեփոխման ծրագրեր, հարկավոր էր վերանայել ընթերցող-մամուլ կապը, և դա մեկ թերթի խնդիր չէր. պետք է մասնակցեին ֆրանսիական մամուլի բոլոր օրգանները:

Ըստ Կոլոմբանիի՝ անհրաժեշտ էր թարմացնել «Le Monde»-ի բովանդակությունը: Ուստի պետք է գործի դրվեր հաստատուն հեղինակությամբ փորձառու խմբագրական կազմ, որը թերթի բովանդակությունը կդարձներ նպատակային, այսինքն՝ հստակ հասցեագրված: Կոլոմբանին պարզ գիտակցում էր

²⁴ Colombani J.-M., «Lettre aux rédacteurs du Monde», LE MONDE, 16 fevrier 1994.

նաև, որ թերթը պարտավոր է ամեն օր աշխատել ընթերցող գրավելու ուղղությամբ և մշտապես ջանալ ավելին մատուցել, քան իր մրցակիցները: Ըստ նրա՝ «Le Monde»-ը պետք է մատուցի յուրօրինակ լրատվություն, երեկոյան օրաթերթն իրավունք չունի լինել պարզունակ, լրատվության մատուցման նրա ձևը և մոտեցումը պետք է տարբեր լինեն «Le Figaro»-ի և «Libération»-ի առավոտյան հրապարակումներից: Թերթը պետք է մատուցի որակյալ վերլուծություն, որը ցույց կտա ընթերցողին ոչ միայն այն, ինչ եղել է, այլև այն, ինչ կարող է լինել:

Կոլոմբանին գտնում էր, որ այս ամենին պետք է հասնել մի քանի փուլերով: Առաջին հերթին անհրաժեշտ էր կազմավորել լրագրողների ուժեղ բանակ, որոնց մեջ կլինեին թե՛ արդեն ճանաչված հեղինակություններ, թե՛ սկսնակներ, որոնք նոր շունչ կբերեին խմբագրություն, կվերափոխեին թերթի բովանդակությունն ու արտաքին տեսքը:

Կոլոմբանին գիտակցում էր նաև իր թուլությունը՝ այն, որ չունեի կառավարման փորձ: Խնդրի լուծումը նա տեսնում էր տնօրինության կոմիտե ստեղծելու մեջ, որը կօգներ իրեն այդ հարցում:

Դեռևս նախընտրական ծրագրում ապագա տնօրենը տեղ էր հատկացրել «Le Monde»-ի 50-ամյա հոբելյանը մեծ շուքով մշտելու խնդրին, որին պետք է հաջորդեր խմբագրական կառույցների վերաձևավորումը: Այս ամենը ենթադրում էր խոշոր ծախսեր: Դրա համար Կոլոմբանին նախատեսում էր արտաքին կապիտալի նոր մուտք՝ նախապես բացառելով, որ այն կվտանգի թերթի անկախությանը: «Ես գիտեմ, որ դժվար ժամանակներ են, բայց եթե մենք միավորենք մեր ուժերը, կարծում եմ՝ կկարողանանք ոտքի կանգնել, վերափոխել թերթի դեմքը: Բազում լրատվամիջոցների մեջ մենք պետք է վերագտնենք մեզ արժանի առաջնային տեղը՝ ճնշումներից չենթարկվելու դիրքորոշմամբ: Մեզանից է կախված ամեն բան»²⁵, - այսպես է ավարտում Կոլոմբանին իր նամակը «Le Monde»-ի խմբագիրներին: Իրականում Կոլոմբանին արեց շատ ավելին, քան խոստացել էր 1994 թ. փետրվարին, իհարկե, մեծ դժվարությունների ու ջանքերի գնով:

²⁵ Նույն տեղում:

1994 թ. փետրվարի 25-ին բաժնետերերի ներկայացուցիչները հաստատեցին ժան-Մարի Կոլոմբանիի թեկնածությունը՝ հավանություն տալով նրա ծրագրին ու տնօրինության կազմին: Իսկ արդեն մարտի 4-ին «Le Monde»-ի բաժնետերերի գլխավոր համաժողովը պաշտոնապես ընդունեց ժակ Լեսուրնի հրաժարականը և 1042 կողմ ձայնով (1240 ձայնից) խմբագիրների միության կառավարիչ ու հրատարակչության տնօրեն նշանակեց Կոլոմբանիին:

ժան-Մարի Կոլոմբանին ծնվել է 1948 թ. հուլիսի 7-ին, Դակարում: Երբ ընտրվում էր «Le Monde»-ի տնօրեն, արդեն ուներ լրագրողական հարուստ փորձ ինչպես մամուլի, այնպես էլ հեռուստալրագրության բնագավառում: Ավարտել է Փարիզի Քաղաքական ուսմունքների ինստիտուտը, ուսումնասիրել նաև հասարակական իրավունք: Լրագրողի մասնագիտությամբ սկսել է զբաղվել 1973 թվականից ORTF, հետո France 3 հեռուստաընկերություններում, «Le Monde» եկել է 1977-ին՝ իբրև քաղաքական բաժնի խմբագիր, 1982-ին դարձել է այս բաժնի պետի տեղակալ, իսկ 1983-1990 թվերին՝ քաղաքական բաժնի պետ: 1991 թվականից զբաղեցնում էր խմբագրության տնօրենի տեղակալի պաշտոնը: «Le Monde»-ում աշխատելու տարիներին ևս Կոլոմբանին վարել է բազում հեռուստահաղորդումներ տարբեր հեռուստաընկերությունների եթերում՝ «Տնային առաջադրանք» (TF1), «Ճշմարտության պահը» (France 2) և այլն: Մի շարք գրքերի հեղինակ է՝ «Ֆրանսիա - Ամերիկա վտանգավոր կապ» (2001 թ.), «Բոլորը՝ ամերիկացիներ: Աշխարհը 2001 թ. սեպտեմբերի 11-ից հետո» (2001 թ.), «Կալեդոնյան ուտոպիան» (1985 թ.), «Նախագահի դիմանկար» (1985 թ.), «Սպիտակ ամուսնություն» (1985 թ., ժան-Իվ Լոմոյի հետ համատեղ), «Վստահության հարցեր Ռայմոնդ Բարայի հետ» (1987 թ.), «Ֆրանսիան՝ առանց Միտերանի» (1992 թ.) և այլն²⁶:

Անցած ճանապարհի բացթողումների գիտակցումը հաջողության գրավականներից է: Իր պարտականություններին անցնելու առաջին օրերին, 1994 թ. մարտի 6-ի և 7-ի համարներում «Le Monde»-ի էջերում հանդիպում ենք Կոլոմբանիի գործունեության ծրագրին, որտեղ հեղինակն անդրադառնում է թերթի

²⁶ Տե՛ս՝ <http://www.forum-events.com/amphi/biographie.php?idi=4&idinv=4> կամ <http://www.evene.fr/celebre/biographie/jean-marie-colombani-15967.php>.

երեք թույլ կողմերին՝ սպառնան ցածր ցուցանիշ, 40 մլն ֆրանկ դեֆիցիտով բյուջե և տպարան, որն իր ամբողջ ուժով չի աշխատում: Նոր կապիտալ ներդրումները կարող էին արդեն իսկ դժվար կացության մեջ գտնվող թերթը դարձնել որոշ ուժերի կամակատար: Կոլոմբանին իր հողվածում խոստանում է բաժնետերերի հետ համատեղ ջանքերով մշակել ռազմավարություն, որը կբարելավի թերթը՝ վնաս չհասցնելով նրա անկախությանը. «Մենք նախընտրում ենք անկախության դժվարությունները կախյալ վիճակի անհոգ կյանքից»²⁷, - վստահեցնում է հեղինակը:

Արձանագրենք մեկ փաստ. այս երկու օրվա հողվածներում Կոլոմբանին մի քանի անգամ հիշատակում է ժակ Լեսուրնի անունը, նրա մասին խոսում խիստ հարգալից՝ նշելով, որ եթե չլինեին նրա ձեռնարկած քայլերը, ապա թերթի տնտեսությունն ավելի վատթար վիճակում կհայտնվեր: Ի դեպ, ժակ Լեսուրնը կտրականապես դեմ էր Կոլոմբանիի թեկնածությանը, դեմ էր նաև թերթի հին բաժնետերերից մեկը՝ «Յուրբերտ Բյով-Մերի» ընկերությունը, որի մասին ևս դրական է արտահայտվում նորանշանակ խմբագիրը:

Եթե հիշենք, թե երբեմն ինչպես են տեղի ունենում գլխավոր խմբագիրների փոփոխությունները հայաստանյան մամուլում, ապա այս անհիշաչարությունը կստանա բավական բարձր գնահատական:

Կոլոմբանիի այս հողվածները, որոնք մանրամասնորեն ներկայացնում են թերթի խնդիրները, ընթերցողի հետ կիսում դժվարություններն ու կասկածները, հրաշալի միջոց են՝ ընթերցողին թերթի հետ կապելու, նոր տնօրենի հանդեպ վստահություն ստեղծելու առումով: Նման մտերմիկ զրույցներ իր տնտեսության ու ներքին հարցերի մասին թերթն իրեն թույլ է տալիս միայն շրջադարձային պահերին, բայց դա էլ բավական է, որ ընթերցողն ապրի թերթի խնդիրներով:

Տնօրենի պաշտոնում ժան-Մարի Կոլոմբանին հասկացավ, որ «Le Monde»-ի վիճակը շատ ավելի վատ է, քան ինքը պատկերացնում էր: Հրատարակչության տնօրեն և կառավարիչ պաշտոնապես նշանակվելու երեկոյան հայտնի դարձավ, որ միջոցներ չկան անգամ հաջորդ օրվա տպագրության ծախսերը հոգալու համար: Կոլոմբանին ստիպված էր որոշակիորեն ազդել Իվրի տպարանի վրա, որպեսզի

²⁷ Colombani J.-M., «De'fis», LE MONDE, 6 mars 1994.

թերթը լույս տեսնի: Դա, թերևս, հեշտ բան չէր, քանի որ տպարանի տնօրեն Ռենե Չաբերտը ևս թերահավատորեն էր մոտենում նոր կառավարչին՝ բոլորի մոտ կրկնելով, թե նա չի դիմակայի դժվարություններին և իր պաշտոնում երկար չի մնա: Չետագայում Կոլոմբանին ամեն ինչ արեց ձեռնարկության ներսում աշխատակիցների միջև հարաբերությունները կարգավորելու համար:

Ձեռնարկության տնօրենների կոմիտեն և խմբագրության նոր տնօրինությունը կազմավորելուց հետո խմբագիրը ստիպված էր անդրադառնալ տնտեսական և ֆինանսական խնդիրներին: Անհրաժեշտ էին նոր ներդրումներ: Սկսվեցին բանակցությունները բաժնետերերի հետ. նրանց բացատրվեց, որ անհրաժեշտ է թերթի կապիտալը վերաբաժանել: Չարկավոր էր համոզել, որ թերթի ճիշտ կառավարման դեպքում կարելի է ունենալ տեսանելի առաջընթաց և մեծ եկամուտներ: Բացի այդ, անհրաժեշտ էր բաժնետերերին հավաստիացնել, որ լրագրողները իրավասու են և ունակ կառավարելու թերթը, որպեսզի կապիտալի վերաբաժանման արդյունքում խմբագրությունը և իր աշխատակիցները հանկարծ չմնային խաղից դուրս վիճակում, ավելին՝ միտում կար մեծացնելու խմբագրության ազդեցության ոլորտը, ինչը թույլ կտար խմբագրությանը և Կոլոմբանիին իրական ազատություն ունենալ թերթի կառավարման և որոշումների ընդունման հարցում:

Արտաքին ներդրողների մեծ մասը, սակայն, առանձնապես շահագրգռված չէր՝ գիտակցելով, որ այս ակցիան ուղղված է իր հնարավորությունները սահմանափակելուն: Այնուհանդերձ, ստեղծվեց ռազմավարական կոմիտե՝ բաղկացած թերթի բաժնետիրական ընկերությունների նախագահներից, որը պետք է զբաղվեր կապիտալի վերաբաժանման գործընթացով: Կոմիտեի նախագահն էր Ռենե Տոմասը՝ «Le Monde»-ի խմբագիրների միության նախագահը: Մշակվեց կապիտալի աճի ծրագիր, որը պետք է իրականացվեր 1994-1997 թվականների ընթացքում:

1994 թ. հոկտեմբերի 28-ին «Le Monde»-ի հրավիրած գլխավոր համաժողովը հավաքեց թերթի բոլոր բաժնետերերին: Քննարկվում էր կապիտալի վերաբաժանումը և Ժան-Մարի Կոլոմբանիի առաջարկը՝ բաժնետերերի ընկերությունը վերափոխել անանուն միության, որը կունենար իր տնօրինությունը և

վերահսկողության խորհուրդը: Խմբագիրների միության 1240 անդամից 1150-ը կողմ քվեարկեցին Կոլոմբանիի առաջարկին, չնայած որ անանուն բաժնետերերի միությունն իր ձևով օտար և նոր երևույթ էր ֆրանսիական մամուլի ձեռնարկությունների տնտեսության համար: Միության նախագահ ընտրվեց Ժան-Մարի Կոլոմբանին, իսկ վերահսկողության խորհրդի նախագահ՝ Ալեն Մինքը:

Նոր անանուն միությունը տնօրինում էր 1922 բաժնեմաս, նախկին 1240-ի դիմաց: Բաժնեմասերի բաշխումը կատարվեց այնպես, որպեսզի պահպանվի նախկին հավասարակշռությունը. թերթի ներսի բաժնետերերը պետք է ունենային համեմատաբար շատ բաժնեմասեր: Այս նպատակով Կոլոմբանին կառավարչին հատկացված իր 86 բաժնեմասերը զիջեց Խմբագիրների միությանը: Թերթը համալրվեց հինգ նոր արտաքին ներդրողով: Դրանք էին՝ «*Le Monde*»-*ներդրող*» ընկերությունը, որը տնօրինեց ընդհանուր կապիտալի 8,58%-ը, «*Le Monde*»-*մամուլ*» ընկերությունը՝ 6,83%, երրորդ բաժնետերը «*Le Monde*»-*եվրոպա*»-ն էր՝ 2,86% բաժնեմասով, հաջորդը՝ «*Le Monde*»-*դիտորդ*»-ը՝ 5,27%-ով, և վերջին նոր ներդրողը «*Կլոդ-Քերնար մասնակցություն*» ընկերությունն էր՝ 2,86% բաժնեմասով: Այս հինգ նոր արտաքին բաժնետերերին ավելանում են ևս երկուսը հներից՝ «*Le Monde*»-ի *ընթերցողների միությունը* և «*Le Monde*»-*ձեռնարկություն*» ընկերությունը, որոնցից յուրաքանչյուրն ուներ 10,43% բաժնեմաս²⁸:

Ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ այս գործարքը կազմակերպվեց ժայրահեղ զգուշությամբ, այնպես, որ արտաքին ներդրողներից և ոչ մեկը չէր տնօրինում ողջ կապիտալի 10-11%-ից ավելին, իսկ բոլորը միասին չէին գերազանցում 50%-ը, այսինքն՝ չէին կարող սպառնալ թերթի անկախությանը: Ալեն Մինքը շարունակ հիշեցնում էր, որ սա, թերևս, վերջին անգամ է, որ կապիտալ ներդրումները փրկում են թերթը՝ առանց նրա նկատմամբ իշխանություն ստանալու: Սա բավական հետաքրքիր լուծում էր թերթի համար: Հետագայում Կոլոմբանին ձգտում էր ամեն կերպ ավելացնել ներսի բաժնետերերի բաժինը: Այսպես՝ եթե 1997 թ. ապրիլի տվյալներով ներսի բաժնետերերը տնօրինում էին բաժնեմասերի 52.6%-ը, արտաքին բաժնետերերը՝ 47.4%-ը, ապա 1998 թ. հունիսին

²⁸ Տե՛ս «L'actionnariat du Monde», http://medias.lemonde.fr/medias/pdf_obj/sup_comptes-monde_040604.pdf, p. 14.

ներսի բաժնետերերը տնօրինում էին 54.86% բաժնեմասեր, արտաքինները՝ 46.24%: 1999 թ. հունիսին արտաքին բաժնետերերի բաժինը իջավ 45.39%-ի, իսկ արդեն 2000 թվին՝ 44.4%-ի²⁹: Այսինքն՝ թերթն անվերջ աշխատում էր նվազագույնի հասցնել արտաքին բաժնետերերի ազդեցությունը:

Այս նախաձեռնությունից հետո «Le Monde»-ը դարձավ առավել վերահսկելի, հնարավորինս բացառվեցին կեղծիքները: Թերթի հետ կապված բոլոր որոշումներն ընդունվում, ամեն տեսակի ընտրություններն անցկացվում են երկու փուլով՝ սկզբում բաժնետիրական ընկերություններում ներգրավված բաժնետերերի, ապա բաժնետիրական ընկերությունների միջև: Բացի այդ, թերթը վերահսկելու առումով մեծ դեր ստանձնեց Վերահսկողության խորհուրդը, որի անդամ են հանդիսանում արտաքին բաժնետիրական ընկերություններից յուրաքանչյուրի նախագահները:

Բաժնետերերի կողմից խմբագրության վրա ճնշում գործադրելու փորձերը վերջնականապես բացառելու նպատակով խմբագիրների միության նախագահ Օլիվիե Բիֆոն և Ընթերցողների միության նախագահ Ալեն Մինքը կազմեցին Վերահսկողության խորհրդի կանոնադրությունը, որը բոլոր բաժնետերերի կողմից ընդունվեց միաձայն:

Կանոնադրության տարբերակը տպագրված է «Le Monde»-ի 1995 թ. ապրիլի 13-ի համարում: Նախքան այն ներկայացնելը, թերթը հանդես է գալիս նախաբանով, որտեղ ներկայացվում են կանոնադրության նպատակն ու խնդիրները. «Իր ստեղծումից 50 տարի հետո «Le Monde»-ը նոր կյանք է սկսում: Թերթը ջանում է վերագտնել այն ոգին, որում ինքը ձևավորվել է, ձգտում է պահպանել իր հիմնադիրների ստեղծած արժեքները՝ ապահովելով բաժնետերերի բազմազանություն և անկախ կարգավիճակ: Հետևելով իր սովորույթներին, միևնույն ժամանակ հարմարվելով նոր ժամանակներին՝ Վերահսկողության խորհուրդը որոշեց ընդունել և հրապարակել կանոնադրություն՝ մանրամասնելով այն հիմունքները, որոնք կանոնակարգում են իր գործունեությունը և մյուս բաժնետերերի համար հաստատում այն սկզբունքները, որ «Le Monde»-ի հին արտաքին բաժնետերերը՝ Ընթերցողների միությունը և «Le Monde»

²⁹ St'eu Eveno P., Le journal Le Monde (une histoire d'indépendance), éditions Odile Jacob, Paris, 2001, p. 272.

ձեռնարկություն» ընկերությունը որդեգրել են իրենց ստեղծումից ի վեր, և որոնց համաձայն նրանք պարտավորվում են չխառնվել պարբերականի խմբագրական կյանքին»³⁰:

Հետո շարադրվում է կանոնադրությունը, որի համաձայն՝ «Le Monde»-ի բաժնետերերի վերահսկողության խորհուրդը պարտավորվում է համագործակցել թերթի հետ՝ ապահովելով նրա անկախությունը բոլոր տեսակի իշխանություններից: Հանձն է առնում կատարել իր պարտականությունները ձեռնարկության տնտեսական շուկայում՝ առանց միջամտելու թերթի հրապարակումների բովանդակությանը, պաշտպանելով թերթի ֆինանսական շահերը, հարգելով նրանում առկա բազմակարծությունը: Եթե արտաքին բաժնետերը ներդրումներ է կատարում, ապա դա ընդամենը ֆինանսական գործարք է և ոչ թե խոսափող գտնելու փորձ. բաժնետերը երբեք չպետք է խառնվի խմբագրական, հրատարակչական գործերին:

Գաղափարական անկախության համար պայքարի այս օրինակը հրաշալի ուղեցույց կարող է դառնալ հայաստանյան մամուլի համար: Ահա թե ինչու ենք մանրամասնությամբ անդրադառնում այս ամենին: Կարծում ենք՝ հայաստանյան մամուլը դեռ շատ հեռու է տնտեսվարման այս ձևից: Մեզանում ճգնաժամ ապրող թերթերը կամ փակվում են, կամ գտնում մի լավ հովանավոր և դառնում նրա խոսափողը: Մինչդեռ արտասահմանում մամուլի ձեռնարկությունների տնտեսվարման լուրջ դպրոց կա: Ինչպես ֆրանսիական, այնպես էլ ընդհանրապես արևմտյան մամուլի օրգանները ջանում են տարանջատել թերթի խմբագրական կյանքը և ձեռնարկության կառավարումը, ինչը սահմանափակում է բաժնետերերի հնարավորությունը խմբագրության վրա ճնշում գործադրելու կամ թերթի միջոցով շահարկելու իրենց քաղաքական հետաքրքրությունները:

Այդ հեռավորությունը պահպանելն, ինչ խոսք, բավական դժվար է: «Le Monde»-ի դեպքում, դեռևս թերթի ստեղծման առաջին օրերին, Հյուլբերտ Բյով-Մերին էր, որ պատմեչ դրեց բաժնետերերի առջև: Ավելի ուշ՝ 70-ական թվականներին, ձեռնարկությունը կորցրեց իր կայունությունը՝ վտանգ ստեղծելով

³⁰ «La charte du conseil de surveillance», LE MONDE, 13 avril 1995.

խմբագրության անկախության համար: Եվ ահա 1994-1995 թվականներին Կոլոմբանին ձգտում էր վերագտնել ձեռնարկության կայունությունն ու խմբագրության անկախությունը: 1994 թ. սեպտեմբերի 21-ի «Le Monde»-ի համարում Ժան-Մարի Կոլոմբանին ներկայացնում է մի հոդված, որտեղ առավելագույնս արտահայտվում է նրա այդ ցանկությունը. «Մենք պայքարում ենք ձեռնարկության անկախության համար, ինչը կապահովի լրագրողի անհատական ազատությունը: Մենք նորացնում և ուժեղացնում ենք «Le Monde»-ը, որպեսզի այն դարձնենք ոչ թե ֆրանսիական մամուլի լավագույն օրաթերթը, այլ աշխարհի մամուլի լավագույն օրաթերթերից մեկը: Ահա թե ինչու նոր տնօրինությունը ցանկացավ թարմացնել թերթը և ձեռնարկությունը, ինչը յուրօրինակ վերադարձ էր մեր հիմնադրի սկզբունքներին»³¹: Այս հոդվածում Կոլոմբանին անդրադառնում է նաև ֆրանսիական մամուլին սպառնացող երեք հիմնական վտանգներին: Ըստ տնօրենի՝ առաջին վտանգն իշխանություն-մամուլի օրգան կապն է, ինչը կարող է ուժեղացնել թերթի հանդեպ իշխանությունների վերահսկողությունը և հարված հասցնել գաղափարական անկախությանը: Զաջորդ վտանգը պատրաստի լրատվության օգտագործումն է: Զեղինակը նկատի ունի լրատվական գործակալություններից և լրատվության այլ աղբյուրներից վերցված պատրաստի մյուսերը, որոնք թերթի արտադրանքը չեն: Առիթից օգտվելով՝ նշենք, որ «Le Monde»-ում շատ քիչ են հանդիպում նման մյուսեր և հիմնականում վերաբերում են միջազգային լրատվությանը: Սա ինչ-որ չափով կարելի է արդարացնել, քանի որ որևէ լրատվամիջոց չի կարող աշխարհի բոլոր երկրներում սեփական թղթակիցներ ունենալ, և այս դեպքում լրատվական գործակալությունից օգտվելն անխուսափելի է դառնում: Այնուհանդերձ, եթե հնարավոր է որևէ իրադարձության վերաբերյալ սեփական լրատվություն ունենալ, որը տարբեր կլինի մյուսներից և կարտահայտի լրատվամիջոցի մոտեցումը, ապա մեծ սխալ է այդ հնարավորությունից հրաժարվելը: Սա հատկապես պետք է գիտակցեն հայաստանյան թերթերը, որտեղ հաճախ ամբողջ էջեր են լցվում տարբեր լրատվական գործակալություններից ստացված լուրերով, այն էլ՝ տեղական

³¹ Colombani J.-M., «Héritage», LE MONDE, 21 septembre, 1994.

լուրերով, այն դեպքում, երբ հաստիքով կամ պայմանագրային հիմունքով աշխատող հիմնական լրագրողները կարող են օրերով նյութ չունենալ թերթում:

Հոդվածում արտահայտված երրորդ և վերջին մտահոգությունը վերաբերում է նորագույն տեխնոլոգիաների զարգացմանը, որոնց զանգվածային օգտագործումը երկրորդական է դարձնում մամուլի դերը՝ անմիջականորեն ազդելով տպագիր լրատվամիջոցների սպառման ցուցանիշների վրա, լրատվական աշխարհում ձևավորելով մտքի և վերլուծության պակաս:

Կոլումբանիի բարձրագրած վերջին խնդիրն այսօր խիստ արդիական է Ֆրանսիայում և արդեն երկու տասնամյակից ավելի գտնվում է մամուլի տեսաբանների ուշադրության կենտրոնում: Եթե մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը Ֆրանսիայում տպագիր մամուլը հաղորդակցության հիմնական միջոցն էր, ապա պատերազմից հետո այն իր տեղը զիջեց ռադիոյին և հեռուստատեսությանը: Արդեն 1980-ականներին պետությունը և անհատ ձեռներեցները ներդրումներ էին կատարում առավելապես էլեկտրոնային լրատվամիջոցներում³²: Ավելի ուշ նոր մեդիայի ծնունդն ու զարգացումը ավելի բարդացրեց տպագիր մամուլի վիճակը:

«Le Monde»-ը մշտապես լավ է գիտակցել, որ իր զարգացումը հնարավոր չէ ազգային օրաթերթային մամուլից դուրս: Իր կառավարման առաջին օրվանից Ժան-Մարի Կոլումբանին ձգտում էր կապեր հաստատել մրցակիցների հետ՝ քաջ գիտակցելով, որ միասնական ուժերով ավելի հեշտ կլինի հաղթահարել ֆրանսիական մամուլի առջև ծառայած խնդիրները: Նա գտնում էր, որ ամենադժվարը հեռուստատեսության հետ մրցակցելն է: Այս դեպքում հեռուստատեսության այժմյան պայմաններում ու պատկերավորությունը հակադրվում են թերթերը վերանայելու, տարածության մեջ տեղափոխելու

³² Բերենք որոշ թվային տվյալներ. 1994 թ. Ֆրանսիայում տպագրվում էր 9.5 մլն օրինակ օրաթերթ, 70 մլն շաբաթաթերթ, 65 մլն ամսագիր, մինչդեռ դրանց համընթաց գործում էին 50-60 մլն լսարան ունեցող ռադիոկայաններ, հեռուստալսարանը կազմում էր մոտ 30 մլն: Այսինքն՝ ֆրանսիացիների 40%-ը կարդում էր օրաթերթ (1973 թ. 55%-ի և 1988 թ. 43%-ի փոխարեն), ավելի քան 90%-ը թերթում էր ամենաքիչը մեկ ամսագիր, 70%-ը լսում էր ռադիո և 80%-ը դիտում էր հեռուստացույց: Այսպիսով՝ յուրաքանչյուր ֆրանսիացի օրվա մեջ 37 րոպե թերթ էր կարդում (որից 15 րոպեն՝ օրաթերթ): Սա 4 անգամ քիչ է ռադիո լսելու (147 րոպե) և 5 անգամ քիչ հեռուստացույց դիտելու ժամանակից (185 րոպե): (Ավելի մանրամասն տե՛ս Մենենշյան Ա., «Մամուլի և էլեկտրոնային լրատվական միջոցների պայքարը Ֆրանսիայում», Ժուռնալիստիկա (տեսության և պատմության հարցեր), Պրակ Բ, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2001, էջ 189-192):

հնարավորությանը, ինչպես նաև տեղեկատվության առավել բազմակողմանի և մանրակրկիտ մատուցմանը: Կոլոմբանին գործընկերներին առաջարկում էր միավորվել մամուլում գովազդային օգուտների մակարդակը բարձրացնելու համար, քանզի կարծում էր, որ մամուլի օրգաններից ոչ մեկը չէր փրկվի մյուսի փակվելով: Եթե ազգային օրաթերթային մամուլից վերանար մրցակցությունը, այս շուկան կթուլանար: Թերթերը պետք է պայքարեին լավագույն որակյալ ծառայություն մատուցելու համար, բայց ոչ իրար դեմ, այլ իրար հետ: Այս տարիներին արդեն «Le Monde»-ը ֆրանսիական լրագրողական կազմակերպությունների անդամ էր (Փարիզյան մամուլի միություն, Ազգային օրաթերթային մամուլ - 5 և այլն) և ակտիվորեն մասնակցում էր ազգային լրատվական շուկայի բարելավմանն ուղղված բոլոր աշխատանքներին:

Կոլոմբանիի տնօրինության առաջին տարիների մասին խոսելիս չենք կարող չնշել, որ հենց այս ժամանակ մեծ շուքով նշվեց թերթի 50-ամյա հոբելյանը (1994 թ. դեկտեմբերին), հիմնովին փոխվեց արտաքին տեսքը (1995 թ. հունվարին), մշակվեց թերթի տարածման նոր քաղաքականություն, որը վերաբերում էր ինչպես բաժանորդագրմանը, այնպես էլ հատավաճառին, մշակվեցին վաճառքի տարբեր ձևեր:

«Le Monde»-ն այսօր օգտվում է ինչպես փոստային բաժանորդագրությունից, այնպես էլ թերթի տարածման ցանցերից: Կա ևս մեկ ձև, երբ թերթի ցրիչները անմիջապես տպագրությունից հետո օրաթերթի համարը հասցնում են ընթերցողի տուն: Այնուհանդերձ, թերթի վաճառքը հիմնականում իրականացվում է կրպակներում:

Սկսած 1995 թ. հունվարից՝ մեծ ուշադրություն դարձվեց թերթի տարածման ծառայությունների աշխատանքի արդիականացմանը, տպարանի կողմից ժամերի և արտադրման նորմերի պահպանմանը: Սա շատ կարևոր աշխատանք էր, քանի որ թերթի լույսընծայման անգամ փոքր ուշացումը կարող է զգալիորեն անդրադառնալ սպառման ցուցանիշի վրա: «Le Monde»-ի առաջին համարները Փարիզի կենտրոնում կարելի է ձեռք բերել ժամը 12.30-ին: Երեկոյան թերթի համար սա բավական լավ ցուցանիշ է: Նրա առավոտյան գործընկերները՝ «Le Figaro»-ն կամ

«Libération»-ը, լույս են տեսնում գիշերը, բայց ընթերցողին հասնում են «Le Monde»-ից ընդամենը մի քանի ժամ առաջ, այն դեպքում, երբ վերջինս առաջարկում է առավել թարմ լրատվություն: Սա, մեր կարծիքով, մեծ առավելություն է և այն հիմնական գործոններից մեկը, որը թույլ տվեց թերթին գրավել շուկայի մեծ մասը: Իհարկե, այս ամենը «Le Monde»-ին տրվում է դժվարությամբ, լարված աշխատանքի արդյունքում³³: 1998-1999 թվականներին թերթի աշխատակիցները ձեռնամուխ եղան Ֆրանսիայի քաղաքների փողոցներում ու թաղամասերում վաճառքի եղանակների և սպառման ցուցանիշների ուսումնասիրությանը³⁴: Սա թույլ տվեց հայտնաբերել քաղաքների առավել թույլ կամ ոչ պարբերաբար մատակարարվող շրջանները: Տրվեցին որոշակի հանձնարարություններ թերթի տարածման և բաժանորդագրման ծառայություններին: 2000 թվականին նույն ձևով ուսումնասիրվեցին Ֆրանսիայի հեռավոր շրջաններն ու թերթի արտասահմանյան շուկան, միջոցներ ձեռնարկվեցին այս տեղերում ևս օպերատիվ և պարբերական վաճառք կազմակերպելու ուղղությամբ, ավելացվեցին վաճառակետերը: Այս աշխատանքների արդյունքում այսօր «Le Monde»-ը հասանելի է իր ընթերցողին ոչ միայն Ֆրանսիայում, այլև աշխարհի մի շարք երկրներում (Բելգիա, Բուլղարիա, Կիպրոս, Հունաստան, ԱՄՆ, Թուրքիա, Ռուսաստան, Ուկրաինա, Ռումինիա ...): Ցավոք, Հայաստանը դեռևս այդ երկրների թվին չի պատկանում: Ռուսաստանում թերթի պաշտոնական տարածողը Մամուլի միջազգային կենտրոնն է³⁵:

Կապիտալի վերաբաժանումը, տարածման, վաճառքի ձևերի բարելավումը, արտաքին տեսքի նորացումը և գովազդից ստացված եկամտի ավելացումը վերջնականապես կարգավորեցին «Le Monde»-ի ֆինանսական հաշիվները: Կոլոմբանիին հաջողվեց հաղթահարել ճգնաժամը և հաստատել որոշակի կայունություն: Սակայն տնօրենը գիտակցում էր, որ չի կարելի բավարարվել ձեռք բերածով, պետք է ձեռնարկել քայլեր, որոնք կպահպանեն կայուն վիճակը և

³³ «Le Monde»-ի աշխատանքային գրաֆիկը տե՛ս http://medias.lemonde.fr/medias/obj_multi/portrait_quotidien.swf:

³⁴ Այս ուսումնասիրությունների արդյունքը տե՛ս http://a1692.g.akamai.net/f/1692/2042/1h/medias.lemonde.fr/medias/flash_obj/ventefrance.swf:

³⁵ «Le Monde»-ի վաճառքով զբաղվող կազմակերպություններն ու վաճառակետերն արտերկրում տե՛ս <http://www.lemonde.fr/web/article/0,1-0@2-3386,36-170270,0.html>:

կնպաստեն զարգացմանը: Նա հատկապես կարևորում էր թերթի լրագրողների ավանդն այդ հարցում: Այս միտքն է արտահայտում «Նոր «Le Monde», մասերկրորդ» փաստաթուղթը, որը տպագրված է թերթի 1996 թ. հուլիսի 30-ի համարում: Այն խոսք է՝ ուղղված խմբագիրներին, և վերաբերում է նրանց անելիքներին ու մոտեցումներին: Կոլոմբանին հիշեցնում է, որ կատարել է իր նախընտրական խոստումների մի մասը միայն. մասնավորապես, որոշ չափով լուծվել են տնտեսական խնդիրները, բարձրացել է թերթի որակը, նրան տրվել է բոլորովին նոր տեսք, ինչը ևս ունեցել է դրական հետևանքներ: Հիմա արդեն հերթը լրագրողներինն է. տնօրենը զգուշացնում է, որ «Le Monde»-ը չի պահպանի իր ինքնուրույնությունն ու անկախությունը, եթե լրագրողներն իրենց հեռու պահեն թերթի դժվարություններից. «Մենք պետք է հասնենք այն գնացքին, որը բաց ենք թողել 80-ականների սկզբին: Եթե ուզում ենք հաղթել, ապա պետք է վերագտնենք այն թերթը, որը հիացնում էր ընթերցողներին: Դրա համար պետք է զարգացնենք մեր մասնագիտական մշակույթը: Պետք է վերագտնենք այն պահը, երբ ամենահեղինակավոր ձեռնարկություններն առիթ էին փնտրում մեր գործընկերը դառնալու, երբ մեզանից յուրաքանչյուրի համար «Le Monde»-ի կազմում լինելը համարժեք էր լավագույնը լինելուն»³⁶: Տնօրենը գիտակցում է, որ ձևավորված խիտ տեղեկատվական ցանցում, ազգային ու միջազգային մրցակցության պայմաններում դա դժվար գործ է, բայց ոչ անհնար. «Մենք պետք է հավասարվենք միջազգային որակյալ մամուլի օրգաններին, եթե ուզում ենք պահպանել «մոլորակի թիվ մեկ ֆրանսալեզու օրաթերթի» մեր համբավը»³⁷: Փաստաթուղթը զգոնության կոչ է լրագրողներին, միաժամանակ՝ վերջիններիս ոգեշնչելու և ի գործ տրամադրելու միջոց:

Կոլոմբանին իր հիմնական խնդիրներից էր համարում նաև աշխատակիցների միջև փոխհարաբերությունների կարգավորումը: Մերժելով անհանդուրժողականության մթնոլորտը թերթում և գիտակցելով, որ միայն միասնական համատեղ աշխատանքի արդյունքը կարող է արժևորվել՝ «Le Monde»-ը մշտապես հետևել է իր պատերի ներսում տիրող տրամադրությանը: Թերթում կան կառույցներ, որոնք

³⁶ Colombani J.-M., «Le nouveau Monde, acte 2», LE MONDE, 30 juillet 1996.

³⁷ Նույն տեղում:

միտված են համակարգելու աշխատակիցների համատեղ աշխատանքը. *խմբագրության կոմիտեն* զբաղվում է լրագրողների փոխհարաբերությունների խնդիրներով, *Ձեռնարկության կոմիտեի* պարտականություններից է հարթել թերթի մյուս աշխատակիցների (տեխնիկական և վարչական անձնակազմ, տպարանի, գովազդային բաժնի աշխատակիցներ) միջև ծագած տարաձայնությունները: Սա, իրոք, շատ կարևոր գործոն է յուրաքանչյուր թերթի առաջընթացի համար, ինչը գրեթե միշտ անտեսվում է հայաստանյան լրատվամիջոցների կողմից. այստեղ չես հանդիպի հարաբերություններ կարգավորող կառույցների, ավելին, լրատվամիջոցներում տիրող անվստահության և անառողջ մրցակցության մթնոլորտը հաճախ արժանանում է անտարբեր վերաբերմունքի կամ, որ ավելի վատ է՝ մաս դառնում «պառակտի՛ր, որ տիրես» քաղաքականության...

Աշխատակիցների փոխհարաբերությունների կարգավորումը նպատակ ուներ ամրացնել կապերը խմբագրությունում և խթանել կոլեկտիվ աշխատանքը: Բայց դրա համար առաջին հերթին անհրաժեշտ էր, որ «Le Monde»-ը միավորվեր ֆիզիկապես՝ իր բոլոր կառույցները տեղավորելով մեկ շենքի մեջ: Առաջին տեղափոխումից վեց տարի անց «Le Monde»-ը նորից տեղափոխվում էր: Սակայն, եթե նախորդ անգամ այն բաժանման միտում ուներ, ապա այս անգամ՝ միավորման: 1996 թվականի ընթացքում թերթի բաժինները միավորվեցին Փարիզի հինգերորդ հրապարակի մոտ գտնվող Կլոդ-Բերնար փողոցի թիվ 21 շենքում: Սա հնարավորություն տվեց թարմացնել կապերը խմբագրության, տեխնիկական և վարչական ծառայությունների, գովազդային բաժնի և տպարանի միջև: Աշխատակիցների հանդիպումները աստիճանների վրա, միջանցքներում, ձեռնարկության սրճարանում վերացրին մեկուսացումը, կրկին ստեղծեցին մեկ ընտանիքի մթնոլորտ՝ վերականգնելով հին «Le Monde»-ի միասնական ոգին:

Այս տարիներին (1996-1999 թթ.) թերթն անընդհատ փոփոխվում էր: Մի շարք բաժիններ հանվեցին, որոշները ձևափոխվեցին կամ անվանափոխվեցին, ավելացան նորերը, անընդհատ փոխվում էին լրացուցիչ բաժինները: Մեզ թվում էր, թե այս փոփոխություններն ավանդույթ կդառնան, բայց որոշ ժամանակ անց պետք է համոզվեինք, որ սա ընդամենը անցումային շրջան էր, երբ թերթը

փորձարկում էր այս կամ այն նորամուծության արդյունավետությունը: Փորձարկումները, թերևս, նպատակ ունեին համապատասխանեցնել օրաթերթն ընթերցողների պահանջներին և լրատվական շուկայի պայմաններին:

Ընթերցողի համար Կոլոմբանիի տնօրինության ժամանակաշրջանի աչքի զարնող նորամուծություններից էր մեդիատորի պաշտոնի ստեղծումը: Սա նորություն էր ոչ միայն «Le Monde»-ի, այլև ընդհանրապես ֆրանսիական մամուլի համար: Մեդիատորը պետք է կապ ստեղծեր ընթերցողի և խմբագրակազմի միջև, լսեր առաջինների դժգոհություններն ու կարծիքները՝ դրանք փոխանցելով խմբագիրներին: Պետք է նաև ընթերցողներին ծանոթացներ խմբագրական աշխատանքներին, լրատվամիջոցի գործունեության ձևերին ու հնարավորություններին, ինչպես նաև լրագրողի իրավունքներին ու պարտականություններին: Մեդիատորի պաշտոնի ստեղծումը կարևոր քայլ էր ընթերցող - «Le Monde» հարաբերությունների մերձեցման ճանապարհին: Դա հավաստում էր, որ թերթը պատրաստ է ընդունել քննադատությունները և հաշվի առնել ընթերցողի կարծիքը: «Le Monde»-ի առաջին մեդիատորն էր Անդրե Լորենը, որը թերթ մտավ 1996 թ. հուլիսին: Նրա աշխատանքը առավելապես փորձնական բնույթ ուներ: Ընթերցողին ևս ժամանակ էր պետք, որ հասկանար այս կառույցի նպատակն ու անելիքը և մասնակցեր գործընթացին: 1998 թ. հուլիսին այս պաշտոնը ստանձնեց Ռոբերտ Սոլեն (ի դեպ, թերթի խմբագրության հետ նամակագրական կապից պարզ դարձավ, որ նրա մայրը մեր հայրենակիցն է), այսօր մեդիատորի պարտականությունները կատարում է Վերոնիք Մորուն:

Վերջին 15 տարում «Le Monde»-ը մի քանի անգամ բարձրացրել է վաճառքի գինը, բայց դա զարմանալիորեն քիչ է ազդել ընթերցողների թվի վրա: Ինչպե՞ս է դա հաջողվում ֆրանսիական օրաթերթին. նման քայլ անելուց առաջ թերթը միշտ դիմում է սոցիալոգիաների: Արդյունքները սովորաբար այսպիսին են. ընթերցողներից ոմանք դժգոհում են թանկացումից, ինչը բնական է. սպառողը միշտ ձգտում է օգտվել էժան ծառայություններից, մինչդեռ հավատարիմ ընթերցողներին չի մտահոգում գնի բարձրացումը: Սա, իհարկե, առաջին հերթին պայմանավորված է օրաթերթի մատուցած ինքնատիպ և որակյալ լրատվությամբ:

Սակայն թերթի ղեկավարությունը հույսը միայն որակի վրա չի դնում: Երբ նոր էինք ծանոթացել «Le Monde»-ին (1994-1995 թթ.), այն արժեր 7 ֆրանկ: 1997 թ. Կոլոմբանին որոշեց ավելացնել վաճառքի գինը 50 սանտիմով՝ դարձնելով 7.50 ֆրանկ, ինչը թերթին կբերեր 20 մլն ֆրանկի լրացուցիչ եկամուտ մեկ տարվա ընթացքում: Այս անգամ ևս անցկացվեց սոցիարցում՝ ճշտելու համար ընթերցողների վերաբերմունքը: Ստանալով ոչ այնքան գոհացուցիչ պատասխաններ՝ տնօրինությունը որոշեց թանկացումն իրականացնել 1998 թ. հունվարի 1-ից՝ հաշվի առնելով այդ տարվա գարնանն անցկացվելիք օրենսդիր իշխանությունների ընտրությունները և համոզված լինելով, որ նախընտրական շրջանի բուռն քաղաքական իրադարձություններն անտարբեր չեն թողնի ընթերցողին, կշեղեն նրա ուշադրությունը թերթի թանկացումից, և սպառման նվազում չի արձանագրվի: Սակայն տեղի ունեցավ չնախատեսված և ոչ պակաս սենսացիոն իրադարձություն. Հանրապետության նախագահը որոշեց ցրել Ազգային համաժողովը (ասամբլեան): Հենց այս իրադարձությանն էլ հաջորդեց թերթի գնի աճը՝ 1997 թ. հուլիսի 9-ին: Այս մասին Կոլոմբանին հայտնում է իր ընթերցողին «Le Monde»-ի 1997 թ. հուլիսի 8-ի և 9-ի համարներում «A' nos lecteurs» («Մեր ընթերցողներին») հոդվածում: Խմբագիրը ներկայացնում է թանկացման պատճառները և հայցում ընթերցողի ներողամտությունը:

Թերթի տնտեսվարման այսքան մանրակրկիտ ներկայացումն ու վերլուծությունը, կարծում ենք, կարևոր է և ուսանելի: Դա թույլ է տալիս պատկերացում կազմել «Le Monde»-ի վարած տնտեսական քաղաքականության, այն արդյունավետ դարձնելու հնարքների մասին: Սա ոչ միայն հնարավորություն է լավ ճանաչելու թերթը, նրա վերելքի և անկման շրջանները, հասկանալու դրանց պատճառները, այլև մեծապես կապված է «Le Monde»-ի գաղափարական ուղղվածության հետ, քանի որ ֆրանսիական օրաթերթը պատահականորեն չի ընտրում իր գործընկերներին, առավել ևս՝ բաժնետերերին: Այստեղ պարզ երևում է նաև նրա վարած սոցիալական քաղաքականությունը, վերաբերմունքը իր աշխատակիցների, լրագրողների ու ընթերցողների հանդեպ: Միևնույն ժամանակ

արտացոլվում են «Le Monde»-ի կադրային քաղաքականությունը, տարածման ու վաճառքի ձևերը, տնօրենների ճիշտ կամ սխալ քայլերը:

2000 թվականին լրանում էր ժան-Մարի Կոլոմբանիի տնօրինության ժամկետը: Պետք է անցկացվեին նոր ընտրություններ: «Le Monde»-ի խմբագիրների միությունն առաջարկեց Կոլոմբանիին թողնել տնօրենի պաշտոնում: Փակ գաղտնի քվեարկության արդյունքները հետևյալն էին. 76.17%` կողմ, 8.78%` դեմ և 15.05%` ձեռնպահ. Կոլոմբանին վերընտրվեց:

Նոր վերընտրված տնօրենը ձեռնամուխ եղավ թերթի հրատարակչական շղթայի նորացման գործընթացին: Ծրագրի իրագործումը խմբագրությունը սկսել էր դեռևս 1998-1999 թվականներին, մինչդեռ գործի դրեց 2000-ի վերջին: Հրատարակչական շղթայի նորացումը նշանակում էր աշխատանքի նոր կազմակերպում ինչպես թերթի լրագրողների, այնպես էլ մյուս աշխատակիցների (բանվորներ, վարչական, տեխնիկական անձնակազմ) համար: Այս նպատակով էր, որ «Le Monde»-ի ողջ տեղեկատվությունը կցվեց ինտերնետին, ինչը բավականին հեշտացրեց թերթի կազմակերպչական աշխատանքները, նպաստեց խմբագրության և տպարանի համատեղ աշխատանքի կազմակերպմանը: Ծրագրի իրագործումը վստահվեց ժան-Ֆրանսուա Ֆոժելին. նա էր, որ 1998 թվականի ընթացքում «Le Monde»-ի հրատարակչական շղթայի հետ կապված լրատվությունը տեղադրել էր համակարգչային տեղեկատվական համակարգում: Ֆոժելին օգնում էին թերթի տեխնիկական բաժնի գլխավոր խմբագիր Էրիկ Ազան և լրատվական բաժնի տնօրեն Ժոզե Բոլուֆերը: Նրանց ջանքերով 2000 թվականին վերջնականապես իրականացվեց թերթի անցումը նոր տեղեկատվական համակարգի, ինչը «Le Monde»-ը դարձրեց լավագույն և ամենաշատ ընթերցվող պարբերականը Ֆրանսիայում, մոտ 20 րոպեով արագացրեց նրա լույսընծայումը:

Զնայած տնօրինության երկրորդ շրջանը նույնքան արդյունավետ չեղավ, այնուհանդերձ կարծում ենք` արդարացի էր Կոլոմբանիին վերընտրելը, որովհետև նրա տնօրինության առաջին շրջանում թերթը գաղափարական ու տնտեսական մեծ աճ արձանագրեց: 1994-1999 թվականներին, երբ ֆրանսիական մամուլը ճգնաժամի մեջ էր, «Le Monde»-ն այն եզակի թերթն էր, որի սպառումն աճեց մոտ

50000 օրինակով, այն դեպքում, երբ հիմնական մրցակիցները՝ բավական հանրահայտ և կայուն թերթեր («Le Figaro», «Libération», «France-soir» և այլն), արձանագրեցին բացասական արդյունքներ՝ «Le Figaro»-ի սպառումը նվազեց մոտ 7500, «Libération»-ինը՝ մոտ 7000, «France-soir»-ինը՝ 41000, «L'Humanité»-ինը՝ 8000, «La Croix»-ինը՝ 4000 օրինակով: Դրական արդյունք գրանցեցին միայն «Le Monde»-ն ու փարիզյան մասնագիտական երեք օրաթերթերը՝ սպորտային «L'Équipe»-ը, որի սպառման ցուցանիշն աճեց 51000 օրինակով և տնտեսական 2 օրաթերթերը՝ «Les Échos»-ն՝ 23000, «La Tribune»-ը՝ մոտ 15000 օրինակով³⁸:

Այս տվյալները, որոնք վերցված են Փարիզի լրագրողների միության 2000 թ. իրականացրած ուսումնասիրություններից, պարզ ցույց են տալիս, որ Կոլոմբանիի խմբագրած առաջին տարիներին թերթն իր սպառման ցուցանիշներով զիջում էր միայն սպորտային ուղղվածության «L'Équipe» օրաթերթին և ֆրանսիական համազգային ոչ մասնագիտական օրաթերթերից միակն էր, որ 1994-1999 թվականներին գրանցել էր սպառման դրական արդյունք:

Այդ տարիներին թերթն իր գնողունակությամբ չէր զիջում փարիզյան ոչ մի օրաթերթի: 2003 թ. տվյալներով «Le Monde»-ի օրական սպառումը հասնում էր 389249 օրինակի, երկրորդ տեղում էր «Le Figaro»-ն՝ 352706 օրինակով, սպորտային «L'Équipe»-ի օրական վաճառքը 336533 օրինակ էր, «Libération»-ը զբաղեցնում էր չորրորդ տեղը՝ սպառելով ընդամենը 158115 օրինակ, «Les Échos»-ն և «La Tribune»-ը սպառում էին համապատասխանաբար 116903 և 80459 օրինակ³⁹: Պահանջարկի ցուցանիշով «Le Monde»-ը եվրոպական թիվ երկու օրաթերթն էր «Financial Times»-ից հետո⁴⁰, իսկ համաշխարհային օրաթերթային

³⁸ Տե՛ս՝ «Le Monde: Leader en diffusion (diffusion totale payee de 1979 à 2003)», http://medias.lemonde.fr/medias/pdf_obj/sup_comptes-monde_040604.pdf, էջ 6, նաև՝ Albert P., La presse française (notes et etudes documentaires), Maulde et Renou, Paris, 1998, p.121, tableau 33.

³⁹ Ֆրանսիական օրաթերթերի սպառման այդ տարիների ցուցանիշները տե՛ս http://medias.lemonde.fr/medias/pdf_obj/sup_comptes-monde_040604.pdf, Ֆրանսիական օրաթերթերի սպառման այսօրյա ցուցանիշները տե՛ս՝ http://www.ojd.com/engine/adhchif/adhe_list.php?mode=chif&cat=1771&subcat=353:

⁴⁰ Եվրոպական ամենաշատ կարդացվող օրաթերթերի այդ տարիների ցուցակը տե՛ս http://medias.lemonde.fr/medias/pdf_obj/sup_comptes-monde_040604.pdf, էջ12:

ցանցում զբաղեցնում էր երրորդ տեղը «The Economist»-ից և «Financial Times»-ից հետո⁴¹:

Չնայած այսօր առկա տարբեր կարծիքներին՝ կարելի է ասել, որ Կոլոմբանին իր խմբագրած տասներեք տարիների ընթացքում քայլ առ քայլ զարգացրեց թերթը՝ հանդես բերելով լայնախոհություն և արհեստավարժություն: Տնօրենը ուշադրություն էր դարձնում թերթի բոլոր կողմերին: Մեծապես կարևորում էր գաղափարական գիծը՝ ընթերցողին մատուցելով ժամանակի ճշգրիտ պատկերը, աշխատելով անդրադառնալ այն բոլոր բնագավառներին, որոնք կհետաքրքրեին լսարանին, մատուցելով երևույթների և իրադարձությունների օբյեկտիվ ու բազմակողմանի վերլուծություններ: Նա պարզ պատկերացնում էր, որ լսարանին զոհացնելու համար նախ և առաջ պետք է ճանաչել այն: Այս տարիներին լրջորեն ուսումնասիրվեց «Le Monde»-ի լսարանը. որոշվեցին տարիքային, սեռային, կրթական և սոցիալական այն խմբերը, որոնք առավել շատ են կարդում թերթը⁴²: Ուշադրությունից դուրս չմնացին նաև տարածման և վաճառակետերի խնդիրները, անգամ՝ ներխմբագրական հարաբերությունները: Կոլոմբանին մեծ ուշադրություն էր դարձնում հատկապես ձեռնարկության տնտեսվարմանը և բաժնետերերի կազմին՝ գիտակցելով, որ օբյեկտիվ լրատվամիջոց ունենալու համար առաջին հերթին պետք է ունենալ ֆինանսական անկախություն: Տնօրենը նաև փորձում էր քայլել ժամանակին համընթաց. «Le Monde»-ը ֆրանսիական համազգային օրաթերթերից առաջինն էր, որ ունեցավ իր ինտերնետային էջը, Կոլոմբանիի տնօրինության տարիներին www.lemonde.fr-ը դարձավ ֆրանսիական տեղեկատվական թիվ մեկ սայթը այցելուների թվով⁴³:

Այդուհանդերձ, Կոլոմբանիի տնօրինության երկրորդ վեցամյակն այնքան էլ արդյունավետ չէր: 2006-2007 թթ., երբ լրանում էր նրա ղեկավարության ժամկետը, «Le Monde»-ը լուրջ ճգնաժամ էր ապրում: Թերթի տնտեսության հետընթացը սկսվել էր դեռևս 2000 թ.-ից. վեց տարիների ընթացքում «Le Monde»-ի բյուջեի

⁴¹ Աշխարհի ամենաշատ կարդացվող օրաթերթերի ցուցակը տես՝ <http://www.mondepub.fr/Decou/lecto/leade/index.htm>:

⁴² «Le Monde»-ի լսարանի մանրամասն ուսումնասիրությունը տես՝ <http://www.mondepub.fr/Decou/lecto/index.htm>:

⁴³ Ֆրանսիական օրաթերթերի ինտերնետային սայթերի դասակարգումը ըստ այցելուների թվի տես՝ http://www.ojd.com/engine/adhchif/adhe_list.php?mode=chif&cat=1784#site_3470:

դեֆիցիտն աճել էր մինչև 150 միլիոն եվրո՝ գումարած յոթերորդ ընթացիկ տարում կուտակված 11-20 միլիոն եվրո պարտքը: Պատճառները տարբեր էին. մասնավորապես, 2002-2006 թթ. 57 000-ով նվազել էր թերթի ընթերցողների թիվը: Պետք է նշենք, որ այս անգամ ևս հետընթացը ընդհանրական բնույթ ուներ ֆրանսիական մամուլի համար: Մասնավորապես, «Le Figaro»-ն այս ընթացքում կորցրել էր 26 000, իսկ «Libération»-ը՝ 31 000 ընթերցող⁴⁴:

2007 թ. մայիսին, տնտեսական այս դժվարին իրավիճակում նախատեսվում էին «Le Monde» մամուլի խմբի տնօրինության նախագահի նոր ընտրություններ: Չնայած թերթի ֆինանսական վատ վիճակին, մինչև ընտրությունները ոչ ոք չէր կասկածում, որ միակ թեկնածու ժան-Մարի Կոլոմբանին կհավաքի անհրաժեշտ 60 % ձայնը և երրորդ անգամ կվերընտրվի⁴⁵: Մինչդեռ ընտրության նախորդ օրը «Le Monde»-ի խմբագիրների միության նիստում պարզ դարձավ, որ միակ թեկնածուի վերընտրությունը կասկածի տակ է դրված: Միության նախագահ ժան-Միշել Դումայը պնդում էր, որ ոչ մի անձնական հաշիվ չունի Կոլոմբանիի հետ, բայց և չէր թաքցնում, որ ցանկանում է նրա հրաժարականը: Դումայը մեղադրում էր Կոլոմբանիին «միայնակ, բացարձակ միայնակ» ղեկավարելու մեջ, պնդում, թե վերջինս «ունի երկխոսության գնալու լուրջ խնդիր», տնտեսվարման մեջ թույլ է տալիս սխալներ, ապա եզրակացնում. այս ճանապարհով գնալու դեպքում թերթը շուտով «փակուղի կմտնի»: Կոլոմբանին, ում տնօրինության ժամանակ թերթն ունեցել էր բազում հաջողություններ, վերածվել հեղինակավոր մամուլի խմբի, բնական է, որ շատ վատ ընդունեց այս խոսքերը. «Նրան երբեք չէին տեսել այդ վիճակում. դիմագծերը՝ ձգված, խոսելու ոճը՝ պաշտոնական», - գրում է «Libération»-ը մայիսի 21-ին և ավելացնում Կոլոմբանիի խոսքերը. «Ես թանձր մառախուղի մեջ եմ»⁴⁶:

Կոլոմբանին փորձում էր բացատրել, որ «Le Monde»-ը ընդունակ է հաղթահարել իր առջև ծառայած խնդիրները, որ դրանք արդյունք են օրաթերթային և ամսագրային մամուլում «Le Monde»-ի կատարած անժամանակ

⁴⁴ Cohen Ph., «Le Monde» L'autre élection présidentielle», Marianne, du 19 au 25 mai 2007.
⁴⁵ «Jean-Marie Colombani est le seul candidat à sa succession à la tête du groupe», Le Figaro, 21 mai 2007.
⁴⁶ Castemalle O. et Mallaval C., «Le Monde» va-t-il changer de tête ?», Libération, 21 mai 2007.

ներդրումների: Պնդում էր, թե վերջիններս միտված էին տարածաշրջանային օրաթերթերի հզոր միության ստեղծմանը: Սա ծանր և ծախսատար ծրագիր էր, որի արդյունքները պետք է երևային մի քանի տարվա ընթացքում: 2007-ին արդեն իսկ թերթի վաճառքը դանդաղ, բայց աճ էր ապրում⁴⁷:

«Le Monde»-ի տասներեք տարվա ղեկավարի խոսքերն, այնուհանդերձ, ազդեցություն չունեցան: Խուճաբը փնտրում էր տնօրինության նախագահի նոր թեկնածուի: Իրադարձությունը նշանակալից էր ոչ միայն ֆրանսիական, այլև եվրոպական լրատվական դաշտի համար: «Le Monde»-ի ղեկավարի փոփոխության հարցը քննարկվում էր անգլիական, գերմանական, իտալական ամենահեղինակավոր պարբերականներում⁴⁸:

Հունիսի 25-ին լրագրողական հանրությանը պետք է պարզ դառնար նոր ղեկավարի անունը: Թեկնածուները սկզբում չորս էին, նրանց անունները քննարկման նյութ էին ֆրանսիական բոլոր պարբերականների էջերում: Շատերը նրանց համեմատում էին Կոլոմբանիի հետ՝ անդելով, թե «ղժվար է ընտրել նոր տնօրեն, ով ընդունակ կլինի գրել նույնպիսի խմբագրականներ, ինչպիսիք էին Կոլոմբանիինը»⁴⁹, կային նաև այնպիսիք, որ Կոլոմբանիին մեղադրում էին «կլանային մտածելակերպի մեջ»⁵⁰, ներկայացվում էին թեկնածուների կենսագրական տվյալները, բացահայտվում թերթի հետ կապված ծրագրերը:

Ընտրության նախօրեին թեկնածուներից երկուսը ինքնաբացարկ հայտարարեցին: Մնացին երկուսը. 60-ամյա Պիեր ժանտեն մինչ այդ զբաղեցնում էր «Le Monde» մամուլի խմբի գլխավոր տնօրենի պաշտոնը, և, ինչպես սիրում են գրել ֆրանսիական մամուլի օրգանները՝ թիվ երկուսն էր խմբում, իսկ 42 տարեկան Բրունո Պատինոն միաժամանակ «Le Monde Interactif»-ի և «Télérama»-ի նախագահն էր: «Le Monde»-ի վերահսկողության խորհուրդը որոշեց գնալ փոխզիջումային լուծման. Պիեր ժանտեի ընտրության դեպքում Բրունո Պատինոն նշանակվելու էր խմբի փոխնախագահի պաշտոնում: Տնօրինության

⁴⁷ Castemalle O. et Mallaval C., «Colombani n'est plus le roi du Monde», Libération, 23 mai 2007.
⁴⁸ Willshen K., «Le Monde journalists oust chief in protest at management style», The Guardian, 24 mai 2007, Altwegg J., «Sturz vom Schuldenberg. Der «Le Monde»-Herausgeber Colombani muss dehen», FAZ, 23 mai 2007.
⁴⁹ Duhamel A., «Jean-Marie Colombani, l'éditorialist du Monde», Le Point, 15 juin 2007.
⁵⁰ Bonavita M.-L., «Colombani conteste le vote de la rédaction», Le Figaro, 24 mai 2007.

ճախագահի մանդատը պետք է ավարտվեր ոչ թե վեց, ինչպես նախկինում էր, այլ երեք տարի հետո, որից հետո Պատինոն կփոխարիներ ժանտեին⁵¹: Ընդ որում, էրիկ Ֆոտորինոն, ով օրաթերթի խմբագրության տնօրենն էր, պետք է զբաղեցներ թերթի պատվիրակ-տնօրենի պաշտոնը: Ասել է թե՛ «Le Monde»-ի նախագահության երեք հին անդամներին՝ ժան-Մարի Կոլոմբանի, Ալեն Մինք (Ընթերցողների միության նախագահ) և Էդվի Պլենել (օրաթերթի «գլուխը», որը թերթը լքեց 2005-ին) փոխարինում էր նոր եռյակ՝ ժանտե, Պատինո, Ֆոտորինո: Ցավոք, այս եռյակի գործունեությունը չեղավ նույնքան երկարատև և բեղմնավոր: Շուտով նախագահության անդամները հրաժարական տվեցին:

2008-ի հունվարին «Le Monde»-ը ընտրում էր տնօրինության նոր նախագահ: «Մեկամսյա անորոշությունից հետո, շուրջ վեց ժամ տևած նիստի արդյունքում «Le Monde»-ը ունի նոր տնօրեն՝ էրիկ Ֆոտորինոն»⁵², -արձանագրեցին թերթերը հունվարի 28-ին: Այդ օրը Ֆոտորինոն խոստացավ. «Ես երբեք իմ նպատակներին հասնելու համար չեմ վաճառի «Monde»-ի հոգին»⁵³: Չնայած խոստովանությանը՝ մամուլի խմբի ներկայիս ղեկավարը միանշանակ չընդունվեց բոլորի կողմից: Մասնավորապես, խմբագիրների միության նախագահ ժան-Միշել Դումայը չէր ճանաչում Ֆոտորինոյի «ո՛չ հեղինակությունը և ո՛չ էլ օրինականությունը»⁵⁴: Պատմությունը կրկնվում էր. Ֆոտորինոն առաջ էր քաշում կապիտալի նոր վերաբաժանման ծրագիր, որը կարող էր վտանգել թերթի անկախությունը: Ավելին, խմբի դրսի բաժնետերերից՝ Պրիզա մամուլի խումբը ձգտում էր կապիտալի լիակատար վերահսկողության: Այն կատարելու էր 20 մլն եվրոյի ներդրում, բայց և խոստանում էր երաշխավորել թերթի գաղափարական անկախությունը⁵⁵:

Այնուհանդերձ, ճգնաժամից դուրս գալու համար ղեկավար նոր կազմը սկսեց աշխատել երկու հիմնական ուղղություններով՝ վաճառեց խմբին պատկանող որոշ պարբերականներ և կրճատեց աշխատակազմը՝ 110 աշխատակից (60-ը՝ լրագրող)

⁵¹ Silbert N., «Un tandem Jeantet-Patino proposé pour diriger le Monde», Les Echos, 18 juin 2007.

⁵² Silbert N., «Le Monde intronise Eric Fottorino sur fond de tensions», Les Echos, 28 janvier 2008.

⁵³ «Le Monde tourne en rond», Libération, 28 janvier 2008.

⁵⁴ Bajos S., «Fottorino prend la tête du Monde», La Tribune, 28 janvier 2008.

⁵⁵ Scalbert A., «Le Monde peut-il échapper à Lagardère?», Rue 89, 17 février 2008.

ազատվեց աշխատանքից⁵⁶: Բնականաբար այս քայլը լուրջ հակազդեցության արժանացավ: 2008 թ. ապրիլի 14-ին «Le Monde»-ի 64-ամյա պատմության մեջ առաջին անգամ գործադուլ արձանագրվեց: «Թերթի աշխատակիցներն այսօր աշխատանքի դուրս չեն եկել, ինչը նշանակում է, որ վաղը կեսօրին «Monde» չի լինելու»⁵⁷, - զարմանքով արձանագրում էին երեկոյան օրաթերթի գործընկերները: Առաջին գործադուլին հաջորդեցին ևս երկուսը՝ ապրիլի 17-ին և մայիսի 6-ին: Ֆոտոռիմոյի պատասխանը հետևյալն էր. այս քայլը թույլ է տալիս գումարներ տնտեսել: Նաև դրանց շնորհիվ 2009-ին հնարավոր եղավ տեսնել նորացված «Le Monde»: Ղեկավարությունը վստահեցնում է՝ մամուլի խումբը ֆինանսական հավասարակշռության կհասնի արդեն 2010-ին⁵⁸:

Վերջին տարիների իրադարձությունները երբեմն ստիպում էին մտածել, թե այլևս չկա **«Իտալացիների փողոցի ծեր թագուհին»** կամ **«Երեկոյան մեծ օրաթերթը»**՝ որակումներ, որ արժանիորեն վաստակել է «Le Monde»-ը: Ամեն դեպքում, թերթի գործընկերները, մրցակիցներն անգամ ուզում են հավատալ, որ ներկայիս փոփոխությունները, աշխատակազմի նորացումը թույլ կտան ձեռք բերել ավելի շատ ընթերցողներ և նոր թափով առաջ շարժվել⁵⁹:

⁵⁶ Benhamou F., «Après la fuite en avant, Le Monde doit éviter la fuite en arrière», Rue 89, 04 mai 2008.

⁵⁷ Scalbert A., «Le Monde a vécu le premier jour de grève de son histoire», Rue 89, 14 avril 2008.

⁵⁸ «Les atours du Monde», Libération.fr, 26 janvier 2009.

⁵⁹ Bartoin J., «La fin d'un Monde ?», Jeune Afrique, du 3 au 9 février 2008.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

«Le Monde»-ի տեղեկատվության յուրահատկությունները

«Le Monde»-ը ֆրանսիական ամենաավանդապահ թերթն է: Դա արտահայտվում է ինչպես նրա մտածողության, այնպես էլ ձևավորման հարցում: Երկար տարիներ օրաթերթը չէր փոխում իր արտաքին տեսքը, լույս էր տեսնում այն մակետով, որ կազմել էին հիմնադիրները: Միայն 1995 թ. հունվարի 10-ին՝ թերթի 50-ամյակի առթիվ, նրան նոր տեսք տրվեց՝ դարձնելով ավելի հաճելի և դյուրընթեռնելի: Չնայած հիմնական փոփոխություններին (33,5 x 50 սմ ֆորմատից անցում 31,5 x 47 սմ ֆորմատի, էջերի քանակի աճ, նկարազարդումների ավելի հաճախ օգտագործում, տառատեսակի փոփոխություն), թերթն, ըստ էության, այնքան էլ չփոխվեց: Մակետի ձևափոխումն արդեն իսկ մեծ համարձակություն էր, քանի որ 50 տարի շարունակ միևնույն, իրեն հարազատ դարձած թերթը տեսնող ընթերցողը կարող էր չընդունել նորացված տարբերակը: Այսինքն՝ փոփոխությունը պետք է լիներ չափի մեջ, այնպես, որ հավատարիմ ընթերցողը ճանաչեր իր թերթը: «Le Monde»-ի 1995 թ. հունվարի 6-ի համարում լույս տեսած «Strategie» (Ռազմավարություն) հոդվածում Ժան-Մարի Կոլոմբանին իր ավանդապահ ընթերցողներին բացատրում է ձևափոխման նպատակը. «Եթե «Le Monde»-ը նորացվում է, ապա՝ ավելի լավ «Le Monde» ստեղծելու նպատակով միայն: Այն կլինի ավելի լավ դասավորված, ավելի կազմակերպված և ավելի ամբողջական»⁶⁰:

Նորացված «Le Monde»-ը, որն իր չափերով իրոք ավելի հարմար էր, նկարազարդումներով հարուստ և ընթերցվում էր ոչ թե առաջվա նման ուղղահայաց, այլ հորիզոնական, սիրվեց ընթերցողի կողմից, ավելին՝ փոփոխությունը խթանեց թերթի սպառումը: Առաջին օրերին այն ավելացավ 110%-

⁶⁰ Colombani J.-M., «Strategie», LE MONDE, 6 janvier 1995.

ով՝ 196000 օրինակից հասնելով 410000-ի: Հետագայում այս ցուցանիշն, իհարկե, որոշակիորեն նվազեց. երեք շաբաթ անց սպառման աճը կազմում էր 12%:

Սակայն թերթի հանդեպ հետաքրքրության աճը ճիշտ չի լինի կապել միայն նրա նորացման հետ: Փոփոխությունը համընկավ նախագահական ընտրություններին, մինչդեռ հայտնի է, որ քաղաքական ակտիվ գործընթացների ժամանակ թերթերի սպառման ցուցանիշներն աճում են: Ավելին՝ այս համընկնումը թերևս պատահական չէր, և տնօրինության մտադրությունը՝ հենց այդ պահին հանդես գալ նորարարությամբ, ընդամենը լավ մտածված հաշվարկ էր:

«Le Monde»-ի արտաքին տեսքը փոփոխություն կրեց նաև 2009-ի հունվարին⁶¹: Խմբագիր Ֆոտորինոն այս կերպ փորձեց ևս մեկ անգամ ուշադրություն գրավել դեպի թերթը: Նոր փոփոխությունների արդյունքը դեռևս պարզ չէ: Ահա ինչու թերթի տեղեկատվության յուրահատկությունները կփորձենք ներկայացնել տևական ժամանակահատվածում՝ ներգրավելով և՛ քիչ թե շատ կայուն շրջանը, և՛ նոր փոփոխությունները (1999-2009 թթ.):

Այսօր թերթն ունի հետևյալ տեսքը. առաջին էջի ամենավերևում՝ մեջտեղի մասում, անվանումն է՝ «Le Monde», ձախ անկյունում՝ տվյալ օրվա ամսաթիվը, թերթի տարիքը, համարը, գինը, ինտերնետային հասցեն՝ www.lemonde.fr: Մեջտեղում՝ վերնագրի տակ, նշվում են օրվա կարևորագույն թեմաները, որոնց անդրադարձել է թերթը տվյալ համարում կամ լրացուցիչ բաժիններում: Աջ անկյունում հիմնադիր Յուլբերտ Բյով-Մերիի և ներկայիս տնօրեն Էրիկ Ֆոտորինոյի անուններն են:

Յուրաքանչյուր համարի առաջին էջի կենտրոնական մասում ներկայացվում է օրվա կարևորագույն իրադարձությունը: Դա կարող է վերաբերել թե՛ Ֆրանսիային, թե՛ որևէ այլ երկրի: Էջի ամենասիրված հատվածը, թերևս, ծաղրանկարն է. սովորաբար միշտ նույն ծաղրանկարիչը, որ ստորագրում է Պլանտյու, «Le regard de Plantu» («Պլանտյուի հայացքը») խորագրի ներքո ներկայացնում է մեկ ծաղրանկար՝ համահունչ օրվա թեմային: Դրանք դիպուկ են և սրամիտ, միևնույն ժամանակ մեծ նշանակություն ունեն թերթի ձևավորման տեսանկյունից: Հեռվից

⁶¹ Տե՛ս «Les atours du Monde», Libération.fr, 26 janvier 2009.

նայելիս անգամ ծաղրանկարը, որ գրեթե կենտրոնում է⁶², աչքի է ընկնում և գրավում ընթերցողին: Բացի այդ, սա հրաշալի միջոց է արտաքինից միանման թերթերի մեջ այս մեկն առաջին հայացքից տարբերելու համար: Ի դեպ, այս հնարանքն օգտագործում են նաև «Le Monde» մամուլի խմբի այլ թերթեր, օրինակ՝ «Le Monde diplomatique»-ը, որը յուրաքանչյուր համարի առաջին էջի կենտրոնական մասում՝ ուղիղ թերթի անվանման տակ, ներկայացնում է ժամանակակից հայտնի մի նկարչի կտավներից որևէ մեկը:

«Le Monde»-ում այլ ծաղրանկարներ էլ կան, յուրաքանչյուր համարում՝ երկու - երեքը: Օրաթերթի հիմնական ծաղրանկարիչներն են Պլանտյուն, Սերգեյը, նաև՝ Պեսինը, որ նախկինում հաճախ էր երևում թերթի էջերում, ուներ իրեն հատկացված տեղը նախավերջին էջում, մինչդեռ վերջին ժամանակներս կարծես այնքան էլ ակտիվ չէ:

Ծաղրանկարները կարող են լինել ինչպես սև - սպիտակ, այնպես էլ գունավոր, թեման բազմազան է՝ քաղաքականություն, տնտեսություն, անձնական կյանք: Առավել սրամիտ և դիպուկ են Պլանտյունի ծաղրանկարները, որոնք հաճախ ավելի խոսուն են, քան երկարաշունչ հոդվածները: Հարկ է նշել, որ ինչպես ողջ թերթը, այնպես էլ ծաղրանկարները երբեք իրենց թույլ չեն տալիս անցնել սահմանը: Դրանք կարող են լինել սուր, բայց ոչ ցինիկ:

Ֆրանսիական օրաթերթային մամուլի այլ օրգանների հետ համեմատած՝ թերթում քիչ են հանդիպում լուսանկարներ: Դեռևս Հյուբերտ Բյով-Սերին կարծում էր, որ դրանք ավելորդ շքեղություններ են. «Ես այնքան հարուստ չեմ, որ նկարներին տեղ հատկացնեմ»⁶³: Թերթը ժառանգողներն այս հարցում ևս հավատարիմ են մնում հիմնադրին:

«Le Monde»-ում ավելի հաճախ հանդիպում են ոչ ստանդարտ, յուրօրինակ լուսանկարներ: Օրինակ՝ քաղաքական գործիչների երկխոսության դեպքում վերջիններս ներկայացվում են խոսակցության թեժ պահին՝ արտասովոր

⁶² Դեռևս ամիսներ առաջ ծաղրանկարը զետեղվում էր առաջին էջի վերևի հատվածի ամենակենտրոնում, օրվա կարևոր թեմայի անմիջապես ներքևում: Այսօր այն տեղ է գտնում էջի ներքևի հատվածում, ձախ անկյունում: Ֆոտոդիմոսի բացատրությունը հետևյալն է. «Նախկինում ծաղրանկարը, կարծես, «կաշկանդվում էր» օրվա թեմայից, այսօր նրան ավելի լայն տարածք է տրամադրվում» («Les atours du Monde», Libération.fr, 26 janvier 2009):

⁶³ Beuve-Méry H., «Notre millième numéro», LE MONDE, 14 avril 1948.

դիմախաղով: Սա թույլ է տալիս պատկերացնել միմյանց հանդեպ տրամադրվածությունը՝ արհամարհանք, զայրույթ, կեղծավորություն, մեղադրող կեցվածք և այլն:

Նույնը կարելի է ասել որևէ իրադարձության կամ հիմնահարցի վերաբերող նկարների մասին: Համարներից մեկում, օրինակ, տեղ էր գտել հողված ժակ Շիրակի՝ սոցիալական խնդիրների հանդեպ մտահոգվածության մասին և կցված էր մի լուսանկար, որտեղ երկրի նախագահը, աչքերը փակ, ջերմեռանդորեն համբուրում է մի ծերուկի:

Եթե թերթում տեղադրված նկարը միտում ունի ընթերցողին պարզապես ծանոթացնելու տվյալ անձի հետ, ապա դրվում է փոքրիկ, սև - սպիտակ լուսանկար: Մնացած դեպքերում լուսանկարները հիմնականում գունավոր են:

Հետաքրքիր են նաև մարզական բաժնի նկարները, որոնք ցուցադրում են խաղերի ամենակարևոր պահերը, ինչը խոսում է լուսանկարիչների արհեստավարժության մասին: Թերթում հանդիպում են նաև կոլաժներ:

Առաջին էջի ձախ սյունակը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել թերթի տվյալ համարում զետեղված, թեմատիկ առումով ոչ այնքան կարևոր հողվածների մասին. նշվում են նրանց վերնագրերը, մեկ - երկու բառով ներկայացվում բովանդակությունը՝ տեղեկացնելով, թե որ էջում կարելի է դրանք կարդալ:

«Le Monde»-ի առաջին էջի ձախ սյունակը, որն այսօր ներկայացնում է ընդամենը թերթի բովանդակությունը, նախկինում առանցքային դերակատարություն է ունեցել, ասում են՝ եղել է նաև արտերկրի ուշադրության կենտրոնում: Այս հատվածն իր կարևորությունը ստացել է դեռևս «Le Temps»-ի օրոք և անվանվել «Օրվա տեղեկագիր»: «Le Monde»-ում այն ուներ «Միջազգային տեղեկագիր» խորագիրը և ներկայացնում էր աշխարհի կարևորագույն իրադարձությունները, վերլուծում դրանք ու տալիս գնահատականներ: Հողվածները գրում էին հիմնականում տվյալ երկրի գիտակները կամ քննարկվող հարցի մասնագետները և սովորաբար չէին ստորագրում:

Այս սյունակին, իրոք, մեծ կարևորություն է տրվել: Կազմվել է վերջում, որպեսզի բաց չթողնվի որևէ կարևոր իրադարձություն, որը տեղի կունենար վերջին պահին: «Միջազգային տեղեկագրում» զետեղված տվյալները պետք է լինեին ծայրահեղ ճշգրիտ, իսկ մեկնաբանությունները՝ մտածված, որովհետև «Le Monde»-ը ընդունվում էր և այսօր էլ ընդունվում է որպես ֆրանսիական դիվանագիտության պաշտոնական ձայն: Այս բաժնի հնարավոր թեմաները քննարկվում էին առավուտյան ժամը 8-ի խորհրդակցության ժամանակ: Ժամը 11-ին նյութերը պետք է պատրաստ լինեին, այսինքն՝ հեղինակին տրվում էր 3 ժամ: Պատրաստ նյութը նա պետք է ներկայացներ խմբագրին, ավելին, պետք է կարդար Զյուլբերտ Բյով-Մերիի ուշադիր հայացքի ներքո: Սա մի իսկական փորձություն էր: Սարսափելի էր, եթե հանկարծ թույլ էր տրվել որևէ բառի անտեղի կրկնություն կամ գործածվել էր սխալ ձևակերպված նախադասություն: Այնուհետև հողվածը մեկ անգամ ևս կարդում էր Բյով-Մերին, և երբ կապույտ թանաքով նյութի վերին մասում գրում էր «H» տառը, ուրեմն այն կարելի էր ուղարկել շարվածքի: Եթե հողվածը հավանության չէր արժանանում, նույն կապույտ թանաքը նույն տեղում գրում էր՝ «Մտածելն արգելված չէ» կամ «Դեռևս մտածել թույլատրվում է», և այն վերադարձվում էր հեղինակին⁶⁴:

«Միջազգային տեղեկագրի» համար գրելը բավական բարդ էր, այնուհանդերձ, թերթում կային այդ հարցում հմտացած մարդիկ, օրինակ՝ Անդրե Ֆոնտենը: Նա տասնյակ տարիներ աշխատեց «Le Monde»-ում: Ժամանակակիցները հավաստում են, որ Ֆոնտենը կարող էր 20 րոպեում գրել պահանջվող որակի և չափի հողված: Այդ գործում հմուտ էր նաև Ֆրանսուա Ժոզեֆը:

Կեսօրին տնօրենը և պատասխանատու քարտուղարը իջնում էին տպարան՝ թերթի կազմման մշտապես աղմկոտ սրահ: Տնօրենը լուսավոր էկրանի վրա նայում էր էջերը: Դեռևս ոչ պատրաստ էջերը ներկայացվում էին կանաչ, իսկ պատրաստները՝ կարմիր գույներով: Երբ, վերջապես, առաջին էջը պատրաստ էր, տնօրենը, պատասխանատու քարտուղարը և գլխավոր խմբագիրը նայում էին

⁶⁴ Stéu` Planchais J., Un homme du Monde, Éditions Calmann-Lévy, Paris, 1989, p.49-53.

իրենց մրոտված ձեռքերին⁶⁵: Սա, իհարկե, անցյալ է: Ներկայիս տեխնիկական հագեցվածությունը թույլ է տալիս ավելի քիչ ջանքերով լույս ընծայել թերթը, բայց խմբագրական աշխատանքները, թեմաների ընտրության գործընթացը գրեթե նույնն են⁶⁶:

«Le Monde»-ի բաժինները բազմազան են և տարաբնույթ՝ «Մոլորակ», «Միջազգային», «Եվրոպա», «Ֆրանսիա», «Տնտեսություն» (նախկինում՝ «Ձեռնարկություն», «Ֆինանսական միտում», «Ֆրանսիական շուկա»), «Հորիզոն», «Մշակույթ», «Սպորտ», «Ծոցատեսուր», «Հասարակություն», «Այսօր» և այլն⁶⁷: Սա թերթի համար ապահովում է մեծ և բազմաշերտ լսարան:

Իր բաժիններում ու ենթաբաժիններում օրաթերթը ջանում է անդրադառնալ տարբեր նախասիրությունների, մասնագիտությունների, տարիքային և սոցիալական խմբերի հետաքրքրություններին՝ տալով ոլորտների ամբողջական ու բազմակողմանի պատկերը: Այս բաժինները ոչ միայն ներկայացնում են քննարկվող ոլորտը, այլև երբեմն առաջարկում են խնդիրների լուծման տարբերակներ, անում հիմնավորված կանխատեսումներ:

Բաժինների բազմազանությունը բնորոշ է ֆրանսիական բոլոր թերթերին, այլ բան է, որ տարբեր թերթեր ունեն այդ բաժինների մատուցման ուրույն ձևեր: Օրինակ՝ եթե «Le Figaro»-ն կարող է անգամ առաջին հայացքից ձանձրալի թվացող գիտական բաժինը ներկայացնել առօրյա խոսակցական ոճով գրված թեթև, աշխույժ հարցազրույցներով, ապա «Le Monde»-ը գրեթե իր բոլոր բաժիններում նախընտրում է պաշտոնական ոճը:

Որոշ հետազոտողների կարծիքով՝ թերթը երբեմն չափն անցնում է՝ չարաշահելով երկարաշունչ, բարդ շարադասությամբ խրթին նախադասությունները, սրամիտ տողատակերն ու ոչ պարզ ակնարկները: Տպավորություն է ստեղծվում, թե «Le Monde»-ը նախատեսված է միայն կրթյալ ու գիտակ հասարակության

⁶⁵ Նույն տեղում:

⁶⁶ Խմբագրության ներկայիս աշխատանքային գրաֆիկը տե՛ս http://medias.lemonde.fr/medias/obj_multi/portrait_quotidien.swf:

⁶⁷ Վերջին փոփոխությունների արդյունքում մշված բաժիններից որոշներն այսօր տեղ չեն գտնում «Le Monde»-ում կամ պարբերական չեն:

համար, որ նրա ընթերցողն աշխարհի քաղաքական ու տնտեսական անցուդարձին տեղյակ մտավորականն է⁶⁸: Բերենք մի քանի օրինակ.

«Ըստ Աֆղանստանի նախագահի մամլո խոսնակ ժամվերդ Լյուդենի հայտարարության, թալիբյան հին ռեժիմի պատասխանատուների միջև տեղի ունեցած քննարկումների արդյունքում Թալիբանի նախագահի մամլո խոսնակ Մանսոն Ավղանը ներկայացրել էր համաձայնության ծրագիր, ըստ որի Թալիբանի արտաքին գործերի նախկին նախարար Մուլլահ Վասկիչ Ահմադ Մոտավակիչը պետք է հղում աներ նախագահին և առաջարկեր նրան իրենց օգնությունը»:

Նախադասությունը խրթին է թե՛ շարադասության և թե՛ ընկալունակության տեսակետից, եթե մանավանդ հաշվի առնենք, որ այն չունի նախաբան և հողվածի սկիզբ է: Նկատենք նաև, որ չկան նախագահների անունները, կարծես ընթերցողը պարտավոր է դրանք իմանալ: Եթե այս միտքը արտահայտելու լիներ ֆրանսիական որևէ այլ թերթ, օրինակ, «Le Figaro»-ն, որը հայտնի է իր թեթև, աշխույժ, դինամիկ ոճով, թերևս դա կաներ մի քանի նախադասությունների միջոցով, որոշ նախաբանից հետո՝ անպայման նշելով նախագահների անունները:

Շարադասության տեսակետից բարդ է նաև հետևյալ նախադասությունը. «Գործադիր իշխանությունների բարի կամքի արտահայտությունն էր կառավարության՝ հոկտեմբերի 21-ին (երեքշաբթի) միաձայն ընդունած ծրագիրը, որի համաձայն մարդիկ, ովքեր այլևս իրավունք չունեին օգտվելու ASS-ից, կարող են օգտվել RMA-ի գործունեության նվազագույն եկամուտներից, որոնք պետք է ակտիվացվեն 2004 թվից, և որոնց նպատակն է բարելավել RMI-ի ընթացիկ հաշիվները»: Այստեղ ևս ճշտված չէ, թե ինչ կազմակերպություններ են ASS-ը, RMA-ը, RMI-ը:

Շատերը «Le Monde»-ի այս ոճը համարում են մեծ թերություն, որը կարող է վանել բարձրագույն կրթություն չունեցող ընթերցողին: Իրականում, սակայն, թերթին զարմանալիորեն հաջողվում է գրական մնալով՝ իր մեջ ներառել նաև խոսակցական տարրեր, արտահայտություններ, որոնք խոսքը դարձնում են առավել

⁶⁸ Fletcher J., *Le Monde past, present and future: A vehicle for the transmission of the cultural values of the French elite*, <http://www.intellectbooks.com/europa/number6/fletcher.htm>.

պարզ և ընկալելի: Այս դեպքում հաշվի են առնվում հոդվածի բնույթը և քննարկվող թեման:

Երբեմն բարդ շարադասությամբ, սրամիտ և բազմանշանակ տողատակով խոսքին փոխարինում են ֆրանսիական մամուլին այնքան բնորոշ կարճ ու դինամիկ նախադասությունները, որոնք խոսքը դարձնում են ավելի աշխույժ և հոգեհարազատ: Նշենք նաև, որ այս ոճը հանդիպում է համեմատաբար քիչ և հիմնականում՝ թերթի վերջին էջերում: Ժարգոնային արտահայտություններ «Le Monde»-ի բաժիններում հանդիպում են հազվադեպ, միայն եթե տվյալ բառը դիպուկ է և առավել բնորոշ տվյալ իրավիճակի համար:

Ընդհանրապես, ֆրանսիացիներն իրենց բանավոր խոսքում սովորություն ունեն կրճատել բառերը, ինչը որոշ չափով արտահայտվում է նաև մամուլում և նրա մաս կազմող «Le Monde» թերթում. օրինակ՝ publicité (գովազդ) բառը հաճախ կրճատվում է և դառնում pub, télévision (հեռուստատեսություն) բառը՝ télé և այլն:

Թերթի բաժիններում բավական շատ են հանդիպում նաև հապավումներ՝ AIEF (Agence internationale de l'énergie atomique) (Ատոմային էներգիայի միջազգային կազմակերպություն), LADDH (Ligue algérienne de défense des droits de l' homme (Մարդու իրավունքների պաշտպանության ալժիրյան լիգա), PNUD (Programme des Nations unies pour le developpement (Միացյալ ազգերի զարգացման ծրագիր), ISAF (Force international de securité et d'assistance (Անվտանգության և օգնության միջազգային ուժեր) և այլն: Դրանցից միայն շատ քչերի բացատրությունն է տրվում՝ հիմնականում նորաստեղծ կազմակերպություններինը, մինչդեռ մյուսները մնում են առանց բացատրության, ինչը դժվարացնում է տվյալ բնագավառին կամ ֆրանսիական իրականությանն անձանոթ ընթերցողի գործը:

Այս բացը լրացվում է «Le Monde» մամուլի խմբում հիմնված խելացի ավանդույթով. նյութի վերջում դրվում են ծանոթագրություններ՝ երբեմն բավական ծավալուն, որտեղ ներկայացվում է հոդվածի մեջ հիշատակված որևէ իրադարձություն, ոչ շատ հայտնի անձնավորություն, կազմակերպություն կամ ձեռնարկություն, որի մասին կարող է ընթերցողը տեղյակ չլինել, կամ գրվում է, թե

որտեղ կարելի է կարդալ այդ մասին: Այս բացատրությունները, որ հիմնականում հանդիպում են «Le Monde» խմբի մյուս հրատարակություններում (հազվադեպ՝ օրաթերթում), կարևոր են հատկապես այլազգի ընթերցողներիս համար, քանի որ մենք, ծանոթ չլինելով ֆրանսիական իրականությանը, չենք կարող հասկանալ, եթե, օրինակ, տվյալ հոդվածում խոսվի ֆրանսիական ոչ այնքան հայտնի կազմակերպության, Փարիզում տեղի ունեցած ինչ-որ դեպքի կամ ժողովրդի մեջ ճանաչված որևէ հերոսի մասին:

«Le Monde»-ը հարուստ է վերնագրերով: Դա արտահայտվում է թերթի բոլոր բաժիններում: Հաճախ միայն վերնագրերը կարող են բավարար տեղեկատվություն տալ թեմայի վերաբերյալ: Վերնագրերի բազմազանությունը ֆրանսիական մամուլի առանձնահատկություններից է. սովորաբար ցանկացած նյութ ունենում է ընդհանուր *խորագիր*, որը մոտավոր որոշում է նյութերի ուղղվածությունը, հետո նշվում է *գլխավոր վերնագիրը*, որն ավելի կոնկրետացնում է թեման: *Վերնագիրն* արդեն անվանում է նյութը, այսինքն՝ կոնկրետ մատնացույց է անում հոդվածի թեման: Կա նաև մեկ այլ վերնագիր, այսպես կոչված «*գլխարկ*» (le chapeau), որը, կարծես, մի փոքր պատմում է նյութի գլխավոր իրադարձության մասին, և որից հետո միայն գալիս է նյութը՝ հաճախակի ընդհատվելով *ենթավերնագրերով*: Սա ֆրանսիական մամուլի տեսաբանների կողմից սահմանված կառուցվածք է, բայց ոչ երբեք՝ քարացած օրենք:

«Le Monde»-ի ոչ բոլոր հոդվածներն ունեն վերնագրերի վերոհիշյալ հաջորդականությունը, այնուհանդերձ, հիմնականում հոդվածների մեծամասնության վերնագրերը համապատասխանում են համընդհանուր կառուցվածքին: Օրինակ՝ «Le Monde»-ի համարներից մեկում տպագրված՝ իրանյան միջուկային զենքի հայտնաբերման մասին պատմող հոդվածն ունի վերնագրերի հետևյալ հաջորդականությունը. իբրև խորագիր հանդես է գալիս թերթի բաժնի անվանումը՝ «International» (Միջազգային), որը մոտավոր որոշում է հոդվածի ուղղվածությունը: Ամմիջապես բաժնի անվանմանը հաջորդում է «Moyen Orient»-ը (Մերձավոր Արևելք), որն ավելի կոնկրետացնում է թեման, այսինքն՝ կատարում է գլխավոր վերնագրի դերը: Ապա դրվում է մի փոքրիկ նախաբան, որը կարծես տալիս է

հողվածի նախապատմությունը, սա էլ նյութի «գլխարկն» է: Նախաբանին հաջորդում է վերնագիրը՝ «Իրանը համաձայնում է մատնացույց անել իր միջուկային զենքի օջախները»: Այսպիսով, թեման ևս մատնանշված է: Վերնագրին հաջորդում է երկրորդ «գլխարկը»՝ «Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի արտաքին գործերի նախարարները հոկտեմբերի 21-ին, երեքշաբթի օրը, ստացան թեհրանյան ռեժիմի խոստումը՝ լիովին համագործակցել Ատոմային էներգիայի միջազգային գործակալության հետ: Իրանը խոստացավ ընդհատել ուրանի կուտակումը և ընդունել անակնկալ այցելություններ իր միջուկային զենքի օջախները»:

Ֆրանսիական մամուլում և մասնավորապես «Le Monde»-ում մեծ ուշադրություն է դարձվում ոչ միայն վերնագրերի հաջորդականությանը, այլև դրանց ընտրությանը: Ըստ ամենայնի կատարվում է խստապահանջ ընտրություն, քանի որ վերնագրերից շատերը պարզապես ստիպում են կարդալ նյութը՝ «Ավտոմոբիլների մայրաքաղաք Տոլիատին ռեկորդ է սահմանել Ռուսաստանից ժամանած լրագրողների մահվան թվով», «Լեհական հանրահայտ «Gazeta» թերթը դարձավ կոռուպցիոն գործընթացների զոհ», «Եվրոպա՝ Իրանում» և այլն:

«Le Monde»-ի գրեթե բոլոր վերնագրերն ունեն տեղեկատվական բնույթ, կարծես փոքրիկ ինֆորմացիաներ լինեն: Հիմնականում բաղկացած են մեկ կամ երկու նախադասություններից: Ավելի հազվադեպ հանդիպում են ասացվածք հիշեցնող վերնագրեր, օրինակ՝ «L' union fait la force» («Միությունը ուժ է») կամ՝ «Il n' y a pas de règle sans exception» («Չկա կանոն՝ առանց բացառության») և այլն:

Հաշվի առնելով թերթի տարբեր բաժիններում վերնագրերի բովանդակության և մատուցման ձևի տարբերությունները՝ դրանց կանդրադառնանք նաև բաժինները քննելիս: Ասենք միայն, որ, ի տարբերություն ֆրանսիական մյուս թերթերի, «Le Monde»-ն ընդհանուր առմամբ համեստ է վերնագրերի մատուցման ձևի հարցում: Դա արտահայտվում է թե՛ վերնագրերի չափի, թե՛ տառատեսակի ընտրությամբ:

«Le Monde»-ի երկրորդ էջի ձախ սյունակը նախատեսված է խմբագրական հոդվածների համար: Նախկինում դրանք տեղ էին գտնում «Analyses»

(«Վերլուծություն») ենթաբաժնում: Սա հետաքրքիր մոտեցում էր. եթե թերթը մերժում էր վերլուծական նյութեր տպել առաջին էջերում, իսկ խմբագրական հոդվածը որոշակի կարծիքի արտահայտություն էր, ուրեմն այն ևս պետք է տեղ գտներ օրաթերթի երկրորդ կեսում: Այսօր խմբագրականները տեղափոխվել են երկրորդ էջ, որտեղ ներկայացվում են նաև «Le Monde»-ի խմբագրակազմն ու տնօրինությունը, թվարկվում են նախկին տնօրեններն ու բաժնետերերը:

Այս էջում հաճախ տեղ է գտնում «Le Monde»-ի խորագրերից մեկը՝ «IL y a 50 ans, dans «Le Monde»» («50 տարի առաջ «Le Monde»-ում»): Այն ներկայանում է մեկ հոդվածով, որը տպագրված է եղել ուղիղ 50 տարի առաջ՝ նույն ամսվա նույն օրը: Չկա ժանրային կամ բովանդակային սահմանափակում: Սա բավական հետաքրքիր ձեռնարկում է, որը մեկ անգամ ևս ընդգծում է «Le Monde»-ի ինքնատիպությունն ու հավատարմությունը իր ակունքներին. հին «Le Monde»-ի ոգին կրկին առկա է, ասես «վերադառնում են» այն ժամանակվա լրագրողները, արծարծված թեմաները, և ժամանակի բարձունքից տրվում են գնահատականներ: Նախաձեռնության հիմնական իմաստը թերևս այն է, որ թերթի բարձրացրած հարցերն արդիական են բոլոր ժամանակներում, որ թերթը ստեղծում է մնայուն արժեքներ: 50 տարի առաջ տպագրված հոդվածին չի կցվում ոչ մի մեկնաբանություն այսօրվա խմբագրակազմի կողմից⁶⁹:

«Le Monde»-ի երրորդ էջը հենց այդպես էլ կոչվում է՝ «Page trois» («Երրորդ էջ»): Սա նոր բաժին է թերթի համար և հիմնականում ներկայանում է որևէ մեկ, հասարակական հնչեղություն ունեցող թեմայով:

Սկսած չորրորդ էջից՝ «Le Monde»-ն անդրադառնում է աշխարհի տարբեր երկրներում տեղի ունեցող իրադարձություններին, որոնք օրաթերթի գոյության առաջին 50 տարիների ընթացքում զբաղեցնում էին առաջին էջի ձախ սյունակը՝ «Միջազգային տեղեկագիր» խորագրի ներքո: Տեղեկագրի անհետանալու պատճառը լրատվության և մեկնաբանության անջատման անհրաժեշտությունն էր: Ահա թե ինչու միջազգային թեման այսօր ներկայանում է մի քանի բաժիններով: Միջազգային լրատվությունը ներկայացվում է չորրորդ էջից սկսած («Մոլորակ»,

⁶⁹ Խորագիրը նախկինում տեղ էր գտնում թերթի վերջին էջում:

«Միջազգային», «Եվրոպա» բաժիններ), իսկ միջազգային, քաղաքական և տնտեսական վերլուծությունները, տեսակետները ներկայացվում են «Horizons» (Հորիզոն) բաժնում: Ի դեպ՝ «Le Monde» օրաթերթում տեղեկատվական նյութերն ու մեկնաբանությունները տարանջատվում են բոլոր բաժիններում: Այսպես, թերթը մինչև մեջտեղի էջերը պարունակում է տեղեկատվական բնույթի նյութեր միջազգային, տարածաշրջանային, տեղական, դատական և այլ բնագավառների մասին⁷⁰: Մեջտեղի էջերը զբաղեցնում է «Horizons» բաժինը, որը կարծես կիսում է թերթը: Այս բաժնից սկսած՝ ներկայացվում են նույն բնագավառների մասին վերլուծություններ ու կարծիքներ, ինչպես նաև հայտարարություններ, ֆինանսական շուկայի մասին տեղեկություններ, մարզական, մշակութային մեկնաբանություններ, ռադիո - հեռուստատեսային ծրագրեր:

Թերթի կտրուկ, վստահ և պաշտոնական ոճն առավելապես վերաբերում է միջազգային լրատվությանը («Planète» («Մոլորակ»), «International» («Միջազգային»), «Europe» («Եվրոպա») բաժիններ): «Le Monde»-ը լավ է ճանաչում իր ընթերցողներին. նրանք հասարակության կիրթ և հեղինակավոր խավն են: Այս բաժիններում պարբերականն անդրադառնում է միջազգային բնույթի բոլոր կարևոր իրադարձություններին: Քիչ են հարցազրույցները, բայց քաղաքական գործիչների ելույթներից ու տարբեր փաստաթղթերից հաճախակի արված մեջբերումները խոսքն առավել հավաստի ու համոզիչ են դարձնում:

Այս բաժինների թեմաները խիստ պաշտոնական են և շատ տարբեր թերթի մրցակիցների համանման բաժինների առաջարկած թեմաներից: Օրինակ՝ «Le Figaro»-ն կամ «Libération»-ը, միջազգային լրատվություն ներկայացնելիս, կարող են անդրադառնալ տվյալ երկրի սովորույթներին, խոսել հայտնի մարդկանց մասին, վարել աշխույժ հարցազրույցներ քաղաքական գործիչների, արտասահմանյան երկրների ղեկավարության ներկայացուցիչների հետ, այս ամենը զուգորդել հարուստ նկարագրողով: Մինչդեռ «Le Monde»-ն անդրադառնում է միայն կարևոր իրադարձություններին, վիճակագրական տվյալներին: Պատճառը, ըստ մեզ, նորից «Le Monde»-ի լսարանն է, որը, թերևս, ժամանակ չի գտնի ուսումնասիրելու

⁷⁰ Բացառությամբ երկրորդ և երրորդ էջերի:

որևէ երկրի կենցաղն ու սովորույթները, մինչդեռ կարևոր իրադարձություններին տեղեկացված լինել պարտավոր է:

Այս բաժիններում են ներկայացվում նաև Ֆրանսիայի արտաքին քաղաքականությանը վերաբերող հոդվածները: Դրանք հիմնականում արտահայտում են ֆրանսիական կառավարության դիրքորոշումը միջազգային հնչեղության հարցերին, ինչպես նաև Ֆրանսիայի համագործակցության ոլորտները տարբեր երկրների հետ:

Եթե հայկական օրաթերթերի միջազգային բաժինները հանդես են գալիս հիմնականում միջազգային լրատվական գործակալությունների տրամադրած լուրերով կամ թարգմանաբար ներկայացվող նյութերով, ապա «Le Monde»-ի այս բաժիններում գերիշխում են սեփական արտադրության ծավալուն նյութերը, որոնք ներկայացնում են քննվող խնդրի, իրողության կամ իրադարձության ամբողջական և համակողմանի պատկերը: Թերևս սրանով կարելի է բացատրել օրաթերթի ընդգծված ինքնատիպությունը: Կարելի է վստահաբար ասել, որ յուրօրինակ, ոչ մի ուրիշ լրատվամիջոցում չհանդիպող մեկնաբանություններ ու վերլուծություններ ընթերցելու ակնկալիքով է նաև, որ մարդիկ կարդում են «Le Monde»-ը:

Միջազգային բաժինների վերնագրերը երկար են, խոսուն և նման են կարճ լուրերի, ինչպես՝ «Արաբական աշխարհի զարգացումը դանդաղեց սեպտեմբերի 11-ից հետո», «Ինչպես եվրոպացիները դուրս եկան ամիսներ տևած ճգնաժամից», «Ռուսաստանը ցանկանում է պահպանել բավական փխրուն համագործակցություններն ու պայմանագրերը» և այլն:

Դեռևս մի քանի տարի առաջ եվրոպական նորությունները չէին առանձնացվում միջազգային բաժնից: Ավելի ուշ այս բաժնի վերջին էջերը սկսեցին կրել «Եվրոպա» խորագիրը: Այսօր արդեն «Europe»-ը առանձին բաժին է թերթում: Եվրոպայի սահմաններում տեղի ունեցող բոլոր իրադարձությունները, համընդհանուր խնդիրները, Եվրամիության ընդունած որոշումները իրենց արձագանքն են գտնում այս էջում: «Le Monde»-ը խիստ կարևորում և մեծ տեղ է հատկացնում համաեվրոպական ծրագրերին: Առաջիններից էր, որ ողջունեց ընդհանուր տարադրամի՝ եվրոյի ծնունդը, և ապա՝ համատարած օգտագործումը:

Քաղաքական լրատվությունը, որը նախկինում հանդես էր գալիս «Le politique» (Քաղաքականություն) բաժնով, ևս ներկայացվում է թերթի առաջին էջերում («International», «Europe», «France» բաժիններ), սակայն սրանցում տեղ գտած նյութերով դժվար է որոշել «Le Monde»-ի քաղաքական հակվածությունը, քանի որ այն որևէ կուսակցության, որևէ քաղաքական ուժի չի աջակցում (կամ բացահայտ չի աջակցում): Բոլոր ժամանակներում նրա դեմ են ուղղված եղել բոլոր քաղաքական ուժերը: Աջերը թերթը համարում էին ոչ բավարար աջ, ձախերը՝ ոչ բավարար ձախ⁷¹: Պատճառը, թերևս, այն էր, որ թերթը շարունակ ջանում էր անկողմնակալ լինել՝ քննադատելով բոլորին: Դեռևս 1962-ին «Le Monde»-ը սկսեց քննադատել Ֆրանսիայի Հինգերորդ հանրապետության առաջին նախագահ գեներալ դը Գոլին, երբ վերջինս կարծես մի փոքր շեղվել էր դեմոկրատական ազգ կառուցելու իր սկզբունքներից: Այդ ժամանակ էր, որ Հյուբերտ Բյով-Մերին դուրս եկավ դը Գոլի դեմ: Ի դեպ՝ այս քաղաքական գործչի անմիջական աջակցությամբ էր Բյով-Մերին ընտրվել «Le Monde»-ի հիմնադրի և տնօրենի պաշտոնում: Սա ևս մեկ անգամ հավաստում է, որ թերթն, անկախ ամեն ինչից, աշխատում էր հավատարիմ մնալ իր սկզբունքներին:

Զնայած «Le Monde»-ը աշխատել է չպաշտպանել որևէ կուսակցության կամ քաղաքական ուժի (թերևս, բացառությամբ ժակ Ֆովեի տնօրինության տարիների), այնուհանդերձ, այս ուժերը միշտ մեծ սպասումներ են ունեցել նրանից: Այսպես, 1995 թ. նախագահական ընտրությունների նախաշեմին «Le Monde»-ը դժվար կացության մեջ էր: Ֆրանսուա Միտերանի սոցիալական սկզբունքները նախկինում հարազատ էին «Le Monde»-ին: Ավելի ուշ, նկատելով դրանց թերի կողմերը, թերթը թերահավատությամբ էր վերաբերվում այս քաղաքական գործչին: Սակայն ընտրությունների նախաշեմին նա հուսով էր նորից արժանանալ թերթի համակրանքին: Վստահ լինելով իր մի քանի կապերի վրա, որ ուներ խմբագրության ներսում, ժակ Շիրակը կարծում էր, որ թերթը կպաշտպանի իր թեկնածությունը: Էդուարդ Բալադուրը, իր հերթին, հենվում էր թերթի եվրոպամետ

⁷¹ Stéu` Planchais J., Un homme du Monde, Éditions Calmann-Lévy, Paris, 1989, p.113-119 կամ Jeanneney J.-N., Julliard J., Le Monde de Beuve-Méry ou le métier d'Alceste, Éditions du Seuil, Paris, 1979, p.97-106.

խմբագիրների վրա: Հավակնություններ ուներ նաև Լիոնել ժոսպենը: Թերթի վերաբերմունքն այս գործիչների հանդեպ տարբեր էր:

Ֆրանսուա Միտերանի հետ տարածայնությունները սկիզբ էին առել նրա նախագահության երկրորդ ժամանակահատվածի ավարտին: Այս շրջանում Միտերանը նկատելիորեն թուլացել էր թե՛ ֆիզիկապես՝ հիվանդության պատճառով, թե՛ քաղաքականապես՝ այդ ժամանակ խորհրդարանում մեծամասնություն կազմող աջ ուժերի հետ հակամարտության արդյունքում: Նա այլևս ի վիճակի չէր կառավարել, բայց և չէր ցանկանում հեռանալ ասպարեզից: 1992-1995 թվականներին «Le Monde»-ը տպագրեց Ֆրանսիայի առաջին սոցիալիստ նախագահին քննադատող բազմաթիվ հոդվածներ: Ի ցույց էին դրվում Միտերանի քաղաքական սխալները՝ պնդելով, թե նա իրականում չի հետևում սոցիալիստական գաղափարներին: Նախագահի առողջական վիճակը գնալով վատանում էր, բժիշկները ախտորոշել էին քաղցկեղ: «Le Monde»-ի 1994 թ. հուլիսի 20-ի համարում լույս է տեսնում ժան-Իվ Նոյի «La sante' du Président» («Նախագահի առողջական վիճակը») հոդվածը, որտեղ մանրամասնորեն ներկայացվում է այս ամենը և փաստվում, որ նախագահն անգործունակ է: Դրանից հետո տպագրվեց ևս երկու հոդված՝ ժան-Մարի Կոլոմբանի «La vieil homme et la France»-ը («Ծեր մարդը և Ֆրանսիան») («Le Monde», 1994 թ., սեպտեմբերի 14) և Կլեր Անդրիոյի «Questions d'une historienne»-ը («Պատմաբանի հարցերը») («Le Monde», 1994 թ., սեպտեմբերի 15): Առաջին հոդվածը գրված է նախորդի ոգով՝ շեշտը նախագահի անգործունակ լինելու փաստի վրա է, իսկ երկրորդը մասնագետ - պատմաբանի քննադատական խոսք է Ֆրանսուա Միտերանի և նրա շրջապատի մասին:

Նման քաղաքականությունը «Le Monde»-ին օգուտ չէր բերում: Նրա ընթերցողների մեծամասնությունը (մոտ 52%), որն ուներ ձախ կողմնորոշում, երես թեքեց թերթից: Այդպես վարվեց նաև նախագահի ապարատը: 1994 թ. սեպտեմբերի 30-ին այստեղից հայտնեցին, որ այսուհետ իրենք կվերցնեն «Le Monde»-ի ոչ թե 110 օրինակ, ինչպես անում էին մինչ այդ, այլ ընդամենը 20: Նախագահի մամուլի խոսնակ ժան Մասիտելին պարզաբանեց, որ որոշումն ընդունվել է Ֆրանսուա

Միտերանի գործունեության և առողջական վիճակի վերաբերյալ «Le Monde»-ի տպած նյութերից հետո: Սա արվեց իբրև վատություն թերթին, բայց վերածվեց լավ գովազդի. ֆրանսիական հասարակության մեջ վերստին աճեց հետաքրքրությունը այս պարբերականի հանդեպ:

Ի պատասխան՝ օրաթերթի հին խմբագիրներից Պիեր ժորժը գրեց մի սուր հոդված, որը տպագրվեց «Le Monde»-ի հոկտեմբերի 11-ի համարում. «Ելիսեյականների որոշումը՝ այլևս «Le Monde» չկարդալ, քիչ գնել այն, ազդել նրա հեղինակության վրա, կարևոր է իր նշանակությամբ: Դա նշանակում է, որ եթե թերթի հետ կան տեսակետների անհամաձայնություններ, պետք է այլևս չգնել այն կամ դադարեցնել բաժանորդագրությունը: Այսինքն՝ կարելի է ասել սիրած թերթը նրա տպագրած այս կամ այն հոդվածի, դիրքորոշման կամ բացթողման համար: Ելիսեյականները հրաժարվում են բաժանորդագրությունից, բայց՝ ոչ ամբողջությամբ: Դա նշանակում է ելիսեյան համբավը հավասարեցնել կրպակագործի համբավին: Եթե «Le Monde»-ը մերժված է Ելիսեյում, և այլևս այնտեղ չի ընթերցվելու, այդ դեպքում լինենք տրամաբանական՝ ո՛չ 110, ո՛չ 20, ո՛չ մի օրինակ: Ջրո՛»⁷²:

Սա բավական համարձակ և գեղեցիկ պատասխան էր նախագահին:

«Le Monde»-ն անդրադարձել է նաև Միտերանի անձնական կյանքին. 1994 թ. սեպտեմբերի 2-ի համարում լույս տեսած Էդվի Պլենելի «Le secret de jeunesse de François Mitterand» հոդվածը անդրադարձ է նախագահի երիտասարդության տարիներին: Հեղինակը քննում է Միտերանի քաղաքական և անձնական սխալները, համարձակ եզրահանգումներ անում: Նույն թվականի նոյեմբերի 4-ի համարում ժան-Իվ Լոնոն հանրությանը իրազեկում է Միտերանի ապօրինի աղջկա գոյության մասին. «Նա մի աղջիկ ունի՝ Սազարին, ով նրան ուղեկցում էր հուլիսին իր՝ Հյուսիսային Աֆրիկա կատարած պաշտոնական այցի ժամանակ: Նա շատ գեղեցիկ է»⁷³: Հոդվածում ակնարկ կա նաև Միտերանի ինչ-որ մտերիմների մասին, որոնց «կեղտոտ» փողերը, հեղինակի կարծիքով, ծախսվել են նախընտրական արշավի ժամանակ: Ի պատասխան նախագահական ապարատի

⁷² Georges P., «À l'abonné Charasse», LE MONDE, 1 octobre 1994.

⁷³ Lhomeau J.-Y., «La vie privée du chef de l'État. Et alors?», LE MONDE, 4 novembre 1994.

այն մեղադրանքին, թե «Le Monde»-ը շատ է անդրադառնում Միտերանի հիվանդությանը, հողվածագիրը պատասխանում է, որ նախագահի առողջական վիճակի հանդեպ ուշադրությունն այնքան է, որքան եղել է նախորդների՝ գեներալ դը Գոլի կամ ժորժ Պոմպիդուի ժամանակ:

«Le Monde»-ն այս դեպքում, իրոք, մի փոքր չափն անցավ՝ երկրի նախագահի հանդեպ բացասական տրամադրվածություն ստեղծելու առումով: Չափն անցավ ըստ իր չափանիշների: Միգուցե մեկ այլ թերթի դա թույլատրելի էր, բայց հաշվի առնելով իր խոսքի ուժը և ազդեցությունը նաև արտերկրում՝ «Le Monde»-ը պետք է առավել զգուշավոր լիներ: Այնուհանդերձ, կարծում ենք՝ օրաթերթը միտված չէր պայքարել կոնկրետ Միտերանի անձի կամ նրա ներկայացրած ձախ ուժերի դեմ: Նրանք թերթի նշանակետում միակը չէին: Նույն ժամանակահատվածում կարելի է հանդիպել տարբեր նախարարների և քաղաքական տարբեր ուժերի հանդեպ քննադատական հողվածների: «Le Monde»-ի սուր գրչից չեն խուսափել այն ժամանակվա ֆրանսիացի հայտնի քաղաքական գործիչներից էդուարդ Բալադուրը, Միշել Ռուսինը, Ալեն Գարինոն, Ժերարդ Լոնգեն, Բերնարդ Տապին, Ժակ Շիրակը և այլք:

Ինչպես արդեն նշել ենք, 1995 թ. նախագահական ընտրությունների նախօրեին Ժակ Շիրակը հուսով էր, որ «Le Monde»-ը իրեն կպաշտպանի: Մինչդեռ թերթը քննադատաբար է վերաբերվել այս քաղաքական գործչին թե՛ վարչապետ և թե՛ Փարիզի քաղաքապետ եղած ժամանակ: Կոլոմբանին բազմիցս նշել է, որ Ժակ Շիրակը մշտապես փորձում է ճնշում գործադրել օրաթերթի վրա՝ հայտարարելով, որ նման փորձ եղել է թե՛ իր և թե՛ մյուս խմբագիրների հանդեպ: Չենք կարծում, որ նա հակված լիներ ստել կամ չափազանցել: Այդ դեպքում, սակայն, անհասկանալի է թվում Կոլոմբանի հաջորդ քայլը. անմիջապես ընտրությունների նախաշեմին թերթը մեծ նվեր է մատուցում Շիրակին՝ նոր ֆորմատի անցնելու առաջին օրը՝ 1995 թ. հունվարի 10-ին, առաջին էջում տպագրելով վերջինիս «La France pour tous» («Ֆրանսիան բոլորի համար է») հողվածը և ապահովում առանձնահատուկ մեծ լսարան նրա համար: Հիշենք, որ այդ օրը թերթի վաճառքն ավելացել էր 110%-ով՝ միայն Ֆրանսիայում հասնելով 410000 օրինակի: Եթե

սրան ավելացնենք բաժանորդագրությունը և վաճառքն արտասահմանում, ապա պարզ կլինի, որ սա, իրոք, մեծ նվեր էր ժակ Շիրակին, որն էլ, ի դեպ, հաղթեց ընտրություններում:

Կոլոմբանիի այս քայլի բացատրությունը դժվար է տալ: Կարող ենք միայն ենթադրել, որ թերթը կան չի կարողացել դիմակայել Շիրակի կողմից գործադրված ճնշումներին, կան սա պարզապես քաղաքական գովազդի օրինակ է, որի համար թերթն առատաձեռն վարձատրվել է, և կան խմբագիրը փոխել է իր վերաբերմունքն այս քաղաքական գործչի հանդեպ: Առաջին դեպքում «Le Monde»-ը պետք է դեմ գնար իր սկզբունքներին, ինչը քիչ հավանական է՝ հաշվի առնելով թերթի հետագա գործունեության ընթացքը: Մնում են վերջին երկու տարբերակները:

Այս ընտրությունների արդյունքում երկու թեկնածուները՝ ժակ Շիրակը և Լիոնել ժոսպենը, անցան երկրորդ փուլ: «Le Monde»-ի 1995 թ. մայիսի 6-ի համարում տպագրված ժան-Մարի Կոլոմբանիի «Nos choix» («Մեր ընտրությունը») հոդվածը վերաբերում է հենց երկրորդ փուլին: Հեղինակը պնդում է, որ ընթերցողին մտածելու կերպ չի պարտադրում, այլ մատուցում է վերլուծություններ: Նա նշում է, որ «Le Monde»-ը երբեք չի եղել և չի լինի ո՛չ աջ և ո՛չ էլ ձախ ուժերի կողմակից, և ով էլ լինի կառավարության ղեկին, թերթի պահանջները հետևյալն են. միասնական եվրոպական դրամի ընտրություն, ժողովրդավարական արժեքների պահպանում, պայքար անհավասարության, անիշխանության և գործազրկության դեմ: «Թերթը ընտրություն չի կատարում ժակ Շիրակի և Լիոնել ժոսպենի միջև: Սա է թերթի ընտրությունը»⁷⁴, - վստահեցնում է Կոլոմբանին:

Այսպիսով, «Le Monde»-ն իր նյութերում անկողմնակալ է, հարկ եղած դեպքում վեր է հանում քաղաքականության և քաղաքական գործիչների թրություններն ու սխալները՝ չխնայելով ոչ մեկին: Դրանով էլ դեպի իրեն է սևեռում հանրության ուշադրությունը, վստահություն ձեռք բերում, և այն պահերին, երբ անհրաժեշտ է, շատ ավելին է անում իր նախընտրած գործչի համար, քան եթե ամբողջ ընթացքում գովաբաներ նրան: Բացի այդ, այս դեպքում ոչ ոք չի

⁷⁴ Colombani J.-M., «Nos choix», LE MONDE, 6 mars 1995.

կարող մեղադրել թերթին կողմնապահության մեջ, քանի որ վերջինս, ի պատասխան, միշտ կարող է մատնացույց անել նույն գործչի թերացումները մատնանշող իր բազում հոդվածները:

Ներկայացնենք «Le Monde»-ում տպագրված ևս մեկ հոդված, որը բավական երկար ժամանակ քննարկումների նյութ էր Ֆրանսիայում և անմիջականորեն առնչվում էր Ֆրանսիայի արտաքին քաղաքականությանը: 1998 թ. սեպտեմբերի 13-ին և 14-ին «Le Monde»-ը տպագրեց դատախազ Սթարի զեկույցը Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Բիլ Բլինթոնի և Մոնիկա Լևինսկու կապերին վերաբերող դատական գործի մասին: Սա դիտվեց իբրև հակաամերիկյան քայլ: Ընդ որում, թերթին մեղադրում էին ոչ միայն դրսից. «Le Monde»-ի խմբագիրները ևս բաժանվել էին երկու հակառակ բանակների: Մի մասի կարծիքով՝ սա «Le Monde»-ի կողմից անբարո քայլ էր, լսարան նվաճելու ոչ ճիշտ միջոց, երբ մի քանի օրինակ ավել վաճառելու համար հարվածի տակ էին դրվում ֆրանս - ամերիկյան հարաբերությունները: Մյուս մասի կարծիքով՝ այս լրատվությունն օբյեկտիվ իրականություն էր, որին «Le Monde»-ը չէր կարող չանդրադառնալ:

Թերթը ստիպված էր սեպտեմբերի 19-ին նորից անդրադառնալ թեմային Ռոբերտ Սոլեի «Le monstre de M. Starr» («Պարոն Սթարի հրեշավոր արարքը») հոդվածով: Հեղինակը նշում է, որ ինչքան էլ «սկանդալային» լինի դատախազի հաշվետվությունը, այն իրողություն է և տպագրվել է իբրև փաստաթուղթ: «Եթե հոդվածի տպագրության օրերին ավելացել է թերթի վաճառքի ցուցանիշը, նշանակում է՝ ընթերցողը ցանկություն ունի կարդալ այդ մասին, ավելին՝ իրավունք ունի տեղեկացվելու Ամերիկայի դեմոկրատական պետության և նրա գաղափարական գործիչների մասին, և թերթը կոտնահարեր այդ իրավունքը, եթե չանդրադառնար այդ իրողությանը»⁷⁵: Այսքանով հարցը փակվեց: Մի քանի ամիս անց այս մասին խոսում էր ողջ աշխարհը:

«Le Monde»-ի «France» (Ֆրանսիա) բաժինն ամբողջությամբ նվիրված է Ֆրանսիային, նրա քաղաքական, սոցիալական, տնտեսական կյանքին: Այս բաժնի ամենօրյա ընթերցողը կարող է հստակ պատկերացում կազմել երկրի ոչ միայն

⁷⁵ Solé R., «Le monstre de M. Starr», LE MONDE, 19 septembre 1998.

քաղաքական, այլև սոցիալ - տնտեսական խնդիրների մասին, ի դեպ՝ ոչ սիրողական մակարդակով, քանի որ մանրամասնորեն ներկայացվում են երկրում իրականացվող տնտեսական, սոցիալական բոլոր բարեփոխումները, դրանց նախորդող քննարկումները, տեսակետները: Ավելին՝ թերևս Ֆրանսիայի տնտեսական կյանքն ուսումնասիրողների համար ավելի լավ ուղեցույց, քան «Le Monde»-ի այս բաժինն է, դժվար է պատկերացնել: Ամենօրյա քննարկումները, տարբեր կարծիքների, դիրքորոշումների մատուցումը թույլ են տալիս համակողմանի պատկերացում կազմել հիշյալ բնագավառի մասին: Այստեղ ներկայացվում են նաև այն վտանգները, որոնք կարող են սպառնալ Ֆրանսիայի տնտեսությանը, դրանք կանխարգելող միջոցներ են առաջարկվում:

«Le Monde»-ի տեսակն առավել հստակ պատկերացնելու համար ճիշտ ենք համարում նրա բաժինների համեմատությունը Ֆրանսիայի օրաթերթային մամուլի այլ ներկայացուցիչների նմանատիպ բաժինների հետ: Այսպես, «Le Figaro»-ն իր նույնանուն բաժնում ներկայանում է իրեն հատուկ թեթև և մտերմիկ ոճով. անդրադառնում է Ֆրանսիայի քաղաքների առօրյային, հյուրերին, հին թաղամասերին, նորանուծություններին, մինչդեռ «Le Monde»-ն աներեր է քաղաքականություն, հարկային դաշտ, բյուջեի դեֆիցիտ և օգուտներ, արտահանում, ներմուծում, տնտեսական ծրագրեր ու կազմակերպություններ, գործազրկություն. ահա այն հիմնական թեմաները, որ տեղ են գտնում թերթի «France» բաժնում: Այստեղ հաճախ են հանդիպում երկրի տնտեսական պատկերը ներկայացնող գրաֆիկներ, որոնք առավել պատկերավոր են դարձնում միտքը՝ թույլ տալով ավելի լավ ըմբռնել թեման: Գերիշխում է գիտական ոճը: Իհարկե, տպագրվում են նաև «Le Monde»-ի չափանիշներով համեմատաբար թեթև նյութեր, որոնք ավելի հեշտ են ընկալվում և հիմնականում կապված են տարբեր իրադարձությունների, այցելությունների, փորձարկումների հետ:

«*Société*» («Հասարակություն») բաժինն ունի իրավական ուղղվածություն: Այստեղ ներկայացվում են նյութեր դատական ընթացիկ գործերի մասին՝ քաղաքական կոռուպցիա, մահափորձեր, հանցավոր ցանցեր, մարմնավաճառություն, մարդու իրավունքների խախտումներ և այլն: Հոդվածները

ներկայացվում են նրբանկատ չեզոքությամբ, ինչը, սակայն, կարող է խաբուսիկ լինել: Պարզապես թերթի լրջությունը նրան թույլ չի տալիս կողմնակալ լինել: Այստեղ ևս «Le Monde»-ը հանդես է գալիս չափի մեջ՝ տպագրելով միայն հրապարակման համար պատշաճ լուրեր: Եթե անգամ խոսքը վերաբերում է բռնությանը, սահմակեցուցիչ դեպքերին, դրանց զուսպ, ոչ հուզական մատուցումը բացահայտում է նման դեպքերի իրական պատկերը:

«Société» բաժնում պարբերաբար ուշադրության են արժանանում նաև այն դատական գործերը, որոնք ձգձգվում են ապացույցներ կամ վկաներ չլինելու պատճառով և կարծես մոռացվում են իրավապահների կողմից կամ ավելի ճիշտ՝ աչքաթող արվում: Նման դեպքերում թերթը հիշեցնում է կիսատ գործի մասին և պահանջում առաջ շարժվել: Դա հիմնականում արվում է հետևյալ կերպ. ներկայացվում են գործի մանրամասները, այն, ինչ արդեն արվել է, և տուժողների վիճակը տվյալ պահին: Այս նյութերի բնույթը նկատելի է հենց վերնագրից, օրինակ. «Գործի նախնական քննությունից 6 ամիս հետո դեռևս չեն գտնվել այն ապացույցները, որոնք հաստատում են հին մարմնավաճառների ներգրավումը հանցագործ աշխարհում»: Ինչպես տեսնում ենք՝ նորից անկողմնակալ վերաբերմունք, պարզապես գործը կիսատ է, անհրաժեշտ է վերսկսել: Եթե չկան ապացույցներ, ուրեմն պետք է հանվի մեղադրանքը կամ էլ պետք է ավելի արդյունավետ աշխատել: «Le Monde»-ի կեցվածքն ուղղակի հիացնում է, եթե հատկապես զուգահեռներ անցկացնենք մեր մամուլում իրավական գործերի ներկայացման և քննարկման հետ...

Բաժինը հաճախ անդրադառնում է այս կամ այն գործի վերաբերյալ մասնագետների կարծիքներին, հարցազրույցներ անցկացնում դատավորների, դատախազների հետ: Երբեմն որևէ գործ, ներկայացվելով մի քանի հոդվածների միջոցով, զբաղեցնում է ամբողջ էջը: Այս դեպքում էջի վերջում առանձին սյունակներով ներկայացվում են գործի հիմնական մասնակիցները, այսպես.

«Պատրիկ Ալեգր- ձերբակալվել է 2002 թ. փետրվարի 21-ին՝ 5 մարդու սպանության մեղադրանքով:

Ֆաննի- նախկին մարմնավաճառուհի, մեղադրվում է սպանությունները հրահրելու մեջ...»:

Ի դեպ՝ ներկայացվում են նաև վկաներն ու դատաիրավական այն մարմինները, ովքեր զբաղվում են տվյալ գործով, ինչպես.

«Միշել Բրեարդ- Տուլուզի հանրապետության դատախազ, ծանոթացել է գործին 2002 թ. ապրիլի 15-ին,

Սերժ Լենոին, Նիկոլ Բերգուզնան և Տիերի Պերիքե- գործում ներգրավված վկաներ...»:

Դատական գործերի մասնակիցների ներկայացման այս ձևը թույլ է տալիս պատկերացում կազմել, թե ովքեր են պատասխանատու գործի բացահայտման համար: Սա հատկապես կարևորվում է այն դեպքում, երբ կան թերացումներ իրավապահ մարմինների կողմից կամ, որ ավելի վատ է՝ կողմնակալ վերաբերմունք: Ուշադրություն դարձնենք՝ թերթն այս դեպքում ևս հանդես չի գալիս ուղղակի մեղադրանքներով, պարզապես ներկայացնում է գործում ներգրավված իրավաբաններին՝ եզրակացությունը թողնելով ընթերցողին:

Այսպիսով, «Société» բաժինը ներկայացնում է Ֆրանսիայի քրեական աշխարհի ընդհանուր պատկերը, և միայն վերնագրերը կարդալով՝ կարելի է պատկերացում կազմել ընթացիկ ամենահայտնի դատական գործերի մասին. «Սեդրիկ Բելեքը խոստովանում է, որ սպանել է իր խորթ ծնողներին: Մեղադրողը ներկայացրել է իր մանկության տխուր նկարագիրը (Գործի լսման առաջին և երկրորդ օրերը)», «Ապահովագրական գործակալը պատահական դիպվածով սպանում է իր ընկերոջը», «Ավարտվեց պարոն Բոդիսի և Դուար Բլազի տխուր սիրավեպը» և այլն:

Այս բաժնում լուսանկարներ հաճախ են հանդիպում: Դրանք պարզապես տվյալ անձանց հետ ընթերցողին ծանոթացնելու միջոց են: Երբեք չէք հանդիպի դաժան տեսարանների, մահացած անձանց նկարների, որոնք այնքան շատ են եվրոպական և ամերիկյան բուլվարային թերթերում և համարվում են լսարան գրավելու տխուր միջոցներ, որոնց դեպքում անտեսվում է բարոյական կողմը, հարազատին հասցված հարվածը: Այստեղ զետեղված են հիմնականում սև -

սպիտակ, ստանդարտ նկարներ, որոնք ներկայացնում են դատավորների, դատախազների, այլ իրավապահների, ավելի հազվադեպ՝ մեղադրյալների:

Բաժինն աչքի է ընկնում մատուցած ամբողջական և մանրամասն տեղեկատվությամբ, ներկայացվում են բոլոր կողմերը, նույն գործի վերաբերյալ տարբեր մասնագետների, երբեմն նաև մեղադրվող կամ տուժող կողմի մտերիմների կարծիքները:

Ֆրանսիայի առանձին շրջանների նորությունները ներկայացվում են «*Régions*» («Շրջան») խորագրի ներքո⁷⁶: Բավական փոքր այս բաժինը հիմնականում անդրադառնում է Ֆրանսիայի քաղաքներում տեղի ունեցող իրադարձություններին: Թեմաները տարբեր են՝ տնտեսություն, քաղաքականություն, տրանսպորտ, տարածաշրջանի համար ընդունված օրենքներ, ընթացիկ ծրագրեր և այլն: Տպավորություն է ստեղծվում, թե այստեղ տեղադրվում են «France» բաժնից դուրս մնացած նյութերը: Իրականում այս իրադարձությունները վերաբերում են ոչ թե ողջ Ֆրանսիային, այլ նրա առանձին շրջաններին:

Շրջանների խնդիրներին պարբերաբար անդրադառնալը «Le Monde»-ի կողմից ընտրված ճիշտ քաղաքականություն է: Նախ ընդլայնվում է թերթի լսարանը. այն կարդում են նաև Ֆրանսիայի հեռավոր քաղաքների ընթերցողները, ովքեր ուզում են իրազեկ լինել իրենց տարածաշրջանի նորություններին, և միաժամանակ՝ Ֆրանսիայի շրջանների մասին լուրերը հասնում են Փարիզի և արտասահմանի ընթերցողին: Բաժնի համար գրում են հիմնականում «Le Monde»-ի մարզային թղթակիցները Մարսելից, Լիոնից, Կաննից, այլ քաղաքներից:

«Régions» բաժնում հաճախ հանդիպում են տարբեր շրջանների քարտեզներ՝ մի դեպքում տրանսպորտային երթուղի ցույց տալու, մյուս դեպքում՝ առևտրական ցանցեր մատնանշելու կամ բեռնափոխադրումների ճանապարհ ներկայացնելու համար:

«Régions»-ը վերջին բաժինն է, որտեղ «Le Monde»-ը անկողմնակալ տեղեկատվություն է մատուցում: Հաջորդ բաժինը «*Horizons*»-ն է («Հորիզոն»), որը թերթը կիսում է թե՛ բառի բուն իմաստով, որովհետև հանդես է գալիս մեջտեղի

⁷⁶ Այսօր շրջանների նորությունների համար միշտ չէ, որ թերթն առանձին էջ է տրամադրում:

էջերում, թե՛ գաղափարական առումով, քանի որ այս բաժնից սկսած՝ թերթը ներկայացնում է ոչ թե իր լուրերը, այլ ուրիշներին՝ կարծիքներ, վերլուծություններ, տարբեր մոտեցումներ:

Այս բաժինն անցում է արձանագրում «Le Monde»-ի խիստ պաշտոնական, գրական ոճից առավել պարզի, ինչպես նաև նեղ մասնագիտական թեմաներից՝ առօրյա, լայն լսարանին առավել հոգեհարազատ թեմաների: Տպավորությունն այն է, որ թերթի երկրորդ մասը նախատեսված է այլ ընթերցողի համար: Իսկ ավելի ստույգ՝ որքան էլ «Le Monde»-ն իր համար նախատեսի միայն գրագետ, քաղաքականապես հասուն, այսպես կոչված էլիտար ընթերցող, երբեք չի անտեսում ժողովրդի լայն խավերին: Թերևս այս հետաքրքիր համադրումն էլ այն գրավականն է, որի համար խստապահանջ ընթերցողը սիրում է «Le Monde»-ը. այն կարդում են թե՛ նախագահի աշխատակազմում ու դեսպանատներում, թե՛ փարիզյան սրճարաններում ու այգիներում:

Բաժնի առաջին էջը, որ կոչվում է պարզապես «Horizons», ներկայանում է պարզ, միևնույն ժամանակ համընդհանուր հետաքրքրություն առաջացնող նյութերով: Մի քանի տարի առաջ այս բաժնում արժարժվում էին միայն միջազգային հնչեղություն ունեցող թեմաներ, ինչպես, օրինակ՝ «Եվրոպայի նոր դռները» կամ «Օվկիանոսի նոր բնակիչները»: Այսօր արդեն բաժինը խոսում է տարբեր հոգեվիճակների, հակումների, կանացի երազանքների մասին. սա ևս առաջընթաց է «Le Monde»-ի համար՝ առավել թեթև խնդիրների գոնե երբեմն անդրադառնալու ճանապարհին: Համարներից մեկում, օրինակ, ներկայացված էին ռուս կանայք, որոնք Ֆրանսիա էին տեղափոխվել ոչ միայն բարեկեցիկ կյանք գտնելու ակնկալիքով, այլ նաև այն պատճառով, որ չափազանց կոշտ դիրքորոշում ունեին ռուս տղամարդկանց նկատմամբ: Նրանք միաբերան պնդում էին՝ գերմանացի, իտալացի, ֆրանսիացի տղամարդիկ ավելի են հարգում կանանց, քան ռուս տղամարդը: Հիշենք, որ սա «Le Monde»-ի տեսակետը չէ, որպեսզի լինի անաչառ, առանց որակումների: Բաժինն ունի ենթաբաժիններ՝ «Horizons débats» («Հորիզոն քննարկում»), «Horizons le grand débat» («Հորիզոն մեծ քննարկում»), «Horizons analyses» («Հորիզոն վերլուծություն»), «Horizons kiosque» («Հորիզոն

կրպակ», «Horizons sciences» («Չորիզոն գիտություն»), «Horizons enquête» («Չորիզոն հետաքննություն») և այլն:

«Horizons»-ի «*Débats*» («Քննարկում») ենթաբաժինը «Միջազգային տեղեկագրի» ավանդույթների հիմնական ժառանգորդն է: Ի դեպ, այս բաժնի անվանումն ու տեղը հաճախ փոխվել են: «Տեղեկագրի» անհետանալուց անմիջապես հետո քաղաքական քննարկումներ էր ներկայացնում թերթի վերջին էջերում տեղակայված «*Tribunes libres*» («Ազատ ամբիոն») բաժինը, հետո այն նույնպես անհետացավ, և փոքր - ինչ ուշ ստեղծվեց «*Libres opinions*»-ը («Ազատ կարծիք»), որը ևս ուներ նույն առաքելությունը: Այսօր քաղաքական քննարկումներն ու վերլուծությունները, քաղաքական գործիչների տեսակետները հիմնականում տեղ են գտնում «Horizons»-ի «*Débats*» ենթաբաժնում:

«*Débats*»-ում մատուցվում են տարբեր կարծիքներ և քննարկումներ: Եթե, օրինակ, միջազգային տեղեկատվական բաժինը ներկայացնում է Համաեվրոպական Սահմանադրությունը, նրա հեղինակներին, բովանդակությունը, նպատակը, ապա «*Débats*»-ն կարող է կարծիք հայտնել, ասենք, որ այդ Սահմանադրությունից շատ եվրոպացիներ ուղղակի բան չեն հասկանում, որ այնտեղ կան հակաժողովրդավարական որոշ տարրեր, և որ շատ հողվածներ ուղղակի հակասում են իրար («Համաեվրոպական Սահմանադրություն: Չենք ասում շնորհակալություն»):

«*Comment va la France?*» («Ինչպե՞ս է Ֆրանսիան») խորագրի ներքո հաճախ արտահայտվում են կողմնակալ կարծիքներ Ֆրանսիայի ներքին և արտաքին քաղաքականության վերաբերյալ: Հանդիպում են նաև տարբեր երկրների համագործակցություններին նվիրված հողվածներ:

Ինչպես նշել ենք, հաճախ միևնույն թեմային վերաբերող նյութերի կարելի է հանդիպել «*Le Monde*»-ի տարբեր բաժիններում: Օրինակ՝ միևնույն նյութի վերաբերյալ «*International*» բաժինը կարող է ներկայացնել տեղեկատվություն, «*Débats*» բաժնում անցկացվեն քննարկումներ, իսկ «*Analyses*»-ում կատարվի վերլուծություն: Այս դեպքում նյութի վերջում անպայման նշվում է, որ դրա մասին կարելի է կարդալ նաև այսինչ էջում (էջերում): Ի դեպ՝ տարբեր բաժիններում կարող են արտահայտվել բոլորովին տարբեր մոտեցումներ հարցին:

«*Le Grand Débat*» («Մեծ քննարկում») ենթաբաժինը, որը մեծ հեղինակություն էր վայելում, այսօր չի հանդիպում թերթի էջերում: Այն առաջարկում էր որևէ թեմա, անցկացնում լայն քննարկում՝ հաճախ բազում մասնակիցներով, ինչը, սովորաբար, ներկայացվում էր հարցազրույցի խմբային տարատեսակներով: Ավելի հաճախ «*Le Monde*»-ը հրավիրում էր կլոր սեղաններ՝ որևէ հարցի վերաբերյալ մասնագետների կարծիքներն իմանալու նպատակով:

Այս զրույցները հիմնականում վարում էր «*Le Monde*»-ի ճանաչված խմբագիրներից մեկը՝ Էդվի Պլենելը: Վերջինս հայտնի է Ֆրանսիայում՝ իբրև ժողովրդավարության համար պայքարող մարտիկ: Նրա թղթակցությունները տպագրելը պատիվ է ֆրանսիական ամենահայտնի թերթերի համար: Երկար տարիներ թղթակցելով «*Le Monde*»-ին՝ 1990-ականներին նա վերջնականապես հաստատվեց այստեղ, 1996 թ. հունվարին նշանակվեց խմբագրության տնօրենի պաշտոնում, իսկ 2005-ին լքեց թերթը: Կոլումբանիի տնօրինության տարիներին Էդվի Պլենելի կարծիքը հաշվի էր առնվում թերթում կառուցվածքային փոփոխություններ իրականացնելիս, ավելին՝ հաճախ նա լինում էր դրանց համահեղինակը: Լրագրողը բազմիցս արտահայտել է իր կարծիքը թերթի մասին. «Ինձ համար «*Le Monde*»-ը ֆրանսիական մամուլի վերածնունդն է: Սա հաստատվում է ամեն առավոտ՝ խմբագրության կողմից և ստուգվում ամեն երեկո՝ ընթերցողների կողմից»⁷⁷: Այս լրագրողի նյութերն աչքի էին ընկնում ժողովրդավարական ոգով, հարցազրույցների դեպքում՝ դիպուկ, ճիշտ ուղղորդված հարցերով: Նրա կազմակերպած քննարկումներին մասնակցում էին ծանրակշիռ պետական և քաղաքական գործիչներ՝ նախարարներ, պատգամավորներ, ընկերությունների նախագահներ, հրավիրյալներ տարբեր երկրներից: Պլենելի ընտրած թեմաները բազմազան էին: Իր բաժնի համար նա հիմնականում ընտրում էր տվյալ պահին ժողովրդի զգալի մասին հետաքրքրող նյութեր. դրանք կարող էին վերաբերել քաղաքականությանը, տնտեսությանը, մշակույթին, կրոնին կամ որևէ այլ բնագավառի: Հաճախ նրա քննարկումները միևնույն թեմայի շուրջ շարունակվում էին մի քանի համարներում:

⁷⁷ Plenel E., «La plume dans la plaie», LE DÉBAT, mai-août 1996.

«Analyses» («Վերլուծություն») ենթաբաժինն աչքի է ընկնում հետաքրքիր վերլուծություններով, որոնցով հանդես են գալիս ինչպես թերթի լրագրողները, այնպես էլ քննարկվող բնագավառի մասնագետները: Թեմաները բազմազան են՝ տարբեր երկրներ, բնագավառներ, իրադարձություններ: Ենթաբաժնում զետեղված են մասնագիտական լուրջ վերլուծություններ քաղաքականության, տնտեսության, սոցիալական հիմնախնդիրների, միջպետական ու միջազգային հարաբերությունների վերաբերյալ: Հանդիպում են ինքնատիպ կարծիքներ, փաստերի անսպասելի համադրումներ, հետաքրքիր կանխատեսումներ: Սովորաբար լուրջ հիմնախնդիրները ներկայացվում են մանրամասներով, հաճախ առաջարկվում են խնդրի լուծման այնպիսի տարբերակներ, որոնք կարող են իրոք օգնել տվյալ հարցի կարգավորմանը:

Ենթաբաժինն աչքի է ընկնում լավ ընտրված, խոսուն վերնագրերով՝ «Եվրոպա Իրանում», «Ալժիր: Փոխել համակարգը, թե՞ հրաժարվել համակարգից» և այլն:

«Horizons»-ի հաջորդ ենթաբաժինը «Kiosque»-ն է («Կրպակ»), որտեղ զետեղվում է աշխարհի թերթերի՝ օրվա առավել արժեքավոր նյութերի կրճատ բովանդակությունը: Այդ նյութերից կարևորագույնները ներկայացվում են ավելի մանրամասն: Ի դեպ, հաշվի չի առնվում՝ տվյալ թերթը կամ հոդվածը գրող լրագրողը հեղինակավոր է, թե ոչ: Ավելին՝ երբեմն հանդիպում են այնպիսի թերթերի անուններ, որոնց մասին գոնե մենք երբևէ չենք լսել: Ներկայացվելիք հոդվածը քննարկվում է «Le Monde»-ի լրագրողի կողմից թե՛ գաղափարական, թե՛ մասնագիտական դիտանկյունից:

Ենթաբաժնում առանձին մատուցվում են ֆրանսիական, ամերիկյան, լատինաամերիկյան և այլ երկրների թերթերի մամուլի տեսությունները հետևյալ խորագրերի ներքո՝ «Dans la presse française» («Ֆրանսիական մամուլում»), «Vue par la presse latino-américaine» («Հայացք լատինաամերիկյան մամուլին») և այլն: Ի դեպ՝ «Le Monde»-ի տեսադաշտում միշտ միևնույն թերթերը չեն: Ըստ էության, «Horizons»-ի այս էջի նյութերը մամուլի տեսության դասական օրինակներ են:

Բաժինն ունի իր հիմնական լրագրողները, որոնցից յուրաքանչյուրն անդրադառնում է որևէ առանձին երկրի մամուլի:

Այս բաժնում հաճախ տեղ է գտնում նաև ընթերցողի կարծիքը «Le Monde»-ում տպագրված այս կամ այն նյութի վերաբերյալ, ինչպես նաև առկա խնդիրներին նվիրված սիրողական վերլուծություններ՝ «Au courrier des lecteurs» («Ընթերցողի սուրհանդակ») խորագրի ներքո: Տպագրվում են նամակներ, որոնք ուղղված են խմբագրին կամ խմբագրությանը և սովորաբար քննարկումներ են որևէ թեմայի շուրջ: Օրինակ՝ համարներից մեկում ընթերցողն անդրադառնում է կառավարությունում անցկացվող քննարկումներին, որոնք վերաբերում են երկիր ներկրվող մթերքների քանակի սահմանափակմանը: Ընթերցողն անիմաստ է համարում այս քննարկումները՝ բերելով իր փաստարկները: Մեկ այլ նամակում Իտալիայի Սենատի մի անդամ առաջարկում է լիրայի ճգնաժամի իր բացատրությունը: Այս նամակները հիմնականում ոչ մասնագիտական մոտեցումներ են հարցին և արտահայտում են ընթերցողի կարծիքը: Նշենք, որ «Le Monde»-ը միշտ մեծ տեղ է տվել իր ընթերցողին, և դա միայն հայտարարությունների դեպքում զեղչերով և նրանց նամակների տպագրությամբ չի արտահայտվում: 1985 թ. հոկտեմբերի 22-ին ստեղծվեց «Le Monde»-ի Ընթերցողների միությունը, որը դարձավ թերթի հիմնական բաժնետերերից մեկը և հնարավորություն ստացավ միջամտելու և ազդելու թերթի համար ռազմավարական կարևորություն ունեցող հարցերի լուծմանը:

Բաժինները «Le Monde»-ում քարացած չեն. փոփոխվում են, ստեղծվում են նորերը՝ միշտ ենթակա կյանքի ռիթմին ու պահանջներին: Թերթի «*Entreprises*» («Ձեռնարկություն») բաժինն, օրինակ, նոր է, չէր հանդիպում մի քանի տարի առաջ: Այսօր այն հանդես է գալիս «*Economie*» («Տնտեսություն») անվամբ ու ներկայացնում է Ֆրանսիայի և այլ երկրների տնտեսական խնդիրները, քննարկում դրանք: Թեմաներն ամբողջությամբ նվիրված են տնտեսությանը՝ բանկային համակարգ, ձեռնարկություններ, արտադրություն, առևտուր, ֆինանսներ: Բաժինն իր ընդգրկման շրջանակներով մոտ է «France» բաժնին: Գիշտ է, վերջինս հիմնականում ներկայացնում է Ֆրանսիայի սոցիալական կյանքը, սակայն այս

բնագավառը բազում թելերով կապված է տնտեսության հետ, և «France»-ի վերլուծությունները այս կամ այն ձևով վերաբերում են նաև տնտեսությանը: Թերևս դա էր պատճառը, որ երկար տարիներ «Le Monde»-ը բավարարվում էր միայն «France» բաժնով: «Entreprises»-ի ստեղծումով թերթը բաժանեց տնտեսական և սոցիալական բնագավառները՝ առանձին տեղ հատկացնելով տնտեսությանը: Բաժնի լուրերը, որպես կանոն, չեն ստորագրվում, կան նաև հեղինակային վերլուծական նյութեր:

Միջազգային տնտեսական կապերը մատուցվում են կարճ լուրերի տեսքով՝ հիմնականում առանց վերլուծությունների և բովանդակակալից վերնագրերով, ինչպես, օրինակ՝ «Գերմանիան իր էլեկտրաէներգիան վաճառում է Միացյալ Նահանգներին», «Անգլիան ուշացնում է իր՝ առևտրական ճանապարհները ներկայացնող ծրագիրը» և այլն: Վերլուծական հոդվածները բացահայտում են տնտեսական գործարքների մանրամասները, դրանց արդյունավետությունն այս կամ այն կողմի համար և սպասվելիք արդյունքները: Տնտեսական գործարքների պայմանները պետք է պահպանվեն, իսկ պահանջները՝ կատարվեն բարեխղճորեն և ժամանակին. սա է բաժնի նշանաբանը: «Le Monde»-ն անողոք է այն ձեռնարկությունների հանդեպ, որոնք չեն կատարում իրենց պարտավորությունները: Այս դեպքում թերթը ներկայացնում է թերացման պատճառած վնասները, նաև՝ գումարային տեսքով և փոխհատուցում պահանջում:

Բաժնում հաճախ են հանդիպում տնտեսական տարբեր ելևէջումներ ներկայացնող գրաֆիկներ:

Ընդհանրացնելով՝ նշենք, որ «France» բաժինն ավելի ամբողջական ու հավաք է ներկայացնում Ֆրանսիայի տնտեսությունը և սրան ի հակակշիռ ավելացնենք, որ միջազգային տնտեսական հարաբերություններին վերաբերող լրատվություն կարելի է ձեռք բերել միայն «Economie» բաժնից:

«*La Tendence financière*»-ը («Ֆինանսական միտում») և «*Marchais français*»-ը («Ֆրանսիական շուկա») նույնպես կրում են տնտեսական բնույթ⁷⁸: Առաջին բաժնի առաջին մասում «Le Monde»-ը ներկայացնում է առանձին

⁷⁸ Այսօր՝ «Economie» բաժին:

ձեռնարկությունների տնտեսվարման առանձնահատկությունները, նրանց շահույթի չափը, ներդրումները, որ կատարվում են այստեղ, արտադրանքի գնողունակությունը, ծախսերը, տվյալ ձեռնարկության վարկը հասարակությունում, մասնաճյուղերը: Այսինքն՝ սա բավական մանրազնին անդրադարձ է ձեռնարկությունների խոհանոցին: Հաճախ քննվում են ոչ թե առանձին ձեռնարկություններ, այլ որևէ արտադրանքի շուկան ընդհանրապես, օրինակ՝ ավտոմեքենաների արտադրությամբ զբաղվող ընկերությունների համեմատական վերլուծություն է արվում, որի ընթացքում բացահայտվում են ինչպես ընկերություններից յուրաքանչյուրի տնտեսվարման ձևերը, այնպես էլ ավտոմոբիլային շուկան ընդհանուր առմամբ: Այսպես՝ «Ֆրանսիական ավտոմոբիլներ արտադրողների շահերը հաճախ բախվում են: Peugeot Citroën խմբի մեքենաների գնողունակությունը երեք ամիս շարունակ բարձր մնալուց հետո անկում է ապրում: Renault-ն երկու՝ տնտեսական առումով դժվար տարիներից հետո հուսով է վերջապես դուրս գալ ճգնաժամից: Nissan-ը ապրում է իր՝ ներդրումների առումով լավագույն ժամանակաշրջանը»: Այս նախաբանին հաջորդում է ընկերություններից յուրաքանչյուրի տնտեսվարման ձևերի վերլուծությունը, բացահայտվում են նրանց վերելքի կամ անկման պատճառները:

«La Tendence financière» բաժնի մյուս մասը մատուցվում է աղյուսակների ձևով: Առաջին աղյուսակը, որպես կանոն, բացահայտում է աշխարհի բորսաների տվյալները: Հաջորդ աղյուսակները ծանոթացնում են աշխարհի խոշորագույն քաղաքների (Ֆրանկֆուրտ, Լոնդոն, Տոկիո, Փարիզ, Նյու Յորք և այլն) բորսաների տվյալներին: Այնուհետև ներկայացվում է տարադրամի փոխանակման շուկան, ինչպես նաև եվրոյի արժեքի տատանումները վեց ամսվա և մեկ շաբաթվա ընթացքում՝ գրաֆիկների ձևով: Բաժինն ամբողջանում է ոսկու, արծաթի, այլ մետաղների և վառելիքի արժեքները ներկայացնող աղյուսակներով:

«*Marchés français*» («Ֆրանսիական շուկա») բաժինն ամբողջությամբ մատուցվում է աղյուսակների տեսքով: Սա նախորդի շարունակությունն է, որը, սակայն, կենտրոնանում է միայն ֆրանսիական շուկայի վրա և ներկայացնում ֆրանսիական բորսայի տվյալներն ամենայն մանրամասնությամբ: Նկատենք, որ

այս երկու բաժինները թերևս ունեն իրենց հատուկ ընթերցողը՝ մարդիկ, որոնց հետաքրքրում են աշխարհի բորսաների տվյալները, սակայն եթե հաշվի առնենք, որ դրանք անընդհատ փոփոխվում են, իսկ «Le Monde»-ը ստիպված է տպագրել միայն որոշակի ժամերի տվյալները (աղյուսակի սկզբում նշվում է, թե ժամը քանիսի տվյալներն են ներկայացված), ապա պետք է խոստովանենք, որ այս դեպքում շատ դժվար է օպերատիվ լինել:

«Communication» («Չաղորդակցություն») բաժինն անդրադառնում է տարբեր լրատվամիջոցների, նրանց ներքին խնդիրներին, պատմությանը, կատարած հայտարարություններին, տարբեր նկատառումներով օգտագործած հնարանքներին: Այսինքն՝ տեղեկատվություն է աշխարհի լրատվամիջոցների խոհանոցից: Սա տարբեր է «Horizons»-ի «Kiosque» ենթաբաժնից, որը ներկայացնում է ոչ թե լրատվամիջոցները, այլ նրանց հրապարակումները, ուղղվածությունը, դիրքորոշումն այս կամ այն հարցի վերաբերյալ, մինչդեռ «Communication» բաժինը ոչ մի կապ չունի թերթերի հրապարակումների հետ: Նրա ուշադրության կենտրոնում մամուլի խմբերն են, հեռուստառադիոընկերությունները, որոնք, հնարավոր է, հրապարակեն նոր թերթ, հեռարձակեն նոր հաղորդաչար կամ, հակառակը, դադարեցնեն որևէ օրգանի հրապարակում, հեռուստառադիոհաղորդման հեռարձակում կամ հրաժարվեն որևէ լրատվամիջոցից՝ նրա կառավարումը հանձնելով մեկ ուրիշի:

Բաժինն անդրադառնում է նաև լրատվամիջոցների սպառման ցուցանիշներին, տարածման եղանակների փոփոխություններին, տնօրենների և խմբագիրների նշանակումներին, այն ամենին, ինչը կարող է ազդել լրատվամիջոցների կառավարման եղանակի վրա և հետաքրքրել ընթերցողին: «Communication»-ի հիմնական ժանրը մամուլի ընդհանուր կամ ծավալուն տեսությունն է: Վերնագրերն արտահայտում են բաժնի բովանդակությունը՝ «Գերմանական «Axel Springer» մամուլի խումբը սկսում է նոր օրաթերթի հրապարակում Պոլոնիայում», «Bild» և «Die Welt» թերթերը պայքարում են «Gazeta»-ի դեմ», «Միշել Գրինը այլևս չի կառավարելու ITV-ն», «Ս տիպի մամուլի խումբը փորձելու է ստեղծել հեռուստատեսային շաբաթաթերթ» և այլն:

Բաժինը ներկայացնող էջի աջ անկյունում տեղ են գտնում հիմնականում տեղեկատվական բնույթի նյութեր, իսկ ձախ մասում մամուլի տեսաբանների վերլուծություններն են լրատվամիջոցների աշխարհում առավել կարևոր իրադարձությունների մասին: Ներքևի մասում՝ «Le Monde Immobilier» («Անշարժ գույք») խորագրի ներքո ներկայացվում են տան առք ու վաճառքի մասին հայտարարություններ: Սրանք ևս, ինչպես «Carnet»-ի դեպքում, փոքր հայտարարությունների օրինակներ են և կրում են գովազդային բնույթ: Համեմատած այլ թերթերի նման բաժինների հետ՝ «Le Monde»-ի առք ու վաճառքի հայտարարությունների համար հատկացված տարածքը բավական փոքր է: Թե՛ բովանդակությամբ, թե՛ մատուցման ձևով «Le Monde»-ի այս բաժինն առաձնապես չի տարբերվում հայաստանյան թերթերի համանման բաժիններից:

«Le Monde»-ի մարզական լրատվությունը մատուցվում է «Sports» բաժնում: Այն նույնքան դինամիկ և բազմազան է, որքան բնագավառը, որ ներկայացնում է: Չկան ժանրային սահմանափակումներ, տեղ են գտնում հարցազրույցներ մարզիկների, մարզիչների, տեղական և միջազգային մարզական կազմակերպությունների նախագահների հետ, թղթակցություններ տարբեր խաղերի մասին: Դրանք աչքի են ընկնում պատկերավոր ոճով, համեմված են մրցավարների և մարզասերների արձագանքով, մասնագիտական մեկնաբանությամբ: Շատ են նյութերը տարբեր քաղաքներում տեղի ունեցող մարզական իրադարձությունների մասին: Հեղինակները սովորաբար «Le Monde»-ի թղթակիցներն են, որոնք ուղարկվում են այդ քաղաքներ՝ կենդանի և ամբողջական նյութ ներկայացնելու նկատառումով: Մեծ տեղ են զբաղեցնում նաև մարզական լուրերը: Ենթաբաժինը կառուցված է այնպես, որ անգամ ոչ մարզասեր ընթերցողն առանց ձանձրանալու կկարդա այն, իսկ մարզասերների համար ստեղծված են բոլոր պայմանները՝ նախընտրած մարզաձևի մասին լիարժեք տեղեկատվություն ստանալու համար: Մատուցման ձևը հետևյալն է. լուրերը գետեղվում են էջի աջ անկյունում: Ձախ անկյունում ներկայացվում են միայն խաղերի արդյունքները, այսինքն՝ թիմերի (խմբային մարզաձևերի դեպքում) կամ մարզիկների (անհատական մարզաձևերի դեպքում) անուններն ու խաղի հաշիվը, և եթե ընթերցողը ժամանակ չունի խաղի

մեկնաբանությունը կարդալու, գոնե արդյունքներին կարող է իրազեկ լինել: Ի դեպ, լուրերը նախորդում են նաև հարցազրույցներին՝ տալով նախնական լրատվություն խոսվելիք նյութի մասին:

«Sports» ենթաբաժնում ներկայացվում են ոչ միայն մարզական խաղերը. այստեղ տրվում է տեղեկատվություն սպորտի մասին ընդհանրապես, պատմվում է մարզական կազմակերպությունների գործունեության, նրանց ներքին խնդիրների, ընդունած որոշումների մասին, ներկայացվում են մարզիկների պայմանագրերը այս կամ այն մարզական թիմերի հետ: Նմանաբնույթ տեղեկատվությունը հետաքրքիր է ոչ միայն մարզիկների և սպորտի աշխարհի մյուս ներկայացուցիչների համար. մարզասեր հասարակայնության մեջ նույնպես հաճախակի քննարկվում են այդ հարցերը: Էջում պարբերաբար հանդիպում են լուսանկարներ, որոնք հիմնականում ներկայացնում են խաղի ամենահետաքրքիր մասերը:

Մարզական իրադարձություններին «Le Monde»-ը միշտ էլ բուռն է արձագանքել՝ տարբեր ժամանակահատվածներում հրապարակելով առանձին լրացուցիչ պարբերականներ: Նման փորձ արվեց 1996 թ. Ատլանտայի օլիմպիական խաղերի ժամանակ. «L' Équipe» մարզական օրաթերթի լրագրողների հետ համատեղ խմբագրվեց մի թերթ, որն իր գունավոր նկարազարդումներով, մասնագիտական որակյալ մեկնաբանություններով միանգամից ուշադրություն գրավեց: Փորձը նորացվեց 1999 թ. աշնանը՝ ռեգբիի աշխարհի խաղերի ժամանակ, ապա նաև 2000 թ. ամռանը՝ ֆուտբոլի եվրոպական առաջնության և Սիդնեյի օլիմպիական խաղերի ընթացքում:

Այլ խոսքով՝ «Le Monde»-ն իրեն հատուկ օպերատիվությամբ յուրաքանչյուր պահի հանդես է գալիս նոր նախաձեռնությամբ, եթե համոզված է, որ դա կմեծացնի հետաքրքրությունը թերթի հանդեպ:

«*Aujourd' hui voyages*» («Այսօր ճանապարհորդություն») ենթաբաժնում⁷⁹ «Le Monde»-ի տեսադաշտում են աշխարհի երկրները, խոշոր քաղաքներն ու տեսարժան վայրերը:

⁷⁹ Այսօր չի հանդիպում թերթի էջերում:

Անդրադառնալով ենթաբաժնում հաճախ տեղ գտնող ծավալուն հոդվածներին՝ նշենք, որ սրանք հիմնականում ներկայացվում են հանրագիտարանային ոճով և ճանաչողական նշանակություն ունեն: Յուրաքանչյուր համարում բացահայտվում է որևէ նոր երկիր. մանրամասնորեն ներկայացվում են աշխարհագրական դիրքը, բնակլիմայական պայմանները, բուսական և կենդանական աշխարհը, ժողովրդի կենցաղն ու բարքերը, պատմությունը: Հոդվածների մի մասը գրվում է ճանապարհորդական ակնարկի ժանրով, որտեղ լրագրող - ճանապարհորդն իր նկարագրածի ականատեսն է ու վկան: Նա ներկայացնում է իր անցած ուղին, տեսածը, լսածը լրացնում սեփական տպավորություններով: Այս դեպքում խոսքը կենդանի է և, ի տարբերություն հանրագիտարանային ոճով գրվածների, հեղինակի անձնական կարծիքն է, նրա զգացածն ու սուբյեկտիվ ընկալումները: Հատկապես պատկերավոր են առանձին տեղանքների նկարագրությունները, որտեղ հաճախ մանրամասնվում են մինչև անգամ երկնքի գույնը, շրջապատի բուսականությունը, հողի բույրը և այլն: Այս նյութերը գրում են կա՛ն «Le Monde»-ի սեփական թղթակիցները տարբեր երկրներում, կա՛ն հատուկ թղթակիցները, որ ուղարկվում են այդ երկրներ:

«Aujourd' hui voyages» բաժնում շատ են նկարները, թերևս ամենաշատը «Le Monde»-ի մյուս բաժինների հետ համեմատած: Դրանք պատկերում են ինչպես առանձին վայրեր, կենդանիներ, հին քաղաքակրթության մասունքներ, տարբեր ազգությունների ներկայացուցիչների, այնպես էլ երթուղիներ ու տեղանքներ ներկայացնող քարտեզներ:

Ենթաբաժնում որոշակի մաս տրամադրվում է այն տեղեկատվությանը, թե տարբեր երկրների տեսարժան վայրերը դիտելու համար ճանապարհորդները որտեղ կարող են իջևանել: Մանրամասնորեն ներկայացվում են տեսարժան վայրերին մոտ իջևանատներն ու հյուրանոցները, նշվում դրանց պայմանները. այսպես՝ «Իսպանիայում բացված Պիկասոյի թանգարանը տեսնելու համար «Mundicolor» ընկերությունն առաջարկում է հանգստյան օրերի ծրագիր (երեք օր, երկու գիշեր, չորս աստղանի հյուրանոց): Գինը 470 եվրո մեկ անձի համար՝ ներառյալ գնացքի տոմսը Փարիզից»:

Նույն ոգով ներկայացվում են նաև քաղաքից կտրված հեռավոր շրջանների տեսարժան վայրերը (տաճարներ, դղյակներ, սրբավայրեր) և դրանց հասնելու եղանակներ ու հանգրվաններ առաջարկվում:

Թերթն առաջարկում է նաև գրականության այն ցանկը (ուղեցույցներ, քարտեզներ, աշխատություններ), որոնք լրացուցիչ օգնություն կհանդիսանան ճանապարհորդությունից առաջ: Այս նյութերը բավականին օգտակար են զբոսաշրջության սիրահարների համար, բայց, մեր կարծիքով, ունեն գովազդային բնույթ և թերթի համար, առաջին հերթին, լրացուցիչ եկամտի աղբյուր են:

Թերթի վերջին հատվածում է տեղ գտել «*Culture*» (Մշակույթ) բաժինը, որն անդրադառնում է արվեստի բոլոր ճյուղերին, մանրամասնորեն ներկայացնում ու քննարկում մշակութային նորությունները:

Այս բնագավառը մոտ 10 տարի առաջ այնքան էլ մեծ տեղ չէր զբաղեցնում, և միայն 1997 թ. աշնանը խմբագրության տնօրինությունը որոշեց ավելի լուրջ ուշադրություն դարձնել դրան: «Le Monde»-ի 1997 թ. սեպտեմբերի 23-ի համարում ժան-Մարի Կոլոմբանիի «Le Monde bouge» («Le Monde»-ը շարժվում է») հոդվածը վերաբերում է հենց այս խնդրին: Տնօրենը պնդում է, որ մշակույթի բնագավառն ըստ արժանվույն չի ներկայացվում ոչ միայն «Le Monde»-ի, այլ նաև ֆրանսիական օրաթերթային մամուլի մյուս ներկայացուցիչների կողմից: Բացը լրացնելու նպատակով Կոլոմբանին ձեռնարկեց մի շարք միջոցառումներ. ավելացան մշակույթին նվիրված էջերը, ստեղծվեց «Kiosque» բաժինը, որի մասին արդեն խոսել ենք, ավելի մեծ տեղ հատկացվեց «Le Monde des livres» («Գրքերի աշխարհ») ուրբաթօրյա բաժնին, ծնունդ առավ «Aden» լրացուցիչ հրապարակումը, որը մշակութային ուղեցույց է և լիարժեքորեն ներկայացնում է այս բնագավառը. ընդ որում, տնօրինությունը որոշեց այն անվճար բաժանել թերթի օրվա համարի հետ, ինչն օգնեց, որ հավելվածն արագ ճանաչում գտնի:

Այսօր մշակութային բաժինը զբաղեցնում է չորս - հինգ էջ: «*Culture Edition*» («Մշակույթ հրապարակում») ենթաբաժինն անդրադառնում է այն ամենին, ինչը վերաբերում է գրական աշխարհին՝ նոր գրքեր, գրական դեմքեր, գրական մրցույթներ ու մրցանակաբաշխություններ: Այն հաճախ հանդիսանում է որևէ նոր

գործի կամ գրողի ճանաչված դառնալու երաշխիքը: Այստեղ են նշվում հանրահայտ գրողների հորեյանները: Էջը հարուստ է ինչպես վերլուծական հոդվածներով, այնպես էլ հարցազրույցներով գրողների, գրաքննադատների, գրական մրցույթների կազմակերպիչների և մասնակիցների հետ: Շատ են նաև թղթակցություններն ու ռեպորտաժները տարբեր գրական միջոցառումներից, բայց հիմնական ժանրը գրախոսությունն է: Հաճախ ամբողջ էջը նվիրվում է մի գրական գործչի, որը նոր գիրք է հրատարակել կամ մրցանակ ստացել: Օրինակ՝ համարներից մեկում մեծ շուքով ներկայացված է գրական Goncourt մրցույթի 100-րդ մրցանակակիրը՝ Ժակ-Պիեր Ամետը՝ իր «Le Maitresse de Brecht» («Բրեչտի տիրուհին») վեպով: Սկզբում նկարագրվում է մրցանակաբաշխության ընթացքը (ռեպորտաժի ժանրով), որը կայացել էր նշանակված ժամկետից շուտ: Մեկ այլ հոդված մատուցում է Ժակ-Պիեր Ամետի անձնական և գրական կենսագրությունը, նշում այդ մրցույթում նրա մրցակիցներին և վերլուծում հաղթանակ տարած վեպը:

Ամետին է նվիրված նաև էջի հիմնական խորագրերից մեկը՝ «Trois questions à...» («Երեք հարց ...ին»): Սովորաբար այս խորագրի ներքո թերթը երեք հարց է ուղղում օրվա գրական հերոսին:

Էջի ներքևի հատվածը նորից անդրադառնում է Goncourt մրցույթին՝ ներկայացնելով նրա պատմությունը, իսկ «Calendrier des prix littéraires» («Գրական մրցանակների օրացույց») խորագրի ներքո նշվում է հետագայում անցկացվելիք գրական միջոցառումների ցանկը:

Ի դեպ՝ էջի վերը հիշատակված նյութերից յուրաքանչյուրն ունի առանձին հեղինակ և ներկայացված է յուրովի:

«Culture Rendez-vous» («Մշակույթ հանդիպում») ենթաբաժնում թերթն անդրադառնում է մշակույթի տարբեր ճյուղերի՝ թատրոն, նկարչություն, լուսանկարչական արվեստ, կինոարվեստ, երգ, քանդակագործություն և այլն: Գրեթե յուրաքանչյուր համարում ներկայացվում է որևէ թատերական գործ՝ նպատակը, ասելիքը, ստեղծողներին, դերասաններին: Սրանք թատերական արվեստի հետաքրքիր վերլուծություններ են, որոնք գրվում են կենդանի ոճով, ինչը թույլ է տալիս ընթերցողին զգալ ներկայացման շունչը, հասկանալ նրա

միտքն ու ոգին: Նմանատիպ վերլուծության են ենթարկվում նաև կինոնկարները՝ ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան արտադրության. քննարկվում են ռեժիսուրան, օպերատորական արվեստը, ֆիլմի ստեղծման ազդակները և հնարավոր հաջողությունները:

Էջում առաջադրվում են նաև երգարվեստին վերաբերող հարցեր, ներկայացվում են առավել մարդաշատ համերգները, նորելուկ և հանրահայտ երգիչները:

Հաճախ թերթն անդրադառնում է որևէ նկարի (դա կարող է լինել ինչպես գեղանկարչական գործ, այնպես էլ լուսանկար) և մանրամասն մատուցում նրա ստեղծման պատմությունը, վերլուծում այն, նշվում են այն ցուցահանդեսները, որտեղ ցուցադրվել է նկարը, և այն գնահատականները, որ տրվել են նրան:

Մշակութային էջերը ներկայացնում են նաև Ֆրանսիայի և, մասնավորապես, Փարիզի մշակութային կյանքի համայնապատկերը, արվեստի հետ կապված այն բոլոր միջոցառումները, որ տեղի են ունեցել այդ օրերին՝ ցուցահանդեսներ, համերգներ, ծայնասկավառակների և տեսահոլովակների թողարկումներ: Այստեղ գերակշռում է լուրի ժանրը, հանդիպում են միջոցառումները լուսաբանող ռեպորտաժներ ու թղթակցություններ, նաև՝ ծավալուն հոդվածներ ու հարցազրույցներ, որոնք հիմնականում վերաբերում են առավել արտասովոր և հնչեղ իրադարձություններին:

Էջի որոշ լուրեր իրենց նպատակով և գրելաձևով նման են հայտարարությունների (տե՛ս «Le Monde»-ի ժանրային առանձնահատկությունները» գլուխը): Սրանք ներառում են այս երկու ժանրերի տարրերը և ներկայացնում երկրի մշակութային կյանքում տեղի ունենալիք միջոցառումները, նշում դրանց կայացման վայրը, օրը, ժամը և անգամ տոմսի գինը:

Էջում հանդիպում են նաև նկարներ՝ երգիչների, ցուցահանդեսներում ներկայացված նկարների կամ քանդակների, պարային խմբերի:

«Culture» բաժնի էջերից է «*Culture Portrait*»-ն («Մշակույթ դիմանկար»): Այս էջի կարևորագույն հոդվածը որևէ մշակութային գործչի նվիրված ակնարկն է: Յուրաքանչյուր համարում ներկայացվում է որևէ հանրահայտ արվեստագետ:

Նյութը սովորաբար գրվում է դիմանկարային ակնարկի ժանրով: Հերոսը ներկայանում է իր կենսագրությամբ ու գործունեությամբ, վերլուծվում են նրա առավել արժեքավոր աշխատանքները: Սրանք դրական մղումներով գրված հոդվածներ են, որոնցում որևէ քննադատական խոսք չկա հերոսի մասին: Այս էջում տեղ են գտնում լավագույնները՝ Ֆրանսիայի և աշխարհի հանրահայտ արվեստագետները՝ Դիանա Ռոս, Ջոն Էլիոտ, Ժերար Դեպարդյե և ուրիշներ: Հիմնականում ակնարկի հերոս դառնում է համաշխարհային հռչակ վայելող մշակույթի այն գործիչը, որի հոբեյանը նշվել է կամ պետք է նշվի այդ օրերին, արտասահմանցի այն արվեստագետը, որը գործունեության բերումով պետք է ժամանի Ֆրանսիա, այն ռեժիսորը, որի ֆիլմի պրեմիերան պիտի ցուցադրվի: Ակնարկը, որն ուղեկցվում է սովորաբար հերոսի մեծ նկարով, զբաղեցնում է էջի մեծ մասը:

Էջի «Les gens du monde» («Աշխարհի մարդիկ») խորագրի ներքո տեղ գտած նյութերն անդրադառնում են ոչ այնքան հանրահայտ մշակութային գործիչներին, նրանց գործունեությանը: Սրանք առանձին վերնագրեր չունեն, ուստի նմանվում են մշակութային քրոնիկոնի, բայց քրոնիկոն համարվել չեն կարող, քանի որ չունեն այս ժանրին բնորոշ հակիրճությունն ու օպերատիվությունը. այսպես՝ «Ակրոբատ Ադամ Լոպեզ Պերը պատրաստվում է համերգային շրջագայության եվրոպական ամենամեծ կրկեսի՝ «Կնի»-ի կազմում: Եղբայրներ Պերերը կրկեսային արվեստի մեջ նորանուծությունների համար ստացել են երկու մրցանակ՝ «Վաղվա կրկեսի» համաշխարհային փառատոնի շքանշան (1996 թ.) և Մոնտե-Կառլոյի կրկեսի միջազգային փառատոնի «Արծաթե ծաղրածու» (2001 թ.): Վերջերս Ադամ Լոպեզ Պերն անուսնացավ Մոնակոյի արքայադուստր Ստեֆանիի հետ» կամ «Երաժիշտ և Ֆրանսուա Միտերանի նախկին խորհրդական ժակ Ատալին այսուհետ կղեկավարի Գրենոբլի համալսարանի սիմֆոնիկ նվագախումբը: Ժակ Ատալին հավաստում է, որ դաշնամուր նվագել է ամեն օր՝ սկսած հինգ տարեկանից: Ուսանել է նաև դիրիժորական արվեստ: Գրենոբլում նա կղեկավարի երեսուն երաժշտի: Նվագախումբը կկատարի Բախի, Բենդայի, Մոցարտի գործերը»:

Այս նյութերն առանձնապես օպերատիվություն չեն պահանջում. չի նշվում իրադարձության կոնկրետ օր կամ ժամ, ինչով էլ սրանք տարբերվում են նախորդ էջի լուր - հայտարարություններից:

Նոր է «*Culture & Vous*» («Մշակույթը և դուք») ենթաբաժինը, որն անդրադառնում է մշակութային առավել թեթև միջոցառումների՝ նորաձևության ցուցադրություն, փողոցային համերգներ և այլն:

«Le Monde»-ի վերջին էջերում է տեղ գտնում «*Météo & Jeux*»⁸⁰ («Եղանակի տեսություն և խաղեր») բաժինը:

Եղանակի տեսությունը ներկայացվում է ինչպես տեքստային տարբերակով, այնպես էլ քարտեզների միջոցով:

Ազատ ժամանցին նվիրված բաժինը (խաչբառեր, խաղեր) շատ փոքր է, ինչը ևս հաշվարկված է «Le Monde»-ի ընթերցողի համար, որը դժվար թե ժամանակ գտնի խաչբառ լրացնելու կամ խաղեր խաղալու համար:

Շաբաթվա ընթացքում այս բաժնում մեկ - երկու օր «Le Monde»-ն անդրադառնում է այգեգործությանը, բուսական աշխարհին: Ամեն անգամ ներկայացվում է որևէ կոնկրետ բույսի աճեցման եղանակը, մանրամասնվում է, թե ինչքան ջերմություն, հողի ինչ տեսակ, ինչ խնամք է անհրաժեշտ տվյալ բույսն աճեցնելու համար: Ոճը պարզ է և ընկալելի, անգամ այն մարդը, որը երբեք չի զբաղվել հողագործությամբ, կարող է իր փոքրիկ այգին կամ բանջարանոցը մշակել՝ տրված խորհուրդներին հետևելով: Այլ խոսքով՝ թերթը ջանում է բավարարել ամենատարբեր նախասիրություններ ունեցող մարդկանց պահանջմունքները:

«Le Monde»-ի ներկայացնում է ռադիոյի և հեռուստատեսության (TF1, France 2, France 3, Canal+, Arte, M 6 հեռուստաընկերությունների, ինչպես և ռադիոյի մշակութային France - Culture, երաժշտական France Musique, Radio-Classique ալիքների) տվյալ օրվա ծրագրերը: Կան նաև կաբելային և արբանյակային որոշ հեռուստաընկերությունների ծրագրեր:

⁸⁰ Նախկինում՝ «Aujourd'hui»-ի ենթաբաժիններից:

«Carnet» («Օոցատետր») բաժինը, որը նախկինում հաջորդում էր «Horizons»-ին, այսօր զբաղեցնում է նախավերջին էջը: Այստեղ գետեղվում են շնորհավորանքներ, ցավակցություններ, շնորհակալական խոսքեր, այլ հայտարարություններ: Այս բաժինը կարողավ՝ կարելի է միշտ տեղյակ լինել, թե ֆրանսիական հասարակության վերնախավում ով է ծնվել, ում հորեյանն է նշվում, ով է անուսնանում, ով է մահացել, ում մահվան տարելիցն է, ում հուղարկավորությունը երբ է նշանակված և այլն: Սրանք փոքր հայտարարությունների օրինակներ են, որոնք, սակայն, վերաբերում են կոնկրետ թեմայի: Այս բաժնում երբեմն տեղ են գտնում նաև գիտական կոնֆերանսների, ուսումնական տարբեր նախաձեռնությունների մասին հայտարարություններ: Ի դեպ՝ «Carnet» բաժինը նախկինում տեղադրվում էր թերթի վերջում և անվանվում էր «Carnet du Monde» («Le Monde»-ի ծոցատետր): Այսօր այն գետեղված է միջին մասերում և հաջորդում է «Horizons»-ին:

Այս բաժինը հաճախ անվանում են ֆրանսիական էլիտայի հայտարարությունների տախտակ, քանի որ այստեղ տեղ գտած հայտարարությունների «հերոսները» հիմնականում բարձր խավի, մտավոր մասնագիտությունների տեր անձինք են: Սրանով «Le Monde»-ը կարծես մեկ անգամ ևս հավաստում է, որ իր հիմնական ընթերցողը մտավորականն է: Առավել ընկալելի լինելու համար բերենք օրինակներ.

«Չամաշխարհային գրականություն» ընկերությունը և Ժյուլ Վալեի ընկերները խոր ցավակցությամբ հայտնում են Անտուան Կուրտի մահը՝ 19-րդ դարի ֆրանսիական գրականության մասնագետ, Ժան-Մոնե-Սենտ-Էտիեն համալսարանի դասախոս: Նրա աջակցությամբ զարգացել է համաշխարհային գրականության ուսումնասիրությունը Ֆրանսիայում և արտասահմանում»:

«Չեղինակային իրավունքի միջազգային պաշտպանության ֆրանսիական ասոցիացիայի նախագահը և անդամները, ինչպես նաև թատերական և գրական միջազգային ասոցիացիայի նախագահը և անդամները խոր ցավով հայտնում են Անդրե Ֆրանսուայի մահվան մասին, որը Փարիզ II համալսարանի դասախոսն էր, Չեղինակային իրավունքի միջազգային պաշտպանության ֆրանսիական

ասոցիացիայի պատվավոր նախագահ, Թատերական և գրական միջազգային ասոցիացիայի նախկին քարտուղար»:

«Պիեր Արնոդո- ռեժիսոր և «Tertre» թատրոնի տնօրեն. մեզ լքեց 2003 թ. հոկտեմբերի 14-ին: Բոլոր նրանք, ովքեր սիրում էին նրա արվեստը, կարող են նրան հրաժեշտ տալ Սոնմարտրի գերեզմանատանը, Ռիշել Ֆորոյի փողոցի վրա, հոկտեմբերի 23-ին, ժամը 12.00-ին»:

«Տիկին Սիմոն Սիմո Ղել Դուկան շնորհակալություն է հայտնում այն բազում մարդկանց, ովքեր շնորհավորել էին իրեն Պատվո Լեգեոնի հրամանատարի կոչում ստանալու առիթով և խոստանում է պատասխանել յուրաքանչյուրին մոտակա ժամանակներում»:

Մենք հակված ենք կարծելու, որ նման մոտեցմամբ թերթը ոչ թե խտրականություն է դնում սոցիալական տարբեր խմբերի միջև, այլ այս կերպ ևս ընդգծում է իր առանձնակի հարգանքը մտավորականության հանդեպ: Սա նաև «Le Monde»-ի՝ էլիտար թերթի համբավը հաստատող հնարանքներից մեկն է:

«Carnet»-ն ունի նաև ենթաբաժին, որտեղ տպագրում է ոչ թե հայտարարություններ, այլ իր լրագրողների նյութերը: Դրանք հիմնականում վերաբերում են օրվա ամենանշանավոր հոբեյարին կամ մահացածին: Թերթի լրագրողը ներկայացնում է նրանց կենսագրությունը, անցած ճանապարհը, ձեռքբերումները, վերջում՝ իր շնորհավորանքները, եթե ուրախ առիթ է, և ցավակցությունները, եթե հոգվածը գրված է տխուր առիթով:

Թերթի վերջին էջը հիմնականում աչքի է ընկնում գովազդներով՝ երբեմն տեղ թողնելով հոդվածների համար, երբեմն՝ ոչ: Եթե այս էջում նյութեր կան, ապա դրանք չունեն կոնկրետ ուղղվածություն ո՛չ բովանդակային, ո՛չ էլ ժանրային առումով. այստեղ կարելի է ընթերցել ինչպես միջազգային լրատվություն, այնպես էլ մարզական մեկնաբանություններ կամ մշակութային վերլուծություններ:

Վերջին էջում նշվում է նաև թերթի տվյալ օրվա համարի տպաքանակը:

Բացի ամենօրյա հաստատուն բաժիններից՝ «Le Monde»-ն ունի *լրացուցիչ բաժիններ*, որոնք կցվում են օրվա համարին՝ «Le Monde des livres» («Գրքերի աշխարհ»), «Le Monde Économie» («Տնտեսական աշխարհ»), «Initiatives»

(«Նախաձեռնություն») և այլն: Հայտնի է, որ լրացուցիչ բաժինները խթանում են թերթի վաճառքը. մինչև 1996 թվականը «Le Monde»-ի երկուշաբթի օրվա համարին լրացուցիչ բաժին չէր կցվում, և թերթի վաճառքի այդ օրվա ցուցանիշը բավականին ցածր էր շաբաթվա մյուս օրերի համեմատ:

Լրացուցիչ բաժինները սովորաբար ներկայանում են առանձին միջուկների տեսքով և ենթադրում են բնագավառի առավել խորը և ամբողջական ուսումնասիրություն: Այս միջուկները չնայած կցվում են օրվա համարին, բայց կարծես դուրս են թերթից. տարբերվում են թե՛ արտաքինով (ուներն առանձին տետրի ձև), թե՛ բովանդակությամբ: Այստեղ տեղ են գտնում համեմատաբար ավելի ծավալուն նյութեր, որոնց օպերատիվության պահանջ չի ներկայացվում, խախտված է նաև «Le Monde»-ի սկզբունքը՝ անդրադառնալ միայն կարևոր իրադարձություններին, դեմքերին, երևույթներին: Այստեղ քննարկվում են բնագավառի թե՛ կարևոր, թե՛ երկրորդական իրադարձությունները:

Մասնավորապես «*Le Monde des livres*» բաժնում ամենայն մանրամասնությամբ ներկայացվում է այն ամենն, ինչ կապված է գրական կյանքի հետ: Հիշենք, որ նույն առաքելությունն ուներ նաև «Le Monde»-ի «Culture Édition» («Մշակույթ հրապարակում») ենթաբաժինը, որը, սակայն, անդրադառնում է առավել հրատապ և կարևոր թեմաների և ոչ այն խորությամբ, որ առաջարկում է «*Le Monde des livres*»-ը: Վերջինս ոչ միայն գրական երևույթների և նոր գրքերի մասին անփոխարինելի աղբյուր է, այլև մեծ հեղինակություն ունի և եղանակ է ստեղծում գրական աշխարհում. ոչ մի հեղինակ իրեն ապահով չի զգում, քանի դեռ «Le Monde»-ի գրական բաժինը կարծիք չի հայտնել իր գրքի մասին: Այս բաժինը հաճախ համեմատվում է անգլիական «*London review of books*»-ի («Գրքերի լոնդոնյան տեսություն») հետ. մամուլի անգլիացի տեսաբանները հավաստում են, որ անգամ այս հանրահայտ ամսաթերթը չունի այն հեղինակությունը և այն տեղը չի զբաղեցնում երկրի մտավոր կյանքում, ինչ «*Le Monde des livres*» բաժինը⁸¹: Այստեղ ներկայացվող գրական գործերի միջև

⁸¹ Fletcher J., *Le Monde, past, present and future: A vehicle for the transmission of the cultural values of the French elite*, <http://www.intellectbooks.com/europa/number6/fletcher.htm>, p. 3-4.

խտրականություն չի դրվում. քննարկվում և վերլուծվում են թե՛ հանճարեղ, թե՛ նորելուկ գրողների գործերը, ի դեպ, անաչառությամբ՝ յուրաքանչյուր գործի մեջ ի հայտ բերելով դրականը և բացասականը: Պետք է ասենք, որ «Le Monde des livres»-ը «Le Monde»-ի ամենահեղինակավոր լրացուցիչ բաժինն է:

Ինչ վերաբերում է «*Le Monde Economie*» բաժնին, ապա սա էլ թերթի հիմնական «*Entreprises*» («Ձեռնարկություն») բաժնի խորացված տարբերակն է: Այստեղ տեղ են գտնում տնտեսական լուրջ վերլուծություններ, քննարկվում են աշխարհի տնտեսական համակարգերը և այլն:

«*Initiatives*» բաժինն առավելապես հանդես է գալիս փոքր հայտարարությունների տեսքով, որոնք հիմնականում վերաբերում են աշխատանքի բորսային: Այս բաժինը ծավալվեց 1996 թ. հունվարից և սկսեց լույս տեսնել շաբաթական երկու օր՝ լրացնելով երկուշաբթի օրվա լրացուցիչ բաժնի պակասը:

Մենք ընդհանուր գծերով ներկայացրինք «Le Monde»-ի որոշ լրացուցիչ բաժիններ՝ առանձնապես կանգ չառնելով դրանց վրա, քանի որ այստեղ ներկայացվող բնագավառները քննարկվում են նաև թերթի հիմնական բաժիններում, որոնց հանգամանորեն անդրադարձել ենք: Մանավանդ, որ թերթի մոտեցումը հարցերին և դրանց մատուցման ոճը երկու դեպքում էլ նույնն են:

Լրացուցիչ բաժինները թերևս այն ընթերցողի համար են, ով ցանկանում է առավելագույն լրատվություն ստանալ այս կամ այն բնագավառի վերաբերյալ: Դրանք հիմնականում այդ բնագավառի մասնագետներն են կամ այն ուսումնասիրողները: Ընթերցողների մեծամասնությանը այդ բաժինների մանրամասն, նեղ մասնագիտական տեղեկատվությունը դժվար թե առանձնապես հետաքրքիր լինի: Նրանց թերևս լիովին կբավարարի թերթի հիմնական բաժինների լրատվությունը: Այնուհանդերձ, լրացուցիչ բաժինները ևս լսարան գրավելու, տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց պահանջները բավարարելու միջոց են:

Ընդհանրացնելով՝ նշենք, որ վերջին տասնհինգ տարիների ընթացքում «Le Monde»-ը մի քանի անգամ փոփոխության ենթարկվեց: Նրա համար

շրջադարձային էին 1994-1995 թվականները: Թերթը, որ բավական կայուն էր իր ստեղծման օրվանից և գրեթե փոփոխության չէր ենթարկվել, կարծես մտավ փոփոխությունների շրջան, ինչը պայմանավորված էր ժամանակի ու միջավայրի թելադրանքով և կատարվում էր անհրաժեշտաբար: 2004-2005 թթ. ևս անցումային էին. «Le Monde»-ը շատ զգայուն է իր շրջապատում տեղի ունեցող քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային տատանումների հանդեպ, և դրանք անմիջապես արտացոլվում են նրա էջերում:

Դժվարին շրջափուլում է թերթն այսօր: Դեկավար կազմի փոփոխությունը, համաշխարհային տնտեսական ճգնաժամը, ֆրանսիական լրագրային շուկայի խնդիրները իրենց կնիքն են դրել «Le Monde»-ի տեղեկատվության յուրահատկությունների վրա. այսօր թերթը լույս է տեսնում ավելի քիչ էջերով, ինչի հետ կապված բաժինները, դրանց բովանդակությունը հաճախակի փոփոխվում են, վերանվանվում, մասնավորապես մեր հիշատակած որոշ բաժիններ, ենթաբաժիններ, առանձին խորագրեր դուրս են մնացել կամ պարբերական չեն:

* * *

«Le Monde»-ն այսօր նույնանուն մամուլի խմբի մասնաճյուղն է միայն: Անցումը թերթից մամուլի խումբ կատարվեց աստիճանաբար. ծնունդ առան լրացուցիչ հրատարակություններ, ստեղծվեց էլեկտրոնային տարբերակը, «Le Monde»-ը դարձավ մի շարք լրատվամիջոցների բաժնետեր: «Մամուլի խումբ» որակումը սկսեց շրջանառվել 1985 թվից: Արդեն 1990-ականներին խմբի մասնաճյուղերը, այդ թվում նաև լրացուցիչ հրատարակությունները, անցան ինքնուրույն կառավարման:

Տնտեսական դժվարությունները հաղթահարելու համար «Le Monde»-ը հաճախ հրատարակել է լրացուցիչ պարբերականներ, որոնք սովորաբար թույլ էին տալիս բարձրացնել թերթի վարկանիշը, գրավել նոր լսարաններ: Դեռևս 1948 թ. հոկտեմբերին Չյուբերտ Բյով-Մերին հիմնեց «Sélection hebdomadaire»-ը («Չավաքածու շաբաթաթերթ»), որը ներառում էր օրաթերթի մեկ շաբաթվա կարևոր նյութերը: Սա առաջին լրացուցիչ հրատարակությունն էր, որին հաջորդեցին ևս

երկուսը՝ «Le Monde des philatélistes»-ը («Ֆիլատելիստների աշխարհ»)՝ 1951 թ. հոկտեմբերին և «Le Monde diplomatique»-ը («Դիվանագիտական աշխարհ»)՝ 1954 թ. մայիսին: Երեք հրատարակություններն էլ հաջողություն ունեցան և օգնեցին օրաթերթին ուղքի կանգնելու: Հետագայում ծնունդ առան մի շարք այլ պարբերականներ՝ «Dossiers et documents» («Դոսյեներ և փաստաթղթեր»)՝ 1973 թ., «Le Monde de l'éducation» («Կրթական աշխարհ»)՝ 1974 թ., «Le Monde de la musique» («Երաժշտական աշխարհ»)՝ 1978 թ., «Aden» («Ադեն»)՝ 1997 թ., «Le Monde Argent» («Le Monde» դրամ»)՝ 2001 թ., «La sélection hebdomadaire de New York Times» («New York Times»-ի հավաքածու շաբաթաթերթ»)՝ 2002 թ. և այլն⁸²: Տպագրվում էին նաև ամսաթերթեր, որոնք չունեին հստակ պարբերականություն, ինչպես նաև տարեկան հրատարակություններ, օրինակ՝ «Bilan économique et social» («Տնտեսական և սոցիալական բալանս») գրքույկը, որը ներկայացնում էր թերթի տարեկան բալանսը, «Le Monde des débats» («Քննարկումների աշխարհ») ամսաթերթը և այլն:

Այս հրատարակությունները տարբեր էին արտաքին տեսքի, մտածողության, ուղղվածության տեսանկյունից, ինչը թույլ էր տալիս ունենալ առավել բազմազան լսարան: Սակայն բոլոր պարբերականները չէ, որ հաջողություն էին ունենում. անհեռանկարները շուտով դադարում էին հրապարակվել կամ վաճառվում էին մամուլի այլ խմբերի, իսկ հեռանկար ունեցողները զարգանում էին և նպաստում «Le Monde» խմբի բարգավաճմանը:

Լրացուցիչ հրատարակությունների մասին ավելի ճիշտ պատկերացում կազմելու համար կանգ առնենք խմբի ամենահեղինակավոր և շատ կարդացվող պարբերականի՝ «Le Monde diplomatique»-ի վրա: Այն հիմնեց Հյուլբերտ Բյուվ-Մերին և կառավարումը հանձնեց Ֆրանսուա Հոնտիին, որը թերթը տնօրինեց մինչև 1973 թվականը: 1973-1990 թթ. տնօրենն էր Կլոդ Ժուլիենը, 1990-2008 թթ.՝ Իգնասիո Ռանոնեն, իսկ 2008-ից՝ Սերժ Հալիմին: Այսօր թերթի տպաքանակն անցնում է 230000-ից: Տպագրվում է տարբեր լեզուներով, տարածվում Իտալիայում, Գերմանիայում, Շվեդիայում, Իսպանիայում, Թունիսում, Մեքսիկայում,

⁸² Տե՛ս՝ <http://www.mondepub.fr/supp.php>:

Յունաստանում: Քիչ տեղ է տրամադրում գովազդին, շահույթի հիմնական մասը գոյանում է վաճառքից:

Այս պարբերականն էապես տարբերվում է «Le Monde» մամուլի խմբի մյուս հրատարակություններից թե՛ ձևավորմամբ, թե՛ բովանդակությամբ: Արտաքին տեսքի աչքի զարնող տարբերակիչ առանձնահատկությունն այն է, որ յուրաքանչյուր համարի առաջին էջում՝ վերնագրի տակ, ներկայացվում է որևէ ժամանակակից նկարչի կտավներից մեկը՝ առաջին հայացքից պարզ դարձնելով թերթի բնույթը՝ լրջություն, դասականություն, խորություն:

Ամենավերին մասում, նախքան թերթի անվանումը, գրվում է տվյալ համարի ամենահետաքրքիր նյութի կարճ բովանդակությունը: Առաջին էջում համառոտ ներկայացվում են նաև հաջորդ էջերի որոշ նյութեր, նշվում է, թե որ էջում կարելի է ավելի մանրամասն կարդալ այդ մասին: Եթե հաշվի առնենք, որ ամսաթերթի էջերի թիվը բավականին մեծ է, ապա պարզ կդառնա, որ սա հարմար միջոց է և ընթերցողին հնարավորություն է տալիս հեշտ ընտրելու կարդացվելիք նյութը, իսկ եթե շտապում է, ապա առաջին էջից բավարար տեղեկատվություն կստանա կարևոր իրադարձությունների մասին: Մյուս էջերում զետեղված են հիմնականում հեղինակային վերլուծական ծավալուն նյութեր: Հաջորդ հետաքրքիր առանձնահատկությունն այն է, որ գրեթե յուրաքանչյուր համարում տեղ են գտնում նախորդ համարների նյութերի մասին ընթերցողների կարծիքները՝ նամակների ձևով: Դրանք կարող են լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական: Սա ընթերցող - թերթ կապի ամրապնդմանը նպաստող հիանալի միջոց է. ընթերցողը սկսում է վստահել թերթին և հավատալ, որ այն պատասխանատու է իր յուրաքանչյուր խոսքի համար և պատրաստ է ընդունել իր սխալները:

«Le Monde diplomatique»-ը ունենում է նաև եռամսյա հրատարակություններ՝ փոքրիկ գրքույկների տեսքով, որոնք, որպես կանոն, անդրադառնում են համամարդկային խնդիրների, առաջադրում լուրջ վերլուծություններ ու տեսակետներ:

Ամսաթերթն ունի մի շատ լավ բաժին՝ «Les livres du mois» («Ամսվա գրքերը»), որտեղ ներկայացվում են այդ ամսվա ընթացքում ողջ աշխարհում

հրատարակված արժեքավոր գործերը: Տրվում է տվյալ գրքի համառոտ բովանդակությունը, քննադատների և հասարակության արձագանքը: Նման բաժիններ ունեն ֆրանսիական մի շարք թերթեր, բայց այս դեպքում յուրահատկությունն այն է, որ տեղեկատվությունը զուտ անոնսի տեսք չունի. սրանք հեղինակային հոդվածներ են՝ գրված մասնագետ լրագրողի կողմից, որը կարող է լուրջ վերլուծություն կատարել և գնահատականներ տալ:

Թերթում կա այս բաժինն իր ձևով նման ևս մեկը՝ «Dans les revues du monde» («Աշխարհի ամսագրերում»), որտեղ մատուցվում է տարբեր ամսագրերի կարևոր նյութերի կրճատ բովանդակությունը: Ի դեպ, չնայած բաժինը կոչվում է «Աշխարհի ամսագրերում», սակայն մեծ մասամբ ներկայացվում են Փարիզում և Լիոնում լույս տեսնող ամսագրերը: Մյուս բաժինները ևս այս կամ այն չափով կապված են դիվանագիտական աշխարհի հետ՝ քաղաքականություն, տնտեսություն, ֆինանսական հայտարարություններ, սպորտ, մշակույթ, խաղեր, հեռուստատեսություն: Այս բաժինների միջոցով թերթը կարողանում է լայն պատկերացում տալ աշխարհի երկրների ինչպես քաղաքական, սոցիալական, այնպես էլ մշակութային կյանքի, հասարակության սովորույթների և հոգեբանական առանձնահատկությունների, ղեկավարության անդամների, երիտասարդության, քիչ թե շատ հայտնի մարդկանց մասին: Ներկայացվում են նաև հեռուստատեսային ծրագրեր, պատմվում են դրվագներ ֆրանսիական հեռուստաալիքների խոհանոցից, տրվում է հաղորդումների կրճատ բովանդակությունը: Թերթի ոճը խիստ է և պաշտոնական, գերակշռում են երկարաշունչ նախադասություններն ու եզրույթները⁸³:

1990-ականների կեսերից լրատվական աշխարհում մեծ հեղաշրջում տեղի ունեցավ. բազում առաջադեմ լրատվամիջոցներ ներգրավվեցին *էլեկտրոնային տեղեկատվական համակարգում*: «Le Monde»-ը չէր կարող հետ մնալ համընդհանուր առաջընթացից: Այնուհանդերձ, լինելով ավանդապահ թերթ, որը բարձր է գնահատում գրավոր մամուլի մշակույթը, «Le Monde»-ը բավական ուշ

⁸³ Այս մասին տես նաև Մենենշյան Ա., «Ֆրանսիական «Le Monde», «Le Figaro», «Le Monde Diplomatique» թերթերի համեմատական վերլուծություն», «Ժուռնալիստիկա (տեսության և պատմության հարցեր)», Պրակ Դ, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2003, էջ 203-205:

հետաքրքրվեց տեղեկատվության տարածման էլեկտրոնային միջոցներով: Մինչդեռ փաստաթղթային, արխիվային տեղեկատվությունը էլեկտրոնային տվյալների բազայում տեղադրված էր դեռևս 1987 թվականից:

Արդեն 1995 թ. հուլիսին թերթի առաջին էջը տեղադրվեց էլեկտրոնային ցանցում: Նույն տարվա դեկտեմբերին «Le Monde»-ը բացեց իր էլեկտրոնային էջն ինտերնետում (www.lemonde.fr), որն առաջարկում էր թեմատիկ դոսյեներ, վճարովի խորհրդակցությունն արխիվից, ինչպես նաև բաժանորդագրություն էլեկտրոնային վճարման համակարգով: 1997 թ. հունվարից էջն առաջարկում էր նաև օրվա հոդվածների ամբողջությունը: Այնուհանդերձ «Le Monde»-ի այս ոլորտը դեռևս ձևավորված չէր, պարզ չէր՝ արդյոք այս էջը պետք է ուղղակիորեն արտահայտի թերթն էկրանին, թե՞ կդառնա առանձին լրատվամիջոց՝ առաջարկելով ժուռնալիստիկայի նոր ձև: Շատ կարճ ժամանակահատվածում «Le Monde»-ի էլեկտրոնային էջ այցելողների թիվը կրկնապատկվեց, ապա նաև եռապատկվեց: Փաստորեն էլեկտրոնային «Le Monde»-ը որոշ իմաստով դարձավ օրաթերթի ամենամեծ մրցակիցը: Սա լուրջ խնդիր էր, որը լուծում էր պահանջում:

1998 թ. ժան-Մարի Կոլոմբանին ուսումնական այցով մեկնեց Միացյալ Նահանգներ: Այցելությունը հնարավորություն տվեց ծանոթանալու ամերիկյան օրաթերթերի մոտեցմանն էլեկտրոնային մամուլին: Արդյունքում որոշվեց հիմնովին վերափոխել «Le Monde»-ի այս ոլորտը. մասնավորապես ինտերնետին կից ստեղծել «Le Monde» խմբի առանձին մասնաճյուղ: Ընդունվեց նաև փաստաթուղթ, որն ամփոփում էր «Le Monde» մուլտիմեդիայի գործունեությանը վերաբերող ռազմավարական մոտեցումները: Ըստ այս փաստաթղթի՝ էլեկտրոնային լրատվամիջոցն իրավունք չունեի նույնությամբ կրկնել օրաթերթը: Այն չպետք է օգտագործեր օրաթերթի կարգավիճակը, աշխատողներին և ֆինանսները, այնուհանդերձ, էկրանի համար նախատեսված նյութերի կողքին պետք է ներկայացվեին նաև օրաթերթում տեղ գտած հոդվածները՝ հնարավորինս պահպանելով «Le Monde»-ի ոգին ու յուրահատկությունը⁸⁴:

⁸⁴ Այս մասին տե՛ս նաև http://medias.lemonde.fr/medias/pdf_obj/sup_comptes-monde_040604.pdf, էջ 8 և <http://www.lemonde.fr/web/article/0,1-0@2-3386,36-261391,0.html>:

Այսօր www.lemonde.fr-ը այցելությունների թվով ֆրանսիական թիվ մեկ էլեկտրոնային տեղեկատվական սայթն է: 2009 թ. հունվար ամսին ավելի քան 48 միլիոն մարդ է այցելել [lemonde.fr](http://www.lemonde.fr)⁸⁵: Ըստ OJD-ի՝ 2009 թ. հունիսի տվյալների՝ «Le Monde»-ի էլեկտրոնային էջ այցելուների ամսական թիվը 50393130 է: Ի դեպ՝ «Le Figaro»-ի էլեկտրոնային սայթ (www.lefigaro.fr) ամսական այցելում է 28630594, իսկ «Liberation»-ի www.liberation.com.fr՝ 15019935 ընթերցող⁸⁶: Թվերը պարզ ցույց են տալիս «Le Monde»-ի էլեկտրոնային սայթի բացահայտ առավելությունը:

«Le Monde»-ի էլեկտրոնային էջում «Actualité» («Իրականություն») բաժինը մատուցում է օպերատիվ լրատվություն. այստեղ տեղ են գտնում օրվա ամենակարևոր իրադարձությունները, օրվա ծաղրանկարը, օրաթերթի հիմնական հոդվածների կարճ բովանդակությունը՝ իրենց նկարներով, խմբագրական հոդվածի թեման, ինչպես նաև տվյալ համարի ոչ այնքան կարևոր հոդվածների անոնսը (հիմնականում՝ վերնագրերը): Վերջիններս ներկայացվում են ըստ բաժինների՝ «International», «Planète», «Europe», «Politique», «Société», «Economie», «Culture» և այլն:

Ավելի լավ պատկերացնելու համար բերենք օրինակներ: 2004 թ. հունվարի վերջին, երբ ողջ աշխարհը խոսում էր չինական գրիպի մասին, բաժնի առաջին լուրը մի քանի օր շարունակ վերաբերում էր հենց այս խնդրին: Մասնավորապես, «Չինական գիտությունների ակադեմիայի mea culpa-ն (մեղայականը)» վերնագրի ներքո, Չինաստանում տարածված «հավի» գրիպի համաճարակը չկասեցնելու հարցում մեղադրվում էր Չինական գիտությունների ակադեմիան: Ընդ որում, ակադեմիայի փոխնախագահ Չին-Չյուն ընդունում էր իրենց սխալը: Հոդվածը փաստում էր նաև, որ Ֆրանսիայում բացվել է այս գրիպի դեմ պայքարի միջոցներ մշակող չինական ինստիտուտ:

«Actualité» բաժնի համար առաջնային նյութ էր հանդիսացել նաև ԱՄՆ-ի 2005 թ. բյուջեի ծրագիրը, որը պետք է նախատեսեր պաշտպանության և անվտանգության համար հատկացված ծախսերի մեծ աճ, ինչի պատճառով բյուջեի դեֆիցիտը պետք է հասներ ռեկորդային ցուցանիշի՝ 564 մլրդ դոլարի (2004 թ.

⁸⁵ Տե՛ս՝ http://www.lemonde.fr/qui-sommes-nous/article/2002/02/04/presentation_261391_3386.html:

⁸⁶ Տե՛ս՝ http://www.ojd.com/engine/adhchif/adhe_list.php?mode=chif&cat=1784:

521 մլրդ դոլարի փոխարեն): Առաջին հայացքից անմեղ այս տեղեկատվությունն իրականում կարևոր ենթատեքստ ունի և բացահայտում է մեծ տերության վախն ու անհանգստությունը, անվստահությունը սեփական ուժերի հանդեպ: Բաժնի երկրորդ, երրորդ լուրերը պակաս կարևոր են և համաշխարհային հնչեղություն չունեն, օրինակ՝ «Գաղութացման հին չենպիոն Շարոնը որոշել է էվակուացնել Գազայի բոլոր գաղութները» կամ՝ «Ժակ Շիրակը որոշել է ուժեղացնել պայքարը քաղցկեղի դեմ, որից Ֆրանսիայում տարեկան մահանում է 150000 մարդ»:

Նշենք նաև, որ աշխարհի այն երկրները, որտեղ տեղի են ունենում առավել գլոբալ իրադարձություններ, անմիջապես տեղ են գտնում «Le Monde»-ի ինտերնետային էջում՝ առանձին բաժինների տեսքով: Օրինակ՝ Իրաքյան պատերազմի օրերին «Le Monde»-ի էլեկտրոնային էջերում ավելացավ «Etats-Unis 2003» («Միացյալ Նահանգներ – 2003») բաժինը, իսկ Ռուսաստանի նախագահ Պուտինի՝ կառավարությունը ցրելուց հետո՝ «Les élections en Russie» («Ընտրությունները Ռուսաստանում») բաժինը, որտեղ մանրամասնորեն ներկայացվում էին նախագահի բոլոր թեկնածուները, նրանց կուսակցությունները, Պուտինի նախընտրական քարոզարշավը, այն ամենը, ինչ տեղի էր ունենում Ռուսաստանում այդ օրերին:

www.lemonde.fr-ի արխիվային էջը հնարավորություն է ընձեռում ընթերցել բոլոր այն հոդվածները, որոնք հրապարակվել են օրաթերթում 1987 թվականից հետո (թվով 1054199 հոդված 2009 թ. հուլիսի 9-ի տվյալներով: Այս թիվն աճում է ամեն օր՝ «Le Monde»-ի օրվա համարի հոդվածների հաշվին): Ի դեպ, 3 օրվա վաղեմություն ունեցող հոդվածները «Le Monde»-ը տրամադրում է անվճար, մինչդեռ դրանից առաջ տպագրված հոդվածներն ընթերցելու համար անհրաժեշտ է վճարել:

«Le Monde»-ի ինտերնետային էջերը ծավալուն են ու բազմազան: Դրանք տարբերվում են օրաթերթից լրատվության մատուցման ոչ ավանդական ձևով, մինչդեռ շատ մոտ են նրան իրենց մոտեցումներով, նպատակով և ոճով: Էլեկտրոնային «Le Monde»-ը ավելի մեծ հնարավորություններ է տալիս արխիվային նյութերից օգտվելու, առավել բազմազան տեղեկատվություն ձեռք

բերելու առումով, սակայն, մեր կարծիքով, նրան պակասում է «Le Monde» օրաթերթի ձգողական ուժն ու պատկառելի ոգին, որոնք ներդրվել են թերթի էջերում 65 տարիների ընթացքում, որոնց հավատում է ընթերցողը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

«Le Monde»-ի ժանրային նկարագիրը

Ֆրանսիական ժուռնալիստիկան միշտ համարվել է «կարծիքի» ժուռնալիստիկա: Այստեղ առավել մեծ տեղ է տրվել վերլուծական-հրապարակախոսական խմբի ժանրերին, համապատասխանաբար քիչ են օգտագործվել լուրերը, քրոնիկոններն ու հաշվետվությունները: Իրադարձություն կամ իրավիճակ ներկայացնելիս ֆրանսիացի լրագրողները չէին բավարարվում փաստերով և արտահայտում էին իրենց վերաբերմունքն ու մեկնաբանությունը: Սա միայն մեր դիտարկումը չէ. այսպես են մտածում նաև ֆրանսիական մամուլի տեսաբանները⁸⁷: Նրանք կոչ էին անում լրագրողներին հետևել անգլիական ժուռնալիստիկայի օրենքին՝ «փաստերը սուրբ են, մեկնաբանությունները՝ ազատ», լուրը միշտ պետք է գատվի վերլուծությունից: Սակայն այս սկզբունքը հազվադեպ էր հարգվում ֆրանսիական լրատվամիջոցների կողմից, քանի որ դեմ էր ֆրանսիական ժուռնալիստիկայի ավանդույթներին և որ ավելի կարևոր է՝ ընթերցողի սպասումներին: Բնականաբար այս ավանդույթների և սպասումների ձևավորման համար կային օբյեկտիվ պատճառներ: Հիմնական պատճառը գալիս է պատմությունից. ֆրանսիական մամուլը մինչև Երրորդ հանրապետության ձևավորումը գտնվում էր երկրի ղեկավարների ուժեղ ճնշման տակ, խոսքի ազատությունը սահմանափակված էր, լրագրողը ազատ չէր նաև լրատվության աղբյուրների ընտրության հարցում: 19-րդ դարի վերջին, երբ ձևավորվեց Երրորդ հանրապետությունը, և երկրում հաղթանակեց ժողովրդավարությունը, ազատ մամուլի գաղափարներին լայն ճանապարհ տրվեց: Արդեն 20-րդ դարի սկզբին Ֆրանսիայում հրապարակվում էր 6500 անուն թերթ և ամսագիր⁸⁸: Մամուլը, որ մինչ այդ ազատ արտահայտվելու իրավունք չուներ, սկսեց առատորեն կարծիքներ և մեկնաբանություններ տպագրել: Մամուլի ազատությունը նույնանում էր

⁸⁷ Տե՛ս Albert P., *La presse française (notes et études documentaires)*, Maulde et Renou, Paris, 1998, p.41-42.

⁸⁸ Տե՛ս Դլեշյան Վ., «Ֆրանսիան XIX դարի վերջին և XX դարի սկզբին», Նոր պատմություն (դասագիրք հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի համար), «Զանգակ-97» հրատարակչություն, Երևան, 2001, էջ 86:

կարծիքների առատության հետ: Որքան շատ վերաբերմունք ու դիրքորոշում կար թերթում, այնքան ազատ էր համարվում այն: Այս մոտեցումը արմատացավ ֆրանսիացի ընթերցողի մեջ և ձևավորեց որոշակի պահանջներ. մամուլում պակասեցին տեղեկատվական ժանրերը: Այսօր արդեն, երբ Ֆրանսիայում արմատացած են ժողովրդավարական սկզբունքները, որոշակիորեն փոխվել են նաև ընթերցողների պահանջները. մամուլը ձգտում է ավելի շատ օգտագործել տեղեկատվական ժանրեր, վերլուծությունն անջատել լրատվությունից:

Այս ամենը հետաքրքիր դրսևորումներ ստացավ «Le Monde»-ում: Այստեղ ծնունդ առավ ժանրի մի տեսակ, որով գրված նյութերը տեղ են գտնում թերթի առաջին էջերում: Դրանք տեղեկատվական բնույթ ունեն, քանի որ չեն պարունակում վերլուծություն, սակայն չեն համապատասխանում այս ժանրային խմբի և ոչ մի տարատեսակին: Դրանց չի կարելի լուրեր անվանել, քանի որ չունեն այս ժանրին բնորոշ սեղմությունն ու հակիրճությունը: Սովոր ենք ասել, որ լուրը պետք է պատասխանի չորս հարցի՝ ով կամ ինչը, երբ, որտեղ, ինչ արեց կամ ինչ եղավ, սակայն այս նյութերը պատասխանում են շատ ավելի հարցերի՝ տրվում է փոքրիկ նախապատմություն, մանրամասն ներկայացվում են իրադարձությունը, դրան ածանցյալ երևույթներն ու անհատները, բերվում են վիճակագրական տվյալներ: Սրանք բավականին ծավալուն են, երկար վերնագրեր ու ենթավերնագրեր ունեն:

Այս նյութերը չեն կարող նաև հարցազրույց համարվել: Ճիշտ է, վերջինիս տարրերը հաճախ տեղ գտնում են սրանց մեջ, դրանք երբեմն ընդհատվում են փոքրիկ զրույցներով կամ մեջբերումներով, սակայն ամբողջ նյութը հարց ու պատասխանի ձևով չի ներկայացվում, ավելին՝ կան այնպիսիք, որտեղ ընդհանրապես զրուցակիցները բացակայում են:

Ռեպորտաժ չեն, որովհետև նախ՝ միշտ չէ, որ իրադարձության ընթացք են արտահայտում. օրինակ՝ ի՞նչ ռեպորտաժի մասին կարող է խոսք լինել, եթե նյութի թեման երկու երկրների տնտեսական համագործակցությունն է, որևէ նախագծի իրագործումը կամ որևէ երկրի ներքաղաքական իրավիճակը: Եվ հետո,

այստեղ հիմնականն ամենևին էլ լրագրողի մտքերը, տեսածն ու զգացածը չեն, այլ մատուցվող փաստերն ու տվյալները:

Ավելորդ է ասել, որ դրանք հաշվետվությունն էլ չեն, այն պարզ պատճառով, որ ամենևին էլ որևէ միտի, համաժողովի կամ համագումարի ընթացք չեն ներկայացնում:

Այս նյութերը փաստորեն չեն համապատասխանում տեղեկատվական խմբի և ոչ մի ժանրի նկարագրին, այնուհանդերձ զերծ են կարծիքից ու մեկնաբանությունից: Իրենց բնույթով ու մատուցման ձևով առավել մնան են տեղեկատվական թղթակցությանը կամ տեղեկատվական տեսությանը: Այստեղ յուրաքանչյուր թեմա մատուցվում է միայն փաստերի և տվյալների միջոցով, սակայն դրանց առատ օգտագործումը որոշակի ազատություն է տալիս լրագրողին: Նա չի արտահայտում իր կարծիքը, բայց ազատ է փաստերի ընտրության հարցում, ինչն էլ հենց որոշակի վերաբերմունքի արտահայտություն կարող է լինել և որոշ դեպքերում նույնիսկ վերլուծություն համարվել: Առավել պատկերավոր լինելու համար բերենք մեկ օրինակ, որը վերաբերում է հայ իրականությանը, մասնավորապես 2004 թ. ապրիլ ամսվա իշխանություն- ընդդիմություն բախմանը և տպագրված է «Le Monde»-ի 2004 թ. ապրիլի 14-ի համարում: Նյութի մեջ, որը վերնագրված է «Հայաստան: Ընդդիմությունը երկխոսության կոչ է անում իշխանությանը», մանրամասնորեն ներկայացվում են ընդդիմության պահանջները, նրանց ձեռնարկած քայլերը, կառավարության արձագանքը: Բառացի մեջբերված են ընդդիմադիր առաջնորդների՝ Արտաշես Գեղամյանի, Ստեփան Դեմիրճյանի՝ սահմանադրական ճանապարհով իշխանափոխություն իրականացնելու կոչերն ու մեղադրանքները Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի հասցեին: Այնուհետև նկարագրվում են ապրիլի 12-ի դեպքերը, ոստիկանների և հայ ընդդիմադիրների բախումը Երևանի կենտրոնում: Անդրադարձ կա նաև այդ օրվա ելույթներին՝ խորհրդարանի առաջ նստացույց իրականացնելու, նախորդ տարվա նախագահական ընտրություններն անվավեր ճանաչելու մասին: Մեջբերված է Ալբերտ Բազեյանի հայտարարությունը, որ իշխանությունը չի վախեցնի

ընդդիմադիրներին արցունքաբեր գազ կամ այլ միջոցներ օգտագործելով, և որ իրենց պահանջները մնում են ուժի մեջ:

Հատուկ անդրադարձ կա Ստեփան Դեմիրճյան քաղաքական գործչին, նշվում է, որ նա Ազգային ժողովի նախկին նախագահ Կարեն Դեմիրճյանի որդին է, որին սպանել են խորհրդարանում 1999 թ. հոկտեմբերին, և ներկայացվում է նախորդ տարվա նախագահական ընտրությունների ժամանակ նրա հավաքած ձայների քանակը: Շեշտադրված է այն փաստը, որ այդ ընտրությունները բազմիցս քննադատվել են օտարերկրյա դիտորդների կողմից, և ընդդիմությունը, որը տվյալ պահին հանդես է գալիս միասնաբար, այն ժամանակ չէր կարողացել միասնական թեկնածու առաջադրել:

Ներկայացված է նաև ապրիլյան դեպքերի արձագանքը երկրի սահմաններից դուրս, մասնավորապես Միացյալ Նահանգների և Մինսկի խմբի մյուս համանախագահների անհանգստությունը Երևանում տեղի ունեցածի առիթով և երկխոսության կոչը երկրի բոլոր քաղաքական ուժերին:

Արձանագրվում են այլ փաստեր ևս. այս իրադարձությունները տեղի ունեցան այն ժամանակ, երբ միջազգային հանրությունը ճնշում էր գործադրում Եվրամիության անդամ դառնալ ցանկացող Թուրքիայի վրա՝ հայ - թուրքական սահմանը վերաբացելու համար, իսկ դարաբաղյան հարցը դեռևս լուծում չէր ստացել: Այս դեպքերը փշրեցին նաև արտասահմանյան ներդրումների համար հարմար, քաղաքականապես և տնտեսապես կայուն Հայաստանի պատկերը:

Ամբողջ նյութում ներկայացված են միայն փաստեր, չկան վերլուծություններ, մեկնաբանություններ, և եթե ուղղակիորեն նկարագրվեին ապրիլյան դեպքերը կամ ներքաղաքական իրավիճակը Հայաստանում, ապա սա կդիտվեր լուրի ժանրով գրված օպերատիվ նյութ, բայց երբ թերթն ընտրություն է կատարում հայաստանյան քաղաքական դաշտում տեղի ունեցած իրադարձություններից, ինչպիսիք են, օրինակ, նախորդ տարվա ընտրությունները, օտարերկրյա դիտորդների եզրակացությունը, ընդդիմադիրների՝ միասնական թեկնածու ընտրելու անկարողությունը, Կ. Դեմիրճյանի սպանությունը, կամ նշվում են այս իրադարձության հետևանքներն ու արձագանքները (Թուրքիայի հետ

հարաբերությունների, ղարաբաղյան խնդրի, Հայաստանում ներդրումների նվազման հետ կապված), ապա, մեր կարծիքով, այստեղ որոշակի դիրքորոշում կա: Այս դեպքում է, որ փաստերի ընտրությունը կարող է դառնալ որոշակի վերաբերմունքի արտահայտություն:

Նման նյութերը շատ են «Le Monde»-ում և հիմնականում հանդես են գալիս թերթի սկզբի բաժիններում՝ «International», «Europe», «France», «Economie»:

Տեղեկատվական ժանրային խմբի դասական տարատեսակներից թերթում ավելի շատ կարելի է հանդիպել լուրերի և ռեպորտաժների: *Լուրեր* հանդիպում են գրեթե յուրաքանչյուր բաժնում. քրոնիկոնի ձևով տպագրվում են տվյալ բնագավառի ոչ այնքան կարևոր, երկրորդական նորությունները (բոլոր կարևոր թեմաներին թերթն անդրադառնում է տեղեկատվական տեսություններով, ռեպորտաժներով, հոդվածներով): Դրանք ներկայացվում են իրար հետևից և չունեն վերնագրեր: Սակայն, եթե դասական քրոնիկոնը պահանջում է խիստ հակիրճություն (մեկ կամ երկու նախադասություն), ապա այստեղ ներկայացվում է առավել ծավալուն տեղեկատվություն, լիարժեք լուր, որը համապատասխանում է այս ժանրին բնորոշ հատկանիշներին: Սովորաբար առաջին նախադասությամբ շարադրվում է հիմնական փաստը, այնուհետև բացվում են փակագծերը՝ տալով իրադարձության կամ երևույթի ամբողջական, բայց հակիրճ պատկերը: Չկան անդրադարձներ, հարակից փաստերի ու իրադարձությունների հիշատակումներ, որոնք առկա էին մեր քննարկած նախորդ ժանրում: Տարբերությունն առավել ցայտուն զգալու համար բերենք նույն թեմայի հետ կապված օրինակ: «Le Monde»-ի 2004 թ. ապրիլի 14-ի համարում հայաստանյան դեպքերի մասին տպագրված նյութի կարճ տարբերակը՝ գրված լուրի ժանրով, հաջորդ օրը զետեղված էր թերթի ինտերնետային էջի նորությունների բաժնում: Առաջին նախադասությամբ նկարագրվում է գիշերային բախումը, հետո նշվում են ցուցարարների պահանջները, ոստիկանների ձեռնարկած քայլերը և արդյունքում առաջացած խառնաշփոթը:

Լուրի ժանրով գրված նյութերն ունեն իրենց հատկացված տեղը յուրաքանչյուր բաժնում: Սովորաբար դա բաժնի վերջին էջն է: Օրինակ՝

«Միջազգային» բաժնուն լուրերը մատուցվում են հետևյալ կերպ. մուգ տառերով գրվում է, թե որ երկրին է պատկանում տվյալ լրատվությունը՝ Իտալիա, Ինդոնեզիա, Վիեննա, Ռուսաստան և այլն, ապա շարադրվում է լուրը:

Ժանրային տեսակի առունով առավել հետաքրքիր են «Մշակույթ» բաժնի լուրերը: Դրանք երբեմն կարելի է նույնացնել հայտարարությունների հետ: Լուր - հայտարարություններն ունեն իրենց խորագրերը՝ «Երաժշտություն», «Ցուցահանդես», «Պար», «Ակունբային շուուներ» և այլն: Յուրաքանչյուր խորագրի ներքո կարճ ներկայացվում են տվյալ բնագավառի միջոցառումները, նշվում են նաև դրանց տեղի ունենալու վայրը, օրը, ժամը, կազմակերպիչների հեռախոսի համարը և տոմսի գինը: Սրանք չի կարելի լիովին լուրի ժանրին դասել, որովհետև մատուցման ձևն ավելի մոտ է փոքր հայտարարություններին, և չի կարելի լիովին հայտարարություն համարել, քանի որ վերջիններիս համեմատ ավելի ծավալուն են. տրվում է փոքրիկ տեղեկատվություն տվյալ միջոցառման կազմակերպիչների, նրանց գործունեության, երբեմն՝ ունեցած հաջողությունների մասին: Բաժնի այս մասը կարելի է որակել իբրև զվարճությունների ուղեցույց:

Ժուռնալիստական ամենահետաքրքիր ժանրը՝ *հարցազրույցը*, ևս հանդիպում է «Le Monde»-ում, սակայն ոչ այնքան հաճախ, որքան ֆրանսիական այլ թերթերում: Օրինակ՝ «Le Figaro»-ում այս ժանրը գերիշխող է, թերթը լի է ծավալուն հարցազրույցներով, որոնք կարդացվում են մեծ հետաքրքրությամբ՝ շնորհիվ դինամիզմի և թեթև ոճի: Դրանք հիմնականում ուղեկցվում են գրավիչ ու վառ նկարազարդումներով: Այս ժանրը օգտագործվում է թերթի բոլոր բաժիններում: Օրինակ՝ եթե «Le Monde»-ի միջազգային բաժինը ներկայանում է լուրջ ու ծանրակշիռ տեղեկատվական բնույթի ծավալուն նյութերով, ապա «Le Figaro»-ում այս բաժինը մատուցվում է աշխույժ հարցազրույցներով և նկարներով (նրանց զարմանալիորեն հաջողվում է մեծ թվով հարցազրույցներ վարել արտասահմանյան երկրների ղեկավարության ներկայացուցիչների հետ):

«Le Monde»-ն ունի հարցազրույցի մատուցման իրեն բնորոշ ձևը և ոճը: Սրանք հիմնականում սկսվում են փոքրիկ նախաբանով, որտեղ կարծես ներկայացվում են հարցազրույցը գրելու նախապայմաններն ու զրուցակիցը:

Հարցերը կարճ են, հստակ, վերաբերմունք չեն արտահայտում: Հաճախ միևնույն հարցը տրվում է երկու կամ երեք զրուցակցի, որոնք տարբեր դիրքորոշումներ ունեն նույն խնդրի վերաբերյալ: Սովորաբար հարցազրույց գրվում է այն թեմաներով, որոնց մասին արդեն տրվել է որոշակի լրատվություն: Այսինքն՝ այս նյութերը կոչված են ոչ միայն իրազեկելու, այլև թեմայի վերաբերյալ լրացուցիչ կարծիքներ, դիրքորոշումներ, նաև՝ հավելյալ տեղեկություններ հաղորդելու: Իսկ թեմաները վերաբերում են տարբեր բնագավառների՝ տնտեսություն, սոցիալական վիճակ, հաղորդակցության ոլորտ և այլն: Ընտրվում են հատկապես այն երևույթներն ու իրադարձությունները, որոնք առավել կիստաքրքրեն ընթերցողին: Թերթը ճիշտ է ընտրում նաև իր զրուցակիցներին: Դրանք նյութին լավատեղյակ մասնագետներ են, որոնք հստակ պատկերացնում են իրավիճակը և ասելիք ունեն: Նրանք միշտ չէ, որ հանրաճանաչ ու հեղինակավոր անհատներ են: Այստեղ ևս թերթը տարբերվում է «Le Figaro»-ից, որի զրուցակիցները հիմնականում հայտնի մարդիկ են:

Հաճախ է կիրառվում ժանրի հարցազրույց - խոհ տարատեսակը, երբ լրագրողը ոչ միայն հարցազրույցից առաջ, այլև ընթացքում ներկայացնում է իր խոհերը, մեկնաբանում ու վերլուծում զրուցակցի ասածները:

«Le Monde»-ում շատ են հանդիպում հատկապես հարցազրույցի խմբային տարատեսակները՝ մամուլի ասուլիսներ, բրիֆինգներ, ավելի հաճախ՝ կլոր սեղաններ: Առաջին երկուսով նյութեր գրելիս թերթը չի սահմանափակվում դրանց ընթացքը ներկայացնելով: Որպես կանոն լինում է նախաբան, որտեղ մանրամասնվում են այն իրողությունները, որոնք պատճառ են հանդիսացել ասուլիս կամ բրիֆինգ հրավիրելուն: Նշվում են նաև որոշ տվյալներ հրավիրողների մասին:

Թերթի կլոր սեղանների մասին արդեն խոսել ենք «Horizons»-ի «Grand Débat» ենթաբաժինը ներկայացնելիս: Այս տարատեսակով գրված նյութերը մեծ հաջողություն ունեն ընթերցողների շրջանում: Այստեղ քննարկվում են կարևոր խնդիրներ, որոնք անդրադառնում են ամենատարբեր բնագավառների: Դրանց մասնակցում են քաղաքական և մշակութային հայտնի գործիչներ: Հայաստանում

մամուլի օրգանների կողմից կլոր սեղաններ համեմատաբար քիչ են հրավիրվում: Մինչդեռ սա հիանալի լրատվական ժանր է. այն թույլ է տալիս մասնագիտական լուրջ քննարկումներ անցկացնել, որոնց արդյունքում կարող են ի հայտ գալ խնդիրների լուծման բավական արդյունավետ տարբերակներ:

Ռեպորտաժի ժանրը ծնունդ է առել և տարածվել Ֆրանսիայից: Արդեն 19-րդ դարի սկզբին ֆրանսիական մամուլի օրգանները տպագրում էին որակյալ ռեպորտաժներ: Այս ժանրը այսօր էլ մեծ տարածում ունի ֆրանսիական լրատվամիջոցներում: Օրաթերթերից շատերի համար («Libération», «France soire», «Le Figaro») այն համարվում է ամենաշատ օգտագործվողն ու ընթերցողի կողմից ամենասիրվածը:

«Le Monde»-ի ռեպորտաժները ևս որակյալ են: Դրանք արտացոլում են տարբեր միջոցառումների ընթացքը, հաճախ պարունակում են հարցազրույցներ, ուղեկցվում են նկարներով: Ռեպորտաժ գրելիս մեծ է լրագրողի դերը, քանի որ ողջ իրադարձությունն ընթերցողն ընկալում է հենց նրա տեսանկյունից: Սա լավ են հասկանում թերթի լրագրողները՝ այս նյութերին մոտենալով պատասխանատվության մեծ զգացումով: Իրադարձության ընթացքը, այստեղ ներկա որևէ անհատի, առկա որևէ երևույթի անդրադառնալիս նրանք ձգտում են տալ հնարավորինս ամբողջական նկարագիր՝ հաճախ հեռանալով իրադարձության բուն ընթացքից: Եթե հաշվի առնենք, որ այս ժանրը սիրում է դինամիզմ ու աշխուժություն, և նրա դասական օրինակը կատարվածի կանոնիկ շարադրանքն է, ապա պետք է խոստովանենք, որ թերթը հաճախ շեղվում է բուն նյութից, չարաշահում այլ աղբյուրներից մեջբերումները: Այնուհանդերձ, որևէ իրադարձության մասին ամբողջական, բազմակողմանի և մանրակրկիտ տեղեկատվություն ստանալու համար ավելի լավ աղբյուր, քան «Le Monde»-ի ռեպորտաժներն են, դժվար է պատկերացնել: Դրանք հանդիպում են թերթի բոլոր բաժիններում:

Ինչպես արդեն նշել ենք, ֆրանսիական մամուլի օրգանները նախապատվությունը տալիս են վերլուծական - հրապարակախոսական ժանրային խմբի տարատեսակներին: Դա հատկապես լավ է երևում «Le Monde»-ի

օրինակով: Այս ժանրերը հիմնականում հանդես են գալիս վերջին բաժիններում՝ «Horizons», «Culture», «Economie», նախկինում նաև՝ «Carnet», «La Tendence financière», «Aujourd’hui», չնայած դրանց տարրերն առկա են ողջ թերթում:

Ամենահաճախ հանդիպող ժանրերից է *հոդվածը*: «Le Monde»-ի հոդվածները համապատասխանում են դասական հոդվածի բոլոր չափանիշներին: Այստեղ ոչ միայն ներկայացվում են երևույթները կամ իրադարձությունները, այլև փաստերի համադրման միջոցով ստեղծվում է պատճառահետևանքային համոզիչ խոսք, որն օգնում է ընթերցողին լիովին ընկալելու խնդիրը: «Le Monde»-ի հոդվածները գրվում են արհեստավարժ լրագրողների կողմից, որոնք կարողանում են բազմակողմանի վերլուծություններով ու համեմատություններով մատուցել նյութը ընդհանուր համապատկերում: Օրինակ՝ եթե խոսք է գնում գործազուրկ մարդկանց բողոքի մասին, ապա նախ ներկայացվում են այդ բողոքի արտահայտման ձևերը, դրանց արձագանքները, այն ողջ լրատվությունը, որ կա նյութի վերաբերյալ, այնուհետև մանրամասնորեն տրվում է ամբողջ երկրում գործազրկության մակարդակը, դրա հնարավոր պատճառներն ու սպասվելիք հետևանքները, առաջարկվում են խնդրի լուծման արդյունավետ տարբերակներ: Սրանք բավական ծավալուն նյութեր են, սակայն կարդացվում են մեծ հետաքրքրությամբ, քանի որ արժարժում են խիստ կարևոր, համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող թեմաներ, որոնք վերաբերում են քաղաքական, տնտեսական, սոցիալական հիմնահարցերի:

«Le Monde»-ը շատ է տպագրում նաև *խմբագրական հոդվածներ*: Դրանց համար նյութ է հանդիսանում հիմնականում օրվա կարևորագույն թեման. այն չի ստորագրվում, հանդես է գալիս «Éditorial» («խմբագրական») խորագրի ներքո և արտահայտում է ամբողջ խմբագրության կարծիքը: Ընդունված է ասել, որ խմբագրական հոդվածը միակ ժանրային միավորն է, որ ունի իր մշտական տեղը թերթում՝ առաջին էջի ձախ սյունակը կամ վերևի մասը՝ ձախից աջ: «Le Monde»-ի դեպքում այդպես չէ. մինչև վերջերս իր խմբագրականների համար թերթը տեղ էր հատկացնում միջին էջերում՝ «Horizons»-ի «Analyses» («Վերլուծություն») ենթաբաժնում: Սա, թերևս, կարելի է բացատրել հետևյալ կերպ. թերթի առաջին

կեսը զբաղեցնում են տեղեկատվական բնույթի նյութերը, իսկ խմբագրական հոդվածն ունի վերլուծական բնույթ, արտահայտում է խմբագրության կարծիքն ու դիրքորոշումը, ուստի պետք է տեղ զբաղեցնի կարծիքներին ու դիրքորոշումներին հատկացված բաժիններում: Սեփական դիրքորոշումը առաջին էջում ներկայացնելու գաղափարության հաղթահարումը, թերևս, մեկ նպատակ ուներ. ընթերցողին ապացուցել, որ թերթն իր կարծիքը բարձր չի դասում մյուսների կարծիքից: 2009-ի հունվարի փոփոխությունների արդյունքում խմբագրականներն այսօր տեղ են գտնում թերթի երկրորդ էջում: Այս կերպ «Le Monde»-ը առանձնացրեց իր կարծիքը մյուսներից, բայց և չկարևորեց այնքան, որ բերի առաջին էջ:

Օրաթերթի խմբագրականները հիմնականում քննարկում են միջազգային կամ համազգային հնչեղության հարցեր, ինչպես օրինակ՝ Եվրոպայի ապագան, միջազգային անվտանգությունը, Ֆրանսիայի Հանրապետության բյուջեի դեֆիցիտը և այլն: Այս ժանրով է արտահայտվում նաև թերթի կարծիքն այլ երկրների ներքաղաքական կարևորագույն խնդիրների, միջպետական հարաբերությունների վերաբերյալ: Պետք է նշենք, որ այն հաճախ հանընկնում է Ֆրանսիայի պետական պաշտոնական դիրքորոշման հետ: Դա երևաց, օրինակ, իրաքյան պատերազմի ժամանակ, երբ Ֆրանսիան դեմ դուրս եկավ Միացյալ Նահանգների ձեռնարկած քայլերին: Թերթն իր խմբագրականում գրեթե կրկնում էր երկրի նախագահի ելույթը:

Խմբագրական հոդվածներում արծարծած խնդիրները «Le Monde»-ը ներկայացնում է հնարավորինս բազմակողմանի և ամբողջական, ինչը թույլ է տալիս ընթերցողին լիովին յուրացնել խնդիրը, տիրապետել իրավիճակին: Դրանից հետո միայն թերթը տալիս է հստակ որակումներ, կանխատեսումներ անում, որոշ դեպքերում անդրադառնում նաև սպասվելիք արձագանքներին:

Եթե «Le Monde»-ի խմբագրականները համեմատենք հայկական լրատվամիջոցների խմբագրականների հետ, ապա կնկատենք, որ վերջիններս հաճախ չեն բացահայտում իրողությունը, չեն մատնանշում խնդրի լուծման, իրավիճակից դուրս գալու ուղիներ, այլ միայն արտահայտում են իրենց կարծիքը և վատաբանում «մեղավորներին»: Մինչդեռ «Le Monde»-ը կարծես ուսումնասիրում

է խնդիրը, ի հայտ բերում դրա բացասական ու դրական կողմերը, առաջադրում կոնկրետ լուծումներ:

Այս հոդվածների լեզուն առավելագույնս կիրթ է և գրական, ձևակերպումները հստակ են ու ընկալելի: Դրանք չեն համոզում ընթերցողին՝ դառնալու իրենց համախոհը, այլ արտահայտում են իրենց դիրքորոշումը և հիմնավորում այն:

«Le Monde»-ում շատ են նաև *թղթակցությունները*: Սրանք իրենց բնույթով մոտ են հոդվածին, սակայն թե՛ ծավալային, թե՛ իմաստային առումով զիջում են նրան: Թղթակցությունները թեմատիկ սահմանափակում չունեն: Թերթն այս ժանրով անդրադառնում է յուրաքանչյուր բնագավառի այն խնդիրներին, որոնք այնքան էլ էական չեն կամ հետաքրքրում են համեմատաբար փոքր թվով մարդկանց, օրինակ՝ որևէ հասարակական կազմակերպության կամ քաղաքական կուսակցության ներքին հարցերին, նրանց կազմակերպած որևէ ակցիայի: Թղթակցություններ են գրվում նաև Ֆրանսիայի հեռավոր շրջանների խնդիրների, տեղի ունեցած իրադարձությունների մասին: Այս ժանրով գրված նյութերը բավականին թեթև են, կարդացվում են մեկ շնչով և տեղ են գտնում բաժինների վերջին էջերում:

Տարատեսակներից առավել տարածված են տեղեկատվական ու վերլուծական թղթակցությունները, հազվադեպ է հանդիպում թղթակցություն - խոհ տարատեսակը: Այսինքն՝ միշտ չէ, որ նյութում տեղ են գտնում լրագրողի խոհերը այս կամ այն խնդրի վերաբերյալ: Սովորաբար կա՛մ ներկայացվում է իրողությունը, կա՛մ տրվում է դրա համառոտ վերլուծությունը:

Մամուլի տեսության և գրախոսության ժանրերը ևս օգտագործվում են թերթում: Սրանք ունեն իրենց մշտական տեղը. մամուլի տեսությունները հանդիպում են «Horizons» բաժնում (նախկինում՝ «Kiosque» ենթաբաժնում), իսկ գրախոսականները տեղ են գտնում մշակույթին նվիրված էջերում:

«Le Monde»-ի *գրախոսականներում* արտահայտված գնահատականները կարևոր են արվեստագետների համար և հաճախ կատարում են նրանց ստեղծագործությունները գտողի դեր: Եթե թերթը դրական է արտահայտվել որևէ

ստեղծագործության վերաբերյալ, ուրեմն այն կգտնի իր արժանի տեղը Ֆրանսիայի մշակութային կյանքում, մինչդեռ քննադատություն պարունակող գրախոսականը մեծ վտանգ է թե՛ ստեղծագործության, թե՛ այն հեղինակողի համար: Այնուհանդերձ, սուր քննադատությունների չհանդիպեցինք: Սովորաբար թերթը մանրակրկիտ ներկայացնում է գործը՝ մեկնաբանելով և վերլուծելով այն, բացահայտելով նրա գաղափարական և ոճական ուղղվածությունը, այն ստեղծելու ազդակները, արվեստի ուղղությունների և անհատ ստեղծագործողների ազդեցությունը նրա վրա:

Դոստոևսկու «Ձեր մեջ սիրտ չկա, միայն ճշմարտություն է, իսկ դա ճշմարիտ չէ» գրախոսներին ուղղված հայտնի խոսքերը, թերևս, «Le Monde»-ի գրախոսականների համար չեն, քանի որ սրանք միայն տեսական չոր վերլուծություններ չեն: Այստեղ սովորաբար քննվում է հեղինակի՝ իրականությունն ընկալելու և այն ներկայացնելու կարողությունը, և դա արվում է ճաշակով: Զգացական ոճը գերակշռում է գրականագիտական չոր տերմիններին: Շատ են նաև մեջբերումները քննվող նյութից, ինչը թույլ է տալիս առավել լավ ընկալել այն, ճանաչել նրա ոճն ու կոլորիտը, զգալ նրա շունչը:

Գրախոսականների համար նյութ են ընտրվում արվեստի բոլոր ճյուղերից՝ գրականություն, թատրոն, նկարչություն, երաժշտություն և այլն: Դրանք անդրադառնում են հիմնականում այն ստեղծագործություններին, որոնք որոշակի արժեք են ներկայացնում:

Մամուլի տեսության ժանրի մասին խոսել ենք «Kiosque» ենթաբաժինը ներկայացնելիս: Ասում են, որ այս ժանրը սկիզբ է առել թերթերի միջև մրցակցության ի հայտ գալու հետ միաժամանակ: Յուրաքանչյուր պարբերական ուշի - ուշով հետևել է մյուսի գործունեությանը և փորձել բացահայտել նրա թերի կողմերը: Ի պատիվ մամուլի գործիչների՝ պետք է ասենք, որ այսօր այս ժանրը միշտ չէ, որ ուղղված է գործընկերոջ հանդեպ բացասական տրամադրվածություն ստեղծելուն: Դա վերաբերում է նաև «Le Monde»-ին. թերթն ընդամենը ներկայացնում է Ֆրանսիայի և աշխարհի այլ երկրների հանրահայտ թերթերի հետաքրքիր նյութերը՝ ամենակարևորներին անդրադառնալով մեծ հողվածներով:

Դրանք երբեմն քննարկվում են նաև իրենց գրելաոճի տեսանկյունից՝ թեմայի ընտրությունը, մատուցման ձևը, լեզուն և այլն: Հաճախ այս ժանրով գրված նյութերը ի հայտ են բերում միևնույն խնդրի վերաբերյալ տարբեր պարբերականների մոտեցումները: Օրաթերթն անդրադառնում է թե՛ ոճական և թե՛ գաղափարական ուղղվածության առումով տարբեր թերթերի:

«Le Monde»-ում գերակշռում են մամուլի թեմատիկ և ինֆորմացիոն տեսությունները, մամուլի ընդհանուր կամ ծավալուն տեսության օրինակների նախկինում հաճախ կարելի էր հանդիպել «Communication» բաժնում:

Տեսությունը որպես ժանր ձևավորվել է մոտ 300 տարի առաջ, սակայն հետաքրքրությունը նրա հանդեպ երբևէ չի խամրել, քանի որ միշտ կա այնպիսի մի ժանրի պահանջարկ, որը մատչելիորեն կներկայացնի շրջապատում տեղի ունեցող քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային անցուդարձերը, տարբեր իրադարձությունների, երևույթների միջև պատճառահետևանքային կապեր գտնելով՝ կկատարի ընդհանրական վերլուծություն: Այս ժանրում առավելագույնս արտահայտվում են «Le Monde»-ի լրագրողների հմտությունն ու մտքի ուժը, փաստերը համադրելու և ընդհանրացնելու կարողությունը: Այն թերթում միշտ ունեցել է իր տեղը, իսկ այսօր առավելապես արտահայտվում է «International», «France», և «Economie» բաժիններում, այսինքն՝ հիմնականում վեր է հանում միջազգային, տնտեսական, սոցիալական խնդիրներ:

«Le Monde»-ում այս ժանրին արժեք է հաղորդում հատկապես թերթի տեսաբանների կողմից կատարվող փաստերի ճիշտ ընտրությունը: Նրանք հաճախ համադրում ու ընդհանրություններ են գտնում տարաբնույթ փաստերի միջև և անում անսպասելի եզրահանգումներ: Սա գրավում է ընթերցողին՝ նրա ուշադրությունը կենտրոնացնելով այնպիսի երևույթների վրա, որոնց մասին մինչ այդ չէր մտածել:

Սովորաբար տեսություն գրելու համար ազդակ է հանդիսանում որևէ իրադարձություն, ստեղծված իրավիճակ, կառավարության ընդունած նոր օրենք և այլն: Սա ժանրը դարձնում է առավել օպերատիվ: Հանդիպում են նաև տեսության ժանրով գրված այնպիսի նյութեր, որոնք կապ չունեն տվյալ պահի հետ և քննում

են ավելի գլոբալ հարցեր, օրինակ՝ տնտեսական քաղաքականությունը որևէ երկրում, տիեզերքի նվաճումները, միջազգային կազմակերպությունների դերը հասարակության կյանքում և այլն:

Թերթում հավասարապես հանդիպում են թե՛ տեղեկատվական և թե՛ վերլուծական տեսություններ: Առաջինները տեղ են զբաղեցնում սկզբի էջերում և հիմնականում թեմատիկ տեսության օրինակներ են, իսկ երկրորդները՝ վերջին էջերում: Սրանք առավել ծավալուն նյութեր են և լուրջ վերլուծություններ, որոնք բացահայտում են քննվող ոլորտի ամբողջական պատկերը:

«Le Monde»-ը մշտապես տպագրել է իր ընթերցողների *նամակները*: Սակայն սրանք ոչ թե ուղղակի խմբագրությանն ուղղված նամակներ են, այլ լիովին համապատասխանում են վերլուծական - հրապարակախոսական ժանրային ընտանիքին բնորոշ հատկանիշներին, այն է՝ վեր հանել հիմնահարցեր, քննարկել և վերլուծել դրանք, հանգել որոշակի եզրակացությունների, և իրավամբ կարող են համարվել այդ ընտանիքի անդամներից մեկը: «Le Monde»-ի նամակներն արտահայտում են լուրջ կարծիքներ և տեսակետներ ամենատարբեր երևույթների մասին, հաճախ վերաբերում են թերթի հրապարակումներին: Այս դեպքում թերթը տպագրում է նախաբան, որտեղ ներկայացնում է նամակը գրող ընթերցողին, մատնանշում, թե հատկապես որ հրապարակմանն է վերաբերում այն: Դրան հաջորդում է կամ նամակն ամբողջությամբ, կամ թերթը հատվածաբար մեջբերում է այն և արտահայտում իր կարծիքը, առանձին դեպքում՝ նաև արդարանում: Այս դեպքում փաստորեն գործ ունենք նամակների տեսության ժանրի հետ:

«Le Monde»-ի նամակները տպագրվում են սովորաբար «Horizons» բաժնում: Շատերն ուղղակի հիացնում են իրենց հեղինակների բանիմացությամբ: Հաճախ դրանք արտահայտում են բողոք և զայրույթ՝ ուղղված պաշտոնատար անձանց և նույնիսկ հեզմական բնույթ ունեն: Օրինակ՝ համարներից մեկում ժան-Գաբրիել Կարասոն Փարիզից իր բողոքն էր արտահայտում Ֆրանսիայի ազգային կրթության նախարար Լյուք Ֆերիի հանդեպ, որը կառավարության հետ երկխոսության ժամանակ համաձայնել է կրճատել դպրոցական արձակուրդները: Նամակի հեղինակը, վրդովված այս արարքից, բացատրում է, թե ինչ կարևոր է խաղը

դպրոցահասակ երեխայի համար և խորհուրդ է տալիս կարդալ հայտնի գիտնականներ Պիաժեի, Վինհորի կամ Կելուայի աշխատությունները: Նամակը գրված է հեզնանքով և անհարգալից վերաբերմունքով նախարարի հանդեպ:

«Le Monde»-ի նամակները գրվում են քննադատելու, կարծիք հայտնելու կամ հանդիսավոր առիթներով: Բոլոր դեպքերում դրանք արծարծում են արդիական հարցեր: Համոզված ենք՝ թերթը մանրակրկիտ ընտրություն է կատարում իր փոստարկղում հայտնված նամակների միջև և տպագրում է միայն լավագույնները:

Թերթում նամակներն անմիջապես առանձնանում են իրենց ոճով: Դրանք շարադրված են մեկ անձի անունից և հասցեագրված են մեկ անձի: Պահպանվում է նաև նամակին բնորոշ գրելաձևը. սկիզբը՝ ուղերձներով, ավարտը՝ հարգանքներով, սիրով և այլն:

Գեղարվեստական - հրապարակախոսական ժանրերից թերթում առավել հաճախ հանդիպում է *ակնարկն*՝ իր տարատեսակներով: Ճանապարհորդական ակնարկի վառ օրինակներ տպագրվում էին հատկապես «Aujourd'hui»-ի «Voyages» («Ճանապարհորդություն») ենթաբաժնում, իսկ դիմանկարային ակնարկի օրինակներ՝ թերթի մշակութային բաժնում՝ «Culture»: Դրանց անդրադարձել ենք հիշյալ բաժինները քննելիս, միայն ավելացնենք, որ «Le Monde»-ի ակնարկները որակյալ են և չափավոր զգացական: Մեր դիտարկումների համաձայն՝ այստեղ շատ չեն օգտագործվում գեղարվեստաարտահայտչական միջոցներ, ավելի ճիշտ՝ օգտագործվում են չափավոր: Եվ եթե ակնարկը համարվում է երկկենցաղ ժանր, որը հավասարապես օգտագործվում է թե՛ գրականության մեջ, թե՛ մամուլում, ապա պիտի նշենք, որ «Le Monde»-ի ակնարկները թերևս չեն կարող դիտվել իբրև գեղարվեստական գործեր: Օրինակ՝ դիմանկարային ակնարկի դեպքում անհատը ներկայացվում է առավելապես իր կատարած գործերով և կյանքի ճանապարհով, քան էությանը ու զգացմունքներով: Կարծում ենք՝ «Le Monde»-ի համար դա օրինաչափ է: Ինչպես միշտ, նա ձգտում է իր ասելիքը հիմնավորել փաստերով: Այս յուրահատկությունը երևում է հատկապես հայկական ակնարկների հետ համեմատության դեպքում. մենք առավելապես զարկ ենք տալիս զգացական

կողմին՝ հոգու գեղեցկություն, վարվելակերպ, դեմքի արտահայտություն և այլն: Հաճախ իդեալականացնելով հերոսին՝ մոռանում ենք խոսել նրա արած կամ չարած գործերի մասին, մոռանում ենք իրատես լինել, ամենակարևորը՝ մոռանում ենք, որ գրում ենք լրատվական ժանրով և լրատվամիջոցի համար:

Դիմանկարային ակնարկի ժանրով «Le Monde»-ն անդրադառնում է համազգային կամ միջազգային հռչակ վայելող մշակութային այն գործիչներին, որոնք ինչ-որ կերպ կապված են տվյալ պահի ֆրանսիական մշակութային իրականության հետ: Առավել հազվադեպ այս ժանրով գրված նյութերի հերոս են դառնում քաղաքական կամ հասարակական գործիչները:

Ճանապարհորդական ակնարկի ժանրով գրված նյութերը հիմնականում տեսարժան վայրերի, հետաքրքիր երթուղիների նկարագրություններ են, որտեղ տեղանքի մասին ճշգրիտ հանրագիտարանային տվյալները համադրվում են լրագրողի անձնական, սուբյեկտիվ հայացքի հետ: Սա խոսքը դարձնում է պատկերավոր: Նախօրոք տեղեկացված լինելով տեղանքի առանձնահատկություններին՝ ընթերցողը հնարավորություն է ստանում լիարժեքորեն պատկերացնել տարածքը: Ճանապարհորդ - լրագրողն, իր հերթին, մանրամասն ներկայացնում է իր անցած ուղին, պատմում լսածի, տեսածի և զգացածի մասին: Սրանք ճանաչողական մեծ մշանակություն ունեն և կարդացվում են հետաքրքրությամբ: Հաճախ նկարագրվում են տեղանքին բնորոշ կենդանական ու բուսական աշխարհը, տեղի բնակիչների միստ ու կացը, կենցաղը: Այս ժանրով գրված նյութերը, որպես կանոն, ուղեկցվում են հարուստ նկարագրողուններով և օգտակար են հատկապես ճանապարհորդել ցանկացողների համար, քանի որ տալիս են ստույգ տվյալներ տարածքի մասին, անգամ գծում են կոնկրետ երթուղիներ:

Իրադարձային ակնարկի օրինակները քիչ են թերթում: Գեղարվեստաարտահայտչամիջոցների քիչ գործածման հետևանքով դրանք նույնանում են ռեպորտաժի հետ:

Ինչ վերաբերում է գեղարվեստական - հրապարակախոսական մյուս երկու ժանրերին, ապա պետք է նշենք, որ չնայած «Le Monde»-ում որոշ չափով տեղ են

գտնում ծաղրն ու հեզմանքը, բայց ֆելիետոնի և պամֆլետի դասական օրինակների չհանդիպեցինք: Մինչդեռ այս ժանրերին բնորոշ հատկանիշների կարելի է հանդիպել հաճախ, տարբեր ժանրերի նյութերում և «Le Monde»-ի գրեթե բոլոր բաժիններում:

Ընդհանրացնելով՝ նշենք, որ «Le Monde»-ը կարելի է համարել բազմաժանր թերթ: Այն, որ նախապատվությունը տրվում է վերլուծական - հրապարակախոսական ժանրային խմբին, վկայում է, որ թերթը չի սիրում պարզապես ներկայացնել իրողությունը, այլ լուրջ է վերաբերվում բոլոր խնդիրներին և իր պարտքն է համարում ներթափանցել դրանց էության մեջ:

* * *

Ֆրանսիական մամուլի ամենաակնառու առանձնահատկություններից է *գովազդի* քիչ առկայությունը: Դա նկատելի է հատկապես արտասահմանյան մամուլի այլ օրգանների հետ համեմատության դեպքում: Ըստ թերթ հրապարակողների միջազգային ֆեդերացիայի տվյալների՝ եթե Միացյալ Նահանգներում գովազդից ստացված շահույթը կազմում է թերթի ընդհանուր շահույթի 85.7%-ը (որից 36%-ը գոյանում է փոքր հայտարարություններից), Մեծ Բրիտանիայում՝ 80.5%-ը (որից 60.15%-ը՝ փոքր հայտարարություններից), Գերմանիայում՝ 63.6%-ը (որից 51%-ը՝ փոքր հայտարարություններից), ապա Ֆրանսիայում գովազդը թերթին բերում է ընդամենը 47.2% շահույթ, որից 14.5%-ն ապահովում են փոքր հայտարարությունները⁸⁹:

Մամուլի ուսումնասիրությամբ զբաղվող մեկ այլ կազմակերպություն՝ Ինֆորմացիայի տեխնիկական և իրավական ծառայությունը, ֆրանսիական գովազդի շահույթի համար բերում է ավելի ցածր ցուցանիշներ՝ 39.75% ընդհանուր շահույթ, որից 20.6%-ը՝ փոքր հայտարարություններից⁹⁰:

Գովազդի մուտքը մամուլ արձանագրվեց 18-րդ դարի սկզբին, առաջին հերթին այն երկրներում, որտեղ զարգացած էր առևտուրը՝ Անգլիա, ԱՄՆ, Գերմանիա: Մշակութային արժեքներով հարուստ պահպանողական Ֆրանսիան,

⁸⁹ Albert P., La presse française (notes et études documentaires), Maulde et Renou, Paris, p.38.

⁹⁰ Նույն տեղում:

որը, ըստ մեզ, դժվար է ընդունում ցանկացած նորամուծություն (թերևս նորածնության բացառությամբ), այս անգամ ևս երկար ժամանակ թերահավատորեն էր վերաբերվում գովազդին: 1936 թվականին ֆրանսիական մամուլի ականավոր գործիչներից մեկը՝ Էմիլ դը ժիրարդենը, հիմնեց «La Presse» («Մամուլ») թերթը, որտեղ տպագրվեցին ֆրանսիական առաջին գովազդները: Ժիրարդենն առաջինն էր, որ հասկացավ և պրոպագանդեց գովազդի կարևորությունը թերթի ֆինանսավորման հարցում, բացատրեց, որ սա մեծ հեղափոխություն է ժուռնալիստիկայի մեջ, որը կիջեցնի օրաթերթերի գները և կնպաստի ընթերցողների թվի աճին: Սակայն ժիրարդենի նախաձեռնությունը լայն արձագանք չունեցավ:

Գովազդի քիչ օգտագործումը հանգեցրեց նրան, որ ֆրանսիական թերթերի համար սահմանվեցին բարձր գներ. որակյալ ֆրանսիական օրաթերթերը («Le Monde», «Le Figaro», «Libération») արժեին 7-7.5 ֆրանկ, այն դեպքում, երբ նույն որակի ամերիկյան և անգլիական թերթերի գինը 2.5-3 ֆրանկ էր: Նշենք նաև, որ ֆրանսիական մամուլում գովազդային ներդրումների պակասը որոշ չափով փոխհատուցվում էր մամուլին պետության օգնությամբ, ինչը ևս այս երկրի լրատվական դաշտի յուրահատկություններից է: Ի դեպ՝ ֆրանսիական կառավարությունը ֆինանսավորում է ոչ թե առանձին լրատվամիջոցների, այլ բոլորին և տեսականորեն չունի նրանց իր կամքը թելադրելու լծակներ: Ֆրանսիայում գովազդային շուկան վերահսկվում է միայն գովազդի մասին օրենքների սահմաններում, որոնք հիմնականում կանոնակարգում են ալկոհոլային խմիչքների, ծխախոտի և դեղորայքի գովազդումը, առանձնապես ուշադրություն է դարձվում դրանց գովազդներին մանկապատանեկան և երիտասարդական թերթերում: Այս օրենքները նպաստում են նաև գովազդատու - լրատվամիջոց հարաբերությունների և ընդհանրապես՝ գովազդային դաշտի կարգավորմանը:

Աշխարհի տարբեր երկրներում գործում են գովազդի ուսումնասիրության ինստիտուտներ, որոնց նպատակն է ուշադրության կենտրոնում պահել կյանքի բոլոր բնագավառներ ներխուժած այս երևույթը, բացահայտել նրա ազդեցության լծակներն ու չափը, ստեղծման եղանակներն ու մատուցման ձևերը: Նման

հաստատություն գործում է նաև Ֆրանսիայում՝ Գովազդային ուսմունքի և ուսումնասիրությունների ինստիտուտը, որը թողարկում է տարեկան բրոշյուրներ՝ «Le Marche publicitaire français» («Ֆրանսիական գովազդային շուկան») խորագրով՝ արձանագրելով ֆրանսիական գովազդային դաշտի բոլոր փոփոխությունները և մանրամասն տեղեկություններ տալով ֆրանսիական տարբեր լրատվամիջոցներում գովազդի տեղի ու դերի մասին:

1970-ական թվականներից ֆրանսիական մամուլում որոշ չափով աճեցին գովազդային ներդրումները, այս շուկան սկսեց ակնհայտորեն նմանակել ամերիկյանին: Ի վերջո արմատացավ այն գիտակցությունը, որ թերթը գովազդի նվերն է, և նրա շնորհիվ է, որ ընթերցողը տեսնում է գունավոր, ամբողջական և որակյալ պարբերականներ:

Ֆրանսիական մամուլի տեսաբաններն առանձնացնում են գովազդի երկու տեսակ՝ ա) գործնական գովազդ, որը ներկայանում է նկարազարդ պաստառների ձևով՝ ուղեկցված որևէ նշանաբանով, և բ) փոքրիկ հայտարարություններ: Այսօր գովազդի առաջին տեսակը շատ տարածված է Ֆրանսիայում. այն կարելի է հանդիպել բոլոր լրատվամիջոցներում, փողոցներում և այլուր, մինչդեռ փոքր հայտարարությունների շուկան, արդյունաբերական այլ երկրների համեմատ, այստեղ քիչ է զարգացած: Դրանք հատկապես պակասեցին տնտեսական ճգնաժամից հետո և հիմնականում վերաբերում են անշարժ գույքի առք ու վաճառքին և աշխատանքի շուկային:

Մամուլի կախվածությունը գովազդից ակնհայտ է: Այն ազդում է ինչպես թերթերի էջերի քանակի և դասավորության, այնպես էլ նրանց բովանդակության վրա: Վտանգ կա, որ այդ ազդեցությունը կարող է կրել գաղափարական բնույթ: Սակայն դա չի վերաբերում «Le Monde»-ին, որը գիտի կտրուկ սահման դնել գովազդի և լրատվության, գովազդային և անկախ տեքստերի միջև:

«Le Monde»-ի ստեղծման առաջին տարիներին գովազդն արդեն մեծ տեղ էր զբաղեցնում ամերիկյան և անգլիական լրատվամիջոցներում, մինչդեռ Ֆրանսիան դեռ հապաղում էր, «Le Monde»-ը՝ առավել ևս: Թերթի խմբագրակազմը և հատկապես տնօրինությունը գովազդը անհրաժեշտություն չէին համարում, այլ

ընդամենը՝ տնտեսության գործոններից մեկը: Թերթը լավ վաճառվում էր, ուստի գովազդն օգնում էր թերթին, բայց չէր պայմանավորում նրա գոյությունը⁹¹: Բացի այդ, այս տարիներին, երբ նոր էր թափ առնում դեռնթուլոգիական ուսմունքը և զգալի տեղ էր տրվում էթիկական կանոնագրերին, մեծ էր վախը, որ գովազդատուն կարող է ճնշում գործադրել թերթի վրա, իսկ գովազդը՝ խաթարել թերթի անկախ կարգավիճակը: Չգիտես ինչու, հատկապես մեծ էր վախը գովազդային հայտարարությունների հանդեպ, որոնք դիտվում էին իբրև օտար տարրեր թերթի համար:

«Le Monde»-ի առաջին գովազդները զետեղվում էին թերթի վերջին էջում, հնարավորինս չերևացող տեղ, ունեին անշուք ու համեստ տեսք: Այսինքն՝ դեմ էին գովազդի բոլոր կանոններին: Արդեն 1970-ականներին գովազդը մեծ տեղ ուներ Ֆրանսիայում, թուլացել էր վախը նրա հանդեպ, ինչն իր ազդեցությունն ունեցավ օրաթերթի վրա. գովազդը փոխեց իր նկարագիրը թերթում, «Le Monde»-ը սկսեց տպագրել ավելի որակյալ ու բազմազան գովազդներ:

Քաղաքական գովազդի երևույթը ծնունդ առավ «Le Monde»-ում ժակ Ֆովեի տնօրինության ժամանակահատվածում՝ 1981 թ. մայիսի նախագահական ընտրությունների նախաշեմին: Թեկնածուներ առաջադրած կուսակցությունները գնում էին թերթի էջերը և գովազդում իրենց թեկնածուին: Սակայն այս դեպքում էլ «Le Monde»-ը ջանում էր օբյեկտիվ մնալ. աջ թևի թեկնածուի համար գրվածը ոչ մի տող ավել չպետք է լիներ ձախ թևի թեկնածուի համար գրվածից: Ըստ թերթի այդ տարիների աշխատակիցների հիշողությունների՝ ժակ Ֆովեն ամեն օր անձամբ էր չափում այս նյութերի երկարությունն ու զբաղեցրած տարածքը⁹²: Նույն աղբյուրները վկայում են, որ լինում էին նաև թաքնված գովազդների պատվերներ, օրինակ՝ պատվիրվում էր հոդված թեկնածուներից որևէ մեկի նոր հրատարակած գրքի կամ կատարած հայտնագործության մասին, և սա պետք է դիտվեր ոչ թե քաղաքական, այլ մշակութային կամ գիտական լրատվություն:

1985 թվականին «Le Monde»-ի տնօրինությունը որոշում ընդունեց, որի համաձայն թերթի գովազդային ծառայությունը՝ «Le Monde Publicité»-ն («Le

⁹¹ Stéu Planchais J., Un homme du Monde, Éditions Calmann-Lévy, Paris, 1989, p.105-109.

⁹² Նույն տեղում, էջ 110-111:

Monde» Գովազդ») պետք է առանձնանար խմբագրությունից՝ դառնալով «Le Monde» մամուլի խմբի առանձին մասնաճյուղ: Դրանից անմիջապես հետո «Le Monde Publicité»-ի բաժնեմասերի 49%-ը գնվեց «Régie Presse» կազմակերպության «Publicis» մասնաճյուղի կողմից, ինչը «Le Monde Publicité»-ի համար ապահովեց 15 մլն ֆրանկի ներդրում: Այս ընթացքում որոշ չափով աճեց գովազդից ստացված եկամուտը, ինչը, սակայն, բավարար չէր ֆրանսիական գովազդային շուկայի չափանիշներով, որն այդ տարիներին մեծ թափ էր առել, քանի որ տնտեսական շրջապատը բավական նպաստավոր էր գովազդային ներդրումների համար: Այնուհանդերձ, մինչև 1990-ական թվականները գովազդից ստացված շահույթը կազմում էր թերթի ընդհանուր շահույթի 40%-ը: Այս տարիներին «Le Monde»-ը ճգնաժամ ապրեց, ինչի պատճառով նվազեց թերթի շահույթն ընդհանուր առմամբ, իսկ գովազդի բաժինն իջավ 22%-ի⁹³:

Նշված ժամանակահատվածում գովազդատուները հիմնականում նախընտրում էին հեռուստատեսությունը և ռադիոն: Դրան հակառակ, այդ տարիների խմբագիր Ժան-Սարի Կոլոմբանին գտնում էր, որ օրաթերթային մամուլն ապագա ունի, և որ «գովազդը թերթի անկախության երաշխիքն է»⁹⁴: Թերևս Կոլոմբանին առաջինն էր «Le Monde»-ի խմբագիրներից, որ հանդես եկավ գովազդի նման բնորոշմամբ: Նախորդները մտահոգություն ունեին, որ գովազդը կարող է խաթարել թերթի անկախությունը: Ուսումնասիրելով Կոլոմբանիի տնօրինության տարիներին թերթում տեղ գտած գովազդները՝ եկել ենք այն համոզման, որ նա գտել էր այն տարբերակը, երբ գովազդը կարող է նպաստել թերթի անկախությանը: Կոլոմբանին պարզապես տպագրում էր բազմազան գովազդներ (շատ և տարբեր)՝ ոչ մի գովազդատուի թույլ չտալով ունենալ այնքան ներդրում թերթում, որ կարողանա եղանակ ստեղծել և իր կամքը թելադրել: Միաժամանակ շատ գովազդների առկայությունը («Le Monde»-ի չափանիշներով՝ շատ) ենթադրում է ֆինանսական կայունություն, ինչն իր հերթին թերթի

⁹³ Stéu Eveno P., Le journal Le Monde (une histoire d'indépendance), éditions Odile Jacob, Paris, 2001, p. 148.

⁹⁴ Նույն տեղում:

անկախության երաշխիքն է: Սեր այս տեսակետը, թերևս, միակ բացատրությունն է գովազդի վերաբերյալ արտահայտված այդքան տարաբնույթ և հակադիր մտքերի:

1995-1996 թվականներին ֆրանսիական մամուլը հայտնվեց դժվար կացության մեջ. թուլացել էր գովազդային շուկան, քչացել էին գովազդատուները: Դրությունից դուրս գալու համար հիանալի առաջարկությամբ հանդես եկավ «Le Monde»-ը: Թերթի տնօրինության նախագահ Դոմինիք Ալդվին և «Le Monde Publicité»-ի գլխավոր տնօրեն ժերար Մորաքը որոշեցին համագործակցել ֆրանսիական մի քանի առաջադեմ օրաթերթերի հետ (մարզական «L'Équipe» («Թիմ») և տնտեսական «Les Échos» («Արձագանք»)) և ստեղծել համատեղ գովազդային ծառայություն, որն անվանեցին «Plein Carde»: Սա մի հրաշալի նախագիծ էր, որը գործի դրեց, աշխատեցրեց ազգային օրաթերթային մամուլի գովազդային շուկան: Այն երեք օրաթերթերի գովազդային ծառայությունների միասնությունն էր, որը գովազդատուներին առաջարկում էր գնել հինգ գովազդային տեղ երեք թերթերից յուրաքանչյուրում, այսինքն՝ ընդհանուր առմամբ 15 տեղ: Այս 15 գովազդները պետք է տպագրվեին մեկ շաբաթվա ընթացքում և արժեին 1 - 2 մլն ֆրանկ՝ կախված գովազդի չափից:

Նախագիծը, որ սկսեց գործել 1996 թ. սեպտեմբերից, մեր կարծիքով, առաջին հերթին ձեռնտու էր գովազդատուին, որը խնայում էր ժամանակը. չէր այցելում երեք թերթերի խմբագրությունները առանձին - առանձին, այլ կնքում էր մեկ ընդհանուր պայմանագիր: Մեծանում էր նաև գովազդի արդյունավետությունը, քանի որ այն միանգամից տպագրվում էր ֆրանսիական երեք առաջադեմ օրաթերթերում: Բացի այդ, «Plein Carde»-ի ստեղծումը, որը կարծես գովազդեց գովազդային շուկան, լրացուցիչ անգամ հիշեցրեց գովազդատուին այս երևույթի կարևորությունը: Արդյունքում՝ նշված երեք թերթերում, ապա նաև ֆրանսիական մյուս օրաթերթերում մեծապես աճեցին գովազդային ներդրումները, բարձրացավ գովազդի հեղինակությունն ու դերը: Դա պարզ երևում է հետևյալ հաշիվներում. եթե 1995 թ. ընթացքում «Le Monde»-ը տպագրել է 1532 էջ գովազդ, 1996-ին՝ 1633 էջ, ապա արդեն 1997-ին այս թիվը հասավ 2072 էջի: Գովազդից ստացված շահույթը ևս աճեց այս տարիներին՝ 286 մլն ֆրանկից հասնելով 353 մլն ֆրանկի,

իսկ մինչև 2000 թիվը՝ 556 մլն ֆրանկի⁹⁵: Այսինքն՝ հինգ տարիների ընթացքում գովազդից ստացված եկամուտը գրեթե կրկնապատկվեց: Սա լուրջ առաջընթաց էր, ինչն, անշուշտ, «Le Monde»-ի՝ գովազդատուներ գրավելուն ուղղված խորքային աշխատանքների արդյունքն էր: Սա միայն մեր կարծիքը չէ: Գովազդային շուկայի գիտակ Լուսիանո Բոսիոյի հավաստմամբ՝ ֆրանսիական ազգային օրաթերթերը գովազդային շուկայի առաջընթացի համար պարտական են «Le Monde»-ի առաջարկած նախագծին⁹⁶:

Այս պահվածքը բնորոշ է «Le Monde»-ին, որը դժվարին իրավիճակներում փնտրում ու գտնում է լուծումներ: Թերթը ոչ թե ձգտում է հարմարվել իրականությանը, այլ իրականությունն է հարմարեցնում իրեն՝ ցուցաբերելով նախանձելի ճկունություն:

Այնուհանդերձ, «Le Monde»-ն ունի չգրված մի օրենք, որը սահմանել է դեռևս Ջյուլեր Բյով-Մերին, և պահպանվում է մինչև օրս. գովազդը երբեք չպետք է անցնի թերթի մեկ երրորդը՝ երկու երրորդը թողնելով խմբագրության հողվածներին: Սա այն դեպքում, երբ աշխարհի լրատվամիջոցների համար այս ցուցանիշը տատանվում է 50-80%-ի սահմաններում⁹⁷: «Le Monde»-ն աչքի է ընկնում գովազդների սակավությամբ թե՛ ֆրանսիական առաջադեմ օրաթերթերի («Le Figaro», «Libération», «France soire» և այլն), թե՛ առավել ևս ամերիկյան թերթերի («New York Times», «Life» և այլն) համեմատությամբ, որտեղ, որոշ դեպքերում, գովազդի զբաղեցրած տարածքն անցնում է թերթի 85%-ից:

2000-2003 թթ. ընթացքում «Le Monde»-ը կորցրեց իր գովազդի 40%-ը (մոտ 40 մլն եվրո), մինչդեռ 2004 թվականի ընթացքում օրաթերթի գովազդներն ավելացան 7%-ով⁹⁸:

Զնայած այդ տարիներին «Le Monde»-ի էջերում գովազդը անհամեմատ քիչ էր, այնուամենայնիվ, ֆրանսիական ամենաառաջավոր արտադրողները (Dior, Gucci, Vichy, Microsoft) նախընտրում էին այս թերթը: Պատճառն այն էր, որ «Le Monde»-ը ֆրանսիական ամենաշատ կարդացվող օրաթերթն էր: Ըստ 2003 թ. EuroPQN-ի

⁹⁵ Նույն տեղում, էջ 152:

⁹⁶ Bosio I., «Comment le Monde a renoué avec la pub», Stratégie, 6 février, 1998.

⁹⁷ Տե՛ս՝ <http://www.mondepub.fr/Decou/Regie/index.htm>:

⁹⁸ Տե՛ս՝ http://medias.lemonde.fr/medias/pdf_obj/sup_comptes-monde_040604.pdf, էջ 12:

իրականացրած սոցիալական «Le Monde»-ի ընթերցողների թիվը հասնում էր 2129000-ի, այն դեպքում, երբ ֆրանսիական մյուս առաջադեմ օրաթերթերից «Le Figaro» կարդում էր 1302000, «Libération»՝ 901000, տնտեսական «Les Échos»՝ 759000 ընթերցող⁹⁹: Իսկ գովազդատուն նախընտրում է շատ կարդացվող թերթեր:

Հեղինակության բարձրացմանը զուգընթաց՝ «Le Monde»-ը վաստակեց ֆրանսիական ազգային առաջին օրաթերթի կոչումը, որը մինչ այդ պատկանում էր «Le Figaro»-ին (վերջինս ամեն օր տպագրում էր այդ կարգախոսն իր առաջին էջի վերին մասում):

Այսօր «Le Monde»-ի ընթերցողների թիվը փոքր-ինչ նվազել է, չնայած այն դեռևս ֆրանսիական ամենաշատ ընթերցվող օրաթերթերի հնգյակում է. ըստ EPIQ-ի 2008 թ. նոյեմբեր ամսվա տվյալների՝ «Le Monde»-ն իր ընթերցողների թվով (2066000 ընթերցող) զիջում է միայն «20 minutes» (2617000), «L'Équipe» (2546000), «Metro»¹⁰⁰ (2419000), «Le Parisien Aujourd'hui» (2269000) պարբերականներին¹⁰¹: OJD-ի բերած թվերը 2008 թ. համար փոքր-ինչ այլ են, սակայն դրանից պատկերն այնքան էլ չի փոխվում: Ըստ այս կազմակերպության տվյալների՝ «Le Figaro»-ն ևս ընթերցողների թվով գերազանցում է «Le Monde»-ին¹⁰²: Դրա հետ կապված որոշ չափով նվազել են նաև գովազդային ներդրումները, այնուհանդերձ գովազդի որակն ու մատուցման ձևն առանձնապես փոփոխություն չեն կրել, թերևս միայն առավել մեծ տեղ է տրվում ինքնագովազդին:

«Le Monde»-ը միշտ ձգտել է կտրուկ սահմանագիծ դնել իր հեղինակային և գովազդային նյութերի միջև: Եվ եթե հեղինակային նյութերի դեպքում պատասխանատու է իր յուրաքանչյուր բառի համար, ապա գովազդի բովանդակության համար բացարձակ պատասխանատվություն չի կրում: Այսպես՝ մի քանի համարներ շարունակ թերթը տպագրում էր «Carrefour» շաքաթաթերթի գովազդային հայտարարությունը: Այս շաքաթաթերթը, սակայն, արգելված էր կառավարության կողմից, քանի որ հանդիսանում էր ֆրանս - ակթիյան գինվորական գաղտնի մի կազմակերպության՝ OAS-ի օրգանը: «Le Monde»-ը, որն

⁹⁹ Տե՛ս՝ <http://www.mondepub.fr/Decou/lecto/Europ/index.htm>:

¹⁰⁰ Ի դեպ, «20 minutes»-ը և «Metro»-ն ամվճար օրաթերթեր են:

¹⁰¹ Տե՛ս՝ http://www.mondepub.fr/documentspdfchiffres_cles_nov08.pdf, էջ 3:

¹⁰² Տե՛ս՝ http://www.ojd.com/engine/adhchif/adhe_list.php?mode=chif&cat=1771&subcat=353:

իր էջերում միշտ դեմ էր արտահայտվել այս կազմակերպությանը, այնուհանդերձ տպագրում է վերջինիս խոսնակի գովազդը՝ արդարանալով, թե այս դեպքում հանդես է գալիս մամուլի և խոսքի ազատության դիրքերից:

Նույն ժամանակահատվածում Հարավային Աֆրիկայի ժողովուրդները հալածում էին իրենց տարածքում բնակվող ապարդեիդ կոչվող ցեղախմբին: «Le Monde»-ը առիթը բաց չէր թողնում այս երևույթը քննադատելու համար: Միևնույն ժամանակ թերթը տպագրում էր հայտարարություններ, որոնք գովազդում էին հարավաֆրիկյան երկրների տուրիզմը:

Նշված դեպքերը պարզորոշ ցույց են տալիս, որ «Le Monde»-ի գովազդների գաղափարական մոտեցումները երբեք չեն ազդում թերթի գաղափարական բովանդակության վրա:

Այսօր «Le Monde»-ի էջերում հանդիպում են իրենց մատուցման ձևով և կիրառած հնարքներով տարբեր գովազդներ: Սովորաբար մեկ էջում մեկից ավելի գովազդ չի տպագրվում (լինում են նաև բացառություններ): Գովազդները վերցվում են շրջանակի մեջ և էջի ամենաաչքի ընկնող անկյունն են: Դրանք ուշադրություն են գրավում տարբեր ձևերով՝ տառերի մեծությամբ, գույներով, նկարներով, գրաված տարածքի մեծությամբ, հետաքրքիր նկարազարդումներով և յուրահատուկ այլ լուծումներով: Ի դեպ, գովազդները թեմատիկ առումով հիմնականում համապատասխանում են այն բաժիններին, որտեղ զետեղվում են:

Հանրահայտ ֆիրմաների գովազդներն աչքի են ընկնում իրենց համեստությամբ, օրինակ՝ Dior, Boucheron, Gucci, Vichy և նմանատիպ այլ ընկերությունների գովազդները հիմնականում ներկայացնում են տվյալ ընկերության որևէ արտադրանք և նշում են ապրանքանիշը: Սրանք մեծ մասամբ գունավոր չեն, վերցված են սովորական շրջանակի մեջ, բացակայում է նաև կարգախոսը: Սա այն դեպքն է, երբ ապրանքանիշն արդեն իսկ որակի չափանիշ է, և խոսքերն ավելորդ են:

Թերթում համեմատաբար քիչ են հանդիպում գունավոր գովազդներ, սակայն դրանք անմիջապես աչքի են զարնում, քանի որ «Le Monde»-ը սև - սպիտակ է:

Կան նաև գովազդներ, որոնք նման են երկար հայտարարությունների. տրվում է մանրամասն տեղեկատվություն տվյալ իրի կամ ծառայության գնի, որակի, այն ձեռք բերելու հնարավոր վայրերի և այլնի մասին: Շատ են հանդիպում գովազդներ գրական ստեղծագործությունների, հատկապես նոր լույս տեսած գրքերի մասին: Հիմնականում ներկայացվում է գրքի կազմը, բովանդակությունը՝ շատ համառոտ և որևէ կարգախոս: Հաճախ գովազդներում հանդիպում են աղյուսակներ, որոնք բավական տեսանելի են, աչքի են զարնում և առավել համակարգված են ներկայացնում տվյալ ոլորտի կամ արտադրանքի արդյունավետությունը:

Իրենց յուրահատուկ լուծումներով աչքի են ընկնում սոցիալական ապահովագրության ոլորտին վերաբերող գովազդները. դրանք մի դեպքում ներկայացնում են լավ հագնված, առողջ տեսք ունեցող, կենսուրախ մարդկանց շարք, որը շարունակվում է մինչև անվերջություն, մյուս դեպքում՝ մեծահասակ տղամարդկանց և կանանց, որոնք հնարավորություն ունեն վայելելու կյանքի բոլոր բարիքները: Այս գովազդները խոստանում են սոցիալապես պաշտպանված հասարակություն, հաղորդում են դրական լիցքեր և առանձնանում են իրենց ինքնատիպությամբ:

Գովազդի ստեղծման երեք հնարանքները՝ կրկնության, անակնկալի և շահագրգռման, «Le Monde»-ը գործածում է տարբեր չափով: Որքան էլ զարմանալի թվա, կրկնության հնարանքը, որն ամենաարդյունավետներից մեկն է համարվում և այնքան շատ է օգտագործվում այլ լրատվամիջոցներում, թերթում քիչ է հանդիպում:

Մինչդեռ անակնկալի հնարանքը կիրառվում է «Le Monde»-ի յուրաքանչյուր համարում: Թերթերում զետեղված բոլոր գովազդները չէ, որ կարդացվում են. գովազդը պետք է ուշադրություն գրավի, անակնկալի բերի ընթերցողին, ստիպի կարդալ: «Le Monde»-ում առաջին հերթին անակնկալի են բերում գունավոր գովազդները, քանի որ թերթը գունավոր չէ: Այստեղ ևս «Le Monde»-ն ինքնատիպ է. օրինակ՝ անակնկալի կարող է բերել վառ կարմիր էջը, որտեղ զետեղված է մի փոքրիկ գովազդ, կամ երկու ծայրահեղ գույների համադրությունը, որը ևս

անմիջապես ուշադրություն է գրավում: Հանդիպում են նաև լրիվ սև ֆոնի վրա սպիտակ պատկերներ կամ, ասենք, գունազարդ, գեղեցիկ, աչք շոյող նկարներ, որոնց ներքո գովազդվում է նկարների հետ առանձնապես կապ չունեցող իր կամ ծառայություն: «Le Monde»-ում անակնկալի կարող է բերել նաև գովազդի մեծությունը. այն կարող է զբաղեցնել ամբողջ էջը, որտեղ, օրինակ, մեծ տառերով գրվում է ընդամենը մեկ կարգախոս և ընկերության անվանումը:

Շահագրգռման հին ու ազդեցիկ հնարանքը ևս գործածվում է թերթում և հիմնականում վերաբերում է ֆիրմաների նախատեսած մրցանակներին, շահումներին, անվճար ուղևորություններին և այլն: Այս հնարանքը երբեմն դառնում է որոշ գովազդների առանցքը, անգամ կարգախոսի թեման: Օրինակ՝ մանր տառերով գրված գովազդի միջին մասում, առանձին շրջանակի մեջ, խոշոր տառերով գրված են՝ «Դուք ևս փնտրեք Ձեր մրցանակը» կամ՝ «Այս ծառայությունից օգտվողները շահում են կրկնակի» կարգախոսները:

Ի դեպ, «Le Monde»-ը կարողանում է գտնել գեղեցիկ և ազդեցիկ կարգախոսներ: Այս դեպքում բառերի ճիշտ ընտրությունը բավական ներգործուն է. օրինակ՝ «Ձգացեք այն պաշտելու հաճույքը», «Հաճույքով զգա մաշկիդ գոյությունը», «Նստելու արվեստը» և այլն:

Ընդհանրացնելով՝ նշենք, որ «Le Monde»-ը տպագրում է որակյալ գովազդներ, որոնք ամեն օր տեսնելու դեպքում անգամ չեն ձանձրացնում: Դրանք ունակ են ներթափանցելու մարդու ենթագիտակցություն և համոզելու նրան՝ գնել տվյալ արտադրանքը կամ օգտվել տվյալ ծառայությունից¹⁰³:

¹⁰³ Այս մասին տե՛ս նաև՝ Մենենշյան Ա., «Գովազդը ֆրանսիական մամուլում («Le Monde» օրաթերթ)», «Ի սկզբանե էր Բանն (ժուռնալիստիկայի և գրականության հարցեր)», Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2004թ., էջ 68-76:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Չայ իրականությունը «Le Monde»-ում

Չայաստանն ու հայերը մեծ տեղ են զբաղեցնում «Le Monde»-ի էջերում: Թերթն անդրադարձել է տարբեր հարցերի՝ 1915 թվականի հայոց ցեղասպանություն, արցախյան հիմնահարց, հայ - ադրբեջանական հարաբերություններ, Չայաստանի անկախացման գործընթաց, հայկական մշակույթ և այլն: Այս խնդիրները թերթը ներկայացնում է իրեն հատուկ օբյեկտիվությամբ՝ տպագրելով առկա բոլոր մոտեցումներն ու տեսակետները: Այդուհանդերձ, ինչպես «Le Monde»-ը, այնպես էլ ֆրանսիական մյուս թերթերը («L'Humanite'», «Le Figaro», «Libe'ration») առանձնահատուկ բարյացակամությամբ են վերաբերվում հայերին: Դրա վկայությունն են 1990-ական թթ. Կամոյին, Միսաք Մանուշյանին, հայ իրականության տարբեր երևույթներին «L'Humanite'»-ի նվիրած բազում հոդվածները: Այս թերթը միակն էր, որ մինչև 1965 թիվը, երբ դեռևս ոչ ոք բացահայտ չէր խոսում հայոց եղեռնի մասին, ամեն տարի իր էջերում անդրադառնում էր ապրիլի 24-ին: Ավանդույթը շարունակվում է մինչ օրս: «Le Figaro»-ն ու «Libe'ration»-ը նույնպես անտարբեր չեն հայության խնդիրների հանդեպ, բայց գրում են ոչ այն խորությամբ ու հաճախականությամբ, ինչ «Le Monde»-ն ու «L'Humanite'»-ն:

«Le Monde»-ը հետևողականորեն անդրադառնում է 1915 թ. հայոց ցեղասպանությանը: 1987 թվականից մինչև այսօր միայն այս թեմայով տպագրվել են մեծ ու փոքր 700-ից ավելի հոդվածներ: Ֆրանսիական օրաթերթն այս խնդրում ևս ջանում է լինել անկողմնակալ՝ տպագրելով ինչպես հայ, այնպես էլ թուրք պատմաբանների տեսակետները: Դրա հետ մեկտեղ նկատելի են թերթի գործադրած ջանքերը ընթերցողին 1915 թ. ջարդերի մանրամասներին ծանոթացնելու և ցեղասպանության համընդհանուր ճանաչմանը հասնելու համար: Եվ այդ ջանքերը դրսևորվում են ոչ թե մոտեցում արտահայտելով և համոզելով, այլ փաստեր արձանագրելով:

Օրաթերթն արձագանքում է խնդրի վերաբերյալ յուրաքանչյուր նորության, ինչն ինքնին որոշակի վերաբերմունքի արտահայտություն է: Օրինակ՝ երբ 1987-ին Եվրախորհրդարանը քննարկում էր հայկական հարցը, «Le Monde»-ը տպագրեց հոդվածների մի ամբողջ շարք, որտեղ մանրամասնորեն շարադրում էր այդ քննարկումները: 1987 թ. մարտի 7-ին լույս տեսած «La question arménienne devant le Parlement européen» («Հայկական հարցը Եվրախորհրդարանի առջև») հոդվածը ներկայացնում է խնդրի ամբողջական պատկերը և փաստում, որ «Եվրախորհրդարանի քաղաքական հանձնաժողովը փետրվարի 25-ին ընդունել է փաստաթուղթ, որով մեղադրում է 1915 թվի վայրագությունները, որոնց զոհը դարձան բազմաթիվ անմեղ հայեր»:

Ավելի ուշ թերթն արձանագրում է Եվրախորհրդարանի կողմից հայոց ցեղասպանության ճանաչման փաստը՝ ներկայացնելով երկու տարվա քննարկման արդյունքում այս կառույցի ընդունած փաստաթուղթը, որտեղ մասնավորապես ասվում է. «Այսօրվա թուրքիան պատասխանատու չէ այն ողբերգության համար, որ տեղի է ունեցել 1915 թվականին թուրքական կայսրության օրոք, սակայն երկրի ներկայիս կառավարությունը չի կարող մերժել ցեղասպանության իրականացման փաստը»¹⁰⁴:

Երկու փաստաթղթերն էլ մատուցված են ամբողջությամբ և առանց մեկնաբանությունների: Թերթը ստանձնել է զուտ արձանագրողի դեր՝ չցանկանալով ցույց տալ իր մոտեցումը խնդրին: Սակայն փաստերի ընտրությունը մատնում է նրա կողմնորոշումը: Մի քանի ամիս անց «Le Monde»-ի հոդվածներից մեկում խոսվում է թուրքիայի կողմից իրականացվող հայկական մշակութային արժեքների «ցեղասպանության» մասին: Այստեղ վերապատմվում է Խորհրդային Միության «Կոմունիստ» թերթում տպագրված հոդվածը, որը հավաստում է, թե «Թուրքիան իրականացնում է որոշակի քաղաքականություն՝ ուղղված հայկական մշակութային արժեքների ոչնչացմանը՝ այն մասունքների, հուշարձանների ու

¹⁰⁴ «Après deux ans de discussions. Le Parlement européen a adopté une reconnaissance le génocide arménien», LE MONDE, 20 Juin 1987.

կիսավեր շինությունների, որոնք դեռևս մնացել են Արևմտյան Հայաստանում»¹⁰⁵: Հողվածն ունի նաև ճանաչողական նշանակություն, քանի որ պատկերացում է տալիս հայկական պատմական տարածքների, այստեղ առկա մշակութային, ճարտարապետական արժեքների մասին: Արևմտյան Հայաստանի նկարագրությունները, հայկական հուշարձանների, հայակերտ կառույցների, նրանց ստեղծման պատմություններն ապացուցում են ֆրանսիացի ընթերցողին, որ այստեղ իրոք ապրել են հայեր և տեղահանվել ոչ իրենց կամքով:

Արժեքավոր է նաև «Le Monde»-ի 1988 թ. փետրվարի 11-ի համարում լույս տեսած Միշել Հարոյանի ծավալուն հոդվածը, որը վերնագրված է «1915-1988. Le génoocide arménien reconnu en Turquie ?» («1915-1988 հայոց ցեղասպանությունը ճանաչվե՞լ է Թուրքիայում»): Հողվածագիրը հավաստում է, որ հայոց ցեղասպանությունը ճանաչվել է Թուրքիայում դեռևս 1919 թվականին: Ի վկայություն իր խոսքերի՝ Հարոյանը մատնանշում է պատերազմի տարիներին Թուրքիան դեկավարող «Միություն և առաջադիմություն» կուսակցության արխիվային փաստաթղթերը: Դրանցից հատվածաբար մեջբերված են հատկապես այն տողերը, որոնք ապացուցում են, որ 1915 թ. հայերի հետ կատարվածը կրել է զանգվածային բնույթ, ծրագրված է եղել կենտրոնական իշխանությունների կողմից, և որ բոլոր դաժանությունները կատարվել են նրանց բանավոր կամ գրավոր հրամաններով: Նույնիսկ ստեղծվել էր հատուկ կազմակերպություն, որը պետք է զբաղվեր առավել դաժան որոգայթներ լարելով և հնարավորինս շատ զոհեր ապահովել:

Այս փաստաթղթերի հրապարակումը շատ կարևոր էր հայկական հարցի վերաբերյալ ճիշտ կարծիքի ձևավորման համար: Թերևս չափազանցած չենք լինի, եթե ասենք, որ նման հրապարակումները նախապատրաստեցին ֆրանսիական քաղաքական հանրությանը՝ ի պաշտոնե ճանաչելու հայոց ցեղասպանությունը:

Այս առումով կարևոր է նաև 1991 թ. հունվարի 4-ի համարում լույս տեսած «Arménie. L'égalité devant le génocide» («Հայաստան: Հավասարություն ցեղասպանության առջև») ծավալուն հոդվածը, որը ստորագրված է երկու

¹⁰⁵ «Turquie. L'URSS dénonce un "génocide" de la culture arménienne», LE MONDE, 28 octobre 1987.

հեղինակների՝ Մարտիրոս Ցոլակյանի և Վերնա Աքսելի կողմից: Նյութը շարադրված է իրադարձային ակնարկի ժանրով: Ազդեցիկ պատկերների նկարագրման միջոցով, հույզերի և փաստերի համադրությամբ հեղինակները ներկայացրել են 1915 թ. դեկտեմբերը և դրան հաջորդած ինը ամիսները՝ կարծես տեսաժապավենի վրա ցույց տալով այն բոլոր դաժանությունները, որ իրագործել է երիտթուրքերի կառավարությունը՝ բռնի ուժով տեղահանելով մի ամբողջ ժողովրդի, ստիպելով լքել իր պատմական հայրենիքը:

«Le Monde»-ը տպագրել է նաև թուրքական կողմի փաստարկները 1915 թ. դեպքերի վերաբերյալ: Մասնավորապես, 1993 թ. նոյեմբերի 16-ին «Débats» («Քննարկումներ») բաժնի հյուրը՝ ամերիկացի իսլամագետ Բերնարդ Լևիսը, խոսելով իսլամական աշխարհի, նրա պատմության մասին և ներկայացնելով իր նոր հրատարակած երկու գրքերը, անդրադառնում է նաև հայկական հարցին: Նա մերժում է «ցեղասպանություն» տերմինը՝ այն որակելով իբրև «այս պատմության հայկական տարբերակ»: Իսլամագետը հավաստում է, որ բռնի տեղահանություն չի եղել, և որ թուրքերի գործողությունները ուղղված չէին հատկապես հայ ազգի ներկայացուցիչների դեմ:

Հոդվածը լայն արձագանք գտավ ֆրանսահայ հասարակության մեջ, «Le Monde»-ում հաջորդաբար տպագրվեցին տասնյակ պատասխան հրապարակումներ: Արդյունքում՝ համակողմանիորեն քննարկվեց հայկական հարցը, ինչը ձեռնտու էր խնդրին զանգվածային հնչեղություն հաղորդելու առումով:

Հոդվածի տպագրումից որոշ ժամանակ անց քննարկումը շարունակելու համար թերթը ստիպված էր նույն «Débats» բաժնում հյուրընկալել Անահիտ Տեր-Մինասյանին և Կլոդ Մուբաֆյանին: Այստեղ արդեն հայկական հարցը ներկայացվում է այլ լույսի ներքո. «Ցեղասպանությունը տեղի է ունեցել, և դրա հիմքում եղել է էթնիկական խտրականությունը: Բերնարդ Լևիսի տեսակետը մի նոր վիրավորանք է հայ ազգի համար, ինչով էլ բացատրվում է դրա առաջ բերած բուռն արձագանքը ֆրանսահայ համայնքի մեջ և ողջ աշխարհում»¹⁰⁶: Հոդվածը

¹⁰⁶ Langellier J. P., Peroncel Hugoz J. P., «Un entretien avec Anahide Ter-Minassian et Claude Mutafian. Le génocide des Arméniens fut un "nettoyage ethnique" mené au nom du nationalisme territorial», LE MONDE, 26 avril 1994.

Լևիսին ներկայացնում է իբրև միջազգային առումով ճանաչված հետազոտողի, բայց և հավաստում, որ թուրք պատմաբանների կողմից տպագրված գրականությունը նրան թյուրիմացության մեջ է գցել. «Միայն 1915-1922 թվականներին երկու միլիոն հայ է անհայտ կորել Արևմտյան Հայաստանից՝ չհաշված 1894-1896 և 1909 թվականների զոհերը: Այս համատեքստում Լևիսի տեսակետները հավասարվում են զրոյի: Դրանք ընդամենը թուրքական քարոզչության արգասիքն են»¹⁰⁷, - հավաստում են թերթի հյուրերը: Նրանք դեմ են արտահայտվում Լևիսի այն տեսակետին, թե հայերի տեղահանությունները իրականացվել են միայն Ռուսաստանի հետ պատերազմական գործողությունների տարածքներում, այն էլ՝ ի շահ նրանց անվտանգության, իսկ Կոստանդնուպոլսի հայերին ընդհանրապես ոչ ոք չի անհանգստացրել. «Լևիսը երևի մոռացել է հայկական ջարդերը խորհրդանշող տարեթիվը՝ 1915 թվականի ապրիլի 24-ը, որը նշանավորվում է նրանով, որ այդ օրը հարյուրավոր հայ մտավորականների ձերբակալեցին ու սպանեցին հենց Կոստանդնուպոլսում, բացի այդ, ի՞նչ ռուսական վտանգի մասին է խոսքը, երբ հայաթափվում էր Արևմտյան Հայաստանի Միջերկրական ծովի առափնյա հատվածը, որը շատ հեռու էր ռուս-թուրքական պատերազմական գոտուց»¹⁰⁸, - հիշեցնում են օրաթերթի հյուրերը: Ի դեպ, «Le Monde»-ի էլեկտրոնային տարբերակը վերատպեց այս հոդվածը 2005 թ. ապրիլի 22-ին՝ Մեծ եղեռնի 90-րդ տարելիցի առիթով:

Պատասխան հոդվածների թվին կարելի է դասել նաև Վինտեր Ջեյի «Le massacre des Arméniens»-ը («Հայոց եղեռնը»): Հոդվածագիրը փաստում է, որ թուրքական կառավարությունը միշտ ցանկացել է 1915 թ. հայերի համատարած տեղահանությունը կապել երկրում տիրող պատերազմական իրավիճակի հետ՝ մոռանալով, որ պատերազմական գործողությունները թուրքիայում սկսվեցին միայն ապրիլ ամսին, մինչդեռ հայերի հանդեպ բռնարարքներ իրագործվում էին դեռևս տարեսկզբից: Ջեյը եզրակացնում է. «Թուրքական ուժերի կողմից իրականացվող

¹⁰⁷ Նույն տեղում:

¹⁰⁸ Նույն տեղում:

բազում վայրենությունները քաղաքակիրթ հայերի դեմ միայն մեկ որակում ունեն` ցեղասպանություն»¹⁰⁹:

Բերնարդ Լևիսին արձագանքում է նաև Լորեն Գրեյլսամերը: Նրա ընդվզումը` իբրև այլազգի գիտնականի, ավելի տպավորիչ է. «Միթե՞ կարելի է աղավաղել պատմական իրողությունները, արխիվների տվյալները, արհամարհել գրավոր աղբյուրներն ու մարդկանց վկայությունները»¹¹⁰:

«Le Monde»-ի 1993 թ. նոյեմբերի 16-ի համարում արտահայտած իր տեսակետների համար Բերնարդ Լևիսը նույնիսկ քրեական պատասխանատվության ենթարկվեց: Ֆրանսիայի հայկական ընկերությունները դատի էին տվել իսլամագետին` 1915 թ. ցեղասպանության իրականությունը խեղաթյուրելու մեղադրանքով: Փարիզի թիվ մեկ քաղաքացիական դատարանը մեղավոր ճանաչեց վերջինիս` դատապարտելով բարոյական վնասի գումարային հատուցման: Գումարը վճարվեց Հայկական ընկերությունների ֆորումին և Ռասիզմի ու սեմիտիզմի դեմ միջազգային լիգային: «Լևիսը դատապարտվեց հայոց ցեղասպանության իրականությունը խեղաթյուրելու համար»¹¹¹,– ազդարարում է թերթը 1995 թ. հունվարի 23-ի համարում:

Ֆրանսիական մամուլում հայկական հարցի քննարկումները պարբերական բնույթ են կրում և որոշակիորեն մտածված քաղաքականության արդյունք են: Հատկապես ապրիլի 24-ը պարբերաբար լուսաբանումների ու քննարկումների առիթ է դառնում: Սովորաբար տրվում է լրատվություն, թե ինչ կերպ է նշվել այդ օրը Հայաստանում և սփյուռքահայ գաղթօջախներում, կրկին նկարագրվում են 1915 թ. դեպքերը, մազապուրծ հայերի ապրումները, նրանց հետագա ճակատագրերն ու հիշողությունները: Հատկապես մեծ էր անդրադարձը 1995 թվականին` ցեղասպանության 80-րդ տալեկիցի առիթով: Այդ օրը «France 3» և «Arte» հեռուստաընկերություններն իրենց երեկոյան եթերը նվիրել էին Հայաստանին և հայ ժողովրդին, նրա պատմությանն ու նշակույթին: «Le Monde»-ն անդրադարձավ այս հեռուստաընկերությունների հեռարձակած նյութերին, նաև մի

¹⁰⁹ Winter J., «Le massacre des Arméniens», LE MONDE, 3 août 1994.

¹¹⁰ Laurent G., «Spielberg et la mémoire du futur», LE MONDE, 7 avril 1995.

¹¹¹ Nathaniel H., «Bernard Lewis condamné pour avoir nié la réalité du génocide arménien», LE MONDE, 23 juin 1995.

քանի որ շարունակ տպագրեց իր լրագրողների հոդվածները, որոնք պատմում էին հինավուրց մի ժողովրդի, նրա ստեղծած արժեքների մասին և մասնավորապես կանգ էին առնում 1915 թ. ջարդերի նկարագրության վրա: 1995 թ. ապրիլի 23-ի համարում ժան-Պիեր Պերսոնել-Յուզոյի «Indestructibles Arméniens» («Անկոտրում հայերը») հոդվածը ցեղասպանության դեպքերի այնքան մանրամասն նկարագրություն է, որ ակամայից զարմանք ես ապրում, որ ստորագրված է օտարազգի լրագրողի անունով: Հոդվածը սկսվում է 1939 թ. Հիտլերի արտաբերած խոսքերով. «Ո՞վ է հիշում այսօր հայերի ջարդերի մասին»: Ապա հեղինակը փորձում է հակառակն ապացուցել. փաստերով, ահազդու նկարագրություններով ստիպում է ընթերցողին, որ ընդմիշտ մտապահի ազդեցիկ տեսարանները և քննադատի դրանց կազմակերպիչներին:

Ցեղասպանության տարելիցն առիթ էր նաև անդրադառնալու հայոց պատմությանը: Նույն օրը տպագրված մեկ այլ հոդված՝ «Dix maîtres différents en deux mille ans» («Տասը տարբեր տերեր երկու հազար տարվա ընթացքում»), պատմում է հայ ժողովրդի պատմության կարևորագույն իրադարձությունների մասին՝ սկսած մ. թ. ա. յոթերորդ դարից մինչև մեր օրերը: Այստեղ հիշատակվում են հայոց պատմության բոլոր կարևոր իրադարձությունները, ինչպես օրինակ՝ մ. թ. ա. 95-55 թվականներին Տիգրան Մեծի կողմից հայկական կայսրության հիմնադրումը, 301-ին՝ քրիստոնեության ընդունումը իբրև պետական կրոն, 387-ին՝ Հայաստանի բաժանումը Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև, 405-ին՝ հայոց տառերի ստեղծումը, Կիլիկյան Հայաստանի հիմնադրումը 1080-ին, 16–17-րդ դարերում՝ Հայաստանի բաժանումը Իրանի և Թուրքիայի միջև, 1920 թվականին՝ խորհրդային կարգերի հաստատումը երկրում և այլն: Հատկապես շեշտադրված է այն փաստը, որ հայ ժողովուրդը դարերի ընթացքում եղել է տարբեր տերությունների իշխանության ներքո, հալածվել, թալանվել է բազմիցս, սակայն երբեք չի ընկճվել հոգեպես: Ցեղասպանության տարելիցի առիթով նման նյութի տպագրումը տեղին էր և մտածված: Հոդվածն ապացուցում է աշխարհին, որ եղեռնի զոհ դարձած Հայաստանը հնագույն պետություն է՝ հարուստ պատմությամբ և մնայուն արժեքներով:

«Le Monde»-ը տպագրեց նաև «Les Nouvelles d'Arménie»-ի պատվերով կազմակերպված սոցիոլոգիական հարցման արդյունքները, որի նպատակն էր պարզել՝ ֆրանսիացիները տեղեկացված են հայոց ցեղասպանության մասին, թե՞ ոչ: Հարցումն իրականացրել էր Լուիզ Հարիս Ֆրանս ինստիտուտը 18 տարեկանից բարձր 1000 մարդու միջև: Արդյունքները հետևյալն էին. ֆրանսիացիների 69%-ը տեղյակ է 1915 թ. դեպքերից, և ընդամենը 31%-ը գաղափար չունի այդ մասին: Կարծում ենք՝ սա բավական բարձր ցուցանիշ է եվրոպական հզոր տերության համար, և այն ձևավորելու խնդրում ֆրանսիական լրատվամիջոցների դերը մեծ է եղել: Նրանց համար 1915 թ. եղեռնի թեման երբևէ չի կորցրել իր արդիականությունը, և նրանք ժամանակ առ ժամանակ ընթերցողի ուշադրությունը սևեռել են այս հարցի վրա:

1998 թվականին Ֆրանսիայի կառավարական շրջանակներում քննարկվում էր հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու հարցը: Ընդ որում այն առաջ էին քաշում միաժամանակ տարբեր կուսակցական պատկանելության քաղաքական գործիչներ՝ ժանին ժամբու, Դոմինիք Վոյնե, Պատրիկ Դևեյան, Կլոդ Ալեգր, Շարլ ժուլին, Սարի ժորժ Բուֆե և այլք: 1915 թ. դեպքերի նրանց բնորոշումները հստակ են, բայց նաև՝ զգուշավոր. «Ինչու՞ չընդունենք, որ այդ ջարդերն ունեին ցեղասպանության նկարագիր»¹¹²:

Արդեն մեկ ամիս անց՝ մայիսի 29-ին, Ֆրանսիայի Հանրապետության Ազգային ասամբլեան քննարկում էր 1915 թ. ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու հարցը: Նիստի սկզբում ներկայացվեց պատմական փոքրիկ զեկույց այս դեպքերի առիթով, եղան ելույթներ և քննարկումներ, ապա անցկացվեց քվեարկություն: Արդյունքները հավաստում էին, որ Ֆրանսիան ճանաչում է 1915 թ. հայոց ցեղասպանությունը: Ըստ օրաթերթի՝ «Քվեարկության արդյունքների հրապարակումը Ասամբլեան ընդունեց հոտնկայս ծափահարություններով»¹¹³:

Թուրքիայի արձագանքը ծայրահեղ բացասական էր: «Le Monde»-ում տպագրվեցին բազմաթիվ հոդվածներ, որոնք բացահայտում էին թուրքական

¹¹² «La fracture morale du gouvernement sur le génocide arménien», LE MONDE, 26 avril 1998.

¹¹³ Clarisse F., «L'Assemblée nationale proclame: «La France reconnaît le génocide arménien de 1915», LE MONDE, 30 mai 1998.

քինախնդրության դրսևորումները: Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը Ֆրանսիայի այս քայլը որակեց իբրև պատմական իրականության աղավաղում, արտգործնախարար Իսմայիլ Սեմը հայտարարեց, թե հայոց ցեղասպանության ճանաչումը վատ կազդի թուրք - ֆրանսիական հարաբերությունների վրա: «Le Monde»-ը տպագրում էր նաև թուրքական լրատվամիջոցների զայրույթով լի արձագանքը: Նրանք աղաղակում էին. «Ֆրանսիան վտանգավոր խաղ է խաղում, որը ձեռնտու չէ ոչ մի կողմի համար»¹¹⁴: Ի վերջո, Թուրքիան դադարեցրեց բոլոր տեսակի համագործակցությունները Ֆրանսիայի հետ, չեղյալ համարվեցին կնքված պայմանագրերը առևտրի, քաղաքականության, տնտեսության, պաշտպանության ոլորտներում: Թուրքիայի այս քայլերն աննպատակ չէին: Հայկական հարցը Ազգային ասամբլեայում քննարկվելուց հետո պետք է լսվեր նաև Սենատում և հաստատվեր նախագահի կողմից: Միայն դրանից հետո ցեղասպանության ճանաչումը կարտահայտեր Ֆրանսիայի Հանրապետության պաշտոնական կարծիքը:

Թուրքիայի ճնշումներն իզուր չանցան: 1999 թ. մարտի 12-ին «Le Monde»-ում լույս տեսած «Le gouvernement refuse d'inscrire le «génocide arménien» á l'ordre du jour du Senat» հոդվածը հավաստում է, որ ֆրանսիական կառավարությունը մերժում է Սենատի օրակարգում հաստատել հայոց ցեղասպանության ընդունման հարցը: Օրաթերթն այս լրատվությունը ներկայացնում է առանց մեկնաբանության, բայց դրան զուգահեռ տպագրում է հոդվածներ, որոնցում 1915 թ. դեպքերը մատուցվում են ազդեցիկ մանրամասներով: Նման քայլը, թերևս, կարելի է որակել իբրև յուրօրինակ անհամաձայնություն ֆրանսիական կառավարության որոշմանը: Մասնավորապես, Պատրիկ Քեշիշյանի՝ 1999 թ. սեպտեմբերի 11-ին լույս տեսած ակնարկը ներկայացնում է պատմաբան Ժիլ Լուսակին, որն ազգությամբ հայ է՝ ծնված Անատոլիայում: Թերթը նրան բնորոշում է «ցեղասպանության պատմության ժառանգորդ», «հայկական ջերմության մարմնացում» որակումներով: Այստեղ հայ ազգը ներկայանում է իր լավագույն որակներով և կրած տառապանքներով:

¹¹⁴ «La presse turque dénonce le «baiser de la France aux Arméniens», LE MONDE, 2 juin 1998.

Վրդովված էր նաև ֆրանսահայ համայնքը: Կազմակերպվում էին ցույցեր Փարիզում ու Լիոնում, երթեր դեպի Սենատ, նստացույց Լյուքսեմբուրգյան պալատի դիմաց: «Le Monde»-ն արձագանքում էր հայկական համայնքի ձեռնարկած բոլոր քայլերին, նրանց հայտարարություններին ու կոչերին: Հայերը մեղադրում էին հատկապես այն քաղաքական գործիչներին, որոնք խոստացել էին աջակցել ցեղասպանության ճանաչմանը: Այս առիթով «Le Monde»-ը շահարկում էր մասնավորապես եվրահարցերով պատվիրակ - նախարար Պիեր Մոսկովիչիի անունը, որը դեռևս 1998 թ. Բուրբոնյան պալատում հավաստիացնում էր, թե 1915 թ. ջարդերն ունեն ցեղասպանության բնույթ, իսկ երկու տարի անց ստիպված էր Լյուքսեմբուրգում պատճառաբանել, թե ինչու է Սենատը մերժում հայերի կողմից այնքան սպասված հարցի քննարկումը:

Ի վերջո՝ 2000 թ. հոկտեմբերին Սենատը որոշեց քննել ցեղասպանության ճանաչման հարցը: Հայկական հարցի պաշտպանության կոմիտեն տարավ առաջին հաղթանակը: Սակայն «Le Monde»-ի էջերում արտահայտվեց այն կարծիքը, թե դա կարող է խորամանկ քայլ լինել սենատորների կողմից: 2001 թ. Փարիզում պետք է անցկացվեին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, և սա հրաշալի առիթ էր քաղաքում մեծ թիվ կազմող հայերի ձայները շահելու համար: Հայկական հարցը Սենատի օրակարգում հաստատելուն կողմ էին քաղաքական աջ ուժերի մեծամասնությունը և ձախերի փոքրամասնությունը, դեմ էին արտահայտվում միայն կենտրոնամետ ուժերը:

Արդեն 2000 թ. նոյեմբերի 8-ին Սենատը քննարկում էր 1915 թ. հայոց ցեղասպանության ճանաչման հարցը: Կազմվեց համապատասխան տեքստ, որը դրվեց քվեարկության: Այն ընդունվեց 164 կողմ և 40 դեմ ձայնով: «Le Monde»-ը հատկապես ազդեցիկ է նկարագրում Սենատի պատերից դուրս կատարվածը. «Հարյուրավոր հայեր, որ շրջապատել էին Սենատը, երգում էին «Marseillaise»-ը (Ֆրանսիայի Հանրապետության հիմնը) և ծափահարում սենատորներին»¹¹⁵: Իսկ դեկտեմբերի 13-ին մեծ հայր՝ Շառլ Ազնավուրը, հանդես եկավ շնորհակալական համերգով, որին հրավիրված էր նաև երկրի նախագահ Ժակ Շիրակը: Վերջինս

¹¹⁵ Clarisse F., «Le Sénat a voté la proposition de loi reconnaissant le génocide arménien de 1915», LE MONDE, 9 novembre 2000.

համերգից հետո հարյուրավոր վկաների առաջ պարտավորվեց շուտով հրապարակել հայկական ցեղասպանությունը ճանաչող օրենքը:

2001 թ. հունվարի 18-ին օրենքը վերահաստատվեց Ազգային ասամբլեայում, իսկ արդեն հունվարի 29-ին հաստատվեց Ֆրանսիայի Հանրապետության նախագահի կողմից. Ֆրանսիան պաշտոնապես ճանաչեց 1915 թվականի հայոց ցեղասպանությունը:

Սա վճռական քայլ էր հայկական հարցի լուծման ճանապարհին, ինչը, «Le Monde»-ի կարծիքով, պարտավորեցնում էր Թուրքիային ճանաչել և ընդունել անցյալի սխալները: «Միայն այդ դեպքում նա կարող է թողնել զարգացած երկրի տպավորություն, որն ընդունակ է հարգել մարդու իրավունքները»¹¹⁶, - գրում է թերթը 2000-ի նոյեմբերի 17-ին:

Թուրքիան ոչ միայն չընդունեց նախորդների սխալները, այլև Ֆրանսիայի այս քայլը որակեց իբրև նախընտրական մանևր և նորից դադարեցրեց բոլոր դիվանագիտական, առևտրական հարաբերությունները, իսկ 2000 թ. հունվարի 18-ը հայտարարեց «ազգային ամոթի օր» Ֆրանսիայի համար: Սակայն Թուրքիայի զայրույթը չէր կարող շարունակական լինել, քանի որ Ֆրանսիայի հետ բավական արժեքավոր պայմանագրերի խզումը նրան կանգնեցրեց տնտեսական ճգնաժամի առջև: Բացի այդ, նա ակնկալում էր Ֆրանսիայի օգնությունը եվրակառույցներին ինտեգրվելու գործում: Թուրքիայի արտակարգ և լիազոր դեսպանը Ֆրանսիայում, որը ետ էր կանչվել դեռևս 2000 թ. դեկտեմբերին, վերադարձավ Փարիզ: Սա նշանակում էր, որ Թուրքիան վերականգնում է դիվանագիտական հարաբերությունները Ֆրանսիայի հետ: Ավելի ուշ վերականգնվեցին նաև տնտեսական բոլոր պայմանագրերը:

Օրաթերթում մեծ ուշադրության են արժանանում նաև հայոց ցեղասպանությանը նվիրված երկու ֆիլմերը՝ Անրի Վերնոյի «Մայրիկ»-ը և Ատոմ Էգոյանի «Արարատ»-ը: «Le Monde»-ը տարբեր առիթներով անդրադառնում է ֆիլմերին՝ քննելով դրանք իբրև գեղարվեստական գործեր, ներկայացնելով դրանց առաջ բերած արձագանքը ողջ աշխարհում և հատկապես Թուրքիայում:

¹¹⁶ Rafaele R., «Le Parlement européen reste divisé sur la Turquie», LE MONDE, 17 novembre 2000.

Օրաթերթը հատուկ անդրադարձավ Անրի Վերնոյի մահվանը (2002 թ. հունվարի 11)՝ ներկայացնելով նրա ստեղծագործական ուղին և կյանքի պատմությունը: Իսկ Ատոմ Էգոյանի հանդեպ հետաքրքրությունը մեծացավ հատկապես 2002 թ. մայիսին, երբ «Արարատ»-ը մասնակցեց Կաննի կինոփառատոնին: «Le Monde»-ը տպագրեց տասնյակ հոդվածներ՝ նվիրված Էգոյանի կենսագրությանն ու ստեղծագործական կյանքին: Նրա «Արարատ»-ն արժանացավ ամենաբարձր գնահատանքի:

«Le Monde»-ն անընդմեջ ակնարկում է, որ հայոց ցեղասպանության ճանաչումը Թուրքիայի համար պարտադիր նախապայման է եվրակառույցներին ինտեգրվելու գործում: Այս միտքը, որ առաջին անգամ արտահայտվեց Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցության կողմից, հանդիպում է օրաթերթի տարբեր ժամանակներում հրապարակած բազմաթիվ հոդվածներում: 2004 թ. հոկտեմբերին Եվրոպական հանձնաժողովը պետք է քննարկեր Թուրքիայի՝ Եվրամիությանը անդամակցելու հարցը: Հուլիսին Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիբ Էրդողանը ժամանել էր Փարիզ՝ նպատակ ունենալով ստանալ Ֆրանսիայի պաշտոնական աջակցությունն այս խնդրում: Փարիզյան օրաթերթերը շատ բուռն արձագանքեցին վարչապետի այցին՝ մատնանշելով այն բոլոր խնդիրները, որոնք պետք է լուծի Թուրքիան իր նվիրական նպատակին հասնելու համար: Նրանք պնդում էին, թե այս երկիրը դեռ պետք է կարգավորի իր տարածքում ազգային փոքրամասնությունների շահերի պաշտպանության հարցը, Սահմանադրության մեջ կատարի արմատական փոփոխություններ, իշխանական համակարգում մեծացնի խորհրդարանի դերը և վերջապես՝ ճանաչի 1915 թ. հայոց ցեղասպանությունը («Le premier ministre turc présente à Paris le nouveau visage de son pays», Le Monde, 21 juillet, 2004): Նկատենք՝ հատկապես վերջին պայմանը Կոպենհագենի առաջարկած չափանիշների շարքում չէ, այլ ընդամենը ֆրանսիական լրատվամիջոցների և մասնավորապես «Le Monde»-ի տեսակետն է:

Մեծ եղեռնի 90-րդ տարելիցն արժանացավ աշխարհի տարբեր լրատվամիջոցների ուշադրությանը: Նրանք պնդում էին՝ գործ ունենք աննախադեպ ոճրագործության հետ, որը ոչ մի եզր չունի ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքների հետ: Ապրիլի 22-24-ը «Le Monde»-

ը հանդես եկավ ցեղասպանության 90-րդ տարելիցին նվիրված յոթ բավականին ծավալուն հոդվածներով, էլեկտրոնային տարբերակը վերատպեց օրաթերթի էջերում նախորդ տարիներին լույս տեսած, թեմային վերաբերող առավել արժեքավոր հոդվածները:

«Հայաստանի հայերը (3,2 մլն) և աշխարհասփյուռ հայ համայնքը (ավելի քան 3 մլն, որից 400000-ը Ֆրանսիայում) ապրիլի 23-ին և 24-ին հիշատակելու են Օսմանյան կայսրության կողմից իրենց ժողովրդի հանդեպ իրականացված ջարդերի 90-ամյակը»¹¹⁷, - գրում է թերթը ապրիլի 22-ի համարում: Հաջորդ օրերին «Le Monde»-ը ներկայացնում է, թե ինչպես նշվեց այդ տխուր օրը Հայաստանում և Ֆրանսիայում, խոսում է հայ - թուրքական հարաբերությունների, ցեղասպանության համընդհանուր ճանաչմանն ուղղված աշխատանքների մասին:

«Ֆրանսիայի Հանրապետության նախագահը առաջին անգամ մասնակցեց հայոց ցեղասպանության զոհերի հիշատակման արարողությանը»¹¹⁸, - արձանագրում է թերթը ապրիլի 23-ին՝ անդրադառնալով ժակ Շիրակի և Ռոբերտ Քոչարյանի այցելությանը Ֆրանսիայում 1915 թ. եղեռնը խորհրդանշող Հայր Կոնիտասի արձանին: «Le Monde»-ը ներկայացնում է Շիրակի ելույթն այս առիթով և արձանի մոտ հավաքված հազարավոր ֆրանսահայերի արձագանքը: Թերթի լրագրող Իվ Օդեն գրուցում է նրանցից մի քանիսի հետ: Բոլորն էլ այն կարծիքին են, որ «սա ուժեղ քայլ էր Ֆրանսիայի Հանրապետության նախագահի կողմից», և որ «Ֆրանսիան չպետք է աջակցի Թուրքիային՝ Եվրամիությանը վերջինիս անդամակցության հարցում»: Օդեն ներկայացնում է այն երկրների ցուցակը, որոնք ճանաչել են 1915 թ. ցեղասպանությունը, վերջում հիշեցնում, որ ապրիլի 24-ին ժամը 15-ին, ի հիշատակ ոճրագործության զոհերի, պատարագ է մատուցվելու Փարիզի Աստվածամոր տաճարում, իսկ ժամը 17-ին նախատեսված է հավաք Կանադայի հրապարակում գտնվող Կոնիտասի արձանի առջև:

Այսօր, երբ Թուրքիան պայքարում է Եվրամիությանն անդամակցելու համար, «Le Monde»-ը կասկածի տակ է առնում վերջինիս ժողովրդավարական երկիր

¹¹⁷ «Entre 1915 et 1917, 1,5 million de morts», LE MONDE, 22 avril 2005.

¹¹⁸ Eudes Y., «Pour la première fois, Jacques Chirac participe à la commémoration du génocide arménien», LE MONDE, 23 avril 2005.

լինելու փաստը. «Թուրքիան մի հասարակություն է, որը երբեք չի հասկացել, թե ինչ է ժողովրդավարությունը»¹¹⁹, - գրում է թերթը ապրիլի 24-ի համարում՝ կրկնելով «Turkish Daily News» թուրքական օրաթերթում դեռևս 1977 թվին արտահայտված միտքը: «Le Monde»-ն, իհարկե, հարցը քննում է իրեն հատուկ նրբանկատությամբ՝ բերելով նաև Թուրքիայի՝ ժողովրդավարական պետություն լինելու փաստեր. օրինակ՝ այն, որ այս երկիրն առաջիններից էր, որտեղ կանայք ստացան քվեարկելու հնարավորություն (1934 թ.-ին, երբ նույնիսկ ֆրանսուհիները դեռ չէին քվեարկում): Թերթը հատկապես մեղադրում է այն թուրք մտավորականներին, ովքեր դեռ էին դուրս եկել գրող Օրհան Փամուկին միայն այն պատճառով, որ վերջինս շվեյցարական մի թերթի հայտնել էր, թե «1915-1923 թվականներին 1 մլն հայ և 30000 քուրդ է սպանվել Թուրքիայում», այսինքն՝ տրամադրել էր ճշմարտությանը մոտ տվյալներ: Թերթը բավականին մեղմ է արտահայտվում այս առիթով, բայց ենթատեքստը պարզ է. ինչպե՞ս կարող է ժողովրդավարական սկզբունքներից խոսքի ազատությունը անտեսող, իրական փաստերն աղավաղող, նախորդների սխալները չընդունող մտավորական ունեցող պետությունն ինտեգրվել եվրակառույցներին: Ի դեպ, այս միտքը թերթի նույն օրվա համարում երկու տարբեր հոդվածներով միաժամանակ առաջ են քաշում պատմաբաններ Վինսեն Դուկլետը և Ֆիլիպ Վիդելիեն:

Ապրիլի 24-ին լույս տեսած մեկ այլ հոդված («L'UE ne lie pas les négociations d'adhésion de la Turquie à la reconnaissance du génocide» («ԵՄ-ն Թուրքիայի անդամակցության բանակցությունները չի կապում ցեղասպանության ճանաչման հետ») ներկայացնում է ժողովրդավարության և արդարության եվրահայկական ֆեդերացիայի՝ Բրյուսելում հնչեցրած կոչը՝ ուղղված Եվրամիությանը՝ հայոց ցեղասպանության ճանաչման հարցը քննարկել Թուրքիայի հետ բանակցությունների ընթացքում: Թերթը թվարկում է քաղաքական այն գործիչների անունները, ովքեր բազմիցս առաջ են քաշել այս հարցը. Ֆրանսուա Բերնարդ Լեհիդո (պնդում էր, թե «չի կարելի վերսկսել բանակցությունները Թուրքիայի հետ, քանի դեռ այն ոչինչ չի ասել հայոց ցեղասպանության

¹¹⁹ Duclert V., «Le génocide des Arméniens et l'honneur des intellectuels turcs», LE MONDE, 24 avril 2005.

վերաբերյալ»), Պոլ–Մարի Կոտո (բազմիցս արտահայտել է իր զարմանքը. «Ինչու՞ այդքան համառությամբ մերժել ակնհայտ ցեղասպանությունը»), Բրիտանիք Ջեյմս Չագ Ալիստեր (նրա խոսքերն են. «Թուրքիան քարշ է տալիս իր ամոթալի պատմությունը»), Կիպրիոտ Իոանիս Կասուլիոդես (այն կարծիքին է, թե «Եվրամիությունը պարտավոր է ստիպել Թուրքիային, որ վերջինս ճանաչի հայոց ցեղասպանությունը»)¹²⁰:

«Le Monde»-ն անդրադարձել է նաև ցեղասպանության 90-րդ տարելիցի առիթով Չայաստանում տեղի ունեցած իրադարձություններին. «Չարյուր հազարավոր հայեր՝ կակաչներ, նարգիզներ, մեխակներ ձեռքներին, բարձրանում էին դեպի Ծիծեռնակաբերդի բարձունք: Լուռ արտասվելով՝ նրանք ծաղիկները դնում էին անմար կրակի շուրջ՝ ի հիշատակ 1915 թ. ցեղասպանության զոհերի: Այս բարձունքից պարզ երևում է Արարատ լեռը, որը տեղակայված է Թուրքիայի արևելյան մասում և որի շրջակայքում էլ իրականացվել են ջարդերը...»¹: Ֆրանսիական օրաթերթը ներկայացնում է նաև Ծիծեռնակաբերդ այցելողների խոսքը. «Արդեն 30 տարի է, ինչ ես ապրիլի 24-ին առավոտ վաղ գալիս եմ այստեղ՝ բերելով 6 հատ կակաչ: Այդքան մարդ է զոհվել իմ ընտանիքից ցեղասպանության ժամանակ,- վկայում է Մխիթար Չարությունյանը՝ մոտենալով հուշակոթողին, որի վրա տեղադրված է մեծ ցուցանակ՝ ցեղասպանությունը ապրած 90 հայերի նկարներով: Ոճրագործություն, որի համար դեռ ոչ ոք պատասխան չի տվել և անգամ ներողություն չի խնդրել»¹²¹, - գրում է թերթը: «Le Monde»-ն անդրադառնում է նաև Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն Մեծ եղեռնի զոհերի հիշատակին մատուցված պատարագին, Երևանի փողոցներում կազմակերպված 1,5 միլիոնանոց ցույցին (բացատրելով, որ 1,5 միլիոնը խորհրդանշում է ցեղասպանության զոհերի թիվը), ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի ելույթին: Իրադարձային ակնարկի ժանրով գրված այս նյութը բավական հուզիչ է և ազդեցիկ: Այն ներկայացնում է 2005 թ. ապրիլի 24-ի Երևանը՝ ոչ միայն տեղի ունեցած իրադարձություններով, այլև այստեղ տիրող համընդհանուր հուզմունքի,

¹²⁰ Ferenczi T., «L'UE ne lie pas les négociations d'adhésion de la Turquie à la reconnaissance du génocide», LE MONDE, 24 avril 2005.

¹²¹ «L'Arménie commémore les 90 ans du génocide», LE MONDE, 24 avril 2005.

տխրության, համերաշխության մթնոլորտով: Ի դեպ, նյութը գրելիս թերթն օգտվել է միաժամանակ երկու լրատվական գործակալություններից (AFP և Reuters):

Հայոց եղեռնի մերժումը դատապարտելու՝ սոցիալիստ պատգամավորների պահանջի մասին թերթը գրում էր դեռևս 2006-ի մայիսից, երբ Ֆրանսիայի Հանրապետության Ազգային ասամբլեայում նոր-նոր քննարկման էր դրվում ոճրագործության ժխտումը դատապարտող օրենքը: «Le Monde»-ը արձանագրում է օրենքի քննարկման հետաձգումը՝ դա կապելով Ֆրանսիայի արտագործնախարարի տարածած մի փաստաթղթի հետ, որտեղ ներկայացված են ֆրանս-թուրքական տնտեսական հետաքրքրությունները¹²²:

2006-ի հոկտեմբերի 10-ից թերթը գրում է հոկտեմբերի 12-ին կայանալիք՝ Հայոց եղեռնի մերժումը դատապարտող օրենքի քննարկման մասին՝ բազմանշանակ փաստելով, որ Ազգային ասամբլեայի նախագահ Ժան-Լյուի Դեբրեն այդ օրը չի նախագահելու, նաև նշելով, որ այս օրենքը լրացումն է 2001-ի հունվարի 29-ին ընդունված Հայոց ցեղասպանության ճանաչման մասին օրենքի: Արդեն հոկտեմբերի 12-ի համարում «Le Monde»-ը գրում է. «Հոկտեմբերի 12-ին 106 կողմ և 19 դեմ ձայներով պատգամավորները առաջին ընթերցմամբ ընդունեցին սոցիալիստական պատգամավորական խմբի առաջարկած օրենքը, որը մեղադրում է 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը ժխտողներին»¹²³: Թերթը քննում է նաև օրենքի ընդունումից հետո առկա տարածայնություններն ու թուրքիայի սպառնալիքները, որոնք կարող էին խանգարել օրենքի վերջնական ընդունմանը. չէ՞ որ այն դեռ պետք է քննարկվեր Սենատում, ապա երկրորդ ընթերցման համար նորից մտներ Ազգային ասամբլեա:

«Ակոս» թերթի խմբագիր Հրանդ Դինքի սպանությանը «Le Monde»-ը արձագանքեց հինգ տասնյակից ավելի հոդվածներով: Թերթը հավաստում է՝ թուրքաբնակ հայազգի լրագրողի սպանության պատճառը վերջինիս ջանքերն էին՝ ուղղված հայոց ցեղասպանության ճանաչմանը: «Le Monde»-ը Դինքին որակում է «խաղաղության մարդ», նրա սպանությունը՝ «լուրջ վտանգ թուրքիայի

¹²² «Question arménienne: les risques économiques français en Turquie», LE MONDE.FR, 22 mai 2006.

¹²³ «Les députés pénalisent la négation du génocide arménien», LEMONDE.FR, 13 octobre 2006.

ժողովրդավարության համար»¹²⁴: Ավելի ուշ, զարգացնելով միտքը, հավաստում, թե «վախը հաղթում է արդեն նաև թուրք մտավորականներին»՝ խոսելով այն մասին, որ թուրք գրող, Նոբելյան մրցանակակիր Օրհան Փամուկը, ով համարձակություն էր ունեցել բարձրաձայնել իրականությունը, Դինքի սպանությունից հետո մեկնել է Միացյալ Նահանգներ¹²⁵: Թերթը ազդեցիկ մանրամասներով նկարագրում է հայազգի լրագրողի հուղարկավորության արարողությունը, դրան ներկա միլիոնավոր մարդկանց արձագանքը, նաև ընտանիքի սպասումները՝ գտնել և պատժել մեղավորներին:

Ֆրանսիական օրաթերթը, անդրադառնալով հայ - թուրքական ներկա հարաբերություններին, գտնում է, որ «այս երկու ազգությունների թշնամանքը նրանց համար դարձել է հոգեբանական առանձնահատկություն: Իրեն չենթարկվող զավակին թուրք մայրն ասում է՝ դու հայ չե՞ս պատահաբար, իսկ հայ մայրերն իրենց չարաճճի բալիկներին միշտ այսպես են վախեցնում՝ եթե խելոք չմնաս, թուրքը կգա քեզ կտանի»¹²⁶: Բացասական տրամադրվածությունն ունի պատմական հիմքեր: Սակայն «Le Monde»-ը կարծում է, որ այն «դեռևս երկշոտ քայլերը», որ արվում են երկու պետությունների կողմից, կարող են նրանց բերել ընդհանուր հայտարարի: Երկշոտ քայլեր ասելով՝ թերթը մի քանի տարի առաջ նկատի ուներ «Անկարայի առաջարկը՝ ստեղծել պատմաբանների միասնական հանձնաժողով, որը կքննի Հայաստանի և Թուրքիայի պատմական արխիվներն ու կբացահայտի 1915 թ. իրադարձությունների իրական պատկերը, նույն նպատակով 2005 թ. ապրիլի 23-ին Փարիզի քաղաքապետարանում երկու թուրք պատմաբանների՝ Ռաջիբ Ջակուլլայի և Ալի Էրտեմի հանդիպումը ֆրանսահայ համայնքի ներկայացուցիչ Արա Թորոսյանի հետ, ինչպես նաև 2004 թ. դեկտեմբերին Թուրքիայի Հանրապետության վարչապետ Ռեջեփ Թայիբ Էրդողանի կողմից Ստամբուլի Սուրբ Փրկիչ հայկական հիվանդանոցի թանգարանի բացումը»:

¹²⁴ «L'assassinat de Hrant Dink, une menace pour la démocratie en Turquie», LE MONDE, 24 janvier 2007.

¹²⁵ Shihab S., «La peur gagne les intellectuels turcs, menacés par les nationalistes», LE MONDE, 9 février 2007.

¹²⁶ Jégo M., Minassian G., «Entre Turcs et Arméniens, de timides avancées malgré tout», LE MONDE, 24 avril 2005.

Իսկ արդեն Թուրքիայի Հանրապետության նախագահի՝ 2008-ի սեպտեմբերի այցելությունը Հայաստան «Le Monde»-ը լուսաբանեց մոտ մեկ տասնյակ հրապարակումներով: Դեռևս նախքան այցելությունը օրաթերթը գրում է. «Երկու երկրները, որ դադարեցրել էին հարաբերությունները արդեն 15 տարի, մերձեցման համար «խայծ» են ընտրել Հայաստանում կայանալիք ֆուտբոլային հանդիպումը»¹²⁷: Արձանագրվում է նաև, որ Թուրքիայի Հանրապետության նախագահ Աբդուլա Գյուլը, անակնկալի եկած, մի պահ հապաղել է համաձայնել: Հանդիպման նախօրեին թերթը ներկայացնում է սպասվելիք միջոցառման մանրամասները՝ չմոռանալով հիշեցնել, որ երկարատև անհամաձայնության պատճառը երկու երկրների միջև «միլիոնավոր հայերի ցեղասպանությունն է՝ իրականացված 1915-ին Օսմանյան կայսրության կողմից»¹²⁸:

Թերթը քաղաքական այս քայլը համեմատում է 1970-ականների չին-ամերիկյան «պինգ-պոնգի դիվանագիտության» հետ և հույս հայտնում, որ այն կբերի երկու երկրների հարաբերությունների կարգավորմանը:

Ի դեպ, «Le Monde»-ի լրագրող Գիյոմ Պերիեն այդ օրերին եղել է Հայաստանում և անձամբ է հետևել իրադարձություններին: Նրա աչքից չեն վրիպել «հայոց ցեղասպանության հուշարձանի դեպի վեր խոյացող ձողը, որը երևում էր մարզադաշտից՝ հայացքը մի փոքր վեր բարձրացնելու դեպքում», «մարդկանց մեջ «պտտվող» թերթիկները, որոնք կոչ էին անում Թուրքիային ճանաչելու 1915 թ. ջարդերը», նաև ցուցանակը, որ հավաստում էր. «Եղբայրություն առանց սահմանների»¹²⁹:

Հայ-թուրքական հարաբերությունները կրկին քննարկման նյութ դարձան 2009-ի ապրիլին, երբ ողջ աշխարհը սպասում էր Օբամայի արձագանքին հայոց ցեղասպանությանը: Թերթը մանրամասն ներկայացնում է ԱՄՆ նախագահի ելույթը Թուրքիայում, նրա ցանկությունը՝ «շուտով տեսնելու երկու երկրների երկխոսության պտուղները», ինչպես նաև խոսափող տրամադրում Փարիզ-VIII համալսարանի

¹²⁷ Perrier G., «Visite historique du président turc près de la frontière avec l' Arménie, fermée depuis 1993», LE MONDE, 26 Juillet 2008.

¹²⁸ «Pour la première fois, un président turc va se rendre en Arménie», LE MONDE.FR, 3 septembre 2008.

¹²⁹ Perrier G., «La «diplomatie du football» rapproche la Turquie et l'Arménie», LE MONDE, 9 septembre 2008.

հետազոտությունների կենտրոնի տնօրեն Ռեյմոնդ Գևորգյանին. «Օբաման ապացուցեց իր հնարամտությունը»¹³⁰:

Մենք փորձեցինք հնարավորինս սեղմ և ամբողջական ներկայացնել 1915 թ. հայոց ցեղասպանությանը վերաբերող այն նյութերը, որոնք տպագրվել են «Le Monde»-ում 1987 թվականից մինչ օրս: Աշխատեցինք դեպքերը ներկայացնել այնպես, ինչպես մատուցել է օրաթերթը: Մեր նպատակն էր ուրվագծել այն պատկերը, որը թերթը կառուցել է իր ընթերցողի համար: Խնդրին նայել ենք «Le Monde»-ի ընթերցողի աչքերով և մեկնաբանել հենց նրա տեսանկյունից¹³¹:

Չետաքրքիր է, որ 2001 թվականից «Le Monde»-ի էջերում նվազում են եղեռնի թեմայով նյութերը: Եթե հաշվի առնենք, որ հենց 2001-ի տարեսկզբին Ֆրանսիան պաշտոնապես ճանաչեց հայոց ցեղասպանությունը, ապա կարելի է ենթադրել, որ սա թերթի կողմից իր առջև դրված ոչ ուղղակի նպատակ էր, որն, ի վերջո, իրագործվեց:

Արցախյան հիմնահարցը նույնպես բազմիցս արծարծվել է «Le Monde»-ի էջերում: Սակայն եթե հայոց ցեղասպանության խնդրում օրաթերթն ուներ ոչ պաշտոնական, սակայն հստակ կողմնորոշում, ապա արցախյան խնդիրը քննելիս թերթի մոտեցումը չի երևում: Ղարաբաղյան շարժման առաջին օրերից «Le Monde»-ն արձանագրում է այս խնդրի բոլոր մանրամասները՝ հաճախ արտահայտելով տարբեր, ծայրահեղ տեսակետներ: Նկատեցինք, որ հայոց ցեղասպանությանն անդրադառնալիս ևս թերթն ապահովում էր հակադիր կարծիքներ, այնուհանդերձ, հողվածներն ընդհանրության մեջ քննելիս թերթի կողմնորոշումն ակնհայտ էր. ցեղասպանությունը մերժող մեկ հողվածին հաջորդում էր հակառակն ապացուցող տասը հրապարակում: Անգամ տպավորություն էր ստեղծվում, թե դեմ հողվածները տպագրվում են հարցին հնչեղություն տալու նպատակով: Նույնը չի կարելի ասել արցախյան խնդիրը լուսաբանող նյութերի մասին: Մեր կարծիքով՝ պատճառն այն է, որ այս թեման ավելի քիչ է ուսումնասիրված «Le Monde»-ի կողմից, քան նախորդը: Դրա վկայությունն է նաև

¹³⁰ Ané Cl., «Génocide arménien: "En Turquie, Obama a fait preuve d'habileté"», LE MONDE.FR, 06 avril 2009.

¹³¹ Տե՛ս նաև՝ Մենենշյան Ա., «Հայոց ցեղասպանության թեման «Le Monde»-ի էջերում», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» օրաթերթ, 2005 թ. մայիսի 5-ի և 6-ի համարներ:

հետևյալ փաստը. եթե ցեղասպանությանը վերաբերող հողվածները հիմնականում հեղինակային նյութեր էին, թերթի շատ լրագրողներ ծանոթ էին խնդրին և լուսաբանում էին այն, ապա դարաբաղյան խնդիրն ու անկախության գործընթացը ներկայացվում են հիմնականում լրատվական գործակալություններից վերցված նյութերով: Շատ քիչ լրագրողներ են գրում այս թեմայով (Գետա Բերնարդ, Սոֆի Շիհաբ և ուրիշներ): Նրանց նյութերն էլ փոքր թիվ են կազմում. 20-30 հոդվածից միայն մեկն է հեղինակային:

Ղարաբաղյան շարժումը ներկայացնող առաջին հրապարակումները (1988 թ. փետրվար - մարտ ամիսներ) հիմնականում փոքրիկ լրատվություններ են, որոնք ներկայացնում են Երևանում ու Ղարաբաղում անցկացվող առաջին ցույցերը, հնչած կոչերը, Սոսկվայի արձագանքը այս ամենին:

«Le Monde»-ը զարմանալիորեն քիչ է անդրադարձել 1988 թ. փետրվարի 28-ի սուևագայիթյան դեպքերին՝ տպագրելով մեկ - երկու փոքրիկ հոդված, այն էլ դեպքերից օրեր անց: 1988-ի մարտի չորսին Գետա Բերնարդի «URSS. En Azerbaïdjan les troubles de Sumgait ont fait plusieurs morts» («ԽՍՀՄ: Ադրբեջանում սուևագայիթյան խառնաշփոթը հանգեցրեց բազմաթիվ մահերի») հոդվածը նախ պատմում է փետրվարի 28-ին «ադրբեջանական այս կարևոր արտադրական կենտրոնում» տեղի ունեցած դեպքերի մասին, որոնց զոհը դարձան բազմաթիվ մարդիկ, ապա հավաստում, որ տարածքում պատերազմական գործողություններն արդեն դադարել են:

Նույն տարվա մարտի 6-ի համարում պատմվում է Սուևագայիթ քաղաքի մասին ընդհանրապես, որն իր 200000 բնակիչներով, նավթի հանքերով և սինթետիկ կաուչուկի մեծ գործարանով Ադրբեջանի արդյունաբերական կենտրոններից է համարվում: Հողվածներից ոչ մեկում չի նշվում մահացածների ստույգ թիվը և ազգությունը:

Մարտի 8-ին լույս տեսած մեկ այլ հոդվածում «Le Monde»-ը կարծես արդարանում է իր հաղորդած ոչ լիարժեք լրատվության համար. «Կովկասյան տարածաշրջանի իրավիճակի վերաբերյալ լուրերը տարբեր են, հաճախ՝ իրարամերժ: Բազմաթիվ աղբյուրներ կասկածի տակ են առնում Խորհրդային

Միության SUU լրատվական գործակալության հրապարակած փաստերը սունգայիթյան դեպքերի վերաբերյալ»¹³².

Այս օրերին «Le Monde»-ը տպագրում է ադրբեջանցի երիտասարդ ուսանողների զրույցը Մոսկվայի թեյարաններից մեկում, որի միջոցով պարզ ցույց է տալիս ադրբեջանցիների դիրքորոշումն ու սպասումները. «Չայերը երբեք չեն վերցնի Ղարաբաղը: Եթե չհամակերպվեն այդ մտքի հետ, ապա պատերազմ կլինի, և նրանք դա գիտեն: Մեզ կպաշտպանեն Թուրքիայի և Իրանի մեր եղբայրները: Պատերազմը չի վախեցնի Ալիին»¹³³, - հայտարարում է ադրբեջանցի ուսանողը:

Օրաթերթն անդրադառնում է նաև խորհրդային իշխանությունների դիրքորոշմանը. 1988 թ. մարտի 10-ին Կենտկոմի մոսկովյան գրասենյակում նիստ էր հրավիրվել կովկասյան ազգությունների միջև հակամարտությունները քննելու և ճգնաժամից դուրս գալու ուղիներ գտնելու նպատակով: «Le Monde»-ի հավաստմամբ՝ ռուսները ստեղծված իրավիճակը վերահսկելու համար պարզապես հույս էին տալիս հայերին, թե նրանք կարող են հասնել Ղարաբաղի կարգավիճակի փոփոխության: Ըստ էության, թերթն անհնար էր համարում Ղարաբաղի կարգավիճակի փոփոխությունը և չէր հավատում Մոսկվայի խոստումներին:

«Le Monde»-ի էջերում մանրամասնորեն նկարագրվում են հայերի կազմակերպած ամենօրյա ցույցերը Ղարաբաղում, Երևանում, Մոսկվայում, Փարիզում: 1988 թ. մարտի 23-ի «Meeting de solidarité à Paris» («Չամերաշխության միտինգ Փարիզում») հոդվածում ներկայացվում է մարտի 21-ի երեկոյան Փարիզի Մուտուալիտե պալատում անցկացված միտինգը, որին մասնակցում էր 11–12 հազար մարդ: «Նրանք եկել էին ցույց տալու իրենց համակարծրությունը Ղարաբաղի հայերի և նրանց պահանջների հանդեպ», - գրում է թերթը:

Առավել տպավորիչ են ներկայացվում երևանյան ցույցերը, որոնց մասնակցում են հարյուր հազարավոր մարդիկ: Չաճախ նկարագրվում են

¹³² «URSS. Après les affrontements ethniques au Caucase Des signes d'agitation persistent dans plusieurs villes», LE MONDE, 8 mars 1988.

¹³³ «Ali, Azerbaïdjanais : " Chez nous, c'est déjà la guerre"», LE MONDE, 8 mars 1988.

Ազատության հրապարակում ելույթ ունեցողները, մարդկանց ոգևորությունն ու միասնական ոգին, նրանց պահանջները:

«Le Monde»-ն անդրադառնում է նաև իր խորհրդային գործընկերների աշխատանքին՝ մեղադրելով նրանց Ղարաբաղյան շարժման ոչ ճշմարտացի մեկնաբանության մեջ: Օրաթերթի կարծիքով՝ «խորհրդային մամուլը մեջք է դարձնում ճշմարտությանը, ձևափոխում և աղավաղում այն իրողությունները, որոնք տեղի են ունենում Հայաստանի և Ադրբեջանի խորհրդային հանրապետություններում»¹³⁴:

Խորհրդային գրաքննությունն, ինչպես գիտենք, ջանք չէր խնայում ապացուցելու համար, որ Խորհրդային Միությունում ոչ մի վատ բան տեղի չի ունենում, ինչն անհասկանալի էր անկախ և օբյեկտիվ մամուլի օրգանին: Ավելի ուշ, իր «Le correspondant de la " Pravda " en Arménie suspendu de ses fonctions» («Սրաւա»-ի հայաստանյան թղթակիցը հրաժարվել է աշխատանքից») հոդվածում թերթը պիտի մեծ զարմանքով արձանագրեր, որ ռուսական «Սրաւա»-ն հանդգնել է հոդված տպագրել Հայաստանում իր սեփական թղթակից Յուրի Առաքելյանի անունով, որը ոչ միայն չէր գրել, այլև տեղյակ էլ չէր այդ հոդվածի մասին: Այս միջադեպը պատճառ դարձավ, որ արհեստավարժ լրագրողը հրաժարվի իր աշխատանքից («Le Monde», 1988, մարտի 26):

Ղարաբաղյան շարժման սկզբից ամիսներ անց միայն խորհրդային լրատվամիջոցները փորձ արեցին ասել ճշմարտությունը: «Le Monde»-ը հեզմանքով արձանագրում է, որ ապրիլի 26-ին առաջին անգամ խորհրդային հեռուստադիտողը հնարավորություն ստացավ իմանալու, թե ինչ է կատարվում իր երկրում: Հեռուստատեսությամբ հեռարձակվեց 90 րոպեանոց ռեպորտաժ, որը պատմում էր Կովկասում տիրող ճգնաժամի մասին: «Սրաւա»-ին ավելի երկար ժամանակ էր պետք ճշմարտությունը հայտնելու համար: Միայն հունիսի 10-ին թերթը համարձակվեց խոստովանել, որ խորհրդային իշխանություններն այլևս չեն

¹³⁴ Guetta B., «URSS: mutisme de la presse. La politique de la "transparence" ne s'applique pas à la crise du nationalisme au Caucase», LE MONDE, 3 mars 1988.

վերահսկում Լեռնային Ղարաբաղի իրավիճակը, և որ այստեղ մթնոլորտը գնալով շիկանում է:

Կովկասում տիրող լարվածության մասին է պատմում 1988 թ. հուլիսի 14-ի համարի «Escalade en Arménie» («Աստիճան դեպի Հայաստան») հոդվածը, որտեղ ներկայացվում են Լեռնային Ղարաբաղում անցկացված հանրաքվեի արդյունքները. «Տարածքի բնակչությունը (75% հայեր) գրեթե միաձայն կողմ է քվեարկել Լեռնային Ղարաբաղի միավորմանը մայր Հայաստանի հետ»: Այս հոդվածի շնորհիվ արդեն «Le Monde»-ի ընթերցողին պարզ է դառնում, որ Ղարաբաղն է նախաձեռնող կողմը և օգտվել է ինքնորոշվելու իր իրավունքից, մինչդեռ Հայաստանը կատարում է միայն սատարողի դեր: Մինչ այդ օրաթերթում հրապարակված հոդվածներից և ոչ մեկը չէր նշել այս կարևոր փաստը:

Նույն օրվա համարի մեկ այլ հոդված հաղորդում է այն մասին, որ «Լեռնային Ղարաբաղի հայ պատգամավորները հուլիսի 12-ին ընդունել են աննախադեպ որոշում՝ վերականգնել Ղարաբաղի հին անվանումը՝ Արցախ, և այն դիտել Ադրբեջանի Հանրապետության կազմից դուրս»¹³⁵: Հուլիսի 20-ի համարում թերթը հրապարակում է այս առիթով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հուլիսի 18-ին ընդունած որոշումը, որի համաձայն՝ «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը պետք է մնա Ադրբեջանի կազմում՝ հակառակ այստեղ ապրող հայ բնակչության կամքին»¹³⁶: Հաջորդ օրն արդեն «Le Monde»-ը տպագրում է խորհրդային կառավարության հրամանը՝ օգտագործել ուժային միջոցներ այն դեպքում, եթե Հայաստանն ընդդիմանա ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հուլիսի 18-ի որոշմանը: ԽՍՀՄ գլխավոր դատախազը սպառնացել էր, որ հայերի կողմից պատերազմական գործողություններ սկսելու դեպքում կբացվի պատասխան կրակ, այսինքն՝ խորհրդային զորքը դուրս կբերվի ժողովրդի դեմ: «Չնայած Կրեմլի սպառնալիքներին՝ հայերը վերսկսել են գործադուլը,- արձանագրում է թերթը հուլիսի 22-ին և շարունակում,- հարյուր հազարավոր հայեր հուլիսի 20-ին հերթական անգամ հավաքվել էին Երևանի կենտրոնում: Ցույցը կրում էր

¹³⁵ «URSS Les députés du Haut-Karabakh ont proclamé le rattachement de leur région à l'Arménie», LE MONDE, 14 juillet 1988.

¹³⁶ «URSS: le vote du présidium du Soviet suprême Le maintien du Haut-Karabakh dans l'Azerbaïdjan relance l'épreuve de force en Arménie», LE MONDE, 20 juillet 1988.

հակակրեմլյան բնույթ՝ ի պատասխան Գերագույն խորհրդի՝ Հայաստանի Հանրապետության կազմում Լեռնային Ղարաբաղի ընդգրկումը մերժող որոշման»¹³⁷:

Հոդվածները վկայում են, որ Մոսկվան չկատարեց Ղարաբաղի կարգավիճակի փոփոխությանը վերաբերող իր խոստումները («Le Monde»-ն այդպես էլ կանխագուշակել էր), միևնույն ժամանակ ցույց են տալիս հայ ազգի հետևողականությունն ու վճռականությունը իր պայքարում:

Օրաթերթն անդրադառնում է «Ղարաբաղ» կոմիտեի հանդեպ կիրառվող բոլոր հետապնդումներին: 1988 թ. հուլիսի 23-ի համարում «Le Monde»-ը ներկայացնում է «Правда»-ի և ԻՏԱՌ-ՏԱՍՍ լրատվական գործակալության այն հոդվածները, որոնք կոչ են անում «անմիջապես դադարեցնել Ղարաբաղյան շարժումը ղեկավարող կոմիտեի գործողությունները»: Ավելի ուշ թերթն արձանագրում է կոմիտեի 11 անդամների ձերբակալության փաստը: Նրանց պետք է տեղափոխեին Մոսկվա, որտեղ էլ կկայանար դատավարությունը: «Ղարաբաղ» կոմիտեի անդամների ազատության խնդիրը մտահոգել էր նաև «Ֆրանս - հայկական համերաշխություն» ընկերությանը, որի վարձած չորս ֆրանսիացի դատապաշտպանները դատարանում պիտի պաշտպանեին կոմիտեի անդամների շահերը: 1989 թ. ապրիլի 29-ի համարում արդեն «Le Monde»-ը տեղեկացնում է, որ ազատ է արձակվել Ալեքսան Հակոբյանը, ով վերջին տարիներին ղեկավարում էր Հայոց համազգային շարժումը, իսկ հունիսի 2-ի համարում փաստում է, որ «մայիսի 31-ին ի վերջո Երևան վերադարձան «Ղարաբաղ» կոմիտեի վերջին անդամները»¹³⁸:

Թերթի գրեթե ամենօրյա անդրադարձը «Ղարաբաղ» կոմիտեի անդամների ճակատագրին պատահական չէ: «Le Monde»-ը գիտակցում է, որ արձանագրվել է մարդու իրավունքների խախտում, մարդկանց ձերբակալել են ոչ թե օրինախախտման, այլ քաղաքական հանդուժման համար: Եվ չնայած

¹³⁷ «Malgré les menaces du Kremlin et l'exil d'un militant nationaliste Les contestataires arméniens reprennent la grève générale pour quarante-huit heures», LE MONDE, 22 juillet 1988.

¹³⁸ Bresson H. D., «URSS: emprisonnés en janvier à Moscou Tous les dirigeants nationalistes arméniens ont regagné Erevan», LE MONDE, 2 juin 1989.

բացահայտ չի արտահայտում իր կարծիքն այս գործողությունների վերաբերյալ, այնուհանդերձ ուշադրությունը խնդրին արդեն իսկ որոշակի վերաբերմունքի արտահայտություն է:

Ղարաբաղյան շարժումը լուսաբանող գրեթե բոլոր նյութերը ներկայացված են լուրի ժանրով և զերծ են մեկնաբանությունից, մինչդեռ Լորեն Գրեյլսամերի «Rencontres avec des habitants d'Erevan "Le Haut-Karabakh nous appartient, culturellement, historiquement, ethniquement"» («Հանդիպում Երևանի բնակիչների հետ. «Լեռնային Ղարաբաղը մեզ է պատկանում մշակույթով, պատմականորեն, էթնիկապես») հոդվածը «Le Monde»-ի՝ այս թեմայով գրված այն եզակի հրապարակումներից է, որտեղ կարելի է որոշակի վերաբերմունք նկատել: Հոդվածագիրը ներկայացնում է փաստարկներ, որոնք ապացուցում են Լեռնային Ղարաբաղի պատկանելությունը Հայաստանին: Հետաքրքիր է նյութի մատուցման ձևը. թղթակիցը հյուրընկալվել է հայկական մի ընտանիքի. բոլոր փաստարկները բերվում են ընտանեկան զույգի կողմից: Նախքան բուն նյութին անցնելը՝ լրագրողը նախապատրաստում է ընթերցողին անկեղծ զրույցի: Նրա ստեղծած մտերմիկ, անմիջական մթնոլորտը, իր զրուցակիցների, նրանց տան, շրջապատի պարզ և անկեղծ նկարագրությունները վստահություն են ներշնչում ինչպես լրագրողի, այնպես էլ նրա զրուցակիցների խոսքի հանդեպ. «Երբ դուռը բացվեց, երկուսն էլ այնտեղ էին՝ փոքր - ինչ կաշկանդված, բայց ժպտերես: Հասկանալի է, ամեն օր չէ, որ հայկական այս զույգն արևմտյան լրագրող է ընդունում: Ավելին, սա առաջին անգամն է: Եթե հաշվի առնենք Խորհրդային Միությունում ապրող մարդկանց միջին կենսամակարդակը, ապա պիտի նկատենք, որ նրանք ապրում են բավական բարվոք բնակարանում...»¹³⁹: Լրագրողը սահուն անցում է կատարում Ղարաբաղյան խնդրին՝ զրուցակիցների անունից պատմելով այն մասին, որ Ղարաբաղը դարեր շարունակ պատկանել է հայերին և գրչի մեկ հարվածով հայտնվել Ադրբեջանի կազմում: Այնուհետև զույգերը, իրար ընդմիջելով,

¹³⁹ Laurent G., «Rencontres avec des habitants d'Erevan "Le Haut-Karabakh nous appartient, culturellement, historiquement, ethniquement"», LE MONDE, 21 décembre 1988.

փաստարկներ են բերում, որ ապացուցեն. «Ղարաբաղը հայերին է պատկանում թե՛ էթնիկապես, թե՛ պատմականորեն, թե՛ մշակույթով»¹⁴⁰:

Սա, իրոք, հրաշալի հողված է իր կարևորությամբ և նյութի մատուցման ձևով: Հեղինակին հաջողվել է բարդ ու պատերազմական թեմային վերաբերող ծանր նյութը մատուցել թեթև, աշխույժ ոճով, ինչի շնորհիվ այն կարդացվում է մեծ հետաքրքրությամբ: Ամենակարևորը՝ ազդեցիկ է, ավելի ազդեցիկ, քան կլինեին պատմական ծավալուն վավերագրերը կամ դրանց վրա հիմնված երկարաշունչ հողվածները:

Սակայն անաչառ «Le Monde»-ը չէր կարող խոսափող չտրամադրել նաև ադրբեջանական կողմին. Բանին ՈւՍՄ-ի «Haut-Karabakh. Un point de vue azéri» («Լեռնային Ղարաբաղ: Ադրբեջանական տեսակետ») հողվածը պնդում է. «Լեռնային Ղարաբաղի խնդիրը միշտ ներկայացվում է միայն հայկական տեսանկյունից, իրականում Ղարաբաղը երբեք չի պատկանել հայերին»¹⁴¹: Իր այս հայտարարությունը հիմնավորելու համար հողվածագիրը ներկայացնում է «Ղարաբաղ» բառի ստուգաբանությունը, որը թուրքական բառակապակցություն է և թարգմանաբար նշանակում է «սև պարտեզ»:

Ի պատասխան այս փաստարկների, մեր հայրենակից Պատրիկ Տոնապետյանը տպագրում է «Le Haut-Karabakh, une terre arménienne» («Լեռնային Ղարաբաղը՝ հայկական հող») հողվածը, որտեղ ներկայացնում է Ղարաբաղի պատմությունը, շեշտում, որ այս տարածքի պատմական անվանումը եղել է Արցախ և միայն Ադրբեջանի կազմում ներգրավվելուց հետո է փոխվել Ղարաբաղի: Հողվածագիրը պատասխանում է «մադամ Բանինի» հնչեցրած մյուս հարցերին ևս («Le Monde», 1990, փետրվարի 6):

«Le Monde»-ում արձանագրվել են նաև Լեռնային Ղարաբաղում և նրա շրջակայքում տեղի ունեցող պատերազմական գործողությունները: Հատկապես մանրամասն նկարագրված են Խոջալուի, Շուշիի, Լաչինի, Քելբաջարի, Ադղամի «գրավումները», ադրբեջանցիների կողմից Ստեփանակերտի ռմբակոծումը,

¹⁴⁰ Laurent G., «Rencontres avec des habitants d'Erevan "Le Haut-Karabakh nous appartient, culturellement, historiquement, ethniquement"», LE MONDE, 21 décembre 1988.

¹⁴¹ Banine UMM, «Haut-Karabakh. Un point de vue azéri», LE MONDE, 20 janvier 1990.

Ֆիզուլիի ջարդերը: Դրանք մատուցված են լուրի ժանրով և ներկայացնում են ռազմական գործողությունների ընթացքը, զոհերի և գերիների թիվը: Ըստ թերթի՝ հայերը նվաճել են Ադրբեջանի Հանրապետության տարածքի մեկ տասներորդը: Այս դեպքում ևս չկան գնահատականներ, միայն լրատվություն է՝ զերծ կարծիքներից ու մեկնաբանություններից:

Ցավոք, օրաթերթի էջերում հանդիպեցինք նաև Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը ծաղրող հոդվածի: Լեռնային Ղարաբաղի այն ժամանակվա նախագահ Ռոբերտ Քոչարյանը դեմ էր արտահայտվել Ֆրանսիայի հետաքրքրությանը ադրբեջանական նավթի հանդեպ: Հոդվածագիր Նատալի Նուգայրեդը հեզմանքով գրում է. «Ռոբերտ Քոչարյանը մի երկրի «նախագահ» է, որն իր չափերով չի գերազանցում ֆրանսիական ամենափոքր դեպարտամենտներին և որը չի ճանաչվել աշխարհի ոչ մի պետության, անգամ իր հարևան և «ընկեր» Հայաստանի կողմից: Եվ ահա այդ ինքն իրեն «անկախ» հռչակած պետությունը, որը բնակեցված է հայերով, բայց փաստացի գտնվում է Ադրբեջանի կազմում, մերժում է Ֆրանսիայի հետաքրքրությունն ադրբեջանական նավթի հանդեպ»¹⁴²:

Ավելի ուշ, նույն փաստարկներից ելնելով, «Le Monde»-ը դեմ արտահայտվեց Լեռնային Ղարաբաղի նախագահ Քոչարյանի նշանակմանը Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնում: Իհարկե, դա արվեց անուղղակի կերպով. ներկայացվեց Ադրբեջանի Հանրապետության նախագահ Չեյդար Ալիևի ելույթը Փարիզում, որտեղ շեշտվում էր այս միտքը և նշվում, որ այն համընկնում է Ֆրանսիայի Հանրապետության կառավարության կարծիքին¹⁴³:

Օրաթերթն անդրադարձել է նաև փախստականների խնդիրներին՝ փաստելով, որ Հայաստանում ապրում է 500000 փախստական: Թերթը ցավով նկարագրում է այն պայմանները, որոնցում ապրում են երբեմնի բարեկեցիկ կյանքից զրկված այս մարդիկ: 1990 թ. հունվարի 21-ին լույս տեսած «URSS: l'intervention en Azerbaïdjan Garry Kasparov a fui Bakou en toute hâte» («ԽՍՀՄ: Ինտերվենցիան Ազերբայձանում Գարրի Կասպարովը հեռացավ Բակուից ամբողջությամբ անսպասելի արագ»):

¹⁴² Nougayrede N., «Le président du Haut-Karabakh dénonce l'intérêt de la France pour le pétrole azéri», LE MONDE, 14 décembre 1996.

¹⁴³ «Le président azerbaïdjanais reçu à Paris», Le Monde, 29 mars, 1997.

Ադրբեջանում կատարվածը ստիպեց Գարրի Կասպարովին հապշտապ լքել Բաքուն») հոդվածը նկարագրում է շախմատի աշխարհի չեմպիոն Գարրի Կասպարովի փախուստը Ադրբեջանից: «Կասպարովը, որի մայրը հայ է, շտապ լքեց Բաքուն և մեկնեց Մոսկվա՝ իր հետ տանելով քառասունութ բարեկամների և ընկերների, դրանց թվում՝ մորն ու մորաքրոջը»,- պատմում է թերթը և հավելում շախմատի աշխարհի չեմպիոնի կենսագրության մանրամասները:

Օրաթերթն արձագանքել է ղարաբաղյան խնդրի կարգավորմանն ուղղված գրեթե բոլոր բանակցություններին: Լուսաբանվել են 1990 թ. փետրվարի 2-ին Ռիգայում Ադրբեջանի ժողովրդական ճակատի և Հայոց համազգային շարժման ներկայացուցիչների միջև տեղի ունեցած հանդիպումը, 1992 թ. մարտի 10-ի բրյուսելյան բանակցությունները, 1992 թ. հուլիսի 31-ին Հռոմում կայացած երկխոսությունները, նույն տարվա սեպտեմբերի 25-ին Հայաստանի և Ադրբեջանի հանրապետությունների պաշտպանության նախարարների միջև զինադադարի պայմանագրի կնքումը Լեռնային Ղարաբաղում և այլն: «Le Monde»-ն անդրադարձել է նաև 1993 թ. մայիսին Միացյալ Նահանգների, Ռուսաստանի և Թուրքիայի կողմից ներկայացված խաղաղության ծրագրին, որն այնքան էլ ձեռնտու չէր հայկական կողմին: Թերթը սկզբում պնդում էր, որ Հայաստանը չի կարող արհամարհել այս ծրագիրը, սակայն հետո ստիպված էր խոստովանել, որ ծրագրի նոր տարբերակ մշակելու անհրաժեշտություն կա: Ընդ որում՝ քննարկմանը պիտի մասնակցեին պատվիրակներ Բաքվից և Ստեփանակերտից: Սա արդեն իսկ դիվանագիտական հաղթանակ էր Լեռնային Ղարաբաղի համար, որն առաջին անգամ դիտվեց իբրև բանակցությունների առանձին կողմ և հնարավորություն ստացավ արտահայտելու իր կարծիքը:

Վերջին բանակցությունները ևս արտացոլված են թերթի էջերում: Արդեն 2008-ի նոյեմբերին «Le Monde»-ը գրում է, որ «Դիվանագիտական աշխարհը հերթական անգամ կենտրոնացրել է ուժերը՝ թույլ չտալու Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի հետ կապված հայ - ադրբեջանական հակամարտության

վերսկսումը»¹⁴⁴: Թերթը արձանագրում է, որ Սերժ Սարգսյանը և Իլիամ Ալիևը ստորագրել են հռչակագիր, բայց և փաստում, որ «այդ փաստաթուղթը հակամարտության խաղաղ կարգավորման հստակ ճանապարհ չի մատնանշում»: «Le Monde»-ն անդրադառնում է նաև Սարգսյան - Սարկոզի հանդիպմանը, որի ընթացքում, ի թիվս այլ հարցերի, քննարկվել են նաև խնդրի մանրամասները:

Թերթն, իհարկե, դատապարտում է հայ - ադրբեջանական հակամարտությունը, ինչպես կդատապարտեր ցանկացած հակամարտություն. «Տարիների պատերազմ, որը չի ավարտվում՝ թողնելով միայն ավերածություններ նախկին ԽՍՀՄ տարածքում»¹⁴⁵: Այդուհանդերձ, այս թեմայով գրված նյութերն օբյեկտիվ են, օպերատիվ և ամբողջական:

«Le Monde»-ը խոր ցավով արձագանքեց 1988 թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժին՝ անդրադառնալով աղետից տուժած շրջանների վիճակին, աշխարհի տարբեր երկրներից եկող օգնությանը, սփյուռքահայության նախաձեռնած քայլերին. «Ֆրանսիայում ապրող հայերի համար ամենադժվարն այն է, որ չգիտեն՝ իրենց ազգականները տուժե՞լ են երկրաշարժից, թե՞ ոչ,- գրում է թերթը 1988 թ. դեկտեմբերի 11-ին, ապա հավելում,- ֆրանսիացիներն առաջիններից էին, որ բրիտանացիների հետ միասին օգնության ձեռք մեկնեցին Չայաստանին»¹⁴⁶:

Օրաթերթը ներկայացրել է նաև ադրբեջանցիների արձագանքը երկրաշարժին. «Բաքվի փողոցներում երիտասարդ ադրբեջանցիները շնորհավորում էին իրար: Նրանք ցույցի էին դուրս եկել և աղաղակում էին, որ Ալլահը հաշվեհարդար է տեսել իրենց ազգերի եղբայրներին սպանող հայերի հետ»¹⁴⁷: Չայերին ուղղված բազմաթիվ ցավակցությունների և օգնության առաջարկների համապատկերում այս հոդվածը աչքի է ընկնում իր դաժանությամբ և ի ցույց է դնում ադրբեջանցիների քինախնդիր ու չարական կերպարը:

¹⁴⁴ Smolar P., «La diplomatie se remobilise pour éviter une reprise du conflit arméno-azerbaïdjanais sur la question du Haut-Karabakh», LE MONDE, 06 Novembre 2008.

¹⁴⁵ Beer P. D., «Transit:Arte, 20 h 40. Les maquis du Karabakh», LE MONDE, 15 août 1993.

¹⁴⁶ «Des équipes de secours françaises et britanniques se rendent sur place», LE MONDE, 10 décembre 1988.

¹⁴⁷ «URSS:le tremblement de terre en Arménie Manifestations à Bakou "Le châtement d'Allah"», LE MONDE, 11 décembre 1988

Թերթն անդրադարձել է երկրաշարժից տուժած բոլոր քաղաքներին և հատկապես՝ Սպիտակին: 1988 թ. դեկտեմբերի 16-ի համարում հոդվածագիր Գետտա Բերնարդը պատմում է, որ դեկտեմբերի 15-ից Սպիտակում գրեթե դադարեցվել են փրկարարական աշխատանքները, քանի որ հույս չկա, թե հիմնովին ավերված այս քաղաքում դեռևս կգտնվեն ողջ մարդիկ:

Աղետին հաջորդած օրերին լույս տեսավ նաև Անահիտ Տեր - Մինասյանի և Քլեր Մուրադյանի հոդվածը, որտեղ հայազգի հեղինակները շնորհակալություն են հայտնում հայությանն օգնության ձեռք մեկնած ողջ աշխարհին: Նրանք վստահ են՝ այս աղետն ապացուցեց, թե աշխարհի բոլոր երկրներն ընդունակ են համախմբվելու և օգնելու միմյանց, եթե դրա անհրաժեշտությունը կա:

Հզոր գերտերության՝ Խորհրդային Միության փլուզումը չէր կարող անտարբեր թողնել «Le Monde»-ին: Տպագրվեցին բազմաթիվ հոդվածներ, որոնցից պարզ երևում է, որ թերթը դրական է վերաբերվում ԽՍՀՄ-ի փլուզմանը և նրա անդամ – պետությունների անկախացմանը: Սկսած 1991 թ. օգոստոս – սեպտեմբեր ամիսներից՝ «Le Monde»-ը մանրամասնորեն ներկայացնում է նորանկախ պետություններից յուրաքանչյուրին (բնակչության թիվը, զբաղեցրած տարածքը, պատմությունը), իսկ արդեն դեկտեմբերին ազդարարում Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) ծնունդը:

Հայաստանի անկախության մասին թերթը սկսել է խոսել դեռևս 1988-ից: Մայիսի 31-ին առաջին անգամ նշվեց, որ «Երևանում ավելի քան 50000 մարդ դուրս էր եկել ցույցի՝ պահանջելու անկախ կարգավիճակ իր երկրի համար»¹⁴⁸: Հաջորդ հոդվածը, որտեղ շահարկվեց այս թեման, տպագրվեց ամիսներ անց. «Սեպտեմբերի 9-ին, Երևանի կենտրոնում գտնվող Օպերայի հրապարակում հարյուր հազարավոր հայեր երդվեցին, որ հավատարիմ կմնան անկախ Հայաստանի եռագույն դրոշին»¹⁴⁹, գրում է թերթը 1988 թ. սեպտեմբերի 11-ին: Մինչդեռ անկախության բուն գործընթացը լուսաբանող նյութեր «Le Monde»-ի էջերում հանդիպում են 1991 թվականից սկսած: Դեռևս օգոստոսի 1-ին թերթը կանխատեսում է սեպտեմբերի 21-ի համահայկական հանրաքվեի արդյունքները.

¹⁴⁸ «L'agitation en Arménie», LE MONDE, 31 mai 1988.

¹⁴⁹ «Nouvelle manifestation de masse à Erevan», LE MONDE, 11 septembre 1988.

«Պետք չէ կասկածել, որ սեպտեմբերի 21-ին աշխարհի հնագույն էթնիկական և կրոնական համայնքը կհռչակի իր անկախությունը»¹⁵⁰, - գրում է Բարոտ Ժակը իր «Le teste arménien» («Հայկական թեսթ») հոդվածում: Արդեն սեպտեմբերի 22-ին թերթը հրապարակում է հանրաքվեի արդյունքները, որոնք հավաստում են, որ Հայաստանի Հանրապետությունն այսուհետ պետք է դիտվի անկախ ժողովրդավարական պետություն՝ ԽՍՀՄ կազմից դուրս. «Հանրաքվեի արդյունքները կասկածի տեղիք չեն տալիս, քվեարկողների մեծամասնությունն «այո» է ասել անկախությանը»¹⁵¹, - գրում է թերթը: «Le Monde»-ը ոգևորությամբ է ներկայացնում Հայաստանում տիրող համընդհանուր ուրախությունը. «ԽՍՀՄ պետություններից ամենափոքրը, ամենախոցելին, պատմության հարվածներից ամենաշատ տուժածը, բայց և ամենահյուրընկալը սեպտեմբերի 23-ին տոնում էր անկախության հանրաքվեի արդյունքների հրապարակումը»¹⁵²:

Ավելի ուշ թերթն անդրադառնում է սպասվելիք նախագահական ընտրություններին. «Սեպտեմբերի 21-ի հանրաքվեին հաջորդած փոխադարձ շնորհավորանքները գնալով մարում են, հիմա անհրաժեշտ է, որ հայերը վերագտնեն իրենց և նախապատրաստվեն առաջիկա նախագահական ընտրություններին»¹⁵³: Հոկտեմբերի 20-ին «Le Monde»-ն ազդարարում է Լևոն Տեր-Պետրոսյանի հաղթանակը, թեև չի անդրադառնում ընտրությունների ընթացքին, միայն ներկայացնում է թեկնածուներին և շնորհավորում նորընտիր նախագահին:

«Le Monde»-ը քննարկում է նաև նորանկախ Հայաստանում տիրող տնտեսական, էներգետիկ ճգնաժամը և դրա պատճառները: Իբրև հիմնական պատճառ մատնանշվում է շրջափակումը: Մեր երկրում տիրող անմխիթար իրավիճակն է բացահայտվում 1992 թ. դեկտեմբերի 26-ի համարում. «Հայաստանն այլևս չունի վառելիք և այլևս չի ստանում բնական գազ: Սա ստիպել է կառավարությանը դեկտեմբեր ամսից դադարեցնել էլեկտրաէներգիայի և ջեռուցման

¹⁵⁰ Barrot J., «Le test arménien», LE MONDE, 1 Août 1991.

¹⁵¹ Fralon J. A., «Le référendum sur l'indépendance en Arménie», LE MONDE, 22 Septembre 1991.

¹⁵² Fralon J. A., «Ecrasante victoire des partisans de l'indépendance de l'Arménie», LE MONDE, 24 Septembre 1991.

¹⁵³ Fralon J. A., «Malgré les critiques concernant l'accord sur le Haut-Karabakh M. Levon Ter-Petrossian est largement favori pour l'élection présidentielle du 16 octobre en Arménie», LE MONDE, 27 Septembre 1991.

մատակարարումը բնակչությանը»¹⁵⁴: 1993 թ. փետրվարի 10-ի համարում լույս տեսած «Impasse en Arménie» («Շրջափակում Հայաստանում») հոդվածն առավել պատկերավոր է. «Եթե ձեր տանը տիրող ջերմաստիճանը 20° ցելսիուսից ցածր է, եթե ստիպված եք ցուրտ փողոցում ժամերով հերթ կանգնել ձեզ հատկացված օրական 250 գրամ հացը գնելու համար, իսկ տուն վերադառնալով սառչել էլեկտրաէներգիայից և գազից զուրկ բնակարանում, եթե հեռախոսը արգելափակված է, հեռուստատեսությունը չի գործում, իսկ տրանսպորտից օգտվելը գրեթե անհնար է, եթե հիվանդանոցների երկու երրորդը փակ է, իսկ մահացության ցուցանիշն աճում է երեխաների ու մեծահասակների մոտ, ուրեմն կարող եք պատկերացնել, որ ապրում եք Երևանում»¹⁵⁵:

Թերթը ոչ միայն ներկայացնում է իրավիճակը Հայաստանում, այլև ցույց է տալիս դրա հետևանքները: 1992 թ. հոկտեմբերի 15-ի համարում ցավով արձանագրվում է, որ չորս տարի պատերազմի մեջ լինելով՝ Հայաստանի բնակչությունն ավելի հաճախ է բռնում գաղթի ճանապարհը: «Սա նշանակում է՝ փրկվիր, ով կարող է,- որակում է թերթը և ավելացնում,- այս շաբաթվա տվյալներով Երևան - Փարիզ - Լոս Անջելես չվերթի ուղևորների 90%-ը էմիգրանտներ են: Ավելին, Հայաստանի բնակչության մեկ վեցերորդը դիմել է ԱՄՆ-ի դեսպանատուն՝ էմիգրանտի կարգավիճակով պետությունը լքելու հայցով: Եվ այս թիվը չի զարմացնում ոչ ոքի...»¹⁵⁶: Հոդվածում հնչած «փրկվիր, ով կարող է» որակումը փոքր - ինչ վիրավորական կարող է թվալ, սակայն խոստովանենք, որ դիպուկ է և ճշմարտացի: Մնալու և միասին պայքարելու փոխարեն շատ հայեր նախընտրեցին լքել հայրենիքը և մինչև օրս էլ լքում են:

Չնայած այս ամենին՝ «նորանկախ և պատերազմող Հայաստանը պայքարում է իր ապագայի համար և դա անում է առաջին հերթին իր կրթական համակարգն ամուր պահելով»¹⁵⁷, - գրում է թերթը Երևանի պետական համալսարանի 75-ամյակին նվիրված տոնակատարությունները լուսաբանող ծավալուն հոդվածում:

¹⁵⁴ «Arménie. Le pays menacé d'un "effondrement total"», LE MONDE, 26 décembre 1992.

¹⁵⁵ «Impasse en Arménie», LE MONDE, 10 Février 1993.

¹⁵⁶ Shihab S., «L'Arménie à bout de forces Après quatre ans de guerre, la population affiche sa lassitude et choisit de plus en plus souvent l'exil», LE MONDE, 15 octobre 1992.

¹⁵⁷ Champenois M., «Voyage. Arménie, du pain ou des livres», LE MONDE, 12 novembre 1994.

1999 թ. հոկտեմբերի 27-ի տխուր իրադարձություններին «Le Monde»-ն արձագանքեց երկու ծավալուն հոդվածներով: Առաջինը լուրի ժանրով պատմում է 27-ի դեպքերի մասին՝ ներկայացնելով ահաբեկիչների գործողությունները և զոհերին, իսկ երկրորդն անդրադառնում է հետևանքներին՝ պնդելով, որ դրանց պատճառով անկայուն իրավիճակ է ստեղծվել Հայաստանում, և որ «բոլորը փնտրում են մեղավորներին»:

Շատ է գրվում նաև հայ - ֆրանսիական կապերի մասին՝ արձանագրելով Հայաստանի և Ֆրանսիայի Հանրապետությունների նախագահների, պաշտոնատար այլ անձանց փոխադարձ այցելությունները, կնքված պայմանագրերը: Թերթի կարծիքով՝ հայ - ֆրանսիական կապերն ունեն պատմական հիմք և մեծ ապագա:

Ֆրանսիայում Հայաստանի տարին պատճառ էր ավելի հաճախ անդրադառնալու Հայաստանին և հայերին. օրաթերթը գրում էր նյութեր Հայաստանի, հայ մշակութային գործիչների մասին, լուսաբանում այս առիթով կազմակերպված միջոցառումները մեզ մոտ և Ֆրանսիայում: Հատկապես մանրամասն լուսաբանվեց ժակ Շիրակի այցելությունը Հայաստան, իսկ նրա խոսքերը՝ «Թուրքիան պետք է ճանաչի Հայոց ցեղասպանությունը», առանձին հոդվածի վերնագիր դարձան: Ֆրանսիայի այդ ժամանակվա նախագահի ելույթից օրաթերթը հատկապես առանձնացրել է ցեղասպանության հետ կապված հատվածը. «Բոլոր երկրները մեծանում են՝ ճանաչելով իրենց սխալները, Թուրքիան պետք է ճանաչի ցեղասպանությունը, որպեսզի կարողանա մտնել եվրամիություն»¹⁵⁸: Նկարագրված է նաև նախագահի այցը Հայոց եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշահամալիր:

Նկատենք, որ «Le Monde»-ն անդրադարձել է Հայաստանում տեղի ունեցող գրեթե բոլոր կարևոր իրադարձություններին: Սա հայերի հանդեպ հատուկ ուշադրության արտահայտություն դժվար է համարել, քանի որ թերթի էջերում արտացոլվում է ողջ աշխարհի անցուդարձը: «Le Monde»-ը նաև մեծ դիվանագետ է. խուսափում է կարծիքների արտահայտելուց, իսկ երբեմն նաև՝ բացահայտ խոսելուց: Սա առաջին հերթին վերաբերում է միջպետական կոնֆլիկտների մասին

¹⁵⁸ «Pour Jacques Chirac, la Turquie doit reconnaître le génocide arménien», LE MONDE.FR, 30 septembre 2006.

պատմող հողվածներին, որոնք հիմնականում մատուցվում են տեղեկատվական ժանրերով և զերծ են մեկնաբանությունից: Միայն ամենաուշադիր ընթերցողը կարող է նկատել թերթի կողմնորոշումը այս կամ այն հարցում՝ ելնելով օգտագործված ձևակերպումներից կամ նյութերի տպագրման հաջորդականությունից: Ահա թե ինչու մենք փորձեցինք պահպանել այդ հաջորդականությունը և հնարավորինս շատ մեջբերումներ անել:

«Le Monde»-ը երբեմն անդրադառնում է նաև հայ մշակույթին, արվեստի երախտավորներին: Մասնավորապես, 1989 թ. հունիսի 21-ին ֆրանսիական օրաթերթը տեղեկացնում է, որ երևանյան թատրոնները երկու ամիս տևած հանգստից հետո բացել են իրենց դռները: Միաժամանակ գրախոսում այստեղ ցուցադրված առաջին երաժշտական կատակերգությունը՝ Սերվանտեսի «Դոն Զիշոտ»-ը, որը բեմադրել է Ֆրանսիայում ապրող հայազգի տաղանդավոր դերասան, դրամատուրգ և երաժիշտ Նարեկ Դուրյանը:

Հատկապես շատ է անդրադարձը հայկական եկեղեցիներին: Թերթը հավաստում է, որ դրանք արժեքավոր են թե՛ որպես ճարտարապետական կառույցներ, թե՛ կրոնի և արվեստի պատմության ուսումնասիրության տեսանկյունից: Հաճախ հանդիպում են եկեղեցական կառույցների ճարտարապետական լուծումները բացահայտող հետաքրքիր վերլուծություններ: «Le Monde»-ը հիացնումնքով է արտահայտվում հատկապես հայկական խաչքարերի մասին. «Հայաստանի քարերն անգամ խոսում են հայ ազգի հավատքի մասին»¹⁵⁹, - գրում է թերթը «Pierre et foi d'Arménie» («Հայաստանի քարերն ու հավատքը») հոդվածում: Մեկ այլ հրապարակում ներկայացնում է հայ ճարտարապետական արվեստն ընդհանուր առմամբ. «Հարյուրավոր հուշարձանները, ամրոցները, եկեղեցիներն ու տաճարները վկայում են հնագույն մշակույթի մասին՝ ծնունդ առած դեռևս հայկական անտիկ թագավորությունում»¹⁶⁰:

Հայ թատերական և երաժշտական արվեստին «Le Monde»-ը հիմնականում անդրադառնում է այն ժամանակ, երբ որևէ երգիչ կամ թատերախումբ ժամանում է Ֆրանսիա: Համարներից մեկում թերթը հայտնում է, որ Արմեն Տիգրանյանի

¹⁵⁹ «Pierre et foi d'Arménie», LE MONDE, 16 janvier 1988.

¹⁶⁰ Champenois M., «Arménie, les pierres d'alliance», LE MONDE, 25 Avril 1992.

«Անուշ» օպերան պետք է ցուցադրվի Մարսելում և առիթը բաց չի թողնում ներկայացնելու օպերայի ստեղծման պատմությունն ու գեղարվեստական արժանիքները¹⁶¹:

1990 թ. փետրվարի 16-ին մեր հայրենակից Պատրիկ Քեչիշյանը «Le Monde»-ի էջերում անդրադառնում է Գրիգոր Նարեկացուն: Հոդվածագիրը նախ նշում է, որ հայկական մշակույթի և կրոնի պատմության մեջ երկու հայտնի Գրիգոր է եղել: Մեկը սուրբ Գրիգոր Լուսավորիչն է, որն ապրել է երրորդ դարում և որի շնորհիվ է քրիստոնեությունը տարածվել Հայաստանում, մյուսը Գրիգոր Նարեկացին է, որն ապրել և ստեղծագործել է 951-1003 թվերին: Քեչիշյանը պատմում է Նարեկացու կյանքի պատմությունը, ներկայացնում նրա գողտրիկ տաղերը և հատկապես կանգ առնում «Մատյան ողբերգության» պոեմի վրա՝ ներկայացնելով նրան վերագրված «միստիկական, արտասովոր» ազդեցությունը, հոգեկան ու մարմնական ցավեր բուժելու մեծ զորությունը: Այստեղ Նարեկացին ներկայանում է իբրև մարդասիրության և ազնվության մարմնացում, իսկ նրա ստեղծագործությունը՝ բարության, սիրո և կատարելության կոչ («Le livre de Grégoire l'Arménien», Le Monde, 16 Février 1990): Ավելորդ է ասել, որ «Le Monde»-ի անդրադարձը հայ դասականին մեծ նշանակություն ունի մեր մշակույթն արտերկրում ըստ արժանվույն ներկայացնելու առումով: Ցավոք, նման նյութերը թերթում շատ քիչ են:

Օրաթերթն անդրադարձել է նաև Հայաստանի թանգարանների հնագիտական հարստություններին, որոնք ցուցադրվել են Ֆրանսիայի ազգային զրադարանում 1996 թ. հուլիսին: Ներկայացնելով հին Հայաստանի մասունքները՝ թերթը վեր է հանում հայ ժողովրդի պատմության ու հնագույն մշակույթի արժեքները՝ բարձր գնահատելով դրանք: «Le Monde»-ի բնորոշմամբ՝ սա ճանապարհորդություն է Հայաստանով, որի նպատակն է բացահայտել այս հինավուրց պետությունը:

Հայկական կինեմատոգրաֆիան, ինչպես «Le Monde»-ն է ասում, «իր ողջ հարստությամբ և անբողջության մեջ» ներկայացավ ֆրանսիացիներին Բոբուրգ քաղաքում «Ժորժ Պոմպիդու» կենտրոնի կազմակերպած հայկական կինոյի օրերի

¹⁶¹ Rey A., «"Anouch" à l'Opéra de Marseille Scènes de la vie d'Arménie», LE MONDE, 9 Novembre 1988.

ընթացքում: Այստեղ ցուցադրվել են 120 հայկական ֆիլմեր, որոնք վեր են հանում «աշխարհում դեռևս ճանաչում չգտած, բայց շատ արժեքավոր և որակյալ հայկական կինեմատոգրաֆիան»¹⁶²: «Le Monde»-ի էջերում հատկապես շատ է հանդիպում Սերգեյ Փարաջանովի անունը: Նա բնորոշվում է իբրև հայկական ծագմամբ խորհրդային կինոռեժիսոր, որը ներկայացնում է վրացական կինոն: Թերթը հիանում է Փարաջանովի արվեստով՝ նրան դասելով արևմտյան ամենաարհեստավարժ ռեժիսորների շարքին. «Չանճար, որը մարմնավորում է խորհրդային կինոյի վերածնունդը»¹⁶³, -գրված է մեծ արվեստագետի մահը գուժող հոդվածում:

«Le Monde»-ում հաճախ է հանդիպում նաև Շառլ Ազնավուր անունը: Նրա մասին օրաթերթը խոսում է խոր հարգանքով և պատկառանքով: Սակայն Ազնավուրը թերթի էջերում դիտվում է իբրև ֆրանսիական երգարվեստի ներկայացուցիչ, և միայն երբեմն թուլցիկ հիշատակվում է նրա՝ ազգությամբ հայ լինելու փաստը:

Չայ մշակութային կյանքը հատկապես ակտիվորեն ներկայացվեց Չայաստանում Ֆրանսիայի տարվա շրջանակներում: Տպագրվեցին 100-ից ավելի հոդվածներ այս թեմայով: Սակայն ասել, որ այդ նյութերում երևում է հայ մշակույթի ոգին, սխալ կլինի: Դրանք հիմնականում միտված են միջոցառումների մասին տեղեկացնելու:

Ինչպես տեսնում ենք, հայկական մշակույթը «Le Monde»-ում հիմնականում ներկայացվում է այնքանով, որքանով երբևէ առնչություն է ունեցել Ֆրանսիայի հետ: Տարբեր միջոցառումներն ազդակ են հանդիսացել, որ օրաթերթն անդրադառնա հայ արվեստին, միաժամանակ այդ առիթներն օգտագործվել են ֆրանսիացի ընթերցողին տեղեկացնելու, որ դարերի պատմությունն ունեցող Չայաստան երկիրն ունի հզոր մշակույթ և խոշոր ու հանճարեղ արվեստագետներ:

¹⁶² Frodon J. M., «Cinema l'Armenie a Beaubourg. Cent vingt films révèlent la richesse et la complexité historique d'une cinématographie méconnue», LE MONDE, 29 Juin 1993.

¹⁶³ Mathieu B., «La mort du cinéaste soviétique Sergueï Paradjanov», LE MONDE, 22 Juillet 1990.

Այսօր՝ վաթսունհինգ տարիների բարձունքից, ավելի հստակ է երևում «Le Monde»-ի անցած ուղին: Օրաթերթը ձեռք է բերել ընթերցողների ստվար բանակ, մշակել սկզբունքներ, որոնք դարձել են որակի չափանիշ լրատվական աշխարհում և այժմ էլ մեծապես պայմանավորում են լրագրության վաղվա օրն ու անելիքները:

Հավատարիմ իր գոյության ընթացքում ունեցած երկու անունների՝ «Le Temps» («Ժամանակ») և «Le Monde» («Աշխարհ»), թերթը ժամանակի շունչն է և աշխարհի պատկերը: Մեզ համար առանցքային նշանակություն ունեցող խնդիրների հանդեպ պարբերականի արձագանքը կարևոր է հատկապես նրանով, որ իր ավելի քան 2 միլիոն ընթերցողների մեջ հասարակական կարծիք և դիրքորոշում է ձևավորում: Եթե նկատի ունենանք, որ «Le Monde»-ի հիմնական ընթերցողը որոշակի դիրքի ու կարգավիճակի տեր եվրոպացին է, ապա թերթի յուրաքանչյուր բառն ու շեշտադրումը կրկնակի են արժևորվում:

«Le Monde»-ը միաժամանակ եվրոպական տեղեկատվական միջավայրի լավագույն արտահայտությունն է, ուստի նրա ուսումնասիրությունը ուղղորդող նշանակություն կարող է ունենալ մեզ համար տեղեկատվական մարտահրավերներին դիմակայելու, անվտանգության և քարոզչական գործողությունների ուղիներ մատնանշելու առումով:

Le Monde et la réalité arménienne

Le Monde est le journal le plus original et le plus réputé en France. Il est considéré comme une voix officielle de la diplomatie française. Il est également le représentant et le gardien des valeurs culturelles, le critère de l'intelligence de l'élite française. Les lecteurs principaux du journal sont: les représentants intellectuels, élitaires de la société et tous ceux qui veulent être largement informés.

La liberté idéologique du journal *Le Monde* est conditionnée par le bon choix des formes de la gestion. Le journal tâche de maintenir la proportionnalité des actions, de sorte que personne des actionnaires n'ait pas la possibilité de dicter sa propre volonté. Le Conseil de Contrôle du journal est créé pour exclure la pression éventuelle des actionnaires sur la rédaction. La vie rédactionnelle et la gestion de l'entreprise sont nettement séparées: l'actionnaire ne s'intéresse qu'aux affaires de l'entreprise, ses bénéfices, les intérêts et les problèmes économiques du journal, mais il n'a pas le droit d'intervenir dans l'orientation idéologique et dans le processus des publications.

Le périodique participe aux démarches du développement du marché médiatique, il est la force motrice de la presse quotidienne française d'aujourd'hui, le coauteur et le réalisateur de beaucoup de projets, ayant le renommé de l'unificateur et d'initiateur.

Le Monde attache trop d'importance aux intérêts de son lecteur en lui fournissant des informations opératives de qualité et des analyses intéressantes. L'Union des lecteurs est l'un des actionnaires principaux du journal, ce qui permet de faire paraître le journal le plus conforme aux exigences et aux préférences de l'auditoire.

Une attention particulière est prêtée à l'aspect extérieur du journal, on fait tout pour que le périodique produise une impression conforme au contenu d'un périodique à traditions.

Pendant des années *Le Monde* a réussi à former des équipes diverses et multicritères, dont chacune représente d'une manière compétente l'image entière du domaine en question et propose des analyses professionnelles et sérieuses.

La politique est un thème clé pour le journal *Le Monde*. Bien qu'il n'existe presque pas de medias totalement indépendants et objectifs, ce journal est généralement impartial dans ses approches et par ses articles. S'il le faut, il relève les défauts et les fautes des hommes politiques n'épargnant personne, ce qui gagne la confiance du public et attire son attention vers lui-même. Sa vedette politique ou son candidat préféré en gagne plus que s'il propageait sans cesse sa candidature.

Le Monde donne la préférence à son propre produit, et le matériel des agences d'information est insignifiant, ce qui conditionne l'originalité et la particularité du journal. On peut dire sûrement que c'est dans le but de lire des analyses singulières, uniques que les gens préfèrent lire *Le Monde*.

Le journal est considéré comme un organe à plusieurs genres avec une préférence envers l'équipe analytique - publicitaire, puisque son objectif n'est pas présenter tout simplement les faits, mais s'approfondir dans leurs problématiques en déployant une approche sérieuse. Simultanément avec les manifestations des genres classiques, on aperçoit la tendance du périodique de sortir des stéréotypes de genre, voulant s'accommoder aux exigences de la rédaction de la presse de qualité.

Dans le journal on peut trouver des publicités, différenciées d'une manière manifeste des articles d'auteur, dans lesquelles une grande attention est attachée à la manière de les offrir aux lecteurs. *Le Monde* non seulement a pu vaincre l'attitude réservée et circonspecte de la presse française envers la publicité, mais a eu le génie de l'utiliser dans le but de son indépendance mentale et financière.

Le Monde présente d'une manière suivie les problèmes des Etats et des Nations. L'Arménie et le peuple arménien ont très souvent été le sujet de discussion dans ses articles. C'est vrai que c'est le Génocide arménien de 1915 qui a été reflété le plus souvent dans ses pages. Le journal a réagi à chaque nouvelle, orientée à la reconnaissance du Génocide, a publié des articles décrivant d'une manière impressionnante les tristes événements, le 24 avril a toujours été évoqué comme la date

de la Commémoration. Le journal a présenté, à cette occasion, les événements qui se déroulaient en France et en Arménie.

Le problème d'Artzakh (Karabagh) aussi a été largement illustré dans les pages du journal. Si dans la cause du Génocide une approche non officielle mais nette a été modelée, dans celle d'Artzakh, l'orientation du journal est floue. Cela vient du fait que ce thème est moins étudié que le précédent de la part du journal *Le Monde*. Les faits que les articles présentant le Génocide arménien ont des auteurs qui connaissent le problème à fond et l'illustrent aisément, et que les articles concernant le problème du Karabagh et le processus de l'indépendance sont créés sur le matériel des agences d'information, en sont les témoignages.

La culture arménienne n'est pas largement reflétée dans le journal. Bien sûr qu'il y a des articles sérieux concernant telle ou telle branche de l'art arménien ou découvrant l'héritage culturel d'un artiste, mais ils ne sont pas nombreux et ne peuvent pas donner une idée précise sur le niveau culturel de notre pays.

Aujourd'hui du haut de ses 65 ans, on voit mieux le chemin que *Le Monde* a traversé. Le quotidien a obtenu une armée solide de lecteurs, a travaillé des principes qui sont devenus des critères dans le monde d'information et conditionnent aujourd'hui largement l'avenir et les objectifs du journalisme.

Fidèle aux deux noms qu'il a eus lors de son existence: *Le Temps* et *Le Monde* le journal devient le souffle du temps et l'image du monde. La réaction du journal envers les problèmes qui ont une signification primordiale pour nous, est surtout précieuse, parce qu'il modèle l'opinion publique et l'attitude de 2 millions de lecteurs. Quand nous nous rendons compte que le lecteur principal du journal c'est l'Européen qui a une certaine position et un certain statut, chaque mot, chaque mise en relief acquiert une valeur double.

Le journal *Le Monde* est la meilleure expression de l'ambiance informatique européen, c'est pourquoi son étude peut avoir une signification d'orientation dans la

confrontation avec des défis médiatiques, dans la résistance et dans les directives des actions de la sécurité et de la propagande.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գրքեր

1. Ժուռնալիստիկա (տեսության և պատմության հարցեր), պրակ Բ, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2001:
2. Ժուռնալիստիկա (տեսության և պատմության հարցեր), պրակ Դ, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2003:
3. Ժուռնալիստիկա (տեսության և պատմության հարցեր), պրակ Զ, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2003:
4. Ի սկզբանե էր Բանն (Ժուռնալիստիկայի և գրականության հարցեր), Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2004:
5. Ղլեչյան Վ., Նոր պատմություն (դասագիրք հանրակրթական դպրոցի համար), «Զանգակ-97» հրատարակչություն, Երևան, 2001:
6. Քաղաքական պայքարը և լրագրողի մասնագիտական բարոյականությունը, Վան Արյան, Երևան, 2000:
7. Albert P., La presse française (notes et etudes documentaires), Maulde et Renou, Paris, 1998.
8. Clement J., Déontologie de l'information codes et conseils de presse (étude comparative des règles de la morale pratique dans les métiers d'information à travers le monde), TTI Pontoise, Paris, 1981.
9. Déontologie des médias, Bussière Camedan Imprimeries, Paris, 1998.
10. Eveno P., Le journal Le Monde (une histoire d'indépendance), éditions Odile Jacob, Paris, 2001.
11. Jeanneney J.-N., Julliard J., Le Monde de Beuve-Méry ou le métier d'Alceste, Éditions du Seuil, Paris, 1979.
12. Planchais J., Un homme du Monde, Éditions Calmann-Lévy, Paris, 1989.
13. Thibau J., Le Monde, histoire d'un journal, Plon, Paris, 1996.

Հոդվածներ

14. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, մայիսի 5 և 6 (թիվ 82 (3698) և թիվ 83 (3699)), 2005, Մենենշյան Ա., Հայոց ցեղասպանության թեման «Le Monde»-ի էջերում:
15. <http://www.intellectbooks.com/europa/number6/fletcher.htm>, Fletcher J., Le Monde past, present and future: A vehicle for the transmission of the cultural values of the French elite.
16. «Actes de la recherche en sciences sociales», №131-132, mars 2000, Champagne P., L'éclipse du Monde.

17. «Le Monde» օրաթերթ, 1987-2009:

Նորմատիվ - իրավական ակտեր

1. La Déclaration des droits de l'homme et du citoyen, 1789.
2. La Charte des devoirs professionnels des journalistes français, 1918.
3. Déclaration des droits et des obligations de la presse libre, 1945.
4. Déclaration des devoirs et des droits des journalistes, 1971.
5. Charte sur «le droit d'être informé», 1973.
6. La Charte du conseil de surveillance du Monde, 1995.

Ինտերնետային էջեր

1. http://a1692.g.akamai.net/f/1692/2042/1h/medias.lemonde.fr/medias/flash_obj/venteFrance.swf
2. <http://www.educnet.education.fr/dossier/rechercher/ressources/medias>
3. http://medias.lemonde.fr/medias/pdf_obj/sup_comptes-monde_040604.pdf
4. http://medias.lemonde.fr/medias/obj_multi/portrait_quotidien.swf
5. <http://www.mondepub.fr/Decou/Diffu/Diffu/index.htm>
6. <http://www.mondepub.fr/Decou/lecto/leade/index.htm>
7. <http://www.mondepub.fr/Decou/lecto/index.htm>
8. <http://www.mondepub.fr/Decou/lecto/Europ/index.htm>
9. <http://www.mondepub.fr/Decou/Regie/index.htm>
10. <http://www.lemonde.fr/web/article/0,1-0@2-3386,36-170270,0.html>
11. <http://www.lemonde.fr/web/article/0,1-0@2-3386,36-261391,0.html>
12. <http://www.evene.fr/celebre/biographie/jean-marie-colombani-15967.php>
13. <http://www.forum-events.com/amphi/biographie.php?idi=4&idinv=4>
14. http://www.mondepub.fr/documentspdfchiffres_cles_nov08.pdf
15. http://www.mondepub.fr/documentspdfsynthese_epiq_aepm_0708.pdf
16. <http://www.mondepub.fr/supp.php>
17. http://www.ojd.com/engine/adhchif/adhe_list.php?mode=chif&cat=1784#site_3470
18. http://www.ojd.com/engine/adhchif/adhe_list.php?mode=chif&cat=1771&subcat=353

Ինտերնետային կայքեր

1. www.lemonde.fr
2. <http://www.ojd.com>
3. <http://www.evene.fr>
4. <http://www.intellectbooks.co.uk/index.php>
5. <http://www.education.fr>
6. <http://www.rue89.fr>

7. <http://www.libération.fr>
8. <http://www.jeuneafrique.fr>
9. <http://www.latribune.fr>
10. <http://www.lesechos.fr>
11. <http://www.lepoint.fr>
12. <http://www.faz.net>
13. <http://www.theguardian.com>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն -----	3
Գլուխ առաջին Ավանդներին հավատարիմ-----	13
Գլուխ երկրորդ «Le Monde»-ի տեղեկատվության յուրահատկությունները -----	50
Գլուխ երրորդ «Le Monde»-ի ժանրային նկարագիրը -----	101
Գլուխ չորրորդ Հայ իրականությունը «Le Monde»-ում -----	128
Le Monde et la réalité arménienne (ամփոփում) -----	165
Օգտագործված գրականության ցանկ -----	169

ԱՆԱՅԻՏ ՌՈՒԲԵՆԻ ՄԵՆԵՄՇՅԱՆ

«LE MONDE»-Ը ԵՎ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հրատ. խմբագիր՝	Ռ. Վ. Պետրոսյան
Տեխ. խմբագիր՝	Վ. Զ. Բդոյան
Համ. ձևավորումը՝	Ա. Խ. Աղուզումցյանի
Կազմի ձևավորումը՝	Գ. Վ. Մարիկյանի

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

ԵՊՀ տպարան, Երևան, Աբովյան 52